



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



18578  
18579

18580

391.00  
S-T4



# Մ Ա Յ Տ Ա

ԳՐԱՑ

ՄՐԱՋԻՆ ՀԵՂՈՒԹ

Տեղական հայոց պատմութեան

Ա. ԶԵՂՈՎԻ ԽՈՎԱՆԻ

Կ. ՊՈԼԻ

ՏԵՂՈՎԻ - ԶԱՐԴԱՐԵԱՆ

1883



891.99

8-74

Մ Ա Յ Տ Ա

Կ Ր



Վ Ա Հ

Գ Ր Ե Ց

Մ Թ Բ Ո Ւ Հ Ի Ւ Տ Ի Ս Ա Ր

ՏԵՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Յ. ԶԵՆՋԻՐՃԵԼՆ

Կ. ՊՈՂԻՄ  
ՏՊԱԳՐ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

1883


4983

984  
39

152

Printed In Turkey

مَدْبُوْلُ مَسْعُود



A. DEVEJIAN LIBRARY

NEW YORK

Ա. ՏԵՎԵՋՅԱՆ ԳՐԱՑՈՒՆ

## ՅԱՌԱՋԱՐԱՆ

Խի՛ստ ծաղկահասակ էի տակաւին երբ սկսայ կարդալ  
ովյապիսի հեղինակներ՝ որք ընկերական և կրօնական զեղծմանց  
դէմ կը բողոքէին ուժգին։ Այդ բողոքն արձագանք գտաւ  
սրտիս մէջ, մտացս մշտատեւ նիւթն եղաւ, և մանաւանդ  
քաջալերուեցայ մօրս զարդացած և լուրջ գաղափարներէն,  
որոնցմով ինքը կը փայլէր շատոնցուընէ ի վեր Հայ Աղդին  
յետադէմ աշխարհին վրայ։ Ոչի՞նչ այնչափ զօրաւոր է որչափ  
մայրենի խրախոյսը։ ուստի անձիս հետ կ'աճէր յիս գեղծ-  
մանց դէմ թշնամութիւն, և արդարութեան համար սէր։  
բայց սէր մ'անզօր և անխօս, զի ապրած միջավայրս լուռ-  
թեան կը դատապարտէր լեզուս։

Վերջապէս հասաւ այն օրը յորում բաղդակից եղաւ ինձ  
գեղարուեստի զաւակ մի, այսինքն անհունութեան զաւակ՝  
զի գեղարուեստն անծիրն է։ Կերդաշնակութեան աշխարհ-  
ներու մէջ ազատօրէն գեգերող ճոխ միտքը ընականապէս  
սահմանափակ միջավայրներու և նախապաշարմանց թշնամին  
ըլլալով, ազատ թողուց զիս մտածելու և բողոքելու։ Այսօր  
հրապարակաւ երախտագիտութեանս տուրքը կը մատուցա-  
նէմ Ամուսնոյս, հոգւոյս պէտքը հասկցած, քաջալերած և  
կերպով մի Մօրս ընթացքը շար նակած ըլլալուն համար։

Ուստի բաւական ժամանակէ ի վեր հոգիս կը մաշէր ըն-

կերպյին այլ և այլ ողորմելի նախապաշարմանց տեսարանէն : Կը տեսնէի , կը ցաւէի , բերնով կը բողոքէի , իսկ այսօր գրչով կը բողոքեմ : Ի՞նչ փոյթ ինձ կարողութեանս նուազութիւնը , ի՞նչ փոյթ դատապնութիւնը : Ես խղճիս ձայնին կը հնապանդիմ , պէտք մի կը լրացնեմ , բաւ է ինձ այդ :

Կը կրկնեմ՝ անիրաւութեան և նախապաշարմանց թշնամին եմ . հետեւապէս սրտմուելով կը տեսնեմ այն շղթաները որով կանացի սեռը կաշկանդուած է . այնպէս որ կնոջ ո՛չ խօսքը , ո՛չ գործը , և ո՛չ շարժումը բնական է կամ ճշմարիտ . և միթէ լուծի ներքեւ ճշմարտութիւնը կրնայ ապրիւերելք : Կնոջ ցաւալի վիճակը խորհրդածութեանցս առարկայ եղած է միշտ . զի կինն ընկերութեան ողորմելի զոհն է : Կ'ամաչէ նա սիրելու՝ այսինքն սիրտ մ'ունենալը խոստովանելու . կ'ամաչէ արդարութեան բառը հնչելու՝ այսինքն իրաւունք մ'ունենալը յայտարարելու . կ'ամաչէ կրօնից և օրինաց զեղծմունքը յայտնելու՝ այսինքն խիղճ և բանականութիւն ունենալը ապացուցանելու . վերջապէս կ'ամաչէ իւրբարոյական հանգամանքն ամբողջապէս ի հանդէս հանելու : Ե՛ս եմ , Ե՛ս ես ի հաշիւ կրնամ մանել , ըսելու : Ուստի գլխիկոր , ափ ի բերան կ'ապրի , կ'անցնի աշխարհէս անձայն և անշշուկ , և որչափ աննշմարելի ըլլայ ընթացքն ա՛յնչափ գովելի է :

Ահա մեր այժմեայ ցաւալի կացութիւնն որոյ դէմ կը բողոքէ մեծն Ամերիկա՝ որրանն ազատութեան , և իւր բողոքներն սկսած են արձագանք գտնալ Եւրոպայի մէջ , և օրաւուր զօրանալ :


Վիպասանական պատմութեան ձեւով փափագեցայ ընկերական զեղծմանց զլիսաւորները նշանակել . հետեւապէս մեծ կամ չափաւոր կատարելութեամբ վէտ մի հեղինակած

ըլլալու յաւակնութիւնը չունիմ։ Ուզեցի ճշմարտութիւնը յայտնել ախորժելի ձեւի ներքեւ, և այս եղաւ գլխաւոր գըրգիռս վէպ մի գրելու, թէ և կը խոստովանիմ որ այս երկը յօրինելու մղուեցայ նաև հանճարեղ և ներողամիտ բարեկամներէ, որոց ձայնը միշտ ազդեցութիւն ունեցած է վրաս :

Ընթերցողացս ներողամոտութիւնը կը խնդրեմ երկիս նըկատմամբ, որ եթէ զուրկ է ամենայն կատարելութենէ, գոնէ սա միակ առաւելութիւնն ունի որ խղճմուական քաջութեամբ ճշմարտութիւնն արտայայտուած է անդ։ Գիտեմ որ ոմանք պիտի վիրաւորուին, ոմանք պիտի սրտմտին, շատերը յանդուզն պիտի համարին զիս։ Գրիչը ճշմարտութեան գործիքն ըլլալու է. ի՞նչ փոյթ եթէ հալածուի և դատապարտուի։ Ճշմարտութիւնը վսեմ նահատակութիւն մի չէ՝ արդեօք։

Ս. 8.

2 003





# Մ Ա Յ Տ Ս Ա.



Տիկին Սիրա առ. Մայտա

Մահը կորզեց քեզմէ հայրդ, մայրդ և ամուսինդ, և վարուեցաւ քեզի հետ չարաշար անդթութեամբ, իշխես :

Մարդս ծնանելու է մարդ կային փունջին կաղմակերպութեանը ծառայելու համար, և մեռնելու է իւր անիւնով բեղմնաւորելու մահուան մեծատարած դաշար : Ծնունդ և մահ, տառնք կենաց երկու բեւեռներն են . մին կ'սկսի ինչ որ միւսն կը վերջացնէ, յանգէտս կը ծառայենք անոնց նպատակին . կենդանի թէ մեռեալ ընդհանուր ամբողջութեան մաս մ'նք : Մահը կը հարուածէ ըստ դիպուածոյ . կարնուազն ովկ կուզէ ըլլայ, ինչ փոյթ իրեն : Մարդս կը ծնանի, կ'աճի, կը մեռնի վերջապէս տեղ բանալու նպատակաւ իւր յաջորդին . եթէ ինքը քանի մ'արեւ առելի տեսնէ, առաւելութիւն մի կը համարի զայդ անշուշտ : Սակայն ինչ փոյթ է այդ մահուան որ կը ջանայ իւր առարը ստուարացնել միացն : Դուն իւր ձեռաց ներքեւ էիր, իւր հարուածները վրադ տեղացուց ո՛չ թէ դուն ըլլալուդ, այլ հոն գտնուելուդ պատճառաւ :

Արսես թէ բազդն որ որբանեղ ժպտեցաւ քեզ  
թշնամի դարձաւ ի վերջոյ . բայց ինչ է բազդը եթէ  
ոչ դէպքերու բնական ընթացքը : Կենաց ահազին  
փունջը ծաղիկներէ և փուշերէ բաղկացեալ՝ կը քայ-  
քայի անընդհատ և կը վերակազմուի շարունակ . նախ  
ծաղկունքն ինկան քու բաժնիդ և յետոյ փուշերն .  
այս է պարզապէս բոլոր եղելութիւնը :

Սիրեցեալքդ եկան , մեկնեցան , և գուն մնա-  
ցիր , ինչ զարմանք . օր մ'ալ քու կարդդ կուգայ ,  
և գուցէ ուրիշներն անտէր՝ կը թողուս : Ոչ եւս ու-  
նիս մայրենի անսահման և անխոնջ անձնուիրութիւ-  
նը . ոչ եւս ունիս անոր հակող նայուածքն որ ա-  
պաստան եղած էր կուսական շնորհացդ . ոչ եւս  
ունիս հայրենի հովանին որոյ ներքեւ դու կ'ա-  
ձէիր , գոլար տունկ . ոչ եւս ունիս ամուսնոյ սիր-  
տըն իրբեւ նեցուկ կենացդ . ոչինչ մնաց քեզ ա-  
ստնցմէ , ոչինչ՝ բաց ի աւերակներէ : Բայց փոխա-  
նակ հոն աչքդ յասելու , նոր չինք մի կանգնէ՝ ա-  
նոնց վրայ , և աղջկանդ վրայ ամիտիէ այն զգա-  
ցուներն որոնց երբեմն առարկայ եղած էիր : Սիրէ  
իրբեւ մայրդ որ սիրեց զքեզ , և աղջկանդ պաշտ-  
պանն եղիր ինչպէս իւր հայրը պիտի ըլլար . սէրդ  
կրկնապատկուելով պաշտօնդ ու յարդդ նոյնչափով  
կը մեծնան : Մեր տուած խնամոց համեմատ տը-  
գայք կ'ածին և կը փոխարինեն մեր ծառայութիւն-  
քը . մայրենի անհոգութիւնն այդ գոլարիկ էակաց  
կորստեան պատճառն ըլլալով՝ անոնք եւս ուրիշներն  
ի կորուստ կը մատնեն օր մի , որովհետեւ շարն ա-

մուլ չի մնար , այլ թունալից պառազներ կը հասցնէ մինչեւ որ արմատը ցամքի :

Ապագային երկնից վրայ ոչ այլ ինչ կը նշմարես , կըսես , եթէ ոչ սեւ կէտ մ'որ թուի քեզ մահագուշակ : Փոխանակ ակնապիշ ըլլալու հոն , դարձու աչքերդ ուրիշ լուսաւոր կէտի , ապագային կամարը գիշերամած մնալու նախասահմանեալ չէ երբէք : Իւրաւոր յուսոյ աստղեր կը փայլին անդ նաև անոյշ և մսիթարիչ լուսով : Ճիր գործունէութեամբ և կամ վշատութեամբ կենաց փայլը կամ մուայլը փոքր ի շատէ հաստատելու կը նպաստենք : Ազատ ես դու լոյսը կամ գիշերն ընտրելու :



### Մայտա առ. Տիկին Սիրա

Տառապանք , վշատութիւն և մթութիւն , կենաց մէջ ահա ասոնք են իմ բաժինս . արտասուք և հառաջանք ասոնք են իմ հաճոցքս . սաստկապահանջ ընկերութիւն մի , այս է իմ ծնողքս : Արդէն նա աչքերը բացած կապաէ մէկ անխոհեմութեանս՝ զիս դատապարտելու և յօշտելու համար : Ընկերութիւնն անողոք դատաւոր մ'է զոր ոչինչ կրնայ ամոքել . իւր խարապանը պատրաստած է ինձ արդէն : Այրին զոհ մ'է զուրկ վրէժինդիր ձայնէ , ինչպէս արդեօք ովէտք է գործել , ինչ քայլով յա-

սաջանալ . վարանած եմ և վշատած : Ես դալարագեղ տերեւն եմ սաստկաշունչ բռքէն կորպուած որ փոշւոյն մէջ կը թաւաղի մինչեւ որ յօշտի և մասունքն աստ անդ կորսուին : Ով դու , երկրորդ մայր իմ , օդնէ ինձ կենացս դառնութեանց մէջ , սուաջնորդէ ինձ փորձառու խրատներովդ :



### Տիկին Սիրա առ. Մայտա

Կհէ բանէ կը դանդատիս , դու անձամբ վիճակդ սլատրաստեցիր . այնպիսի շրջանակի մէջ անձդ ամփոփեցիր որ զքեղ ձնչեց մինչեւ բարձրածայն ազաղակել տալու . երբ չարիքը բարձրագոյն աստիճանին հասաւ . կուզես զինքը յաղթահարել : Կրնայիր խեզդամահ ընել զայն և սկրբան . բայց արդ իւր գերին ես դու : Գրկեցիր զաշխարհ և իւր մոլութիւնքն , ստութիւնքն և կեղծաւորութիւնքը . հաճեցար անդ չգիտնալով թէ ինչ բանի անձդ կը մատնէիր : Արդ ահարեկ՝ կը տեսնես հրէշ վիճակդ , կը դանդատիս առանց հետազօտելու պատճառն որ դու ես նոյն իսկ :

Մինչ տղայ էիր՝ ծնողացդ պաշտպանութեան ներքեւ ապրեցար , և մինչ ծաղկահատակ՝ ամուսնոյդ . զամենայն ինչ սպարտաւոր էիր ամուսնոյդ . պատւոյդ նախանձախնդիր էիր անոր համար . և

դպր իրմով կը պահպանէիր . անոր կը պարտէիր վիճակդ և մինչեւ անգամ կրած անունդ զրբ անրիծ կը պահէիր ի պատիւ անոր . իսկ անձիդ նկատմամբ դու գործելիք չունէիր . ընտանեացդ անունը , անձդ իսկ , կնոջ պատուասիրութիւնն ոչի՞նչ էին քեզ համար : Առաքինի ասլրեցար ամուսնոյդ պատիւը չաղարտելու համար , և ոչ թէ կին , հրեշտակ ըլլալուդ պատճառաւ . ոչ թէ առաքինութենէն յառաջ եկած մեծութիւնդ պահելու համար , ոչ թէ մայր ըլլալուդ , այսինքն այն վճիտ երկնային հայելին ուր անմեղ մանուկն իւր անմեղ պատկերը կը տեսնէ : Ոչի՞նչ ես դու ուրեմն քեզմով . զէրօ<sup>o</sup> մ'ես որ յարգ կ'ստանաց միայն երբ ամուսին ըսուած թուոյն կը հետամտի . չունինս սիրտ զգալու համար , միտք մըտածելու , բանականութիւն՝ դատելու , կամք՝ դործելու : Ամուսնութեամբդ փայլուն վիճակ , ձոխութիւն , փառք և պատիւ ստացար : Մահը յափշտակեց ամուսինդ և միանգամայն պաշտպանդ . այրի եւս սրտով և վիճակով . վայելած պատիւներդ մահն իւր հետ առաւ տարաւ , թողլովքեզ զաւակ մի և ծանր պատասխանատութիւն անունդ՝ անարատ պահելու : Դերդ կը փոխես , իբրեւ զո՞ւ և հանդիսատես : Զեւերդ կ'այլակերպես , կը նսեմանաս ոչ թէ իբրեւ արտայայտութիւն մեծ վշտի , այլ զրկուած ըլլալուդ պատճառաւ՝ ամուսնական պաշտպան մերքեւ կը վստահանայիր մոլորութիւն մի քողարկեւ նոյն իսկ եթէ սոսկալի հարկը պահանջէր զայդ : Աւրեմն դաստիարակի կը կարօտէիր գործելիքդ ուսա-

նելու և պատշաճողութեանց սահմանին մէջ մնալու . և երբ այդ դաստիարակը կը պակսի ոչ եւս ես կարող առաջնորդուելու . ուրեմն ուրիշի՝ և ոչ թէ պատուափրութեանդ եւ պարտուցդ ազգեցութեամբը կը գործէիր : Ա'կ որ ոյժը յարտաքուստ և ոչ թէ իրմէ կը քաղէ , տատանեալ վիճակի ենթակայ է միշտ : Լաւագոյն է տկար զօրութիւնն որ ի մեզ է , քան թէ մեծը որ ուրիշներէ կը բղխի . առաջինն այնալիսի կարողութիւն մ'է որ մեր յայտարարած կորովցն և գործունէութեան չափով կը ներգործուի , և որուն տեւողութեան չափը մեր կեանքէն կախում ունի :

Ազատ կ'ապրէիր համեմատաբար , զի պաշտպան չուք մի կը հովանաւորէր քեզ . իսկ արդ ձնշուած ես , ոչ կը խօսիս և ոչ կը գործես համարձակօրէն . զիտէս ինչ է պատճառը : Վասն զի մինչեւ այսօր և ոչ մէկ պարագայի մէջ նախաձեռնութեան ոգին ունեցար , այլ սովորութեանց և նախապաշարմանց գծած շաւղին հետեւեցար : Այսօր բաղդին կառքը զքեզ գետինը տապալած ըլլալով , անձդ տարբեր աշխարհի մէջ կը դանես . ինչ որ էիր ամուսնովդ էիր . իսկ ինչ ես այսօր միայն քու անձնական ուժիդ յենած : Միշտ մտածեցիր և գործեցիր հաստատուած կանոններուն և այլոց ճաշակաց համեմատ . կարողացար երբէք հասարակաց կարծիքը դիմագրաւելու ոչ միայն պատշաճ ինչ՝ այլ նոյն իսկ բարին կատարելու ժամանակիդ . քաջութիւնն ունեցած զգալու ըստ թելաղբանաց սրտիդ , մտածելու ըստ թելաղբանաց մտքիդ , և դատելու ըստ թե-

լադ բանաց դատողութեանդ : Ո՞չ, այդ քաջութիւնը չունեցար դու երբէք . ամուսինդ եղաւ առաջնորդդ, և նախապաշարմանց աշխարհ՝ քու վարժարանդ : Զուրկ պաշտպանէդ՝ դատաքննութեանց, նախանձու և անիրաւութեանց մատնուած ես արդ : Կ'ըմբը ըստնեմ երկիւղդ դիմադրելու եռազլուխ հրէշին որ կ'անուանուի հասարակաց կարծիք, և որուն ներքեւ կը քօղարկուին ստութիւնք և կեղծաւորութիւնք : Կ'ըմբունեմ խօսելու և գործելու երկչուութիւնդ՝ իրր հովանի ունենալով միայն կնոջ պատուասիրուրութիւնդ . ոչ երբէք անոր հովանաւորութեան դիմեցիր, զի անկարող համարեցար զայն, մինչդեռ միակ զօրաւորն է և միակ հաւատարիմն մեզ :

Նուր ինձ . ճշմարտութիւնը երբեմն կը սեւնայ ամբաստանութեան մրուրովը, սակայն ընդ հուալ այդ մրուրն ի բաց նետելով շքեղափայլ կը հանդիսանայ վերստին : Յարատեւ չարախօսութեան ոչ երբէք մաքրութիւնը նիւթ կ'ըլլայ . կ'ենթարկուի անոր միայն ինչ որ գեղեցիկ երեւոյթի ներքեւ անբարոյականութիւն կը պատսպարէ : Սուտը ոչ երբէք գեղեցկին գոյներովը կրնայ փայլիլ . անոր ներկն ունի միայն որ կը թափի իսկոյն դատաքննութեան փորձոյ մառջեւ :

Տանդ մէջ անտես խորասուզուելովդ չէ, և ոչ առ երեւոյթս ընկերային օրինաց հնազանդելովդ է որ պիտի համոզես զիս բարձր կին մ'ըլլալուդ . զի առանձնութեան մէջ շատ անդամ ոճիրներ կը գործուին, եւ մթութիւնը շատ մոլորութիւններ կը ծածկէ : Այլ աշխարհիս բեմին վրայ կ'ուզեմ տես-

նել զքեզ, և ի տես ամենուն մարտնչելով փոթորկաց դէմ եւ յաղթահարելով զանոնք . ուր չիկայ մարտ հոն շիք արժանիք . պատերազմի դաշտին վրբայ կը յայտնուի զինուորին արիւթիւնը : Թող ուրեմն այն առանձնութիւնը ուր թաղուեցար և յայտնէ աշխարհիս թէ ազատ կին մի , ազատ՝ իւր դործերովն և գաղափարներով , իրաւունք ունի ընդհանուր յարդանաց ցորչափ ինքը նախանձախնդիր է իւր պատւոյն , մանաւանդ թէ նա կը պահանջէ այդ յարդանքը : Ընեերական սովորութեանց և օրինաց լաւ և արդար մասը պահէ անձիդ համար , ոտնակրիս ըրէ ինչ որ կը նուաստացնէ զքեզ , համարձակ աչօք նայէ նախապաշարմանց դարերէն զար կացած . նայէ անոնց ամենայն տեսակէտով , ընտելացիր անոնց հետ , և յայնժամ պիտի տեսնես սոսկավիթ-խար համեմատութեանց փոքրանալը և փոխանակ ահաւոր հրէշի՝ պիտի դիտես գաճաճ մի որմէ գըլուխդ արհամարհանօք պիտի դարձնես : Նախապաշարումը անիրաւութիւն է , անիրաւութիւնը՝ ստութիւն . ստելք՝ ձմարտութեան երեսին թքնել է :

Կինը նախապաշարմանց և ընկերութեան զոհն է . զոհ ծաղկազարդ որ կը խնկարկուի ցորչափ զօրաւոր տէր մ'ունի : Յայց երբ տէրը կ'իյնայ , ինքն ալ անոր հետ կ'իյնայ , և երբ կը մեռնի՝ կնոջ բռլը յոյսերը կը մարին : Յայնժամ կինը կը մերկացնեն իւր զարդերէն և անկարողութեանն հանդէս թողլով զայն կը գոչեն բարձրածայն և Մեծութեանց և պատույ դռներն ուր կ'առաջնորդեն դիտութիւնք և արժանաւորութիւն զոց են քեզ համար ,

մի միայն այն պատճառաւ որ կին ես դու » : Իր-  
թեւ չնորհք կը թողուն մեզ կեանքը միայն առանց  
իսկ խորհելու ապրուստի միջոցաց մասին : Եւ բո-  
լոր անոնք որ երբեմն մէկ նայուածքդ կը մուրային  
հզօր ամուսին մ'ունեցած ժամանակդ, արդ հա-  
զիւ կը ճանաչեն զքեզ : Եւ այն կինն որ երէկ դեռ  
թագուհի էր, և այսօր թշուառ և խեղճ արարած,  
տակաւին կ'ուզէ հաձելի ըլլալ անիրաւ և անգութ-  
ընկերութեան մ'որ միշտ պատրաստ է մահացնելու  
զինքն աղէտալի վճռովն, առանց ի հաշիւ առնելու  
անոր տառապանքն, արտասուքը, տքնութիւնները,  
լքումը, և բոլոր այն դիւցազնական ճիգերն որով  
դժբաղդութեան դէմ կը մրցի իւր կեանքն ասլա-  
հովելու մտօք :

Դու, Մայտա՛, կը դանգատիս ընկերութեան  
անիրաւութենէն . բայց ինչ փոյթ քեզ երբ սիրտ  
մ'ունիս սիրելու համար, միտք՝ խորհելու, կամք՝  
գործելու . ազատ ես, գործէ . և ով որ ազատ է  
և կը գործէ, կարեկցութեան տեղի չտար : Դու  
տէր ես գործոցդ և բաղդիդ . անձնուիրութիւն  
մ'ես արդ և ոչ թէ շուք . ձայն մ'ես և ոչ արձա-  
գանք . արշալցան ես որ օրն կ'աւետէ . ոչ, ափսո-  
սալի չես :



## Մայտա առ. Տիկին Սիրա

Թո՞ղ վայրիկ մ'որ ինքզինքս գտնամ, թո՞ղ որ  
սթափիմ. ով արդեօք կրնայ աղէտիցս չափը հաշ-  
ուել: Թաղեցի երջանիկ օրերս անցելոյն գերեզմա-  
նին մէջ . տխուր ներկայն եմ արդ որ ձեռքե-  
րուն մէջ կը բերէ ցաւն ու վշատութիւնը : Ընդ  
վայր աչքերս կը դոցեմ . կ'զգամ ամեն ուրեք ա-  
նոնց ցուրտ թարթումը . ընդ վայր կ'ուզեմ փա-  
խուստ տալ իմ նսեմ բաղդէս , ո՞հ ամեն ուրեք ա-  
նոր կը հանդիպիմ :



## Տիկին Սիրա առ. Մայտա

Ի՞նչ բանի կը ծառայէ անընդհատ տրտունջը .  
ցաւը հոգւոյն թոքախտն է , կը պեղէ զայն տակաւ  
առ տակաւ , և հուսկ յետոյ կ'ոչնչացնէ : Անցելոյն  
վրայ լալով՝ հոգւոյն ոյժերը կը ցրուին փուճ տեղը .  
ներկային ծառը տնկելը պտուղներն ապաքային մէջ  
քաղելու համար , այնպիսի ընթացք մ'արժանի է  
բանաւոր էակի որ կը ճանաչէ երկրիս վրայ ունե-  
ցած կոչումը : Կ'ողբաս մեծութիւն մ'որ ամուսնոյդ  
փառաց վրայ հիմոււած էր . կուլաս ստացուածք-  
չեղած բանին համար՝ որմէ իրաւ է որ դու եւս մաս  
մ'ունէիր : Այնչափ անձիդ սեփականացուցած էիր

ուրիշի աշխատութեան պառազներն որ անոնց օրինաւոր տիրուհին թուեցաւ քեզ ըլլալ, և այսօր կ'ողբաս այն կրուստն՝ իրը թէ գանձերը ճակտիդ քըրտամբ շահած ըլլայիր : Յիշէ որ երկարատեւ է միայն ինչ որ մեզմէ կը բղիսի, և ինչ որ մեզմով կ'ապրի : Պատիւ և յարգանք կ'ուզե՞ս, դու անձամբ ըստացիր զանոնք : Մայր ես, ուստի ամուսին և մայր սրատրաստելու պաշտօնն ունիս . կիրթ է միտքդ և զարգացած, գործածէ զայն ի պէտս մարդկութեան : Յարձակէ խաւարին վրայ որոյ ներքեւ կը ծածկուին սուտն ու անիրաւութիւնը : Զարադրուժք բարձրայօն կը կանգնին՝ մինչ ընկերութիւնը կորաքամակ կը քայլէ : Զինուց շաշիւնը՝ հարստահարելոց աղաղակները կը խեղդէ, ինչպէս հարստահարողին զեղխութիւնքը և կողոպտուածին հեծկլտանքը : Տէրն ու գերին, հալածողն ու հալածեալը, հարուստն և աղքատը իրարու շփուելով, զիրար բաղխելով, խընդութեան եւ տառապանաց աղաղակներն իրարու խառնուելով յառաջ կ'երթան, ոմանք կոխկուտելով, ոմանք կոխկուտուելով : Ահա քեզ ընդարձակ դաշտ գործողութեան, Մայտա՛ : Ի տես ընդհանուր թըշուառութեանց մոռցիր քուկիններդ . ընդհանուր անիրաւութեանց առջեւ մի յիշեր թէ դուն ենթակայ ես անոնց : Խեղդէ հեծկլտանքդ ի լուր հեծկլտանաց ընկերութեան : Արբէ արտասուքդ, վեր կանգնէ և քայլէ :

Խոկ զքեզ չճանչնալ ձեւացնողներն, և կանգուն տեսնելով զարմացողները՝ մինչ ոչնչացած կը կարծէին զքեզ, եթէ հարցնեն թէ « Ուր երթաս » ,

պատասխանէ և Դուք դատապարտեցիք դիս մթութեան և կորստեան, և ահա յոտս կը կանգնիմ . իմ գիմացս ձեր նախապաշարմունքն բերիք, և ես ահա հոն կը կոլսեմ եւ կ'անցնիմ, զի յանձս շարժում կը կրեմ :

Միացիր արդարութեան բարեկամաց, միացիր անոնց որք բերան ունին ճշմարտութիւնը խոստովանելու և թեւեր՝ աշխատելու : Այս ասպարէդին մէջ քաղելիք պատիւներդ պիտի ապրին որչափ ապրիս և յետ մահուան իսկ . զի մեծ սկզբան ծառայելը յափտենականութեան համար գործել է . և յայնժամ չի պիտի ողբաս վազանցուկ մեծութեանդ կորստեան վրայ ինչպէս որ կընես արդ : Մեկուսի թող ուրեմն վիշտդ որ գործելու հանգամանքդ կը ջլատէ . դարձու աչքերդ շուրջդ և դիտէ թէ որդէն սկսեալ մինչեւ մեր գլխուն վրայ կախուած հրային աշխարհները շարժում ու կեանք կը կրեն, եւ ամենքը կը հալատակին բարձրագոյն օրինաց, այսինքն շարժման օրինաց : Երբ ամեն անհատական աշխատութեանց բովանդակութեամբը մարդկութեան ընդարձակ գործողութիւնը կը կատարուի և անով իւր հաւասարակշութիւնը կը պահպանուի, ինչ իրաւամբ դու թերի պիտի թողուս այն մասն որ սահմանուած է քեզ՝ ջանիւքդ լրացնելու : Ե՞րբ արդեօք երկինք դադրեցաւ զմեղ լուսովն ուողելէ, բնութիւնը բեղմնաւորելէ, թոչունն երգելէ, առուակը կարկաչելէ, ծաղիկն իւր բոյրը ծաւալելէ, եւ ամբողջութիւնը ներդաշնակութեան աշխարհին մէջ սահմանուելէ : Մարդս միայն ուրեմն իրաւուն-

քըն ստացած է խոտորելու ընդհանուր օրէնքէն եւ  
ոչնչութեան մատնելու ինչ որ կոչում ունի արդա-  
ւանդելու և ապրելու : Վշտահար կեանքը մարդս  
ծուլութեան վարժեցնելով՝ իւր ստեղծող և գործող  
կարողութիւնքը կը ջլատէ , և իւր թռիչը խափա-  
նելով կը դատապարտէ սողալու : Սաստիկ վիշտը  
մեծ յաջողութեան կը նմանի . երկուքն ալ զմեղ կը  
մոլորեցնեն . առաջինն անզգայութեան կը տանի ,  
երկրորդն անհոգութեան : Կ'երկրորդէմ , Մայտա ,  
վերջ տուր կսկիծիդ . անցեալդ արդէն խորասուզ-  
ուեցաւ մոռացութեան արագընթաց ջուրերուն մէջ .  
ի զուր անոր հետքը կ'որոնես ներկային մէջ որ քեզ  
հանդէալ զարհուրելի եւ սպառնալից կը կանդնի :  
Անցեալը վրադ դուրդուրաց ինչպէս սիրեցեալ  
գողարիկ որդեկի . իսկ ներկայն զքեզ կին պիտի  
հանդիացնէ ընդդէմ դժբաղդութեանց անձդ ա-  
րիացնելով , և պիտի հարկադրէ մտացդ և սրտիդ  
գանձերուն զիմել . պիտի վարժեցնէ վտանգը դի-  
մագրաւել , և կենաց նայիլ անվրդով և անահ աչօք .  
կինը տղան չարժէր արդեօք . առաջինը զօրութիւն  
մ'է , իսկ երկրորդը չնորհք :



Մայտա առ. Տիկին Սիրա

Մի այդչափ վութար դատապարելու զիս . շը  
զիտես թէ որչափ սիրտա թախիծով բեռնաւորուած

է : Ով արդեօք կրնայ հասնիլ մինչեւ անոր խորութեան և ըմբռնել թէ ինչ բեռի ներքեւ կը հեծէ այն : Վիճակիս կրած փոփոխութիւնն այն աստիճանի կը զարմացնէ զիս որ կը տարակուսիմ թէ արթուն եմ արդեօք թէ կ'երազեմ : Խնչ անկում, ինչ վշատութիւն . խեղձ սիրտ, ոչ ոք զիտէ թէ որչափ կը հեծես լոին :



### Տիկին Սիրա առ. Մայտա

Մարդկային սիրաը բով մ'է ուր կը ցուլուի մարդկութեան պատմութիւնը : Ով կը ձանաչէ անոր յատակը, եւ ով արդեօք կրնայ հասնիլ մինչեւ անդ : Կրնաս ի հաշիւ առնոււլ սրտին բոլոր բարախումները . մէն մի բարախում հետեւանքն է արտասուքի՝ որ հոգւոյն եթերական ծուէն մ'է . կամ ժալտի մ' որ իբրեւ գարնանային ծաղիկ կենաց շրջակայները կը գեղեցկացնէ . հետեւանքն է սիրոյ նշուլի՝ որ արշալոյն է սրտի . պատրանաց թառաշի՝ որ հրէշ մ'է եւ սեւաթոյր գերեզման կը կրէ դլխուն վերեւ : Մէն մի արտասուք, մէն մի ժալտիտ, մէն մի նշոյլ սիրոյ, մէն մի թառաշ պատրանաց՝ կենաց վէպին մէկ մասը կը

պարունակէ . ինչու կը գանդատիս եթէ օտար աշքը չի կրնար ամփոփել այդ վէպին ամբողջութիւնը : Բայց նախ ըսէ ինձ , կը ճանաչես զայդ դուիլքնին . ի հաշիւ առիր արդեօք այն ամէն լուսափիւո հետքերն որ ուրախութիւնը թողուց սրբատիդ մէջ . դիտեցիր թէ որքան աւերեցաւ յուսոյ ծաղիկը զոր քաղեցիր և թաղեցիր յետոյ սրտիդ գերեզմանին մէջ՝ ինքնին մնչելով « Աւեր մ'աւելի , կենաց մասունք մի նուազ » : Ի հաշիւ առիր բոլոր երջանկութեան երազներդ , և թէ քանի անդամ հայեցուածքդ ի վեր բարձրացուցիր , անդ գտնելու համար գուցէ ինչ որ կը պակաէր քեզ ի վայր : Ի հաշիւ առիր թէ քանի արտասուք հոսեցան աչքերէդ : Ըսէ , հաշուեցիր զայս ամենայն : Ո՛չ անշուշտ . կ'անդիտանաս անոնց թիւն , և ի զուր պիտի ջանաս գիտնալու : Վշտի մէն մի բարախումը կ'ուշնչանայ սրտին անշուք փոսին մէջ , մինչդեռ իւր յաջորդը թուի լինել անոր տիսուր շարունակութիւնը : Կրնաս միայն ուրախութեան փայլակները նըշանակել . սակայն հազիւ հազ կ'սկսիս թուարկել զանոնք , որ ահա լեզի արտասուքը կը ջնջէ նոյն իսկ անոր յիշատակը : Ոչ , դու ինքնին չես ճանաչեր սրբատիդ հրճուանքը , տիսրութիւնը և բաղձանքը :

Ըսէ , դիտես ինչ կամիս . կարծես թէ դիտես , բայց որքան կը սխալիս . կը դիմես միշտ դէպի անկարելին . երբ նպատակիդ հասնիս աչքերդ կը դարձնես անտարբերութեամբ , և նորանոր՝ իզձերով կը համակառիս , որք արժէք մ'ունին քեզ համար ցորչափ անդործադրելի են և հեռաւորութեան

մէջ կը տեսնես զանոնք , զի ի մօտուսար իրենց հըս-  
կայածեւ չափերը կը կորանցնեն :

Կեանքը շղթայ մ'է որուն օղակները մեր բաղ-  
ձանքներէն կը կազմուին . որչափ այդ բաղձանք-  
ներն իրականանան նոյնչափ ալ նորանորներ կը ծը-  
նանին . մահը կը ջախջախէ վերջապէս այդ շղթան  
երբ տակաւին վերջին օղակին հասած չենք : Կտրէ  
իրձերուդ թեւերն և սահմանափակէ զանոնք սրար-  
տուցդ շրջանին մէջ : Ընտրէ նպատակ մ'որ համա-  
պատասխանէ բանական էակին երկրիս վրայ ունե-  
ցած կոչման , և հետամուտ եղիր անոր , անընդհատ  
ջանա յառաջ մղել և կամ կատարելագործել ընտ-  
րած աշխատութեանդ ձիւզն . արհամարհէ արդել-  
քը , քանի որ յարատեւութիւնը կը յաղթահարէ  
զանոնք , զի չի կայ ախտ որուն դեղը չի դանուի  
հաստատ կամքով : Իրականութիւնն ընտրէ քեզ նր-  
պատակ . անորոշ փափաքներն եւ անեղբութեան  
սէրը պահէ միայն այն ժամանակիդ համար՝ երբ  
հոգիդ ձանձրացած կենաց խիստ իրականութիւն-  
ներէ վայրիկ մի կուղէ մկրտուելով ոգեւորիլ վե-  
րըստին երեւակայական աշխարհի անոյշ հեշտու-  
թեանց մէջ : Որչափ նուազ ըլլան իղձերդ և անոյշ  
ցնորբդ նոյնչափ ալ աղատ կը մնաս պատրանք-  
ներէ . տասը հաճոյք՝ կ'արժէն արդեօք մէկ պատ-  
րանք : Ժպտուն ցնորք և հաճոյք կը կենդանացնեն  
ու կը գեղեցկացնեն կեանքը դուցէ պանչելի խոստ-  
մամբ . բայց որտի պատրանքը դժոխոց կատաղու-  
թեանց խումբն է որք կը սուլեն չուրջ մարդուն ,  
խլելով իւր արիւնթաթաւ ծուէնները , և նետելով

զանոնք ընկերութեան երեսին որ կը խնդայ , կը դատապարտէ և կը բերիլի : ԽԵՂԾ մարդկութիւն կը ծիծաղիս դու արտօսրի , հեծկլտանքի , արեան կաթիլի վրայ որ տակաւին ջերմ է սրտին հրովար ուսկից բղիսեցաւ : Եւ այն ծիծաղն՝ որ մէն մի մարդ դրացնոյն կ'անցնէ , հետպհետէ աճելով հըրեց ծիծաղի կը վերածուի , և անդթաքար կը ձնչէ լքեալ զո՞ւ մի , այսինքն սիրու մի կենսալից : Եւ այն փշրուած սիրան որոյ բարախմունքը տակաւառ տակաւ կը տկարանան , իւր յետին վշտագին շունչը կ'աւանդէ վերջապէս , և անշարժ կը մնայ յաւիտենականութեան մէջ : Հողը կը բացուի , հողը կը դոցուի հրավառ սրտին վրայ մահուան ցրառվն համակեալ : Անցորդին անտարբեր նայուածքը շգիտէր իսկ այն փոսն ուր կը պարունակուի մեծ վէպ մի , այսինքն վէպը սրտի մ'որ երազեց , սիրեց , տառապեցաւ , լացաւ , որ մատնուեցաւ , դատապարտուեցաւ և որուն դէմ ընկերութեան նախապաշարմունք դահճի դեր խաղացին , երբ այդ հէք սիրան ողորմած ձեռքի կը կարօտէր իւր դառն վէրքն սիրուիելու համար :

Ծնկերութեան մէջ ամենայն ինչ պայմանական է . չիք գթութիւն եթէ ոք համարձակի գործել կամ սիրել հակառակ ընկերական օրինաց և նախապաշարմանց : Զոր օրինակ կրօնքն՝ որ հոգւոյն միսիթարութիւնն է , մոլեռանդութեան դարձաւ , այսինքն ատելութեան . և սէրմ՝ որ սրտին սնունդն է , ապականութեան փոխուեցաւ , և մատնութիւն եղաւ : Այսպէս ուրեմն եթէ կը գանուին դեռ

անրիծ սրտեր որ գեղեցկին զգացումը կը տածեն ,  
ոչ ոք կը հաւատայ անոնց , զի իրբեւ երեւակա-  
յութեան ցնորք կը նկատուին և հեղնական ծի-  
ծաղով կը յօշատուին այն խեղճ սրտերը :

Սիրոյ և հաւատքի ներքեւ շահասիրութիւնը կը  
պատսպարի գրեթէ միշտ : Ժպիտն՝ ինչպէս ա-  
զօթքը թակարդ մի կը քօղարկէ . մէկ երկրորդ մի  
ցոյց կուտան , ես չըսելու համար , եւ ուրիշն ի  
հանդէս հանելով՝ գաղտագողի անձնական շահերը  
կ'օգտուին : Մթութիւնն այնչափ թանձրացած է  
որ ոչ ոք կը հաւատայ լուսոյն . և եթէ յանկարծ  
փայլի՝ մեր աչքը կը խտղափ և վերստին խաւարը  
կ'որոնենք ախոփուելու համար : Ամեն բանէ կը  
տարակուսինք նոյն խսկ ճշմարտութենէն , այնչափ  
իրաւ է որ սուտը ճշմարտին տեղը գրաւեց , տը-  
գեղը գեղեցկին , մոլութիւնն առաքինութեան ,  
Ընկերութեան անհաւատարիմ ըլլալու համար սը-  
տախօս կը դառնանք մեր անձին , մեր խղճին ,  
մեր սրտին , մեր դաստիարակութեան նկատմամբ ,  
և այդ սուտով փառաւորուելով կ'ըսենք պարծա-  
նօք « Այս է կեանքը » :

Բայց դու , Մայտա , բարձրացիր քան զսուտ  
եւ զշահ . մեծ եղիր իրր արդարութիւնը , մեծ  
իրբեւ ճշմարտութիւնը , մեծ իրբեւ սուրբ սէրը :  
Խոյս տուր խաւարէն , խոյս տուր ստութենէն .  
մի վախնար առանձին մնալէդ զի ափափ գտնուին  
միշտ դուզնաքեայ եղական մոքեր ընդ քեզ յարա-  
բերութեան մէջ ըլլալու ի հեռուստ թէ ի մօտոյ :  
Եւ համարելով թէ դուն առանձին մնաս ինչ փոյթ

քեզ . հոգիդ յինքն կը քաղէ իւր ոյժն , այսինքն  
արդարութեան և ձմարտութեան սիրոյն մէջ : Ինչ  
որ իրականապէս մեծ է ուրիշի պէտք չունի , զի  
տկարն է որ նեցուկի կը կարօտի միշտ :



### Մայտա առ. Տիկին Սիրա

Ճնշուած էի վշտացս բեռին և նոր պաշտօնիս  
ներքեւ զոր դառնալից վիճակս ճակատագրեց ինձ .  
յուսահատութեան անդունդին մէջ մոլորած կը ծը-  
փացի երր փրկարար ձայնդ յորդորեց զիս ի վեր  
կանգնիլ , արիանալ և աղջկանս քայլերն հաստա-  
տել կենաց դերբուկ ճամբուն մէջ :

Մինչդեռ քիչ յառաջ ես առաջնորդուած էի  
հարկ է արդ որ առաջնորդ կագնիմ առանց փոր-  
ձառութեան ուղեցոյցն ունենալու : Այնպիսի նոր  
աշխարհի մէջ մտայ որուն ուղիները բոլորովին  
կ'անդիտանամ . և մէն մի սխալմունքս սուղի կրնայ  
նստիլ ինձ անշուշտ : Պաշտօնս ահ կ'ազդէ ինձ , և  
սակայն ձեռնամուխս ըլլալու եմ զի մայր եմ և հայր  
միանգամայն : Նիւթական վիճակս սահմանեալ է ,  
թէն ամուսնոյս դրամական ձեռնարկութիւնները  
փայլուն ապագայ մի կրնային ապահովել ինձ եթէ  
այնպիսի ձախորդութիւնք վրայ չի հասնէին , որք  
գուցէ անոր մահը փութացուցին : Կրած անունու

պատուաւոր է , իսկ պատասխանատութիւնս անհուն . չեմ ամաչեր ընկերային աստիճաններէն վար իջնելու , եւ ի պահանջել հարկին պատրաստ եմ աշխատելու , եւ աշխատութեան մէջ սպարծանքս փնտուելու իսկ : Կը զիտեմ որ անցեալ մեծութիւնս կենաց դերբուել շաւիզները ծածկելով անտեսանելի կ'ընէր , իսկ գժբաղդութիւնս յայտ յանդիման կը ներկայացնէ զանոնք : Նայուածքս խրտչեցաւ նախ , բայց երբ առաջին անախորժ ազդեցութիւնը ջնջուի , մարդս ամեն բանի կ'ընտելանայ , նոյն իսկ անհնարին թուածին ,

Լաւ զիտես արդէն թէ տղայութեան օրերս երջանկութեան մէջ սահեցան . մայրս հրեշտակ մէր անձնուիրութեան . իւր անձը մատուցած էր հօրս և ինձ . հայրս կը պաշտէր զիս քանի որ միակ զաւակն էի : Իւր չափաւոր հարստութեամբը կը փափաքէր հայթայթել ինձ կենաց բոլոր հաճոյքն , և հայրենի այդ տկարութիւնն աղէտալի ըլլար ինձ գուցէ , եթէ մայրենի օրինաւոր խատութիւնը հարկաւոր սահմաններու մէջ չ'ամփոփէր զիս : Տեսաւ զիս Պ. Թէոդոսեան , հաւնեցաւ . ամուսնացայ հետը մինչ տասնեհինդ տարեկան էի , և ինքը քառասուն : Հարուստ էր նա և մեծ պատիւ կը վայելէր : Ճաշակեցի ինչ որ ընկերական բարձր աստիճանը և հարստութիւնը կրնան ընձեռել , ինչպէս և աղնիւ սրտէ բլիսած գանձերը : Երբ ծնողքս իրենց պարտականութիւնը կատարեցին՝ կարծես աւելորդ համարեցին այլ եւս ապրիլը : Մայրս նախ զիս որբ թողուց , և հայրս անոր օրինակին հետե-

ւեցաւ . այդ կրկին կորուստը զիս անմիխթար թռուց , և շգիտեմ ինչպէս վիշտս սփոփում պիտի գտնէր եթէ զուրկ ըլլայի ամուսնոյս դորովէն ինչպէս եւ զգուանքներէ ու չնորհալի ժայիտներէ դստրիմիս որ ծնած էր ամուսնութենէս տարի մը ետքը : Վերջապէս ժամանակէն դարման գտայ ցաւերուս , և ըստ ամուսնոյս բաղձանաց վերադարձայ աշխարհային զուարձութեանց , որոնց հրաժեշտ տուած էի ժամանակէ մ'ի վեր : Գիտես արդէն թէ երիտասարդութիւնս և դաստիարակութիւնս որպիսի յազթանակ պատրաստեցին ինձ ընկերութեամբ մէջ . զիտես նաեւ թէ որպիսի ճոխութեամբ կ'ապրէի : Մեռաւ ամուսինս , մեռաւ նաև մեծութիւնս և անդորրս . ամենայն ինչ կորսուեցաւ , աւերակ կայ միայն շուրջս , և տիսուր յիշատակը փառաւոր անցելըս :

Քաշուեցայ արդ անշուք գիւղի մէջ Ասիական եղերաց վրայ : Հիսար օժտեալ է բնական գեղեցկութեամբ . կանաչագեղ բլուրներ թագ մի կը ձեւացնեն իւր գլխին , և տուներու զանազան գոյները ծովուն կապոյտին կը խառնուին գեղեցիկ մրցմամբ : Կարծես թէ Վոսփորը դիտմամբ իւր ջուրերը նեղ սահմանի մէջ կ'ամփոփէ որպիս զի Ասփոյ Հիսարը մօտեցնէ իւր քրոջն՝ Եւրոպից Հիսարին , որ այնչափ մելամազճոտ գեղեցկութեամբ լիէ իւր սղաւոր նոճիներովն . ասոնք անդուլ կը հսկեն այն շիրմաց վրայ ուր կարկաջանոս ջուրերը մահուան քունը կ'որորեն իրենց մրմունջովն , և զորս ալեւոր բերդեր թուին պաշտպանել ընդդէմ

բռնաբարութեանց յանդուդն ձեռաց : Ասիոյ Նիսար զուրկ չէ նաև պատմական առաւելութենէ , զի կը հաստատուի թէ այս վայրէն անցուցած է իւր բանակը Դարեհ՝ թագաւոր Պարսկաց , երբ կ'արշաւէր Սկիւթացւոց դէմ որք խմբեալ էին Դանուբեան նահանգաց մէջ , և որք խոյս տալով և միշտ ընդ յառաջ քայլելով պարտաւորեցին գոռող թագաւորը յետս ընկրկիլ , այդ նահանջին ամօթալից յիշատակը հետը տանելով :

Կը ճանաչես արդէն Նիսարի մեծաշէն տուներըն , և անոնց ընդարձակ պարտէ զները : Գնեցի աժան գնով ծովեղերեայ տուն մի որ հարուստ Տաճկի հեշտավայրն եղած էր . հոն բերած էին սքանչելապէս գեղեցիկ Զէրքէս պատանուհի մի զոր սիրած էր անհուն սիրով : Գեղանւոյն տարաժամ մահն անտանելի ըրած էր տիրոջը սիրոյն այդ տիրագին յիշատակարանը : Ոչ միայն չէր յանձն առած երբէք վերադառնալ յայդ վայր , այլ և ոչ իսկ ըստացուածոց կարգը դասել այն նսեմ բնակարանը : Այս տունը երկու մասէ կը բաղկանայ ինչպէս գըրեթէ բոլոր տաճկարնակ մեծ չէնքերն , այսինքն կանանցն և այրանոցը : Կանանոցը յատկացուցի ինձ ոչ այնչափ ընդարձակ ըլլալուն պատճառաւ որքան է հակառակ մասն՝ որ առաջնոյն շարունակութիւնն է , թէև իրարմէ բաժանեալ ըլլան , ըստ այս մեծ առաւելութեան տաճկաց բնակարաններուն : Գեղեցիկ քարափունք մի կը տարածի տանս բոլոր երկայնութեամբ ուր ամեն գեշեր կը շրջիմ մտախոհելով անցելոյս և ապագայիս վրայ :

Կեանքս տիսուր և անձայն կը սահի : Յուլիանէիս դաստիարակութիւնը՝ որով կ'զբաղիմ, կարեւորագոյն գործս է և միակ միսիթարութիւնս : Հաստատապէս որոշած եմ աղջկանս սորվեցնել կենաց գիտութիւնը . կուզեմ որ իրաց և մարդկանց փորձառութիւնն ստանայ ըստ կարելոյն, եւ պատրաստուած ըլլայ այն ամեն դժբաղդ պատահարաց դէմ որք զիս յանկարծ պաշարեցին, ու ինքն ալ օր մի անծանօթին առջեւ յանկարծ և պատրաստ չը գտնուի իբրեւ զիս, երբ իմ առանձին կարողութեանս մատնուած, յուսաքեկ, կարծեցի թէ անձս սոսկալի երազի մ'էր ենթարկուած և կամ բաղդին խաղալիքն եղած : Երբ վիճակս սկսաւ որոշ գըծերով ճշդուիլ, յայնժամ սաստկացան մտատանջութիւնքս, ու առաւել եւս զգացի լքումս, անկարողութիւնս, և գործոց մասին տգիտութիւնս : Այսպիսի պարագայներու մէջ անփորձ կինը խարխափելով, սխալմունքէ սխալմունք անցնելով դէպի կորուստ կը դիմէ, և իւր գործը կը պսակէ անձին և ընտանեացն աղէտքով : Երանի այն կնոջ եթէ ոզորմած սիրտ մի կը դիւրացնէ իրեն առաջին քայլերը կենաց ասպարէզին մէջ . երանի իրեն եթէ փափուկ ոտքերը կը դիմանան հարուածոց և դինքը կանգուն կը բռնեն մինչեւ վերջը :

Դժուարին է ինձ մեկնել մարդոց այս անիրաւութիւնը կանանց նկատմամբ, որով զանոնք գործերէ հեռացնելով իրենք առանձին տէր կը հանդիսանան : Չեմ ըմբռներ թէ ինչո՞ւ ուրեմն ընկերութիւնը մեր ճեռաց կը յանձնէ ընտանեկան շա-

Հերն որոց կարդադրութիւնը գործոց նկատմամբ զիտութիւն կը պահանջէ : Անչպէս կանանց կը յանձնէ պաշտօն մի որուն բարձրութեան չեն հասնիր անոնք . ինչ կը հետեւի այս ընթացքէն : Կինը իւր բացորոշ անկարողութիւնը նկատելով օտար ձեռաց կը յանձնէ իւր գործերուն կառավարութիւնը , և խնամակալուք չարաշար կը գործածեն այդ վրատահութիւնն իրենց անձնական շահուց ի նպաստ . այսու եղանակաւ ճոխարար ապրելու վարժուած կինը յանկարծ չքաւորութեան կը մատնուի զաւկը-ներովն հանդերձ :

Ահաւասիկ ուրեմն այս դժուարին կացութիւնս ընկերացին կարդադրութեանց կը պարտիմ : Հարկէ ինձ գործոց ուսումն սորվիլ , մօր և հօր պաշտօնը վարել միանդամայն : Իսկ եթէ շահուցս տնօրինութիւնը բարեկամաց օգնութեան կարօտի , այդ ըստիպողական յարաբերութիւնքս՝ անձս այնպիսի դատաքննութեան պիտի ենթարկեն որոյ խստութիւնն անպաշտպան վիճակիս մեծութեանը պիտի համապատասխանէ : Բայց , բարեկամուհիդ իմ , փառք քու խրատուցդ , դատաքննութիւնը պիտի արհամարհեմ . բարոյական ոյժս պատուասիրութեանս և կենացս մաքրութեան մէջ պիտի դտնեմ :

Կանացի բարձրութիւնս թող պապանձման դատապարտէ բանսարկու լեզուները : Ըստ թելադրանացգ կուգեմ օրինակաւս յայտնել ընկերութեան թէ՝ կին մի որ պարտուց զգացման վրաց կը յենու կարողէ գործել ազատօրէն այն շաւզին մէջ զբր կը պարզէն իրեն իւր խիզճը , միտքն և առաքինութիւնը :

Աղէսք ահա վիժեցին զիս խոր գիշերուան մէջ  
ուր որոտմունք ահեղամոռունչ կը պաշարեն զիս ա-  
մեն ուրեք : Իբրեւ խմաստուն զեկաւար ապահով  
նաւահանգստի մէջ կը պատապարեմ կենացս դիւ-  
րաբեկ նաւակը մինչեւ երկնից վերստին սլայծա-  
ռանալը , որով սակաւ ինչ ապահովութիւն կ'ստա-  
նայ ահաբեկ հայեցուածքս :

Սիրելիգ իմ , դու որ իբրեւ անձնուէր մայր  
հանդիսացար միշտ ինձ համար , շարունակէ առաջ-  
նորդելու վեհերոտ և անփորձ քայլերուս : Երբէք  
քեզի համար գաղտնիք չի պիտի ունենամ . և սրր-  
տիս մէջ իբրեւ վճիտ մի հայելի , ամենայն ինչ  
պիտի նշմարես . բայց ցաւ է ինձ ըսել թէ աչքերդ  
տիսրութեան պատկերին պիտի հանդիսին երբ կա-  
մենաս նայիլ անդ :



### Տիկին Սիրա առ. Մայտա

Զգիտեմ թէ հարկ է ինձ անիծել բաղդն որ  
կորզեց քեզմէ կենաց վայելքը , թէ օրհնել այն ա-  
ղէտքն որ երեւան կը հանէ այն ծածուկ և դեղե-  
ցիկ հանդամանքը զոր անդստին նշմարած էի ի քեզ :  
Մարդիկ կը նմանին այն ազգերուն որք երկա-  
րատեւ բարերաստութեամբ մեղկութեան մէջ կը  
խորասուզին : Տեսուր արկածք կը զօրացնեն զանոնք

և ի հանդէս կը բերեն այն թագուն յատկութիւններն որք լինքեանս կը տածէին , առանց իսկ այդ ստացուածքին գաղափարն ունենալու : Դժբաղդութեան դպրոցը մարդս ձեւակերպելու միակ միջոցնէ : Ըսէ ինձ , Մայտա , երբէք կրնայիր հաւատալ թէ դու , փափկասուն երիտասարդուհի , գողտրիկ հեշտութեանց վարժ , կրնայիր ներկայանալ յանկարծ իրբեւ կենաց քաջ զինուոր դժբաղդութեան ճակատավայրին վրայ : Եթէ ոք համարձակէր զայդ հաստատել քեզ , անշուշտ իրբեւ խելագար կը նըկատէիր հաստատողը :

Եթէ խարխուլ առողջութեան պատճառաւ բըռնադատեալ չըլլայի Քօրֆու կղզւոյն մէջ ապրելու , քանի բերկրալի էր ինձ քեզ կենսակից ըլլալ , եւ սիրովս բուժել ցաւերդ գոնէ մասամբ : Սակայն հարկը կը բոնադատէ զիս ի տար աշխարհ ապրելու , հեռու Պօլիսէն՝ մեր բնիկ երկրէն , զուրկ հայրենի Հայ բարբառէն՝ որ կարծես կրկին գեղեցկութիւն կ'զգենու երբ մեր ականջները կը դադրին լսելէ իւր կորովալուր վանկերն . և հեռու ազգայիններէս որոնց յետնագունին լիշտակն անդամ համակրելի զգացում կ'ազդէ : Եթէ մերձաւորութիւնն զգացումները կը զօրացնէ , հեռաւորութիւնը կը զայրացնէ զանոնք և գեղեցկադոյն դոյներով կը նկարէ ինչ որ աննշմարելի էր երբ մեր մօտէն կ'անցնէր : Անհնարին է անդունել ազգային զգացումն և խեղդել զայն ընդհանուր մարդկութեան գաղափարին մէջ : Յորչափ մարդս իւր անձը սիրէ՝ պիտի սիրէ նաև ինչ որ իրեն հետ ուղղակի կամ

անուղղակի յարաբերութիւն մ'ունի , ինչ որ իրմէ  
մաս մ'ունի : Պիտի սիրէ անոնք որ իւր մանկու-  
թիւնը խնամեցին . պիտի սիրէ այն վայրերն որ ի-  
րեն զրօսատեղի եղած են , ու կը յիշեցնեն իրեն  
իւր բարձրաձայն երգերն , աղմկալից խաղերն ,  
տղայական անմեղ ժպիտներն , երիտասարդ սրտի  
անոյշ հառաշանքը , լեզի արտասուքն , երազները ,  
խորհուրդներն . այս , պիտի սիրէ միշտ այն վայ-  
րերն որ ջերմացնելով աճեցուց իւր գողար մարմինը .  
պիտի սիրէ այն առաջին լեզուն զոր իւր մացրը  
սորմեցուց թոթովել , և որով մայր երկնային բառը  
ձայնեց , բառ օխրավի որ մինչեւ մարդուս յետին  
չունչն ամեն ներդաշնակութենէ աւելի քաղցրա-  
նուագ է . պիտի սիրէ անոնք որ նոյն լեզով խօ-  
սեցան , աղօթեցին . որ նոյն նախահայրերը , նոյն  
զիւցազուններն երգեցին . այս , պիտի սիրէ իւր  
եղբայրներն , և եթէ զի պանծայ անոնց փառաւոր  
փիճակին վրայ , գէթ պիտի գուրգուրայ եթէ տա-  
ռասպեալ աղգի զաւակ են . զի ոշինչ այնչափ հա-  
մակրելի է որչափ գժրազդութիւնն , և ոշինչ այն-  
չափ իրաւունք ունի մեր խնամոց , աշխատանաց և  
սիրոյն : Ով արդեօք առաւելքան զշայ թշուառ է  
քանի որ աղքատ է և տգէտ :

Ով խեղճ Ազգդ իմ , երբէք այսքան մեծ սիրով  
չը սիրեցի զքեզ որչափ այսօր , երբ կը տեսնեմ  
զքեզ հեռու ինձմէ , երբ անջատեալ եմ քեզմէ ,  
երբ օտար լեզու ականջիս կը հասնի միայն , երբ  
ախտացեալ եմ , երբ անկարող եմ զքեզ գործով  
սիրելու : Դու բառի պէտք չունիս , զի շատ խսկ

խօսքով կողողեն զքեզ . գործի կը կարօտիս լոկ , և այդ կը պակսի քեզմէ : Ես եւս անարդիւն սէր մ'ունիմ ընծայելու քեզ . ինչ փոյթ եթէ ըսեմ և կը սիրեմ զքեզ ։ , գուցէ այդ եւս բառ թուի քեզ միայն , եւ ինչ որ զգացում է վանկի մէջ ջնջուի : Ամեն բան կորուսի , ազգս կը մնայ ինձ միայն և դու , Մայտա . թէ ազգիս և թէ քեզ անօդուտ եմ սակայն , աւելորդ կեանք մ'է իմս : Ինձ վիճակեցաւ ապրիլ հեռի խմիններէս . սակայն չեմ վհատիր , կը ցաւիմ միայն , կը համբերեմ , և այն դոյզն ինչ որ կարող եմ գործել իբրեւ աղդային և իբրեւ անհատ չեմ՝ խնայեր երբէք :

Այս կղզին զոր երկինք օժտած է նարնջենեաց և ձիթենեաց անտառներու մասնաւոր գեղեցկութեամբ , ուր քաղցրաբոյր սիւդ մի կը փչէ անընդհատ , կարծես թէ գոհար մ'է որ Յոնիական ջուրերու վերեւ գեղանազ կը կանգնի առանց ընկըզմելու : Հոս կեանքս բնութեան հետ կապուեցաւ : Փորձեցի քանի մի խելացի անձինք գտնել և եթէ կարելի է ընտիր ընկերութիւն մի կազմել , սակայն չյաջողեցայ բոլորովին , որով գրեթէ մենակեցութեան գատապարտուած եմ : Ընկերական յարաբերութիւնները կը մբռոնեմ ցորչափ չեն հարկադրեր զմեզ մտաւոր աշխարհին ասսիճաններէն վար իջնալ , հասկնալի ըլլալու համար այլոց , և ցորչափ այդ յարաբերութիւններէն կը բղիս ներդաշնակութիւն կամ ընդհարում , ծնունդ համանման կամ հակառակ հաստատուն գաղափարաց : Ընդհանրապէս մարդկանց քարողած իմաստներն ոչ թէ ի-

րենց համոզման արդիւնքն է , այլ դիագուածոյն , շահախնդրութեան և կամ օրուան տիրող կուսակցութեան և սկզբան : Դիւրին է յայնժամ նշմարել անոնց խօսակցութեանց մէջ թեթեւողիկ և հակասական իմաստներ ու խորհրդածութիւններ , բընական հետեւանք գաղափարաց որք հաստատ հիմունք չունին :

Իսկ մեր սեռին գալով չարախօսութիւնը կամ սմնասիրութիւնը խօսակցութեանց գլխաւոր նիւթը կը կազմէ : Կանանց շատերը կը դատապարտեն բարձրածայն ինչ որ կը փափաքին գաղտագովի գործադրել և կամ կը գործադրեն արդէն : Զիրար կը պատառեն , թագուն մրցմամբ կը կորսուին , և այս հակառակութեան ոգին իրենց ընկերական տըկարութիւնը կազմելով կը սաստկացնէ դառնալից կացութիւն մ'որ եռակի ներգործութեամբ կը ճընշուի , այսինքն ներդործութեամբ օրինաց , կրօնից և նախապաշարմանց : Կանանց գլխաւոր թշնամին կինն է իսկ , զի միշտ ի դարան կը մտնէ իրեւ լրտես հրապարակ հանելու մտօք անմեղ կամ մեղաւոր սրափ գաղտնիքն , և հեղնութեան մատնելու անգթաբար մարդկութեան աղիողորմ արամերը : Եթէ կանացք իրենց իրաւանց պաշտպան ըլլացին , եթէ միութեամբ իրեւ թումբ կանգնէին ընդդէմ նախապաշարմանց և անիրաւութեանց յորձանաց որք զիրենք իրեւ զոհուած խաղալիք կ'առնեն կը տանին , յայնժամ զիմադրութեան զօրաւոր ոյժ մի կազմելով զեղծումները կը տապաէին , ինչպէս և կը ակարացնէին սուան ու կեղծաւորութիւնը՝ զե-

րութեան երկու շար ծնունդներն : Բայց կանայք իրենց շահերը կ'անգիտանան , և անմիաբանութեամբ նոր դէնքեր կուտան իրենց դէմ :

Խակ ալճնասիրութեան գալով կը հասկնամ թէ զարդարանքը կանանց համար էական խնդիր մ'ըլլայ զոր անոնցմէ և ոչ մէկը կ'արհամարհէ , քանի որ ամենակարող գործիք մ'է բնական ձիրքերն ի լոյս հանելու և կամ ֆիզիքական թերութիւնները քօղարկելու . հետեւապէս այնու եղանակաւ նա կը կատարելագործէ կամ կը սրբազրէ բնութեան ձեռագործը , գեղեցկին նկատմամբ ունեցած ճաշակին կատարելութեան համեմատ :

Գեղեցիկ կինը բնութեան հրաշակերտն է . մաղնիսական կէտն է այն ուր կը ձգտին աշկունք և սիրագ . իտէականն է զոր կ'երազեն արք . իրականութիւնն է որ յինքն ունի ճառագայթ մի , բոյր մի , ժպիտ մի . այն ամենայն ինչն է որ կը գրաւէ , կը դիւթէ . զօրութիւն մ'է ըստ ինքեան , և կամ լաւ եւս ըսեմ բնութիւնն ինքն է բոլոր իւր սրտագին մրմունջովն , գողարիկ դայլայլիկովը , փոթորիկովը , հանդարտութեամբը , լուսովը , շուքովն և շարժմամբն : Ամենայն ճոխութիւն , ինչպէս և գեղեցիկ ճաշակաւ զարդ , ծանրագին շրջանակն է այդ մեծ կենդանի նկարին , Աակայն այդ շրջանակը շարունակ փայփայուելով գեղն ու յարգը կը կրրսնցնէ , և այդ շարաշար գործածութիւնն ի վընաս նկարին արժանեացն է . ուստի զարդն որ զիկին բարձրացնելու յառկութիւնը պիտի ունենար , իւր զեղծմամբը նուաստացնելու կը ծառացէ , և գըմ-

բաղդարար այս իրողութիւնը մեր սեռը չէ ըմբռա-  
նած տակաւին :

Չես մեղադրեր դիս անշուշտ , Մայտա՛ , Եթէ  
ինքնայօժար մենակեցութեամբ կ'ապրիմ . անախօրժ  
եւ անպիտան ընկերութեան կը վերադասեմ ա-  
ռանձնութիւնս թէև այս բնական վիճակ մի չըլլայ  
մարդուս համար , և չի համապատասխանէ անշա-  
հասէր ճաշակաց : Այո՛ , կը նախադասեմ իմ անձ-  
նական ընկերութիւնս , և ընտիր հեղինակներս ո-  
րոց գաղափարներով կը սնանիմ , իմինններովս  
կ'ապրիմ , զանոնք ամեն կողմ կը դարձնեմ , կը  
քննեմ , կը զննեմ , եւ այս օգտակար միակեր-  
պութիւնն աւելի հաճելի է ինձ քան թէ զանա-  
զանութիւններն աննշան եւ անիմաստ խօսակցու-  
թեանց . թէ եւ ստոցդ է որ գաղափարաց ընդհա-  
րումէն միտքը կը սրի , կը կենդանանայ . սակայն  
Եթէ անկարող եմ զայն զարգացնելոց գոնէ իւր աս-  
տիճանը չեմ վար իջեցներ տկար գլուխներու մեր-  
ձաւորութեամբ :

Քեզի հետ թղթակցութիւնս ձշմարիտ բարիք մ'է  
ինձ համար . Եթէ անձամբ չեմ տեսներ զքեզ ,  
գոնէ հոգեւին հաղորդակցութիւն պիտի ունենամ  
քեզի հետ : Ոիրելի է ինձ առաջնորդել քեզ ի հե-  
ռուստ եթէ ոչ ի մօտց . աչքերս պիտի հետամը-  
տին առաջին քայլերուդ այն նոր ասսպարիզին մէջ  
ուր մտար գու արդ . պիտի ջանամ նշանակել ա-  
հազին ժայռերն որք պիտի վիրաւորեն ոտքերդ :  
Զգուշացիր առատախօս բարեկամութիւններէ . շատ  
բառերն զգացման եւ գաղափարի աղքատութիւն

կը յայտնեն : Երբ սիրառ կը գործէ , երբ միտքը  
կ'զբաղի , մին կը ծնանի զգացումն , եւ միւսն ի-  
մաստը :

Երիտասարդուհի մ'ես գեղեցկութեամբ օժ-  
տուած , հեռացու քեզմէ անօդուտը , սիրէ միայն  
բարին եւ ճշմարիտն , ընկերացիր միշտ ասոնց ա-  
ռունց նախապաշարմանց աղդեցութենէն զգածուե-  
լու : Մի զարմանար եթէ կրկին և կրկին անդամ  
կը խօսիմ քեզ նախապաշարմանց մասին , այսինքն  
այն ահազին վէրքին վրայօք ուսկից կը կորսուի  
ընկերութեան կենսական ոյժն՝ ի թշուառութիւն  
մարդկութեան :



### Մայտա առ. Տիկին Սիրա

Աահեցան օրերն եւ ամիսներն . ահա երկու  
տարի է որ կենաց աշխատաւորներուն բանակը մը-  
տաց : Պարտուցս սկզբան և կրօնքի մէջ գտայ ոյժս ,  
կրովս և յարատեւութիւնս : Ժամանակս նուիրեցի  
Յուլիանէիս միտքն ու սիրտը կազմելու , առանց  
զինքը յանձնապատան ընելու և ոչ իսկ վեհերոտ :  
Ուզեցի որ փոքր ի շատէ վարժի իւր անձին առաջ-  
նորդ ըլլալու . յուսամ թէ ժամանակը կ'աւարտէ-  
ինչ որ ես ուրուազրեցի միայն : Այս հոգատարու-  
թեանս մասնակցեցան նաև քանի մի Հոգ աղքատ

աղջկունք, որանց սորմվեցուցի մեր հայրենի լեզուն  
ինչպէս և մեր աղգային պատմութիւնը։ Կը վար-  
ժեցնեմ զիրենը սիրել Հայ ազգը մեր հին փառա-  
դարդ և նսեհ օրերուն պատմութեանց մէջ։ զի ա-  
մեն ոք իրականապէս կրնայ սիրել բայց ինչ որ  
ձանշցած և գնահատած է։ Զանացի մանաւանդ  
հասկցնել անոնց՝ կանանց պաշտօնն երկրիս վրայ  
իրրեւ կին եւ իրրեւ մայր։ Ես այս դուզնաքեայ  
աշխատութեամբս ընկերութեան կը մատուցանեմ  
անհշան տուրք մ'իրրեւ անհատ։

Գործերուս լաւ կարգադրութիւնը զոր կը պար-  
տիմ մէկ բարեկամի, կ'ապահովէ ինձ համեստ կա-  
ցութիւն մի, զոր դուցէ անարգէի ժամանակաւ,  
բայց անդորրավից ինձ թուի արդ։ Միակ ընկե-  
րութիւնս ծովն է զոր կը սիրեմ անշափ։ մտաց  
կը խօսի, սիրոս կը մըրկէ։ այն եւս կարծես հը-  
րավառ կիրքերով ալէտանջ կը յուզուի՝ վայրենա-  
բար եւ անմռունչ թաւալելով։ եւ երբ մեղկու-  
թեամբ իւր ջուրերն յառաջ կը վարէ զրեթէ ան-  
նշմարելի շարժմամբ, չի ներկայացներ արդեօք  
վշտարեկ հոգւոյ պատկերն յանձնառու եղած տա-  
ռապելու, որ վայրիկ մի գոնէ կը հանգչի կրած  
մըրիկներէն և հոգերէն։ Ո՞հ, ցաւահար էակն որ  
կը համակերպի բռնազրօսիկ հանդարտութեամբ  
ապրելու, ոչ այլ ինչ է բայց հոգի մ'որ կը վայ-  
փայէ իւր ծանր շլթայներն և կը ժսլտի անոնց շը-  
ռինդը լսելով։ ինչ փայփայանք եւ ինչ ժսլիտ։  
Ծովուն փոփոխակի կատաղութեան եւ հանդար-  
տութեան մէջ զարմանալի նմանութիւն կը գտնամ


սրափս կացութեան հետ : Երբ աղջիկս կը ննջէ և լուսինն իբրեւ բարեկամ հոգի , ինձ ի վերուստ կը նայի , երբ երկինք աստղադարդ է և կը շրջադաշիմ քարափանցս վրայ , առանձին , հանդէպ յաւիտենականութեան , քանիցս զգացի ջերմ արտասուք մ'որ կ'իյնար Ովկիանոսին ցրտահար ծոցին մէջ : Այդ արտասոււաց պարունակած դառնութիւնը հոգիս միայն կը ճանաչէր , և Աստուած՝ որ տեսած էր անոր անկանիլը :

Առանձնութիւնն անտանելի է սրտի մի համար որ կենաց բոլը ուժովը կը բարախէ : Քանիցս ըզգեզ յիշեցի , ով սիրելիդ իմ , քանիցս աշկունքս ծովուն վրայ յառելով կը ժամտէին քու անոյշ պատկերիդ . քանիցս անունդ շրթունքս հնչեցին մեղմիկ . քանիցս կարծեցի տեսնել երեք սիրեցեալ ստուերներ ձեռք ձեռքի տուած՝ սահիլ իմ առջեւէս ինձ նայելով տիրագին . եւ ես վշտարեկ՝ հայր , մայր , ամուսինդ իմ գոչեցի . քանիցս արդեօք ուզեցի ծովը նետուիլ , ընկլուիլ , կորսուիլ եւ ապրելէ դադրիլ . . . . : Այդ Աստուած իմ , ներէ այս մեղապարտ անձնասալան բազմանացս . ով զըժբաղդ դուստրն իմ , քու սէրդ և իմ անյատակ ըզգացումն առ քեզ՝ չէն բաւեր ուրեմն բարերաստիկ ընելու զիս :

Ի զուր հոգին կը կրթենք , կը մարզենք , կը հալատակեցնենք մեր կամացը , յառաջ կը մզենք իրբեւ զինեալ մարդիկ : Կան վայրկեաններ որ այն կը ստամբամի , կը գալարի , հանգոյցներ կը խորաս-

կէ , կը շարշարուի և հուսկ ուժաթափ կիյնաց  
ձնշման աղաղակով :

Գուցէ այս վշտահար տողերս տխուր գաղափար  
մի ներշնչեն քեզ սպարտուցս անկատար և անզօր  
դործադրութեան մասին , ով բարեկամուհիդ իմ .  
սակայն հոգին այնպէս կը ծանրաբեռնի երբեմն որ  
եթէ չյորդէ մերթ ընդ մերթ՝ կրնայ սպայթիլ ա-  
հաւոր և վճռողական թմբիւնով : Թոյլ տուր սրտիս  
ուրեմն իւր աւելորդ բեռը քու վրադ թափել . երբ  
մասամբ իւփք սփոփուի , յոտս կը կանգնի և կը  
կարողանայ յառաջ քայլել վերստին :



### Մայտա առ. Տիկին Սիրա

Պատասխանդ շտացած ահա կը զրեմ քեզ վե-  
րբատին . յուսահատութեան հառաջանքս և կամ  
յուսոյ ճառագայթը հոգւոյդ մէջ տխուր արձա-  
գանք կամ շող մի դանելու է : Վերջընթեր նամա-  
կաւս անշուշտ դքեզ տխրեցուցի , իսկ արդ սփոփ  
ջնջեմ ցաւոց ամենայն հետք : Երկու շարաթէ ի  
վեր Հայ ընտանիք մի՝ Թորգոմատունի անուանեալ ,  
տանս միւս մասին մէջ կը բնակի . այս ընտանիքը  
կը բաղկանայ հասակաւոր ափինինէ և երկու արու  
որդիներէ , որոց առաջինը ակար կազմուածք ունե-

նալով , Ասիս եզերաց առողջարար օդին պատճառաւ այս գիւղիս մէջ հաստատուեցան : Սա կին մ'ունի սքանչելի բայց գոռոզ գեղեցկութեամբ որ հիացում ազդեց ինձ , սակայն ոչ համակրութիւն . իսկ երկրորդ որդին բացակայ է :

Գիտես արդէն թէ որպիսի դիւրութեամբ բարեկամութիւնները կը հաստատուին գիւղերուն մէջ ուր քաղքի ծանր և ճանձրալի պատշաճողութիւնք աւելորդ կը համարուին , նու մանաւանդ երբ գըրեթէ նոյն տան մէջ կը բնակին երկու ընտանիք որ արդէն ի համբաւոյ զիրար կը ճանաշեն : Այն ընտանեաց հաստատութեան օրէն ի վեր գրեթէ միշտ իրարու կը յաճախենք : Անոնց ճոխութիւնը կը յիշեցնէ ինձ իմ անցեալ մեծութիւնս , և անոնց առատութիւնը կարծես թէ չափաւոր վիճակս կը միսիթարէ : Մայրը գթով համակրուած կը թուի ինձ համար , զի տեսայ որ նա գաղտագողի արցունք մի կը սրբէր Յուլիանէիս նայելով : Ահա սիրտ մ'որ իրրեւ սիրոյ հրեշտակ կը հանդիսանայ լքեալ որդին նկատմամբ : Երկու որդիքն սիրավիր ակնածութեամբ կը վարուին հետո , իսկ հարսր մեծ անտարբերութեամբ : Աերջապէս հասակաւոր տիկնոջ ինձ և աղջկանս յայտնած խանդաղատանաց համար թուի ինձ գոհունակութեան ժողով մի նշանաբել շրթանցդ վրայ , սիրելիդ իմ :



## Տիկին Սիրա առ. Մայտա

Զգիտես որպիսի անձկութեամբ մաշեցայ Երբ  
կարծեցի թէ սրտի Երկարատեւ հիւանդութիւնս  
անողոք հարուածով քեզմէ վերջին բարեկամու-  
հիդ յափշտակելով նաեւ, յուսահատութիւնդ ա-  
ռաւել եւս սլիտի ծանրացնէր : Այս մաշեցուցիչ  
վիճակիս մէջ հաղորդեցիր ինձ լուր մ'որ յանչափս  
միմիթարեց զիս, կ'ակնարնեմ նոր դրացիներուդ  
մարդավարութեան : Դրաւունք ունեիր կարծելու  
թէ ցաւալից աղաղակդ մտատանջութեան սլիտի  
ենթարկէր զիս . սակայն չեմ ներեր քեզ եթէ հո-  
գւոյդ կացութիւնը ծածկես ինձմէ : Երբ վիշար  
բաժնուած է Երկու անձանց մէջ՝ թեթեւագոյն կը  
թուի : Հոգւոյդ յորդութիւնքն արիութեանդ ապա-  
ցոյցն են իսկ . զի քու արիութիւնդ ամենայն անցք  
խրելովքու ցաւոցդ՝ անոր անընդհատ հոսումն ար-  
դիլեց . և այս ցաւերը զիզուելով՝ եռացին ներքին  
գաղտնի մոնշմամբ և յետոյ պայթեցին : Ինչո՞ւ  
անձդ կը դատապարտես եթէ զաւկի սէրը չի բա-  
ւեր լեցնելու սրտիդ պարապը . զաւակդ քու մէկ  
մասդ է . ուրեմն այն և դու մէկ անձ կը կազմէք .  
այդ պարապը լեցնելու համար քեզմէ դուրս բանի  
կը կարօտիս :

Դրացի ախինոջդ գորովն ստուգիւ բարիք մ'է  
քեզ համար . և գաղտագոյի արտօսրը համակրու-

թեան մեծ նշան մ'է . զի ոչինչ այնչափ պերճախոս է որչափ անկեղծ արտասուքի շիթը :

Խակ երփառասարդ տիկնոջ անտարբերութեան գալով բնաւ չեմ զարմանար . դու գեղեցիկ ես , հմուտ , ճարտարախոս և գեղանազ . նա իրաւունք շունի՞ արդեօք կասկածելու թէ գուցէ խր ամուսինը քեզմով կը գրաւուի , երբ արք այնչափ շուտով կը յափշտակուին , և երբ իրենց փոփոխամիտ ճաշակներովն ենթարկեալ են միշտ շնորհալի նորութիւններէ ախորժելու : Համեստութիւնդ չեմ կարծեր վիրաւորել եթէ ուղեմ հաւատալ որ այդ գեղեցիկ պատանուհին գուցէ չի կրնար մրցիլ այնչափ դիւրութեամբ քու սրտի , մտաց ու ֆիզիքական հանգամանաց հետ : Ընդհանրապէս կանայք զարմանալի նրբամտութիւն մ'ունին որոշելու անձն որ զիրենք կը նսեմացնէ , և անողոք աչօք կը նային անոր գերազանցութեան . զօրաւոր թշնամի մ'է նա զոր ի հրապարակ կը փայփայեն և գաղտնագողի անոր փոսը կը փորեն : Կը դիտես ուրեմն որ նորութեանդ առաւելութեան կը միացնես շնորհքներ որք վտանգաւոր կրնան հանդիսացնել զքեզ յաչս երփառասարդ կնոջ , որ զքեզ բաւական չի ճանաչէր տակաւին , և հետեւաբար չի կրնար ըմբունել սրտիդ մեծութիւնն և աղնուութիւնը : Երբ կանացի կերպարանքի ներքեւ պահուած հրեշտակը տեսնէ ի քեզ , յայնժամ կը հարկադրի և նա ներողամիտ ըլլալ գերազանցութեան մի նկատմամբ որ իրեն բնաւ նեղութիւն չի պատճառեր , ոչ ընտանեացն և ոչ որ եւ է ընկերութեանց մէջ , քանի որ հեռու կ'այլ-

րիս աշխարհէն՝ որ երեւեցար իրրեւ փալմիլուն աստղ  
և շուտով աներեւութացար :

Կը չնորհաւորեմ զքեզ ազդակից քոյրերուդ մա-  
տակարարած խնամոցդ մասին . ազնիւ պաշտօն ,  
ըստ ամենայնի արժանի քու վեհ հոգւոյդ . անոնց  
ջանա բացատրելու կենաց զսպանակներն . և եթէ  
իրենց մտքերը վերահասու չըլլան արդ , փոյթ չէ .  
հետզետէ կը ճնուելանան այդ գաղափարներուն , և  
օրին մէկը կը տեսնես որ սրբաբերած են անոնք ,  
զի տղայական մտքերը լաւ կըմբռնեն միայն ինչ որ  
ստէպ կը կրկնուի իրենց : Վնչ օգուտ քօղարկել ա-  
նոնցմէ կենաց տգեղ մասը , յետոյ զայն ներկայա-  
ցընելու համար իւր սոսկալի ամբողջութեամբը :  
Լաւագոյն միջոցն այդ փափուկ էակները վարժեցը-  
նելն է տգեղը տեսնելու ինչպէս և գեղեցիկն , ու  
տրվեցնել անոնց դիմագրաւել զառաջինն ու սիրել  
երկրորդը : Կենաց յանկարծահաս իրողութիւնները  
կրնան աղէտալի ըլլալ , և մէկ վայրկեանը կարող է  
ամբողջ կենաց ուղղութիւնը վճռել :

Զեմ ուղեր ներգործել բնաւ կրօնական դդաց-  
մանդ վրայ . պահէ կրօնքդ եթէ հոն մխիթարու-  
թիւն կը գտնաս . կը վախնամ միայն որ գուցէ  
~~մեղկութեան~~ մէջ կիյնաս աներեւոյթ զօրութեան  
վրայ յենլով , և կը վարժիս անկէ փրկութիւնդ ո-  
րոնել , մինչդեռ մարդս նախասահմանուած է յաղ-  
թելու գժուարութեանց և վտանգից , իւր ապա-  
գան պատրաստելու և մինչեւ մէկ աստիճան իւր  
բաղդին տէրն ըլլալու : Անպաշտան մարդն առա-  
ւել եւս կզգայ վտանգն որուն ենթարկեալ է . խո-

հեմութեամբ կը սպատրաստէ անոր յազմէլու մի-  
ջոցներն , և յինքն կ'ամփոփէ բոլոր գործողութեան  
ոյժը փոխանակ վատնելու զայն սպատիր յոյսերով :  
Երբ կը մատնուինք բարեացակամ զօրութենէ որուն  
սկէտք ունինք , սոյն մատնութեամբ վհատութեանց  
մեծագունին չենք ենթարկուիր արդեօք : Այդ լը-  
քումը կամ թշնամանք է և կամ անկարողութիւն .  
քանիցս վհատութիւնը տիրեց վրադ երբ ականա-  
տես եղար յոյսերուդ նուազման . և սակայն մտա-  
ծեցիր արդ եօք որ նոր երազներդ նոյն բաղդին սի-  
տի ենթարկուին ցորչափ դու աներեւոյթ էակին  
աջակցութեան սիտի սպասես միայն :



### Մայտա առ. տիկին Սիրա


Կը սխալիս , սիրելիդ իմ , զի գեղեցիկ և սուրբ  
կրօնքը փոխանակ ակարացնելու կը քաջալերէ , կը  
յուսադրէ ընդհակառակն : Մենք անկարող եմք  
թափանցել աստուածային խորհրդոց , անոնց ուղ-  
ղութեան հետեւիլ , անոնց ծառայած նապատակին  
վերահասու ըլլալ : Ո՛ գիտէ թէ ինչ որ թափանձա-  
նօք կը խնդրենք՝ մեզի համար աղէտք չի սպարո-  
նակէր , և թէ այդ աստուածային մերժումը որ մեր

փափաքը կը փարատէ նոյն խոկ մեր փրկութիւնը չէ : Թո՛ղ ինձ ուրեմն կրօնք մ'որ նեցուկո եղաւ ցաւերուս մէջ ինչպէս եւ զօրութիւնս . զի միայն անձնական ուժիս մատնուած ըլլալու դաղափարը կը բաւէ զիս կատարելապէս վատեցնելու : Դրաց-նոյս համակրութիւնն ինձ համար երկնային բարութեան նշան մի չէ արդեօք , երբ ինձ նման լըք-եալ արարածը գորովալից սիրտ կը փնտոէ ու կը գտնայ . միթէ այդ գթութիւնն երկնային սիրոյն չէ ապացոյց : Կարծես թէ Աստուած՝ ըրած կո-րուստներուս փոխարինութիւն մ'ուզեց ընել այս ազնիւ տիկնոջ սիրան ինձ նուիրելով . բերանս կ'օրհ-նէ անընդհատ այն ընտիր հոգին որ իրրեւ մայր կը վարուի մեզի հետ , զի օրհնութիւնն ընտրելա-գոյն բրյուն է երախտազէտ սրտի :

Խոկ ծաղկահասակ ափկինը , Հերիգայ թորգո-մատունի , բնութեան հրաշակերտն է իրեւ գե-ղեցկութիւն : Իւր փափուկ և ճերմակ մորթը , հը-րալից սեւ աչքերն զորս խիտ յօնքեր իրրեւ կա-մարածեւ հովանի կը զարդարեն , զիմական գծե-րու կատարելութիւնը , փառաւոր հասակն և իւր միւս յատկութիւնքն արժանի կը հանդիսացնեն զին-քը մեծագոյն նկարչին խոէտականն իրականացնելու : Խոկ իւր բնութեան գալով՝ ինչ ըլլալն երեւցաւ ար-դէն , այսինքն խիստ գոռող և կատարեալ բոնա-կալ . իրեն գերին ըրած է իւր ամուսինը . դա կը-նոյն ականջովը կը լսէ և անոր աչքերովը կը տես-նէ . լաւ և անվնաս մարդ մ'է որ խիստ դժբաղդ կ'ըլլար եթէ որ և է իշխանութեամբ ձեշուած շըլ-

լար : Հերիդան իւր Աստուածն է . սիրել զայն եւ  
հպատակիլ անոր , ահա իւր կրօնքն : Ուստի դիւ-  
րաւ կրնաս խմանալ եթէ այս կինը կը վախնայ վր-  
տանգաւոր թշնամի գտնալու յիս , ինչպէս ուզեցիր  
ենթագրել :

Մինչդեռ Լեւոն՝ երկու եղբարց կրտսերագոյնը՝  
հակառակն է իւր հարազատին : Բնութեամբ կո-  
րովի , հմուտ , արթուն միտք մ'ունի որուն խելա-  
ցութիւնն իւր համակրական գէմքին վրայ կը ներ-  
գործէ : Վերեւայ թէ կը պաշտէ իւր մայրը , կը  
կարեկցի եղբօրը , եւ դժուարութեամբ կը հան-  
դուրծէ իւր հպարտ հարսին : Երանի այն աղջկան  
որ նախառահմանուած է անոր ամուսինն ըլլալու :



### Մայտա առ Տիկին Սիրա

Անկարելի է ինձ համբերել . կ'ուզեմ հաղորդել  
քեզ , սիրելի՛դ իմ , ինչ որ կը կենդանացնէ զիս ,  
և նոր իմն երջանկութեամբ կը համակէ զիս . լուր  
ինձ ուրեմն :

X Մէկ ամիսէ ի վեր Լեւոնին մօրն հօրեղբօրորդին  
Փարիզէն եկած և ինձ դրացի եղած է . գրեթէ  
նոյն տան մէջ կը բնակինք : Խնքը մեծ հմտութիւն  
ունի , բնական պերճախօսութեամբ կը փայլի , բը-  
նութեամբ աշխոյժ է , ձայնը կորովի և միանգա-

մայն ներդաշնակ . այնպէս որ խօսակցութիւնը նոր գեղեցկութեամբ կը փայլի : Ազատական գաղափարներու ներքեւ յանդէտս սարկութեան բարեկամ է , այսինքն կանանց նկատմամբ : Հակառակ քու ազատական ձկտմանց , կուզէ կանանց բարոյական կեանքն անցուկ շրջանակի մէջ բովանդակել , զի կ'ըսէ թէ անոր սահմանն ընդարձակելը բարուց ազականութիւնը սաստկացնելու նպաստել է : Ըստ իւր կարծեաց՝ կանանց համար գործողութեան ազատ դաշտ մի բանալն ոչ այլ ինչ է , բայց ցնդել տալու աշխատիլ անոնց հեշտագին բոյրն որ անշուք եւ համեստ յարկի մէջ կ'ամփոփի միայն : Կուզէ մեզ սահմանել ընտանեկան յարկն և յատկացնել կեսարու նշանաւոր խօսքը թէ « Կինն և ոչ խակ կասկածանաց ենթարկուելու է » : Բռնաւոր է , սակայն սիրուն բռնաւոր : Իւր կարծիքը բարձրաձայն կը քարոզէ անտարբեր մնալով ներդործելու ազդեցութեան մասին , այնչափ անկեղծ է և ճըշմարտախօս : Բնական և ազնուական ձեւերը գեղեցիկ ներդործութիւն մ'ունին առնական գեղեցկութեամբ օժտուած դէմքին վրայ . իւր անունն է Տիգրան , և հաւատած որ մեծանձնութեամբ կը կրէ այդ վեհ անունը : Խնչուիս սրտիս գաղտնիքը քողարկեմ քեզմէ առանց խիղճ ընելու . երբ դու հաւաքեցիր արտասուքս , իրաւունք շունիս արդեօք երջանկութեանս մարդրիտներն ալ քաղելու : Ինչպէս կուզես որ Նախախնամութիւնը չօրհնեմ որ սիրոյ նշոյլով կենացս խաւարը լուսաւորեց : Կը սիրեմ զջիգրան , և քանի որ զինքը կը սիրեմ ան-

զգալի եղան ինձ լքումս և առանձնութիւնս : Անոր կրտովցյն մէջ կը դտնամ պաշտպան մի , և սիրոյն մէջ հայր մի : Պիտի պատմեմ քեզ յարաքերութեանցս բոլոր մանրամասնութիւնքը , և պատմելով կրկին անդամ սիրտի վայելեմ զանոնք :

Ընդ հանրապէս գիշերները կը հաւաքուինք մեր քարտիանց վրայ , ուր տիկին մայր Թորդոմատունին ստէալ կ'ընկերակցի ինձ և աղջկանս , իսկ Լեռն երբեմն , մինչդեռ Ներիդան և իւր ամուսինը դրեթէ երբէք : Տիգրանին դալստենէն ի վեր Թորդոմատունի ընտանեաց անդամ մ'ալ աւելցաւ :

Գիշեր մի լուսինը կը տքնէր յերկինս , հաղարաւոր աստղունք կը շրջապատէին զայն իրրեւ հսկող աշկունք . և ոչ հով մի կը յուզէր ծովն որ կարծես թէ հանդարտութեան մէջ կը հանգչէր : Առանձին նստած էի քարտիանց վրայ աղջկանս հետ և կը մտախոհէի . ազնիւ դրացիս ըստ սովորութեանն՝ եկաւ ինձ մօտ բազմեցաւ , իւր օրինակին հետեւեցաւ նաև Տիգրան . կը խօսակցէինք , սակայն Տիգրան իւր աշխոյժը կորուսած էր , տիսուր էր , իսկ իւր աշկունքն՝ որ վրաս յառեալ էին , լուռ պերճախօսութեամբ դիս կը շփոթէին : Գիշերուան մելամաղձային գեղեցկութիւնը , Տիգրանին ներկայութիւնն ու ձեւն , այնպէս զիս յուզեցին որ կարծես թէ աներեւոյթ ձեռք մի սիրտս իւր աւերակներէն դուրս կը հանէր և վերակենդանութիւնն կուտար անոր : Զգացի յանկարծ աչքերուս խոնաւնալը , և մատնտու արտասուք մի՛ որ կախուած էր արտեւանունքէս : Ուզեցի պահել զայն

Տիգրանէն որ շատ իսկ դիտած էր արդէն այլայլութիւնս . ոտքի վրայ ելայ աճապարանօք , և հովահարս որ սրտիս մասունքն եղած էր մօրս նուէրն ըլլալով , ծովուն մէջ գլորեցաւ : Ճիչ մի հանեցի , և երկրորդ յուսահատ ճիչ մ'առաջինին յաջորդեց երբ տեսայ որ Տիգրան ծովը կը նետուէր և յաղթանակաւ կը վերադարձնէր ինձ հովահարս . անխօս արտասուքս յայտարարեցին անոր իմ երախտագիտութիւնս : Տիգրան թրջած՝ տունը գնաց , ետեւէն գնաց նաև տիկին Յորդոմատունի որ հազիւ կ'սիթափէր կրած յանկարծական յուզմունքէն : Ես ալ մտաց սենեակս ուր աղջիկս կը ննջէր արդէն անմեղ քունի շնորհքներով գեղեցկացած : Կը ջանայի ննջել բայց ի զուր , զի երջանկութեան բեռին ներքեւ ձնշուած էի . վերջապէս անօդուտ մրցումէ վերջը ելայ , վերադարձայ քարափանցս վրայ և արտասուք թափեցի յորդառաւատ : Յետոյ աչքերս դէալ ի երկինք բարձրացնելով ծնրադրեցի , և հողիս քանի մի սիրավառ խօսքեր արձակեց զորս յափտենականութիւնը քաղեց : Այնպէս կը թուէր ինձ թէ աղօթքս ընտրելագոյն ներդաշնակութիւնն էր տիեզերաց , և թէ Աստուած կ'ընդունէր զայն . կարծես թէ նոյն միջոցին Արարժիս հետ միացած էի , կը փափաքէի ասլրելէ դադրիւ , կ'աղօթէի անընդհատ , երբ յանկարծ զգացի ձեռք մ'որ ուսիս վրայ փափկաբար կը կոթնէր . գլուխս վեր բրի և , ո՞ւ , տեսայ Տիգրան որ քովս էր կեցած : « Ներէ ինձ , ըստու , եթէ կը վրդովեմ առանձնութիւնդ . քունը խոյս տալով աչքերէս՝ ե-

լայ , և պատուհանիս առջեւ նստած՝ երկինքէն և ծովէն փոքր ինչ անդորր կը խնդրէի , երբ յանկարծ տեսայ սպիտակափայլ հրեշտականման երեւոյթ մի զոր սիրտս ճանչցաւ իսկոյն : « Երկուքնիս ալ առանձին կը տագնապէինք , իսկ արդ միանալով վայելենք կեանքը , սէրը , այս գեղեցիկ գիշերը , յաւիտենականութիւնը , վայելենք զԱստած , և կամ լաւ եւս ըսեմ զու ես աստուածս » , շարայարեց , և ձեռքս իւր ձեռքին մէջ առնելով ծունր դրաւ իմ առջեւս : Ես դողահար և իրր յիմար « Ուաք ելի՞ր , ըսի , աղերսապին ճայնիւ , փախիր , թող որ փախչիմ » : « Ի՞նչ , ըսաւ , փախչիս , փախչիմ , երբ կը սիրեմ զքեզ , և քանի օրէ ի վեր յարմար առիթ կը փնտուեմ այս խոստովանութիւնն ընելու քեզ : Վստահ եմ որ տեղեակ ես այն հրոյն որ հողիս կը լափէ . սակայն անհամբեր էի զրուցելու զայդ անձամբ , և բերնէդ սպասել կեանքը կամ մահը » : Յուզմունքը զիս լուռ կը թողուր : « Խօսէ , ըսաւ , յուսահատ ճայնիւ , վերջացնուր տանջանքս » . « Լուր ինձ , պատասխանեցի շնչառալառ . զիտես թէ բաղդն անդութ եղաւ ինձ համար , և ինձմէ ամենայն ինչ յափշտակեց թողլով միայն դուստր մի , հրեշտակ մի , որ յանձնեց մայրենի խնամոցս և սիրոյս . ես անոր ստացուածքն եմ , և պէտք է որ անոր համար ապրիմ միայն այսուհետեւ » : « Լաւ , ըսաւ , փոխանակ մէկի երկուք կըլլանք զաւակդ սիրելու , երկուք՝ զքեզ պաշտելու . և ինչ որ բաղդը կորզեց քեզմէ ես պիտի վերադարձնեմ իմ գորովովս . ըսէ միայն որ

կը սիրես զիս , Մայտա՛ » : Հեծկլտանք մի եւ մէկ նայուածքը բոլոր պատասխանա եղան : « Ասլրիս , գոշեց , շատ իսկ բարեբաստիկ եմ քեզ նման հրեշտակէ սիրուելուս համար . քեզ կը նուիրեմ կեանքըս , թող երկինք վկայ ըլլան խոստմանս » : « Երդում ըրէ նաև , ըսի , անձնուէր եղբայր մ'ըլլալու ինձ համար և յարդելու զիս իրբեւ կին , ու առաւել եւս իրբեւ մայր որ զաւկին անմեղութեան դանձագահն է » : « Կ'երդնում , պատասխանեց , եղբայր մ'ըլլալ քեզի համար մինչեւ այն օրն որ սիտի զոհեմ քեզ բոլոր կեանքս իրբեւ ամուսին » :

Երկու սիրահար հոգիներու յորդութիւնն , անոնց հառաջանքն և սրտին բարախութիւնն յաւիտենականութիւնը միայն կրնայ ի հաշիւ առնել : Բաժնուեցանք իրարմէ վերջապէս , բայց սիրտս Տիգրանայ պատկերն հետը տարաւ : Ապուշ դարձած էի , և իրը յիմար երջանկութեան ովկիանոսին մէջ ալէծուփ կը տատանէի : Այն բարեբաստ ժամէն ի վեր ամեն զիշեր զիրար կը տեսնենք , բնութիւնը վկայ ունենալով միայն մեր սիրոյն և զԱստուած խորհրդակից :



### Տիկին Սիրա առ. Մայտա

Երջանիկ ես , և ես ալ քեզմով : Երբ սիրաը զոհունակութեամբ լի է ամենայն ինչ ներդաշնա-

կութիւն և շողթուի : Տիգրան քեզ նկատմամբ ընդարձակ կրակարան մ'է որ զքեզ ջերմութեամբը կողողէ . վայելք ուրեմն բարեբաստութիւնդ և մի ցրուեթ ընդ վայր անոր մասունքն :

Ես ալ ունեցայ երբեմն ծնողք որ կը պաշտէին զիս , ամուսին մ'որ կը դուրդուրար վրաս , զաւակ մի զոր անհուն սիրով կը սիրէի . արդ առանձին եմ իրբեւ երկնահայեաց և տերեւազարդ ծառին կրճզը զոր շանթը զարկաւ և աւերեց : Անցեալ շոքեղութիւն մի կը ներկայացնեմ և ոչ այլ ինչ : Երբ կը սիրէի և սիրուած էի չգիտէի կենաց յարգը , զի սիրելն ապրիլ է : Այսօր կը նմանիմ աւերակաց ոգւոյն որ կերկերաձայն կ'երգէ անցեալ փառազարդ յիշատակներ . վայ անոր որուն և ոչ մի հաճոյք կ'ընձեռէ ծաղիկն որ կը ծլի , հողմն որ կը սուլէ , լուսինն որ կ'երազէ , առուակն որ կը մըրմընջէ , տղան որ կը խնդայ , սիրտն այն որ իրեն կը ժապտի . բնութեան մեծ զիրքը դոց է անոր համար . իւր կեանքն սալիտակ թերթ մ'է միայն որոյ վրայ գծուած է Ման բառը : Այնալիսի անձի համար կեանքը զիտակ մ'է զոր կը կրկտէ . և որոյ մէն մի յօշոտած անդամներն հետզհետէ ի բաց կը նետէ զիտուածին բերման համեմատ . Երբ այդ զիտակն ոչինչ կը մնայ , յայնժամ ցրուեալ մասունքը կ'որոնէ շունչովը կենդանացնելու և կազմակերպելու համար , բայց ի նանիր , զի կեանքը շի վերածնանիր երբէք : Վարեբաստութեանս ծամանակը կը ճանաշէ՞ արդեօք վիճակս . Երջանկութեան ծովիկը տերեւաթափ ընելէն վերջը տեսայ թէ ոչինչ

կը մնար ինձ և ափսոսալով ի զուր չորս կողմ նոր-  
յեցայ : Առանձին էի և աննպատակ . առանց նը-  
պատակի ասլրիլը դատարկութեան հետ եղբայր  
ըլլալ է : Որոշեցի ուրեմն կեանքն ուսումնասիրել  
առանց կրից և անշահասէր մտօք : Դիտեցի որ եր-  
կու գլխաւոր զօրութիւնք գրաւած էին մարդկու-  
թիւնն , այսինքն կրօնքն և անիրաւութիւնը : Կր-  
րօնքն հարատահարութեան և տանջանաց գործիք  
դարձած է . զոր օրինակ խիզճն ազատ չէ , և ոչ  
իսկ միաքը , սիրան ու գործողութիւնը : Խիզճը ,  
միտքը , սիրտն ու գործն ազատ մարդը կը ձեւացը-  
նեն , և ազատ մարդը դարերէ ի վեր իւր ազա-  
տութիւնը կը զոհէ կարդ մը մարդոց որ կ'անուանի  
կղեր , և սա կը մտցնէ մարդն երկաթեայ շրջանակի  
մէջ : Մարդիկ այս անձուեկ սահմանին մէջ կը խլըր-  
տին զիրար վանելով , բաղմակելով , ատելով , զիրա-  
ւորելով , ի խաւարին իրարու վրայ թաւալելով ,  
զիրար կոխկուտելով , մեռցնելով : Եւ երբ լցուը կը  
ջանայ թափանցել մինչեւ այդ մարդկային սեւ կոյ-  
տին խորը , մակերեւոյթին կը հասնի միայն , իսկ  
մնացորդ ամբողջ մասերը մթութեան մէջ խորա-  
սուզուած կը մնան : Այդ ամբողջութիւնը պիտի  
լուսաւորուի երբ գիտութեանց ջահը մինչեւ ընկե-  
րութեան ստորնայարկն իջնաց . բայց այդ գժուա-  
րին աշխատութիւնը հսկայական մրցումն է զիշեր-  
ուան՝ ընդդէմ արշալըսին . և մինչեւ այս վերջնոցն  
յաղթանակը տանիլը քանի զոհեր պիտի թաւալին  
արդեօք զիշերուան ծոցոյն մէջ , աւազ : Այն մի  
աղանդ որ կը ծնանի , նոր իմն վիշ մ'է ընդ մէջ

ազգաց, նոր դերեզման մարդկութեան համար :

Իսկ անիրաւութեան դալով ամեն ուրեք տեսայ զօրութիւնը որ կը յաղթահարէ իրաւունքը , նկատեցի տէրն և ստրուկը , նշմարեցի այրն՝ իշխող , կինը՝ գերի : Մարդն՝ անիրաւութեան ներքեւ ճընչուելով գլուխը կը խոնարհեցնէ , յառաջ կը քայլէ , տիրոջն համար կ'աշխատի , անոր համար կը վընարէ , անոր համար քրտնաթոր կը հեծէ , կը հառաջէ , երբեմն կը զայրանայ , կ'ստամբակի , ի վեր կը կանդնի վայրիկ մի , և յետոյ դառնալով կ'անցնի կ'երթալ :

Իսկ կնոջ գալով՝ չղթայներուն շաշիւնը լսելով  
ապրեցաւ մինչեւ ցարդ առանց երբէք զանոնք  
խորտակելու փորձն ընելու . նա կը ծնանի ստրուկ ,  
կը մեռնի ստրուկ : Մինչ ծաղկահասակ աղջիկ՝ ան-  
մեղութիւն մ'է զոր կը պաշտեն խարելով : Մինչ  
ամուսին՝ չղթայներն առաւել եւս կը ծանրանան  
իրեն համար . ամենահզօր տէր մ'ունի , նա գերի  
է , խիստ օրինաց խարազանն իւր դլխուն վերեւ  
կը չաչէ անընդհատ : Կինը կը ջանայ այդ բռնա-  
բարութիւնը չնորհքներովը թեթեւցնել , ստու-  
թեամբ և խորամանկութեամբ տիրոջը վրայ իսկ  
տիրելով : Այս բնթացքը հետեւանք է բռնութեան ,  
հետեւանք է երկու զատուած հաւասար ոյժերու  
որք նախասահմանուած են միատեղ գործելու , և  
որուն մին արդիլուած , ճզմուած կը գտնուի : Փո-  
խանակ այն ներդաշնակութեան որ երկու միացեալ  
ոյժերէն պիտի դոյանար , շփոթութիւններ , ալէ-  
կոծութիւններ կը ծնանին որք իրեւ չարադրուժ

յործանք ընկերութեան երակաց մէջ կ'ընթանան : Մայրն որ իւր աղեաց մէջ մարդկութիւնը կը կրէ , զուրկ է իշխանութենէ . իրեն վերեւ կը կանգնի ամուսնական իշխանութիւնն , այսինքն բռնաւոր կարօղութիւն մ'որ ընտիր բանականութեան , փափուկ զգացման կը տիրէ շատ անգամ : Մայրը՝ դայեակ մարդկութեան , փոխանակ լուսով և ճշմարտութեամբ պարարուելու , իբրեւ անունդ ունի նախասալաշարմունքն և խաւարը զրո արք իւր շուրջը կը բարդեն , վերապահելով իրենց դիտութեանց և իշխանութեան առանձնաշնորհութիւնն : Եւ զարմանալի կէտն այն է որ կնոջ դիզած մժութիւնն այրը կը ջանայ ջնջել իւր լուսովն անընդհատ , և այսու եղանակաւ ընկերութիւնը փոխանակ միշտ ընդ առաջ ընթանալու մերժ յետս կ'ընկրկի , և մերժ յառաջ կը քայլէ քանդելով մէկ կողմէն ինչ որ կը գործէ միւսէն : Այսպէս ուրեմն արանց համար նախամեծար է դժուարին և թերի աշխատութիւնն անձանցն վերապահելով իշխանութիւնը , քան թէ հեշտագին և յառաջադէմ գործողութիւն մի կանանց հետ հաւասարութիւն ունենալով :

Կը բանտարկեն զկին տանը մէջ՝ ըսելով անոր « Այս վայրին մէջ ամփոփէ բարոյական ոյժդ . հո՞ս պիտի նուազի՝ իբրեւ երկար օրհաս , ինչ որ գործելու կրով և դիտաւորութիւն ունիս . սահմանավայրդ՝ ահա այս չորս որմերն են . հո՞ն զաւակներդ խնամէ , ահա պաշտօնդ : » Արդարեւ վսեմ է մարդկութեան հոգատարութեան պաշտօնը սակայն այդ պաշտօնին գործադրութեան համար

կը արուին արդեօք պէտք եղած միջոցներն , սկզբ-  
րունքն և ուսումը որոնցմէ կախում ունի ընկերու-  
թեան առաւել կամ նուազ փայլուն ապագան : Երի-  
տասարդուհին որ կ'ամուսնանայ , շատ անդամ չգի-  
տէր իւր մայրենի պարտքը , և իւր տղիտութենէն  
կը բղիսի մոլորութիւնը , մոլորութենէն մոլութիւնը ,  
մոլութենէն ապականութիւնը , ապականութենէն  
տկարութիւնը , այսինքն քայքայումն , ընկերութեան  
մահը : Այսպէս ուրեմն կնոջ տղիտութիւնը և ըս-  
տըրկութիւնն ի վտանգ կը դնէ բոլոր ընկերացին  
չէնքին հաստատութիւնը :

Կինը որ մայր եղած է՝ նպատակ մ'ունի վեր-  
ջապէս : Բայց կը հարցնեմ ես , արք ինչ նպատակ  
կուտան անորդի կամ չամուսնացած կնոջ որ աղ-  
քատ կարգին չի վերաբերիր : Կամ անդործութիւնը  
և մահաբեր ձանձրոյթը զինքը պիտի մաշեցնեն , և  
կամ վեսասակար սգնասիրութեամբ պիտի պարապի :  
Առաջին և երկրորդ մասին մէջ ընկերութիւնը նոյն-  
չափ զրկել է կանանց գործակցութենէն՝ որ հա-  
կառակ սեռին գործունէութեան միանալով՝ յառա-  
ջադիմութեան հետեւանքը կը կրկնապատկէ :

Բայց ամէն ապատ շախիդ , ամէն մտաւոր սահ-  
ման , ամէն փառաց ճամբայ արդիլուած է կա-  
նանց . ասոնք արանց առանձնաշնորհութիւնքն են  
զորս ամբողջապէս կուզեն անվտանգ պահել :

Այդ զրկողութիւնն արդարացնելու համար կա-  
նանց անկարողութիւնը կ'առարկեն . այդ անկա-  
րողութիւնն ով աշխատած է արդեօք ապացուցա-  
նելու , և ով կարող է ապացուցանել քանի որ մին-

չեւ ցարդ կանանց նկատմամբ աշխատութեան գաշտ մի չի բացուեցաւ . քանի որ հարկ եղած հանդամանքն չի տրուեցաւ անոնց մտաւոր և բարոյական կատարեալ մշակութեան համար :

Ուրեմն մարդիկ առանց փաստի անկարողութիւն մի կը հաստատեն , մտնաւանդ երբ պատմութիւնը հակառակը կը վկայէ , յիշատակելով այն մեծ դերերը որ կանայք խաղացած են ամեն անգամ որ պարագայները ներած են իրենց . նա մանաւանդ ի նկատի առնելու է թէ անոնք սոյն դերերը կատարելու և ոչ իսկ պատրաստութիւն ունեցած էին ոչ հաստատուն զիտութեամբ , ոչ փորձառութեամբ , և ոչ իսկ գործնական հմտութեամբ . ուսկից կը յայտնուի թէ ո՞ր աստիճանի ընդունակ է կանանց միտքը զարդացման , թէ ո՞ր աստիճանի կրնայ բարձրանալ , և ո՞ր աստիճանի կրնան ծառայել անոնք յառաջադիմական սկզբան :

Բայց պիտի առարկեն ինձ թէ ինչու կինը նըռւաստ զիճակի կ'ենթարկուի ինքնայօժար եթէ ինքն հաւասար է արանց , և թէ ինչպէս չի խորտակեր այն լուծն որ զինքը կը ձնչէ : Եւ ես կը հարցնեմ թէ բազմադարեայ ստրկութեան մէջ ապրող Եւրոպայի ժողովուրդները նուազ մարդ էին արդեօք քան իրենց յաջորդող սերունդներն , ողք բռնութիւնը տապալեցին երբ մտաւոր զարդացմամբ իրենց իրաւանց վերահասու եղան :

Մեղկութիւնը , սովորութիւնը , ֆիզիքական ոյժը , նախապաշարմունք և տգիտութիւնը կը վիճեն զմարդիկ այնպիսի անասնական վիճակի մէջ ,

ուսկից կը փրկուին միայն՝ շնորհիւ այն զանազան ոյժերու որոնց հետեւութիւնն է հրապարակուած իրաւունքն :

Արդէն բողոքալից ձայներ կը բարձրանան ընդդէմ կանանց գերութեան և ի նախաստ իւր բնական իրաւանց, զորս ինքն անձամբ սկսած է ճանաչել և պահանջել : Ճշմարտութեան սկզբունքն ոչ երբէք խեղղամահ կ'ըլլայ, զի կը ծլի անընդհատ, կը զարգանայ և անիրաւութեան աւերակներուն վրայ կը կանգնէ իւր յաղթական գլուխը : Բայց ճշմարտութեան սկզբան յաջողութիւնը դարերու յամրաքայլ աշխատութեան կը կարօտի, և զրեթէ քիչ անդամ սերունդք իրենց քրտանց և արեան պըտուղները կը քաղեն . զի մէն մի սերունդ իւր յաջորդին համար կը գործէ :




### Մայտա առ. Տիկին Սիրա

Ներէ որ խորհրդածութեանցդ չի պատասխանեմ և լրութեամբ զարմանամ անոնց վրայ : Թո՞յլ տուր ինձ արդ որ զգացմամբս ապրիմ միայն և անով վերականգնիմ . թո՞ղ որ հոգիս քաղցրանուագերգէ սիրոյ հովանոյն ներքեւ : Կը սիրեմ, և եթէ հարկ ըլլայ կրկնել սոյն բառը ամբողջ յաւիտենականութեան մի մէջ, սիրտի թուէր ինձ թէ բա-

ւական չէր դարձեալ : Տիգրան և Յուլիանէս եր-  
կու ճառագայթք են որոնց կեղրոնը հողիս է : Տես-  
նել զանոնք իմ քովս , խառնել հայեցուածքս ա-  
նոնց հայեցուածքին , ինչ բարեբաստութիւն , ո  
Տէր , Տիգրանայ ինձ համար ունեցած փափուկ հո-  
գատարութիւնը , մեր անոյշ երազները , մեր խոր-  
հըրդոց ապագայ գործադրութիւնը , շատ իսկ եր-  
ջանկութիւնս կը ծանրացնեն , կարծես թէ կընկ-  
ճիմ անոր բեռին ներքեւ : Խոստովանիմ քեզ ան-  
կեղծօրէն . Երբեմն անմեղ վայելիցս բաժակը շատ  
լի թուելով ինձ կը վախնամ որ չի յորդէ հետը տա-  
նելով երկնային հաճոյիցս կաթիւները : Երբ օր մի  
Տիգրան պիտի դադրի զիս սիրելէ կը փափագիմ  
որ նախ սրտիս շարժումը կ'ասեցնէ . բայց ով տա-  
րաբազդ մայր , կը մոռնած արդեօք թէ դուստր  
մ'ունիմ , և թէ ներելի չէ իսկ այդպիսի երազ մի  
տեսնել : Ոչ , ոչ , չեմ ուզեր վճիտ օրերս պղտո-  
րել սև ապագայի մ'երկիւզիւ որ հետեւանք է նոյն  
իսկ երջանկութեանս : Սիրող սիրտն արեւ մի կը  
կրէ յինքն արդարեւ , որոյ փայլը թեթեւ ամպէ  
մ'իսկ կրնայ քօղարկուիլ . այլ եկու տես որ սէրը  
միշտ ամպերով շրջապատուած է : Բայց որչափ ան-  
իրաւ եմ գանգատելու առանց պատճառ մ'ունե-  
նալու : Տիգրանայ խօսքերը , ձեւերը , աչքերը ,  
ամենայն ինչ կը յայտնէ թէ իւր սիրտը նուիրած  
է ինձ , և թէ ինքն իմ պաշտպանս է : Դեռ անց-  
եալներն երբ Ներիգան՝ ըստ իւր սովորութեան ,  
վիճակիս անչքութեան ակնարկութիւն ըրաւ , Տիգ-  
րան բարկացայտ աչօք անոր նայելով ըստ թէ

« Կնոջ մի մեծագոյն հարստութիւնն իւր առաքի-նութիւնն է ։ Ներփան շրմունքները չարչարեց , նայուածք մ'արձակելով ինձ որ չգիտեմ ինչո՞ւ դիս սարսափեցուց : Աստկապէս մեծամիտ կին մ'ըլ-լալով կուզէ որ ամեն մարդ իւր առջին խոնարհի և պաշտէ զինքն : Երեւակայէ ուրեմն Տիգրանայ խիստ խօսքերուն ըրած աղդեցութիւնն իւր վրայ : Կարծես թէ այս կինը մասնաւոր հաճոյք կ'ըզ-գայ զիս վշտացնելու . բայց ինչ փոյթ , Տիգրանայ սէրն ամենայն ինչ հանդուրժելի կ'ընէ ինձ . սիր-ուիլ իրմէ , և սիրել զինքն արդեօք բաւական չէ արիացնելու համար զիս ընդդէմ ամենայն փոյթոր-կաց որ կրնան ինձ սպառնալ :

Ուզեց ընծայել ինձ մեծագին գոհար մ'իրրեւ առհաւատչեայ իւր հաւատարմութեան . բայց ես մերժեցի զայն : Միրտը գոհարներուն աղնուադոյննն է որուն մօտ բոլոր ուրիշներն ազօտ փայլ մ'ունին . հետեւապէս զայն առանձնացնելով կրնանք անոր չքեղութիւնն անվտանգ պահել :



### Տիկին Միրա առ. Մայտա

Կեանքը տիսուր ածու մ'է որ կը զուարթանայ երբեմն նարմենաղան և գեղապաճոյն ծաղկանց ե-րամով . երբ հանդիսիս անոնց՝ վայելէ զանոնք

առանց յիշելու թէ պիտի թարշամին ձեռացդ մէջ ,  
զի կատարեալ երջանկութեան բովէ մի յաւիտե-  
նականութիւն կ'արժէ : Տիգրան կը սիրէ զքեղ ,  
աւելի ի՞նչ կ'ուզես ուրեմն . ինչու թոյլ կուտաս որ  
կասկածներ ծնանին ընդ մէջ սրտիդ և անոր , վա-  
յելք ներկայն՝ անփոյթ ապագայիդ վրայ . ապա-  
գային զիրքը կարդալ փորձելն ոչ այլ ինչ է եթէ  
ոչ կենաց երկնից վերջին աստղը մարել և խաւա-  
րին անդունդը վիճել : Ճանչցի՛ր յարգն այն բովէին  
որ ուրախութեան կաթիլ մի կ'ընծայէ քեղ . ի՞նչ  
փոյթ թէ սաստկաշունչ քամին պիտի ջնջէ զայդ .  
այդ կաթիլը տեշողութիւն մ'ունեցած պիտի ըլ-  
լաց կենացդ մէջ , եւ քու սիրտդ ի հաշիւ առած  
պիտի ըլլաց զայն : Աէրը՝ որ անձնուիրութիւն է ,  
եւ վսեմին ու գեղեցկին անձնաւորութիւնն , այն-  
չափ ապականեցաւ ու գարշահոտ ինչ եղաւ , որ  
այսօր սիրտն անպատուութիւն կը համարի հոչա-  
կելը զայդ : Բայց դու , Մայտա , որ ազնիւ հոգի  
մ'ես , որ ճշմարիտ կին ես , որ սիրելու և անձդ  
նուիրելու պաշտօնն ունիս , մի ամաչեր սիրելու ,  
ընդհակառակն փառաւորուէ անով , զի կ'զգաս  
անշուշտ թէ որպիսի մեծութիւն կայ երկու ան-  
կեղծ սրտերու մէջ որք իրարու համար կ'ապրին .  
այդ ընթացքին մէջ երաշխաւորութեանց վսեմա-  
գոյնը կայ :



Մայտա առ. Տիկին Սիրա

Մեկնեցաւ Տիգրան . ուրախութեան ներքեւ  
միշտ արտօսր մի կը քօղարկի , եւ վստահութեան  
ներքեւ մահաբեր երկիւզը : Մեկնեցաւ , ի զուր  
աչքերս կ'որոնեն զնա , սիրտս միայն իւր պատկերը  
կը տեսնէ :


Վերջին դիշեր երբ ամենայն ինչ կը ննջէր ու  
միայն լուսինը կը տքնէր , Տիգրան եկաւ հետո տես-  
նուելու մեր քարափանց վրայ : Խոստացաւ ինձ մըշ-  
տատեւ հաւատարմութիւն՝ դողահար եւ շնչաս-  
պառ ձայնիւ . այնչափ մօտ էր երջանկութիւնն՝ և  
սակայն հեռացաւ ինձմէ . աւաղ , այս է կեանքը :  
Զգացման խորութեանս մէջ ամփոփուած ըլլալով  
ոչինչ կը տեսնէի , և տիեզերք համայն կը բովան-  
դակուէր յայն կէտ որ զջիգրան կը պարունակէր :  
Ծովն ոչ եւս մրմունչ ունէր ինձ համար , և ոչ իսկ  
պայծառ երկինքը մէկ աստղ . Տիգրանայ ձայնը  
ներդաշնակագոյն նուագն էր , անոր հայեցուածքն  
երկնային մի ջահ : Մրչափ վսեմ էր երբ խորախոր-  
հուրդ ձայնիւ ըստու ինձ « Մայտա , կ'երդնում քեզ  
թէ՝ ոչ երկինք և ոչ երկիր պիտի կարողանան եր-  
բէք զիս բաժնել քեզմէ » . և զայս ըսելով ոսկիէ  
մատանի մ'անցուց մատիս « Թողարկած պայ ըլլայ  
խօսքերուս » ըսելով , « և քու անբաժանելի ըն-  
կերդ , զի ասոր մէջ ամբողջ հոգիս ամփոփեցի .  
բայց և դու , Մայտա , երդում ըրէ զիս միշտ սի-

րելու , և միայն զիս սիրելու » : Սիրտս երդուաւ յառաջ քան բերանս : Բաժնուելու ժամանակս աչքերս դէս ի Տիգրանայ սենեակն ուղղուեցան , և հոն կարծեցի տեսնել կին մ'որ կը դիտէր զմեզ : Տէր , ինչպէս սարսափեցայ . ոչ , ոչ , չէի սխալէր , վստահ էի թէ տեսայ զՀերիգան . վայ ինձ , ըսի սոսկալով : Երբ նայեցայ վերստին սենեկին , ոչինչ տեսայ , կարծես թէ շուք մ'էր որ անյայտ եղաւ : Տիգրան այլայլութիւնս նշմարելով ուզեց պատճառն իմանալ . անկարող խօսելու՝ մատովս պատուհանը ցոյց տուի միայն . բայց նա բան մը չտեսնելով ոչինչ կարող էր հասկնալ : « Ոչ , գոչեցի յուսահատարար , աչքերս շխարեցին զիս , ապահով եմ թէ Հերիգան էր » : Տիգրան սրտմտելով « Այ նենդառոր , ըսաւ » : « Արդեօք ի՞նչ ըրած եմ անոր , շարայարեցի , որ իբրեւ թշնամի կը վարուի հետամեն ժամանակ » : « Ի՞նչ ըրիր կը հարցնես , պատասխանեց Տիգրան . տիրեցիր սրտի մի զոր կը յուսար օր մի գրաւել : Քու և անոր մէջ տեղառաքինութեան եւ մոլութեան մէջ եղած անհուն անջրպետը կայ , այսինքն ուխտադրուժ կնոջ և հըրեշտակի : Այդ անօրէն կինն առ ոչինչ կը համարի հաւատարմութեան ուխտն որ ըրած է ամուսնոյն . առ ոչինչ կը համարի կնոջ նուիրական անունը . առ ոչինչ կը համարի նոյն արխւնն որ իւր ամուսնոյն և իմ երակացս մէջ կը շրջի : Ինձ նկատմամբ ունեցած մեղապարտ զգացումը կարծես թէ անտարբերութեամբս առաւել եւս բորբոքեցաւ . իսկ իմ արհամարհանքս անոր նկատմամբ նոյնչափ

սաստկացաւ : Երբ նշմարեց ակնածական ընթացքս  
քեզ նկատմամբ , իբրեւ առիւծ մոնչեց , զի նա-  
խանձը կը մաշեցնէ զինքը :

Վարանելով կը մտածէի թէ Հերիգան պիտի  
մատնէ սէրս արդեօք Թորդոմատունի տիկնոջ և  
Յուլիանէիս , և այսու մատնութեամբ անարժան  
պիտի ընէ զիս անոնց վստահութեան : Խնչ պիտի  
մտածէ աղջիկս . պիտի կարծէ թէ օտարական մի  
իւր մօրը սէրը գրաւեց , և զայդ իբրեւ յափշտա-  
կութիւն պիտի նկատէ . անշուշտ իւր փափուկ  
սիրտն ոչ միայն պիտի վշտանայ , այլ և պիտի կոր-  
սընցնեմ իւր վրայ ունեցած ազդեցութիւնս : Տա-  
կաւին այնքան գեռահաս է որ չկրնար սրտիս  
գաղտնիքն իմանալ և ներել : Եւ միթէ ընկերու-  
թիւնը կը ներէ որ մօր մի սիրտը բարախսէ երբ  
աղջկանը նաև նոյնը կրնայ գործել : Խնչ փոյթ ըն-  
կերութեան նախապաշարմունքը՝ ցորչափ խնդիրն  
ինձ միայն կը պատկանի . բայց կ'զգուշանամ երբ  
որ և է վնաս կրնամ հասցնել Յուլիանէիս սրտին  
կամ ապագային :

Երկրորդ օրը Հերիգան տեսայ , բայց իւր դէմքն  
անթափանձելի էր , ոչինչ յայտնեց ինձ , մինչ-  
դեռ ամեն պարագայէ օգուտ կը քաղէ զիս կե-  
ղեքելու . երանի թէ երեւակայութեանս խաղալիքն  
եղած ըլլայի :



Մայտա առ Տիկին Սիրա

Անհամբեր եմ հաղորդելու քեզ ինչ որ անպատում ուրախութեամբ կը համակէ զիս . օրհնեալ ըլլայ երկինք , աղջիկս Լեւոնին նշանեցի : Յուլիանէն և Լեւոնն երկու սրտեր են իրարու արժանի : Արդէն քանի ժամանակէ ի վեր կը թուէր ինձ թէ աղջիկս Լեւոնի ուշաղրութիւնը գրաւած էր , բայց որոշ բան մի չէի տեսներ բնաւ : Կը նշմարէի միայն Յուլիանէիս վրայ սրտագրաւ մելամաղձոտութիւն մի , կը լսէի իւր գաղտնագողի հառաջանքն և այս ամենայն՝ անհուն վարանմունք կ'ազդէր ինձ : Օր մի երբ աշքերը կարմրած էին , դիտելով թէ ինքը ծածուկ լացած էր , այնպէս հոգիս ցաւով համակուեցաւ որ զինքը թեւերուս մէջ առնելով հարցուցի իրեն վշտաց պաաճառն : « Աղջիկս , ըսի , դու մօրդ համար գաղտնիք մ'ունիս . ուրեմն չես սիրեր զիս . դու ունիս արդեօք քան զմայրդ մեծագոյն բարեկամ մի աշխարհիս վրայ . ո՞վ առաւել քան զիս կրնայ սիրել զքեզ . խոստովանէ՝ ինձ վիշտ , զի կը հասկնամ աշքերէդ որ արտասուած ես » :

Ակսաւ լալ գառնագին և անխօս , գողտրիկ զըլուխը թեւերուս մէջ ծածկելով : « Կը սիրես զեւոն , դուստր իմ սիրուն , ըսի , և այսպէս լոին կը մաշիս » : « Մայրիկս , պատասխանեց , ա՛ն , ո՞ւր էր թէ մեռնէի » : Նոյն օրէն իւր խորհրդակիցն ե-

դայ . կը միսիթարէի զինքն առանց մեծ ակնկալութիւններ տալու սակայն , յորդորելով Աստուծոյ վրայ դնելու բոլոր յոյսերն և սպասելու : Սիրելիդիմ , որչափ զաւակի մ'արտասուքը մայրենի հոգւոյն վրայ կը ծանրաբեռնի : Բոլոր այս իրողութիւնները չյայտնեցի քեզ որպէս զի , գոնէ այս մասին , մտատանջութենէ ազատ մնաս : Բարեբազդաբար Յուլիանէիս վիշտերն երկարատեւ չեղան :

Օր մի տիկին Թորգոմատունին ինձ այցելութեան գալով իմացուց թէ դուստրս իւր հարսն կուզէր ընել ըստ իւր սրտին և Լեռնի փափաքանաց : Այնալիսի զգացումներ կան որ մարդս կ'ըզգայ միայն առանց բացատրել կարենալու : Նոյն վայրկեանին չգիտէի թէ ուր էի , ինչ զգացի : Ուրախութեամբ հաւանութիւնս տուի , և յետոյ Յուլիանէս կանչելով խնդիրն իմացուցի իրեն : Վկա ինկաւ նա և սկսաւ արտասուել : Մեծ երջանկութիւններն ինչպէս մեծ վիշտերը բառ շունին : Ազնիւ տիկին Թորգոմատունին այնչափ յուզուեցաւ այս տեսարանէն որ Յուլիանէս թեւերուն մէջ առնելով եռանդեամբ համբուրեց ևւ պահանջեց որ այժմէն մօր նուիրական անունը տայ իրեն : Արշափ ցաւալի է որ այսպիսի բարութեան հրեշտակ մի խիստ մօտերս սլիտի մեկնի ի տարքաղաք երթալու և իւր կրտսերագոյն որդւոյն հետ բնակելու , որ ժամանակէ մ'ի վեր վատառողջ է :

Վնչալէս նկարագրեմ առաջին տեսութիւնն երկու նշանածներուն . ամօթահար աղջիկս հազիւթէ կընար երեսը նայիլ իւր Լեռնին որ լուսթեամբ


կը հիանար անոր վրայ : Յուլիանէս ճակտին վրայ  
կը կրէր տասն ու վեց գարնանց անմեղութիւնն ու  
սէրը . նոյն օրէն ի վեր իրրեւ զրախտի թռչուն  
կ'ստոստէ երջանկութեան ճիւղերուն վրայ այն-  
պիսի հեշտալից ճիշեր արձակելով , որք կրնան բըղ-  
խիլ միայն այն հոգիներէն որ կ'անգիտանան սու-  
տը , կասկածն և ապականութիւնը : Յուլիանէիս  
համար աշխարհ գեղեցիկ և ահազին նուագարան  
մ'է որուն ցնցումէն ներդաշնակ և յաւիտենական  
վանկ մի կ'արձակուի , այսինքն սէրը :



### Տիկին Սիրա առ. Մայտա

Սիրելիթ իմ Մայտա , քու վրայ ունեցած սէրս  
մեծ ըլլալով ցնծութեանդ կատարելապէս կը մաս-  
նակցիմ : Անմեղութեան սէրը ծիածան մ'է որ  
ճշմարտութեան փայլուն գոյներով կը փայլի . զի  
չիք անդ կեղծ և շինծու բան : Կոյս սրտին մէջ ա-  
մենայն ինչ փատահութիւն , հաւատք է և յոյս . ա-  
մենայն ինչ կը նուագէ անգ , կը ժպտի , նոյն իսկ  
արտասուքը : Հոն օրերն անստուեր են , ամենայն ինչ  
կը շոգըողայ . յաւիտենական արշալոյս մ'է առանց  
գիշերուան , որ գեղանազ կը ժպտի յարատե գար-  
նան : Երանի մատաղ սրտերուն որ կը նկատեն  
կեանքն իրրեւ թանկազին գոհար արփեոյն շողե-

բովն փայլող, և զոր յոյսն ձեռամբը կը խնամէ : Թո՛ղ այդ անոյշ ցնորքն Յուլիանէիդ . թո՛ղ որ փայելէ այդ կարձատեւ բայց գեղեցիկ ցնորքն որ կենաց բոլոր իրականութիւնը կ'արժէ : Արթնութիւնը շատ իսկ շուտ կը հասնի . թո՞յլ տուբ ուրեմն իրեն իւր ոսկեզօծ երազները : Հաւաաքը կեանք է, մինչ կասկածն երկարատեւ և անգութ օրհաս մի . անմեղութիւնը հաւատք է, իսկ փորձառութիւնը՝ կասկած :



## Մայտա առ. Տիկին Սիրա

կեանքը հակառատկերաց շարք մ'է : Գեղեցիարոյր ծաղկան մօտ որ դէպ երկինք կը նայի, կը տեսնես ուրիշ մ'որ դալկահար և գլխիկոր գետինը կը ծոփ . կը դիտես մերձ ժպտին արտասուքը, մերձ կենաց մահը :

Յուլիանէս որ թարմ գեղեցկութեամբն ու բարեբաստութեամբը կը փայլի, բարեկամութիւն հաստատեց հիւծեալ պատանւոյ մի հետ զոր կարծես թէ մահն իրեւ հարսն ընտրած է անձին : Որը մ'է նա . իւր մայրը մեռեր է ծննդաբերութեան միջոցին . գերեզմանէն ծլած ծաղիկ մ'է :

Պ. Պետրոս թ. . . . իւր հայրը, կենաց անդորրութիւնները կը մատակարարէ այդ ախտաբեկ որբին . բայց ինչ օգուտ քանի որ Հրանոյշ զուրկ

է մայրենի գորովէն : Յտար շահախնդիր ձեռաց յանձնուած էր կենացը խնամատարութիւնը : Խեղճ հիւանդն Ասիոյ առողջարար օդէն եկաւ դարման փնտուելու . իւր բնակութիւնը մօտ է մերինին որով ստէալ առիթ կ'ունենանք դինքը տեսնելու :

Ծովեղերեայ դաշտ մի կայ մօտակայ ափանց վրայ բազմադարեայ ծառերով հովանաւորեալ : Այդ ընդարձակ վայրին մէջ կը տիրէ ահաւոր լուսութիւն մի զոր կ'ընդհատէ թռչնոց դայլայլիկը միայն : Մերթ ընդ մերթ վանկ մի կը լսուի , ուրիշ մի կը պատասխանէ առաջնոյն և յանկարծ երաժշտական ամբողջութիւն մի կը կազմուի : Ի՞նչ կը խօսին թռչունք , ի՞նչ կ'ուզեն : Կը ճանաչեն արդեօք իրեւ զմեզ վիշտն ու հրճուանքը . կը ճանաչեն ծնողաց սրտին ցաւը . կը ճանաչեն կենաց պատրանքը . կ'ողբան սիրեցեալ բացակայի վրայ . կուլան , կը հիւծին անհնարին բաղձանքներով : Ի զուր ջանացի մեկնել անոնց խօսակցութիւնը , նոյն տգիտութեամբս մնացի : Այդ սքանչելի վայրը բնութեան սիրահարաց ուխտատեղին է կարծես : Ստէալ կ'երթանք հոն և ծառի մի հովանւոյն ներքեւ անդորրաւէտիժամեր կ'անցնենք : Յայսմ վայրի հանդիպեցանք տարաբախտ Հրանոյշին որ կը շրջագայէր մելամաղձոտ դիմօք խնամատար տիկնոջը հետ : Անհուն համակրութեամբ գրաւուած էինք . իւր աշնահար դէմքն , իւր նուազուն աչքերն , իւր կըռնակն որ սակաւ ինչ կամարաձեւ եղած էր տկարութենէ . իւր անոյշ և տխուր կերալարանքը դինքը կը հանդիսացնէին իրեւ անկեալ հրեշտակ մ' որ

Երկրիս վրայ յուսահատ կը թափառի : Գորովալից  
աջօք կը նայէինք իրեն և ինքը մեզի . նա մանա-  
ւանդ առաւել համակիր նայուածք մի կ'ուղղէր աղ-  
ջըկանս : Գուցէ հասակի նմանութիւնն էր պատ-  
ճառն , և կամ բաղդատութիւն մ'որ երեւան կը  
հանէր բոլոր իւր դժբաղդութիւնն : Երիտասար-  
դութիւնը՝ շինծու պատշաճութիւնն արհամարհե-  
լով՝ սրտին լեզուին կը հետամտի : Ուստի օր մի Յու-  
լիանէս մօտեցաւ հիւանդին , հետք խօսեցաւ , և  
սոյն օրէն ի վեր անբաժանելի են : Նա կապուե-  
ցաւ Յուլիանէիս բոլոր սաստկութեամբ կարօտա-  
կէզ սրտի մ'որ սիրելու պէտքը կ'զգայ և անկեղ-  
ծապէս սիրուելու : Քոյր կ'անուանէ զՅուլիանէն ,  
և սա Հրանոյչին վրայ կը գուրգուրայ բոլոր ու-  
ժովն երջանիկ սրտի մ'որ կը տառապի սիրելի հա-  
սակակցին տարաբաղդութեանը համար : Այդ ա-  
նոյշ արարածը զիս երբեմն մայր կ'անուանէ և ինք-  
դինքը Յուլիանէին կատարեալ քոյրը կարծելու հա-  
մար կ'ըսէ : Կը պատմէր մեզ իւր լքեալ վիճակն  
երկրիս վրայ , զինքը խնամողներուն շահախնդիր  
ընթացքը , որով կը պարտաւորէր բոլոր զգացում-  
ներն իւր սրտին մէջ ամփոփելու , եւ Աստուծոյ  
գաղափարին մէջ ոյժ քաղելու , բաղդին հարուա-  
ծոց զէմ դնելու համար , ինչպէս և զինքը կրծող  
ախտին հպատակելու : Ահա պարզ և հոգեմաշ վէպն  
իւր կենաց :

« Գիտեմ , կ'ըսէ , թէ աշունն աղէտալի սի-  
տի ըլլայ ինձ . չորաբեկ տերեւը սիտի ըլլամ զոր  
սաստկաշունչ հողմը մոռացութեան վիհը սիտի նե-

տէ » : Այս խօսքերն յանչափս կը տիրեցնեն զմեղ : Յուլիանէս երիտասարդութեան վատահութեամբ լի կեանք կը խոստանայ ծաղկահասակ տառապելոյն , երջանիկ օրեր կը ներկայացնէ աշացն առջեւ . եւ երր անկարողութիւնը կը տեսնէ իւր բարեկամուհին համազելու , անոր վիզը կ'իյնայ արտասուելով : Աղջկանս համար աշխարհք կը սկարունակուի նշանածին , մօրը և բարեկամուհւոյն սիրոյն մէջ . Լեւոնին վրայ ունեցած իւր սերէն ի զատ , կը փափաքէր ամենայն ինչ բաժնել Հրանոյչին հետ :

‘Իրեթէ ամեն օր շրջագայութեան կ'երթանք խեղճ աղջկան հետ ի միասին . եւ երր Լեւոն ազատ է՝ մեղի ուղեկից կ'ըլլայ : Յայնժամ Հրանոյշ մելամազձոտ հաճութեամբ կը նայի երկու նշանածներուն , եւ երբեմն դառնազին ժպիտ մի կ'անցնի իւր անգոյն շրթանց վրայ . զի իւր խօսնայրը գերեզմանն է . իրեն համար երկինք ոչ եւս ասալ մ'ունի , ովկիանն՝ ոչ եւս կոհակ մի , եւ իւր սիրալ կը շիջանի յառաջ քան հրով փայլելու : Անցեալներն իւր հօրը հանդիպեցանք մինչդեռ կը շրջագայէինք . Հրանոյշ դէալ անոր յառաջանալով « Հայր իմ , ըստաւ , ահաւասիկ այն ազնուասիրտ տիկինը որ իմ վրաս այնչափ գթով կը հսկէ , եւ ահաւասիկ քոյրս » : Պարոն Պետրոս Թ. Հնորհակալիքը մատոյց ինձ այնպիսի ճուռմարտանութեամբ որ իրեն համար ունեցած հակակրութիւնս առաւել եւս սաստկացաւ : Կեղծ քաղաքավարութիւն մ'ունի , եւ թէսկէտ երիտասարդ է տակաւին , բայց առաջին անգամ ծեր կը թուի : Աղջկանն համար

արուեստալից գորով մի կը յայտնէր որ կարծես թէ  
անոր զարմանքը կը շարժէր . վերջապէս ցաւալի է  
որ այդ մարդը հայր է այդպիսի հրեշտակի :



### Տիկին Սիրա առ. Մայսա

Հիւանդ երիտասարդուհիդ համակրութիւնս գը-  
րաւեց . աշխարհ շատ իսկ կը ներկայացնէ այսպի-  
սի բաղդին զոհեր : Առանց մօր դժբաղդ տղան  
արտաքսեալ մ'է արեգակէն զրկուած՝ որ տակաւ  
առ տակաւ կը նուազի , կ'անցնի և ցուրտ վէմ մի  
միայն կը յայտարարէ իւր քայլերը երկրիս վրայ :  
Ուինչ կը հաւասարի մայրենի սիրոյն . մայրը կը սի-  
րէ անսահման անձնուիրութեամբ . իրեն համար  
չկայ զոհ , եւ կամ լաւ եւս ըսեմ կեանքը զոհերու  
շարունակութիւն մ'է զորս ոչ կը նշմարէ եւ ոչ իսկ  
կ'զգայ : Կը սիրէ ոչ թէ վարձատրուելու , այլ մի  
միայն սիրելու համար . և նոյն իսկ որդիական ա-  
պերախտութեան հանդիպելով դարձեալ մայր կը  
մնայ , այսինքն կը սիրէ դարձեալ , կը նուիրէ զոր  
ինչ ունի՝ սիրտն ու կեանքը : Մայրենի զգացման  
մեծութիւնը կազմողը կատարեալ անշահասիրու-  
թիւնն է . եւ կը նկատեմ այդ զգացումը իրեւ  
ճշմարտագոյնը , վսեմագոյնը եւ մի միայն հաս-  
տատը :

Մայրը մարդկութեան նախնական գիրքն է . ով  
որ չկիտեր սոյն գրքին մէջ հեգել , անկարող պի-  
տի ըլլայ միշտ բնութեան մեծ դրքէն կարդալու ,  
զի կոյր մ'է նա , զի մայր անունը սիրոյ անբաւու-  
թիւնը կը պարունակէ . եւ ով որ այդ բառը չըմ-  
բռուներ , արարշութեան վսեմագոյն վանկէն պրկը-  
ուած կը մնայ : Զգիտեմ թէ արդեօք մայրենի պի-  
րոյն անբաւութիւնը զաւակաց ապերախտութիւնը  
չի պատճառեր շատ անգամ : Որովհետեւ մարդկա-  
յին բնութիւնը ամեն բանի վարժելով՝ մեծագոյն  
զոհերն անգամ իւր փրայ ազդեցութիւն չեն ընձեր .  
այնչափ կը կարծէ իւր սեփական իրաւոնքը վայե-  
լել : Բայց երբ այդ կարծեցեալ իրաւոնքէն կը  
զրկուի , այն ժամանակ միայն կը ճանաչէ անոր  
յարգն եւ կ'զգայ անդարմանելի կրուստը : Արդը  
ջերմ կլիմաներու տունկն է որ ցուրտ երկիր Փ  
փոխադրուելով իւր պայծառ երկնից ջերմութենէն  
կը զրկուի , ցուրտ քամիէն կ'ունի , կը դալկանայ ,  
կը թարշամի իւր բոյրը չ'արձակած . հեք ծաղիկ :

---

Մայտա առ. Տիկին Սիրա

Տ Տիգրանէն լուր ստացայ : Նամակը վսեմ միու-  
թեան յօդն է երկու սիրեցեալ սրտերու մէջ : Տիգ-  
րանայ մէն մի բառը կրկնութիւն մ'է իւր սիրոյն

Եւ հաւատարմութեանը : Այս , լաւ կը ճանչեմ անոր սիրտը եւ սակայն այդ կրկին յայտնութիւններն առաւել եւս հաւատքս կը հաստատեն : Ինչու պահեմ քեզմէ . բայց քանի որ ծովս զմեղ կը բաժնէ , այնպիսի վայրկեաններ ունիմ որ կասկածն առջեւս կը կանգնի իրեւ զարհուրելի հրէշ , եւ կը ներկայացնէ ինձ կին մ'որ զիս Տիգրանէն կը բաժնէ , եւ չգիտեմ ինչու սոսկումը կը դրաւէ զիս մահը փափաքելի ընելով ինձ : Սակայն միթէ ապերախտ չեմ . անոր նման բարձր սիրտ մի կրնայ երբէք ուխտագրուժ ըլլալ . ո՛հ , հայհոյանք մ'է իմ կասկածս սիրոյ դէմ : Կը սիրեմ զՃիգրան , նա կը սիրէ զիս ստուգապէս . վարանմունքս զդացմանս չափազանցութենէն կը դոյանան , գիտեմ . եւ երբ կը ցրուին եւ հաւատքը կը վերադառնայ , թուի ինձ որ ահեղամուռնչ ծովուն կոհակաց խաղալիքն ըլլալէն վերջը գեղազուարձ եզերքի կը վերադառնամ , երազելով եւ պաշտելով :

Տարաբաղդ Նրանոցի օրերը վերջանալու մօտ կը թուին : Մեր ընկերութիւնը անոր համար անհրաժեշտ պէտք մ'եղած է . հետեւապէս երբ անկարելի է անոր շրջագայութեան երթալը իր տանը մէջ կ'ընկերանանք իրեն : Անընդհատ կը խօսի կոյս երեւակայութեանն երազներուն վրայ որք կենաց երազին մէջ պիտի անհետանան : « Աւաղ , կ'ըսէր , երբէք կեանքն այնքան սիրելի շթուեցաւ ինձ որշափ արդ որ խոյս կուտայ ինձմէ : » Ուրիշ անդամ մ'ալ կը մրմնջէր , « Ես վայրենի անտառ մ'եմ որ իրր շող ճանաչեցի միայն շանթերուն փայլը որ

անոր գագաթը լուսաւորեց : Կեանքս ճերմակ  
էջ մ'է որ ո՛չ մի սիրտ անունը գծեց , այլ մահը մի-  
այն իւր սեւ դրոշմը կրաւ անդ : Գիտնայիք թէ  
որքան աղետալի է հրաժարիլ կենաց բոլոր վա-  
յելքներէ : Ես ալ հոգի մ'ունիմ ուրիշներուն նը-  
ման , ես ալ երիտասարդ եմ , ես ալ զիտէի սի-  
րել , զիտէի ժապտիլ երկնից եւ ծաղկանց : Եկայ ,  
տիսուր վկայ մի հանդխացայ կենաց վայելից , և  
առանց մասնակցելու անոր , վշտերս ուսիս վը-  
րայ բեռնաւորած՝ մահուան մութ կայանը կ'իջնամ  
տրտմայոյգ : »

Օր մի իւր վիճակը սաստկացաւ յանկարծ : Յու-  
լիանէն տուն խրկեցի , և ես զիշերն ի բուն հրս-  
կեցի հիւանդին վրայ՝ իրրեւ մայր իւր սիրելի որ-  
դեկին : Կը նայէր ինձ երախտագէտ աչօք և կը-  
սէր « Որչափ պիտի պաշտէի զքեզ թէ ասլրէի .  
բայց երկինքէն վրադ պիտի հսկեմ : Դու մեղմա-  
ցուցիր ճակատագրիս դառնութիւնն այս վերջին  
օրերուս մէջ , և ես կ'օրհնեմ զքեզ ի փոխարէն ,  
դի չունիմ այլ ինչ նուիրելու բաց ի օրհասական  
հոգւոյ մի օրհնութիւններէն » : Ուրիշ օր մ'ալ ըովն  
էի դարձեալ , ներկայ էր և Ներիգան . զարմա-  
նալի բաղձանք մ'ունեցաւ նա . ինձմէ ինդրեց ոս-  
կիէ մատանիս որ Տիգրանայ և իմ գլխագիրները  
կը կրէր : Եթէ խեղճ աղջիկը զիտնար Տիգրանին  
պատուէրն անկէ չի բաժնուելու , եթէ զիտնար  
թէ ինչ դոհի կ'ենթարկէր զիս , անշուշտ այդպիսի  
բաղձանք չէր յայտներ . բայց ինչպէս կրնար են-  
թաղրել թէ այդ սիրոյ գրաւական մ'էր : Մատա-

նին տուի , մատն անցուց , եւ համբուրելով ըստ  
« ինձմէ չպիտի բաժնուի մինչեւ ցմահս . յետոյ վե-  
րըստին դու մատդ պիտի անցնես՝ եւ այսպէս կա-  
մայ թէ ակամայ միշտ զիս պիտի յիշես » :

Զգիտեմ ինչու յանկարծ տխուր ազդեցութեամբ  
համակռւեցայ . թուեցաւ ինձ թէ մահը Տիգրանայ  
սիրտը հետը կ'առնէ կը տանի , թէ չարագուշակ  
ամս մի սիրելոյս դէմքը մթնցուց , եւ անցայտ  
ըրաւ աչքիս առջեւէն : Ճիչ մի պիտի արձակէի  
բայց ուշաբրեցայ , յուզմունքս զսպեցի , Նրանոյշ  
ոչինչ հասկցաւ , սակայն Հերիգան ուշադրութեամբ  
կի դիտէր զիս նոյն միջոցին : Խոչ պիտի ըսէ Տիգ-  
րան եթէ իմանայ թէ պատուէրին չի հնազանդե-  
ցայ , եւ գիտնայ մանաւանդ թէ իւր մատանին  
մահուան մատը կը զարդարէ . զի նախապաշարում-  
ներ ունի նա մահուան նկատմամբ : Իայց ինչ կըր-  
նայի ընել . արդեօք ներելի՞ էր վերջին բաղձանք  
մ'անկատար թողուլ :

Հէք աղջիկ . կարծես յուսահատութիւնը զինքն  
ամեն վայրկեան կը կեղեքէ : « ԱՇ , ըստ , կենա-  
ցըս հորիզոնը միշտ մթապատ եւ սպառնալից էր :  
Երիտասարդութիւնս դարուն չունէր . մինչ ծաղիկ-  
ներ կ'որոնէի տեսայ յանկարծ փոս մի որ կը բաց-  
ուէր ոտիցս ներքեւ . նայեցայ անդ , տեսայ մահը  
որ կը ժպտէր ինձ , եւ դողասարսուռ աչքերս կա-  
փուցի » : Մահուան մերձաւորութիւնը այսպէս ըզ-  
գալ՝ հոգւոյն համար անդունդին մէջ  
թաւալիլ է շարունակ :



## Տիկին Սիրա առ. Մայստա

Մարդս ունի այնպիսի վայրկեաններ ուր զարհուրելի կերպիւ կ'զգայ առանձնութեան բեռը : Դու հիւանդ մի կը խնամես , կը տքնիս անքուն , անոր շունչը կը դիտնէս , և կը կարծես շարունակ որ մահն զքեզ անկէ կը բաժնէ : Յուզմունքէ յուզմունք կ'անցնիս , վարանմանց մէջ կ'ապրիս , ցաւերով կ'ապրիս , բայց վերջապէս կ'ապրիս , զի ամենայն ինչ կը շարժի իքեղ : Սակայն երբ միտքը կարծես թէ անխլիրտ է , թէ մարդս անշարժ զանդուածի կը վերածուի ձանձրոյթէն , չգիտես , Մայտա , թէ որքան դառնազին է զգալ առանձնութիւնը բազմութեան մէջ . զգալ որ մեր ներկայութիւնն և ոչ զգացում մի կ'արթնցնէ տիսրութեան կամ ուրախութեան , ոչ յուսոյ , և ոչ սլատրանաց : Զգալ որ աննշմարելի առարկայ մենք , զգալ որ երջանկութիւնն ենք և ոչ գժրազգութիւնը , զգալ մեր բանականութեան և զգացմանց ոչնչանալը , բգդալ վերջապէս որ կեանքն ենք մահուան մէջ . ո՛հ , քանիօն սոսկալի է այս վիճակը :

Երբեմն կը շրջադայիմ նարնջենեաց և ձիթենեաց անտառներուն մէջ որով օժտուած է Քօրֆու : Երբ այդ դալարագեղ աշխարհն շուրջս անուշարոյր մթնոլորտ մի կը կազմէ և իւր հիանալի տեսքովն աշքերս կը բերկրեցնէ , կը թուի ինձ յայնժամ թէ թափառական եւ օտար ոգի մ'եմ որ

կ'անցնիմ կ'երթամ անշշուկ : Աակայն կան այնպիսի  
վայրկեաններ որ կ'իմանամ թէ յիս կեանքը կ'ար-  
թըննայ , թէ յիս ամենայն ինչ կը մռնչէ , կը գուր-  
դուրայ , կը մրմնջէ . կը յիշեմ թէ դուստր էի , ա-  
մուսին և մայր . կը բաղձամ ներդաշնակութիւն մի  
կազմել շուրջս որուն արձագանքը լսելի ըլլայ բա-  
րեկամ որտի մէջ . բայց այդ ներդաշնակութիւնը  
սիտի անհետանայ ոչնչութեան մէջ , և ինձմէ և  
ոչ բան մի սիտի մնայ՝ յիշատակ մ' արթնցնելու  
համար :

Առանձին եմ յիսուն տարիներուս ծանրութիւնը  
տանելու . վայ անոր որ ոչինչ ունի սիրելու կամ  
ատելու : Ստոյգ է որ ատելութիւնը սարսափելի  
ընկեր մ'է . բայց վերջապէս շարժում կ'ազդէ ի  
մեզ և զգալ կուտայ թէ գոնէ կ'ապրինք : Ոչ ,  
մարդս առանձնութեան համար ստեղծուած չէ .  
օղակ մ'է այն որ ուրիշ օղակներու հետ շարայար-  
ուած մարդկութեան շղթային տեւողութեան կը  
ծառայէ : Երբ առանձին կը մնայ՝ աստ անդ՝ կը  
տարուքերի , կ'աւլուի , կը հալածուի , եւ հուսկ  
վերջնական կերպիւ կը կորառուի : Այսպէս ուրեմն  
մարդկային բանականութեան և զգացման ամբող-  
ջութիւնը կը մղուի լուելեայն դէպ ի ոչնչութիւն :

Անձնական տկարութիւնս կ'առանձնացնեն զիս  
ընկերութեան մէջ . ընդ վայր կը կարծէինք բա-  
ւականանալ մեր մտածութեամբն և կամ մեծ հան-  
ճարից երկերովն : Մարդս կը կարօտի շարժուն բա-  
նականութեան որ կը կենդանացնէ զինքն երբեմն  
նայուածքով և երբեմն ձայնիւ : Հառաչանքը , ժը-

պիտը , մոնչումը , զուարթ կամ տխուր արտասուքն , ստոնք կեանքը կը կազմեն : Խոյս տալ վրշտէն ինչպէս հաճոյքէն՝ ոչնչանալ է , և այս է իմ բաժինս աշխարհիս վրայ : Ես նսեհ պանդուխտն եմ որ թեւերը խաչաձև կուրծքին վրայ դրած կ'սպասէ որ ըսեն իրեն « Թօթափիէ կեանքը , մահուամբ զգեստաւորէ հանգչելու համար » :



### Մայտա առ. Տիկին Սիրա

Վարագոյրը գոցուեցաւ , ողբերգութիւնը վերջացաւ , Նրանոյշ ոչ եւս է : Երբ աղջկանս բազկին վրայ յեցեալ պարտէզն իջաւ վերջին անգամի համար , կարծես թէ աշունն էր որ գարունէն կառաջնորդուէր , մահն էր որ ձեռք տուած էր կենաց : Ծառի մի հովանւոյն ներքեւ հանգչեցաւ , և աշքերը մերթ ծովուն , մերթ երկնից , մերթ մեր վրայ ուղղելով նուազեալ ձայնիւ կը մրմնջէր « Ինչպէս կեանքը գեղեցիկ է , ինչպէս կը բազայի ապրիլ ձեզի հետ ըլլալու համար միշտ : Բայց ես որք թոշունն եմ որ զուրկ է բոյնէ , որոյ թեւերը ջախճախուած են , և երբ կը փութայ իւր թոխն առնուլ՝ գետինը կ'իյնայ մահագոյժ ճիչ մ'արձակելով որ անպատասխան կը մնայ » : Աշնահար եւ շոր տերեւը ծառէն իւր վրայ անկաւ . տռաւ զայն ,

նայեցաւ և ըստ կերկերածայն « Խեղճ դու տերեփիկ , նոյն բաղդն ունինք . կենաց ծառը զիս եւս ընդ հուալ գետնամած պիտի թողու . ոչ թոջուն մի հովանւոյդ ներքեւ պիտի պատսպարի , և ոչ սիրո մի սրտիս ներքեւ պիտի հովանաւորի : Դժբաղդ տերեւիկ , դու քոյրս ես զի քեզ նման փոս մի պիտի ունենամ իրրեւ տիեզերք » : Այս խօսքերը զինքն ուժաթափ ըրին . տարինք զինքն իւր խուցն ուսկից ոչ եւս կենդանի դուրս պիտի ելնէր :

Վերջին օրը Յուլիանէս հեռացուցի իւր սիրելին , ուղելով խնայել իւր փափուկ սրտին : Զէր կարծեր թէ մահն այնչափ մերձ էր , և կը յուսար տակաւին երբ ամենայն յոյս կորսուած էր , զի երիտասարդութիւնը յուսալից երազներով կը սնանի միշտ :

Նուաղեցաւ Հրանոյշ տակաւ առ տակաւ , կարծես թէ հրեշտակ մ'էր որ թեւերն վայրիկ մի կամփոփէր ետքը իւր թոփչն առնելու համար գետ երկինք : Բայց մշտատեւ կերպիւ աշքերը գոցելէն յառաջ ձեռքս բռնեց , համբուրեց մատանիս և ըստ « Թո՛ղ այս սրբանուէր ըլլայ քեզ . աւաղ ոչ եւս պիտի տեսնեմ Յուլիանէս » : Հրաժեշտի ողջոյնը տուաւ հօրն որ կարծես թէ վերջապէս զգածուած կ'երեւար մահուան տեսարանէն՝ երբ մինչեւ նոյն օրը ցուրտ անտարբերութիւն մի կը յայտնէր , եթէ ի բաց առնուի իւր քանի մ'անդամ ցոյց տըռուած շինծու խանդաղատանքն : Այս սրտածմիկ պատկերին առջեւ արտասուացս հեղեղը չի կարենալով արգիլել թողուցի սենեակը . բայց երբ վե-

բաղարձայ հոն՝ Հրանոցը ոչ եւս էր : Ծնրադքեցի  
իւր անկողնոյն առջեւ , և հողիս դառնապէս լա-  
ցաւ . իւր ցրտահար ձեռքը համբուրելէն վերջը  
մատանիս ուզեցի առնել , բայց գողցուած էր իւր  
մատէն : Յիմարած , յուսահատ , կարծես թէ մահն  
էի մահուան հանդէալ . կը թախանձէի , խոստում-  
ներ կընէի մատանիս գտնելու համար , բայց ի  
զուր . անյայտ եղած էր առանց և ոչ մէկու ու-  
շաղրութիւնը գրաւելու :

Ի՞նչ պիտի ըսեմ Տիգրանին , ի՞նչ բացատրու-  
թիւն պիտի տամ մատանւոյս կորստեան վրայօք :  
Ըսի քեզ արդէն թէ նախապաշարեալ միտք մ'ունի  
մահուան նկատմամբ , և երբէք յանձն չեմ առներ  
իւր անդորրութիւնը վրդովել խոստովանութեամբս ,  
և կարծել տալ իրեն թէ Դամոկլէսի սուրն ան-  
ընդհատ գլխուն վրայ կը չողաց . նա մանաւանդ երբ  
պատուիրած էր ինձ տուած նուէրէն չի բաժնուիլ  
երբէք : Ի՞նչ բացատրութիւն տամ իրեն , սիրելիդ  
իմ , օգնէ ինձ խրատներովիլ : Երբ մարդս սաստիկ  
ձնչուած է ցաւերով՝ ընելիքը չղիտեր , և վայրիկ մի  
կը տարակուսի նոյն իսկ կենդանի ըլլալուն վրայ :  
Բազմիցս խոստացայ գողը վարձատրել , հաստա-  
տեցի թէ իրեւ մասունք նկատելուս համար է որ  
այդչափ կարեւորութիւն կուտամ այնպիսի դուզ-  
նաքեայ արժէք ունեցող բանի . բայց ի զուր խօ-  
սեցայ , ի զուր խոստացայ : Բարեկամուհիդ իմ ,  
կարծես թէ գլուխս պիտի պայմի , զի կորստեանս  
մէջ աղէտք մի կը գուշակեմ . կարծես թէ տիսուր  
նախազգեցութիւն մ'ունիմ . ո՛հ . . . . :

Թաղեցին Հրանոյը մօտակայ գիւղերուն գերեզմանատան ծառի մի ներքեւ, զոր ընտրած էր ինքն անձամբ : Ատէալ աղջկանս հետ կ'երթանք սցցելելու իւր մենիկ գերեզմանին որոյ վրայ կը թափենք գեղեցիկ եւ անուշահոտ ծաղիկներ : Այդսիրուն հրեշտակը չգիտէր թէ ի՞նչ վարանմունք և ի՞նչ ցաւ պատճառեց ինձ . և սակայն երբէք գառն գանգատ մի իւր դամբանական անդորրը չի պիտի վրդովէ , քան լիցի : Պիափ աղօթեմ միշտ մերձ գերեզմանին ամենայն ջերմեռանդութեամբ հոգւոյ մը որ կը պաշտէ անոր յիշատակը :

Անցեալներն սաստիկ յուսահատելով՝ գնացի հոն առանձին իրմէ օգնութիւն հայցելու . ծնրադրեցի հողին վրայ և աղերսագին խնդրեցի իրմէ որ մատանիս ինձ վերադարձնէ : Թուեցաւ ինձ թէ գըլուխը կը շարժէր տիրապին մինչդեռ ցաւոց կայլակ մի կը սահէր իւր դալկահար դէմքէն վար : Անշուշտ յուզեալ երեւակայութեանս հետեւանքն էր այդ տեսիլն , և սակայն չգիտեմ ի՞նչու , կարծես թէ միտքս անշարժ մնաց նոյն միջոցին՝ մտածելու կարողութիւնս կորսնցնելով ինչպէս եւ զգալու : Սոսկալի նախազդեցութեամբ կը մաշիմ ու կը մահանամ . եւ սակայն հարկ է որ Յուլիանէիս շյայտնեմ վարանմունքս , մօտակայ ամուսնութեան երջանկութեան լրյու չնսեմացնելու համար տիրութեամբս . եւ դեռ երեք ամիս ոլէտք է հարսանեացր համար : Հարկ է ուրեմն բոլոր վիշտերս հոգւոյս խորն ամիտիել որպէս զի և ոչ մէկ հայեցուածք մինչեւ հոն ժամանէ . հարկ է որ արիւնթա-

թաւ մէն մի կաթիլը վոխանակ դուրս ելնելու իրք  
տիտիանք՝ յետո ընկրկի սառելով , և սրտիս վրայ  
առաւել ծանրանսալով կրկին տանջանօք պատառէ  
զայն : Երանի անոնց որք ազատ են լալու և հա-  
ռաչելու : Արգիլեալ արտասուքն իրրեւ հրաբուղիս  
կը ներգործէ . վայ հրաշնչութեան , զի կեանք մի  
կը խորասուզի աւերակացն ներքեւ :



### Տիկին Սիրա առ. Մայտա

Խելքդ կորուսի՞ր արդեօք , Մայտա՛ , կուզես ան-  
պատճառ անձդ չարշարել , չուքը մարմնացնել , և  
սիրոդ չի մեռած անոր թաղման հանդէ՞սը կատա-  
րել :

Կ'ըմբռնեմ թէ մատանւոյդ կորուսոր տխուր  
ազդեցութիւն մ'ըրած ըլլայ վրադ , ոչ թէ իրրեւ  
չարագուշակ ինչ նկատելով զայդ , այլ ուարզավէս  
սիրելի անձի յիշատակին խառնուած ըլլալուն պատ-  
ճառաւ : Եթէ Տիգրանայ միտքը նախապաշարմամբ լի  
շըլլար՝ գործելիքդ չատ կը դիւրանար ամենայն ինչ  
պատմելով իրեն անմիջապէս : Բայց նախապաշար-  
մանց աղետալի ազդեցութենէն մեծագոյն հանձար-  
ներն անգամ ազատ չի մնացին : Նախապաշարմունք  
այն հրէշներն են զորս մարդիկ անձամբ ոտեղծեցին  
իրենց բանականութեան դէմ մարտ մզելու , չար-

չարագելու և մոլորելու համար, բարի կամ շարադոյժ նշաններ հետեւցնելով ընդհանուր օրինաց բնական ընթացքն : Մի և նոյն դէսլքերն ու նշաններն առողջեր հետեւանք ունենալով՝ պատճառ մի չէր արդեօք նախառաշարեալ մոռքերը բռնժելու, երբ միշտ մի և նոյն պատճառը՝ մի և նոյն պայմաններու մէջ, մի և նոյն հետեւանքը կ'արտադրէ :

Զոր օրինակ շատերը կորուսած են իրենց նըշանտուքի կամ ամուսնութեան մատանին . և սակայն իրենց երջանկութիւնը բնաւ չէ խանգարուած : Համարելով թէ մատանւոյ մի կորուստն աղետալից ըլլայ, ուրեմն պէտք է ենթադրել թէ զայն անվտանգ պահելով՝ մշտատե երջանկութիւն կ'ապահովենք մեր անձին . կրնաս արդեօք զայդ հաստատել այն անձանց նկատմամբ որ մատանի կը կրեն : Կ'ընդունիմ թէ՝ մատանին կորուսած մարդը տարաբախտ եղած ըլլայ, բայց ոչ թէ այդ զրկման պատճառաւ, այլ անտեսանելի, աննշմարելի եւ հետեւապէս անդիմադրելի պատճառներով՝ որք զանազան իրերու ծնունդ տուին տիսուր վերջաւորութիւն մ'ունենալով մեր նկատմամբ : Բայց ինչ որ մենք վերջացած կը համարինք, շարունակութիւն մ'է որ նոր իրեր երեւան կը հանէ, մէկը միւսին յաջորդել կուտայ, ուրիշ հետեւութիւն կ'արտադրէ, ուրիշի մի ծագում կուտայ, որով հետզետէ իրաց շարունակութիւնը կը հաստատուի : Մէկ պատճառէ ուրիշ բիւրաւոր պատճառներ յառաջ կուգան, տարբեր ազդ եցութիւններ կ'ունենան, տարբեր շարժումներ կ'արտադրեն, տարբեր եղբակացութիւն-

ներ կը գոյացնեն , տարբեր զգացմանց ծնունդ կուտան : Ամէն մարդ առաւել կամ նուազ բաժին մ'ունի այս ընդհանուր շարժումէն . և սովորաբար ինչ որ մաս է՝ ամբողջութիւն կ'ենթաղրուի , ինչ որ հետեւանք է՝ պատճառ :

Ի՞նչպէս մետաղը մարդարէական ողի կրնայ ունենալ ապագայ աղէտք մի յայտնելու համար՝ և կամ ի՞նչ զարմանալի ազդեցութիւն՝ դէսքեր պատրաստելու և անոնց ուղղութիւն տալու : Կ'ուրանանք մինչեւ չտեսնելու աստիճան ինչ որ ամենապարզ խորհրդածութիւնը յայտ յանդիման ցոյց կուտայ մեզ : Կարծես թէ մարդկային միտքը միտում մ'ունի մոլորութեանց մէջ թափառելու , և միշտ լոյսէն խոյս տալով խաւարին մէջ ահարեկ շրջելու : Մարդս կ'ուզէ անպատճառ շղթաներ տալ իւր մըտաց և անոնց բեռին ներքեւ լկիլ ու տառապիլ :

Քեզ վերադառնալով , Մայտա՛ , գուցէ առարկես թէ ըրած կորուստդ այլ և այլ կասկածանաց զքեզ ենթարկէ գտնուած վիճակիդ մէջ , թէ եւ կարծեմ թէ աւելորդ է երկիւղդ քանի որ Տիգրան բաւական կը ճանաչէ զքեզ , և հետեւաբար որ և է կասկածէ կրնայ ազատ ըլլալ : Եթէ իրեն յայտնած ըլլայիր եղելութիւնն ամենայն ճշմարտութեամբ , արդէն մտատանջութիւններդ վերջացած պիտի ըլլային , և մահաւանդ այդ խոստովանութիւնն ընելու պիտի յորդորէի քեզ առանց ժամանակ կորսնցնելու : Բայց Տիգրանայ նախապաշարմանց խնդիրը կը յարուցանես , չես ուզեր սեւ գաղափարաց ծնունդ տալ . ուրեմն սպասէ անոր վերա-

դարձին և այն ժամանակ եղելութիւնը կը պատմես իրեն, մահուան գոյները թեթեւցնելով ըստ կարելոյն, զի իրողութիւնք աննպաստ գոյներով կը նկարուին ի հեռուստ : Քու ներկայութիւնդ կը մեզմէ իրաց անախորժ ազդեցութիւնը, և այսու եղանակաւ հարուածին ոյժը կը պակսի :

Յուզեալ երեւակայութեան խաղալիք եղած ես, սթափէ, հանդարտէ, բայց միշտ գործէ, փնտռէ, խոստացիր : Եթէ այդ գողութեան նպատակն ու կւոյ սէրն է, ովէ է այն որ առաւելն ստանալու չի փափագիր՝ վերադարձնելով գողցուած առարկայն երբ վստահ է անպատիժ մնալու :

Այն որ չի խղճմափր գողութիւն ընելու, չամաչէր խոստովանելու զայն՝ երբ շահէն դրդուի : Վարձատրութիւնն՝ հանդերձ անպատժութեամբ և լուսթեամբ դիւրամատչելի կ'ընեն գողերուն ամէնէն անզգամն անդամ : Արփացիր ուրեմն և աներկրայ եմ որ ընդ հուպ կ'ստանաս վերստին Տիգրանայ սիրոյն առհաւատչեայն :



### Հերիզայ առ Պետրոս Թ. . . .

Ի զուր կը հիւծիս, ի զուր կ'ստանաս կեանքդ փձացնելու : Ոչինչ կը լսեմ, ոչինչ կը հաւատամ . փաստ կ'ուզեմ, ծառայութիւն կը պահանչեմ : Արբել՝ կը նշանակէ սիրուած առարկային դերին լւ-

լալ, անոր հնազանդիլ, կամքերը կատարել՝ մինչեւ  
իսկ այլանդակ բաղձանքը . հպատակիլ կուրօրէն,  
և ի պահանջել հարկին վրէ ժխնդիր կանդնիլ, խըզ-  
ճին ու պատւոյ ճայնը խեղդամահ ընել, և մեղա-  
պարտ հանդիսանալ :

Բայց դուն ի՞նչ ըրիր, որո՞նք են քու ծառայու-  
թիւնքդ սրտիս վրայ իրաւունք սաւանալու համար :  
Կարծես թէ դու միայն կը տոչորիս ինձ համար  
հրարորբոք սիրով : Գեղեցկութիւնս շատ մարդկանց  
աղետալի եղաւ . միթէ պատճառ մ'էր որ ես եւս  
սիրեմ այն ամէն անձերն որք ինձ համար կը հա-  
ռաչեն : Ոչ հառաջանքով, և ոչ արտասուօք սիրոս  
կը գրաւուի . զոհ կը պահանջեմ . և ով որ զոհուե-  
լու պատրաստ է, ապահով կրնայ ըլլալ հոգւոյս  
վրայ իշխելու :



Պետրոս Թ . . . առ. Հերիզա

Զքեզ պաշտելն սրտիս օրէնքն եղած է, և քեզ  
ծառայելը միակ փառքս . Նրամայէ ուրեմն, ի՞նչ է  
ուզած ծառայութիւնդ, ինչու զոհի խօսք կ'ընես,  
սիրով տոչորող սիրոը կը ճանաչէ զայն արդեօք . թէ  
կեանքս անդամ ուզես կը նուիրեմ քեզ, միայն թէ  
պաշտելի բերանդ այդ հրամանը տայ ինձ: Դու թա-  
գուհի ես, և ես քու գերիդ . ի՞նչ է կամքդ, խօսէ  
և մատուցած ծառայութեանցս մեծութեան հաւառ

սարին վարձատրութիւնքս : Խուր ինձ , Հերիգայ : Քառասուն երեք տարեկան եմ , կեանքը վայելեցի այն ամէն հաճոյքներով որ հարստութիւնը կրնայ ընծայել : Մինչդեռ քսան և չորս տարեկան էի , ամուսնացայ . կինս գեղեցկութեան և առաքինութեան տիպար մ'էր . զինքը գերիս ըրի և թողուցի որ զիս պաշտէ : Խւր նկատմամբ ունեցած անտարբերութիւնս զինքը չարաչար կը վշտացնէր , ու ձոխութեամբ և հարստութեամբ կ'ուզէի փոխարինել ինչ որ կը զլանայի իբրեւ սէր . սակայն այս փոխարինութիւնը չէր գոհացներ զինքը : Միակ զաւակս էր Հրանոյշ . յուսացի թէ կինս միսիթարութիւն կրնար գտնալ մայրենի սրտին մէջ , հոն ամփոփելով զգացմանցը բոլոր սաստկութիւնը և կ'ուրախանայի , զի իւր սէրը տաղտուկ կը պատճառէր ինձ . բայց օր աւուր կը նուազէր նա , և օր մի անկողին մտաւ վերջնական կերպիւ . ասոնք եղան իւր վերջին խօսքերը « Նուիրէ զաւկիդ այն սէրը զոր մերժեցիր ինձ : »

Հրանոյշ որբ մնաց , օտար ձեռքեր խնամեցին իւր մանկութիւնը տանս մէջ . բայց նա բնաւ նեղութիւն չէր սպատճառեր ինձքանի որ ազատ կ'ապրէի իբրեւ ամուրի մի :

Երիտասարդ էի և հարուստ . շատերն հառաջեցին ինձ համար , շատերն փափաքեցան ընկերական վիճակիս մասնակցիլ , բայց անոնց և ոչ մին սրտիս ճամբան դիտցաւ գտնել : Կարծես թէ զու վրէժիքնդիր ուզեցիր ըլլալ այն ամէն հառաջանաց եւ արտասուաց որ պատճառեցի՝ անհնարին տրիփ մը

վառելով սրտիս մէջ , արիվ որ քանի մի սէրեր  
թուի յինքն պարունակել :

Երբ առաջին անդամ տեսայ զքեզ աղջկանս հետ  
նստած՝ աչքերս շլացան շնորհալի հրասոյրներէդ, և  
կարծեցի թէ հրեշտակային երեւոյթ մ'ես, զի  
երբէք չէր հանդիպած ինձ այդչափ կատարելու-  
թիւններ տեսնել կնոջ մի վրայ : Նոյն օրէն ի վեր  
անջնջելի կերպիւ դրոշմուեցաւ պատկերդ սրտիս  
մէջ, և ոչ այլ ինչ կ'երազէի, բայց հանդիպիլ քեզ .  
և փառք աղջկանս որուն վրայ կը դթայիր . առիթ  
ունէի զքեզ ստէպ տեսնելու, կը փափաքէի անոր  
տխուր բաղդն ունենալ բաւական էր որ համակիր  
մէկ նայուածքդ վայելէի :

Օր մի ոչ եւս կարենալով տոկալ չարչարանացոյացանեցի քեզ սէրս . և ոչ խսկ պատասխանեցիր ինձ : Արկին անգամ նոյն յայտնութիւնն ըրբ եւ նոյն արհամարհոտ լոռութիւնն եղաւ պատասխանդ : Քանի ժամանակէ ի վեր խոյս կուտաս ինձմէ , և ի զուր տունդ կը յաճախեմ . տեսութենէդ զիս զրկելով՝ մահ կուտաս ինձ մէն մի օր , և սակայն կենդանի եմ տակաւին : Բայց եթէ վերջ շտաս խստութեանցդ՝ ես վերջ պիտի տամ իմ անհնարին վշտացու , ըսի զայն քեզ արդէն : Կամ մահս վճռէ , կամ տանջանքս դաղրեցուր : Ըսէ , որո՞նք են հրամաններդ , պատրաստ եմ զանոնք կատարելու . եթէ հարկ ըլլայ նոյն խսկ մարդասպան սրով ձեռ-քերս զինել , պատրաստ եմ դարձեալ , զի իմ միակ պատիժս զքեզ չտեսնել է :

Հերիգայ առ. Պետրոս Թ . . .

Կը հաստատես ինձ թէ սլատրաստ ես նոյն իսկ  
ոճիր մի գործելու . սակայն չէ այդ փափաքածս :  
Վրէժ մի կ'ուզեմ լուծել, բայց ոչ մահուամբ որով  
տանջանքը կը վերջանայ . այլ կեանքով, որպէս զի  
մէն մի օր նոր թոյն մատուակէ որոշած զոհիս  
հոգւոյն, եւ անոր մասունքն յօշոտէ անհնարին  
ցաւերով : Երբ վրէժս յագեցնես, երբ տեսնեմ  
ատած կինս տառապանաց անդունդին մէջ գահա-  
վիժած, և զգամ սիրտս երջանիկ անոր թշուառու-  
թեան տեսքէն, երբ ոչ եւս. հարկադրուած ըլլամ  
դառնութիւնս չյայտնելու որպէս զի իրեն սահ-  
մանուած հարուածս ապահովեմ՝ եւ իւր սիրտը  
մեռցնեմ, այն ժամանակ զքեղ իրբեւ տէրս պիտի  
համարիմ օրինացդ հպատակելով :

Խիստ երիտասարդ էի և գեղեցկութեւնս բազ-  
մաթիւ թշուառներ ըրած էր արդէն : Շատերն ու-  
զեցին հետո կարգուիլ, բայց ամուսինս տարաւ  
յալթանակը՝ կրած անուանն ու մեծ հարստու-  
թեանը պատճառաւ : Իւր անմոռունչ հպատակու-  
թիւնն իմ կամացս և այլանդակ բազմանացս, իւր  
տկարութիւնը թերութեանցս ներողամտութեամբ  
նայելու, արհամարհանք աղդեցին ինձ իւր նկատ-  
մամբ : Վեց տարիէ ի վեր ամուսնացած եմ, և վեց  
տարիէ ի վեր արհամարհանքս օր աւուր սաստկա-  
ցաւ : Կը սիրէ զիս անշուշտ, բայց իւր տկարու-  
թիւնը շատ աւելի մեծ է քան սէրն, և վստահ եմ

որ նոյն ձեւով պիտի վարուէր որ և է կնոջ հետ : Խակ ես կ'ուզեմ եղական զոհ , եղական սէր . կ'ուզեմ որ ինձ միայն շնորհուի ինչ որ ուրիշներուն կը մերժուի . կ'ուզեմ վերջապէս սիրտ մի , ընթացք մի քուկինիդ նման :

Ամուսնութենէս ի վեր բազմիցս տեսայ ամուսնոյս մէկ աղգականն , որ տղայ հասակէն ի վեր որբ մնալով , իրեն հետ միատեղ խնամուած էր ընտանեկան յարկին ներքեւ ընտիր դաստիարակութիւն մի ստանալով : Վերջապէս իւր մտաւորական ձիրքերն ու ճարպիկութիւնը կարողացուցին զինքը Փարփղու մէջ հաստատուելու , զործունէութեան ասպարէզ մի բանալով անձին : Երբ զինքը տեսայ առաջին անգամ , իւր վեհանձն ձեւերն , առնական գեղեցկութիւնն և անդիմադրելի պերճախօսութիւնն այնպիսի աղդեցութիւն մ'ըրին վրաս , որ օր աւուր սաստկացաւ փոխանակ տկարանալու : Նա եղբայրական պատկառելի ընթանցք մ'ունէր ինձ նկանումը և ոչ այլ ինչ : Միրտս սոսկալի հըրով կը տոչորէր , միաքս կը զառանցէր . քանիցս ուզեցի յայտնել անոր հոգւոյս վիճակը . բայց երբ խոստովանութեան վայրկեանը կը հասնէր , լեզուս խօսելու կարողութիւնը կը կորսնցնէր եւ բերնիս մէջ անշարժ կը մնար . այնչափ նա պատկառանք կ'ազդէր ինձ : Վերջապէս մեկնեցաւ և կարծեցի թէ հեռաւորութիւնն ախտս պիտի բուժէր . բայց որքան կը սխալէի : Գիշեր եւ ցերեկ երազներուս առարկայն եղած էր նա , և ոչ մէկ ուրիշ պատկեր անորը կրնար ջնջել :

Վերադարձաւ երկրորդ անգամ, և այն ժամանակ հառաջանքս բաւական լսելի կ'ընէի: Բայց համարելով թէ չէր լսեր կամ չէր ուզեր լսել, ստոյգէ որ յառաջադիմութիւն չէի ըներ գտնուած վիճակիս մէջ և յուսահատութեամբ կը մաշէի: Որ մի վերջապէս արիացայ և յայտնեցի իրեն սրտիս վիճակը. ցրտութիւն յայտնեց ինձ, ամուսնոյս հետ ունեցած ազգականութիւնը յիշատակեց, անոր նըկատմամբ ունեցած երախտագիտութիւնն, և դեռ չդիտեմ ինչե՛ր: Այսպիսի անարբերութիւնն մի մեծագոյն նախատինք մ'էր իմ չնորհացս նկատմամբ, երբ մէկ նայուածքս իրրեւ սլարդեւ կը նկատէի: Ոչ, չէի ներեր իրեն, սակայն կը յուսայի միշտ: Բայց դառնութեանս չափը լրացաւ երբ յանկարծօր մի իմացայ իւր սէրն ուրիշ կնոջ մի նկատմամբ: Արհամարհել զիս ուրիշ համար. ուրեմն այդ էր սլատմառն իւր կեղծ առաքինութեան:

Դիշեր մի երբ ամենքը կը ննջէին, և ես միայն անքուն կը տքնէի, զգացի յանկարծ Տիգրանայ սենեկին դրան ճռնչելը. ուր ելայ, լրտեսեցի զինքն եւ տեսայ . . . գիտե՞ս ինչ . . . ծնրադրած զդա կնոջ մ'առջեւ: Տեսայ նաև որ մատանի մի կը հանէր անոր մատէն և ի վոխարէն ուրիշ մի կ'անցնէր. կարծեցի թէ յուսահատութենէս սլիտի մեռնէի: Լոեցի տեսածս, անոնց գաղտնիքը պահեցի, ցաւս սրտիս մէջ թաղեցի, վրէժխնդրութիւնս միայն կանգուն կեցաւ, և երդուայ բաժնելու այն երկու սրտերն որ զիրար կը սլաշտեն, եւ որք կը կարծեն թէ ոչ ոք տեղեակ է իրենց

սիրոյն : Այդ մարդը Տիգրան Գնդունին է , և կինը՝ Մայտան : Ահա հնչեց զործելու ժամն . վրէ ժս լուծէ եւ յետոյ եկու սրտիս մրցանակն ընդունիլ : Հրանոյշ մեծ ծառայութիւն մատոյց ինձ Մայտային մատանին կրելով , զի իւր մահուանէ վերջը զաղտնապէս յափշտակեցի զայդ :

Արդ գնա՞ դտիր Տիգրանը . համոզէ զինքը Մայտային սիրուիլդ , և իրբեւ ապացոյց՝ ցոյց տուր մատանին որ իրեն ծանօթ տառերովն դրոշմուած է :

Լաւ ծանօթացած եմ բնաւորութեանը . Օթէ-լրի նման նախանձու մ'է , եւ ոչ երբէք կը հաճի ամուսնանսու կնոջ մի հետ որ կասկածանաց տեղի տուած է : Եթէ նա նամակ գրէ Մայտային , եւ կամ սա Տիգրանին , նամակներն կը խոտորեցնեմ Մայտայի սպասաւորին միջնորդութեամբն : Փոփոխակի լոռութիւնը զանոնք մոլորեցնելով՝ երկուքն ալ իրարմէ մատնուած կը կարծեն , և իրարմէ կը բաժնուին :

Այժմ մոռցած եմ զՏիգրան . կրած նախատինքս կը յիշեմ միայն , և ես նախատանաց երբէք չեմ ներեր : Պիտի տեսնեմ վերջապէս Մայտայի կասկածներով տանջուիլն , և յուսահատութեամբ նուազիլը : Պիտի պատճառեմ անոր՝ ինձ պատճառած սոսկալի վշտերը . պիտի վառեմ սրտին մէջ այն դժոխքը որ լափեց զիս . եւ իւր դժբաղդութեան վեայ ըլլալով՝ իմ անցեալ ցաւերուս յիշատակը պիտի ջնջեմ . աղատօրէն պիտի շունչ առնեմ . վերջապէս պիտի ապրիմ զքեզ սիրելու համար միայն . սէրս պիտի չափուի վրէ ժխնդրութեանդ չափով : Երբ

պատրաստ ըլլաս մեկնելու՝ եկու որպէս զի բերանս  
երկրորդէ քեզ գրչիս գրածները : Եթէ զքեզ ընտ-  
րեցի իբրեւ վրէժխնդիրս , այնու պատճառաւ է  
որ լաւ համոզուեցայ թէ զքեզ միայն կրնամ սիրել  
Տիգրանէն վերջը :



### Պետրոս Թ . . . առ. Հերիզայ

Ամեն վայրկեան որ կ'անցնի , երջանկութենէս  
մաս մի կը գողնայ . վաղն ուրեմն կը փութամ գալ  
հրամաններդ ընդունիլ , և հետեւեալ օրը կը մեկ-  
նիմ : Մըշափ զարհուրելի է քեզմէ բաժնուելու  
գաղափարը . բայց քեզ ծառայելու փափաքս միակ  
միսիթարութիւնս պիտի ըլլայ : Խնչ է կեանքն  
առանց քեզ եթէ ոչ ցամքած ովկիան մ'որ կաթիլ  
մի ջուր չունի անդամ : Կը կրկնեմ քեզ , սիրադ  
շահելու համար ոճիրն ու մահը կ'անդունեմ , ան-  
տարբերութենէդ կը վախնամ միայն :



### Մայտա առ. Տիկին Սիրա


Բաւական ժամանակէ ի վեր Տիգրանէն նամակ  
չեմ ընդունած . ինչ կը նշանակէ արդեօք այդ  
լուութիւնը : Չեմ համարձակիր , ոչ , չեմ համար-

ձակիր կարծելու թէ զիս մոռցաւ արդէն . Տիգրան ուխտադրուժ . ոչ , ոչ , ճշմարտութեան և վեհանձնութեան դէմ հայհոյել է : Ոչ , բերանը չը ստերեր կ'երդնոյր հաւատարիմ մնալ ինձ : Սակայն ովկիրնայ հաւաստել ինձ թէ որ և է դեղանի՝ յիշատակս ջնջած չէ արդէն , եւ թէ սէրն ուրիշի մի կերպարանքով չէ տիրապետած անոր սրտին , երբ սա կը ջանար յաղթել այդ բռնակալ զգացման : Եթէ հակառակ կամացն ուխտադրուժ եղաւ , ահ , ինչ պիտի ըլլայ վիճակս . և կամ եթէ օր մի պարտազանց սրտի մնացորդները վերապարձնէ ինձ՝ ինչ ընեմ զանոնք . անշուշտ կը մերժեմ , զի նախտեալ սէր մի ոչ երբէք զիտէ ներել : Բերանս չի պիտի անիծէ զայն , զինքն այնչափ սիրելէս յետոյ . սակայն սիրտս մահուան պիտի դատապարտուի սաստիկ բարախելէն վերջը . տարաբաղտ սիրտ մի փոսն ունի միայն ապաստանարան :

Բայց կը զառանցեմ . ոչ , Տիգրան ուխտադրուժ չէ : Անրաւ սիրով սիրելէն վերջը չի կրնար մոռնալ զիս այնչափ շուտ . չի կրնար պատկերս արտաքսել ուրիշ մի տեղն անցնելու համար : Խելքս կը ցնորի , երբեմն մթութեան մէջ խառնաշփոթ կը մոլորի , և երբեմն ի լոյս կը վերադառնայ : Ոչինչ կը հաւասարի շարչարանացն տարակուսանքի , զի մարդս մի և նոյն ժամանակին կը ինաւատայ և չհաւատար , կը նշմարէ և չնշմարէր , կ'ապրի և չ'ապրիր : Կարծես թէ մշուշ մի կը շրջապատէ միտքն ու սիրտը , եւ երբ կը կարծենք ցրուել այս մշուշը՝ վերստին կը ձեւանայ թանձրամած : Վայրկեաններ ունիմ

որ անհմ կը չօշափեմ՝ զգալու համար թէ կենդանի եմ տակաւին, և զայդ տպահովելովս տարակուսանքս միայն կ'զգամ . Անստուգութիւնը սրտին հողեվարքն է . չգիտէ մարդ թէ ո՞րն ուզէ, սոյն վիճակին վերջանա՞լը թէ շարունակութիւնը : Արշափ ազօտ է եւ ամպամած յուսոց նշոյն որ կ'երերաց սոյն օրհասական ժամանակին :

Երբ աղջիկս ամուսնացնեմ ազատ պիտի ըլլամ . և այն ատեն պիտի սուրամ դէպ ի Փարփղ . անտես մնալով պիտի հսկեմ Ճիգրանին վրայ, պիտի տեղեկանամ, իմանամ ամեն բան . և եթէ ուխտադրուժմէ ոչինչ պիտի զիտնայ առած քայլիս վրայօք . իրեն համար կը մեռնիմ, եթէ հարկ է, բայց ինքը պէտք չէ որ իմանայ : Խոկ եթէ հաւատարիմ է ներողամտութեանը պիտի զիմեմ իրմէ կասկածած ըլլալուս համար, և յանցանքս պիտի քաւեմ զինքն առաւել պաշտելովս, եթէ չէ անհնարին ինչ զինքն առաւել պաշտելը : Ոչինչ կրնայ խափանել խորհրդայս գործադրութիւնը, զի ինձ համար կենաց և մահու խնդիր է այն :



### Տիկին Սիրա առ Մայտա

Եւ ես կը յորդորեմ զքեզ Փարփղ երթալու դիտաւորութիւնդ գործադրելու : Երիտասարդ ես, կրնաս նախանձորդներ ունենալ : Հեռաւորութիւնն

անախորժ կամուրջ մ'է որոյ վրայէն կը շրջին թըշ-  
նամանք , կասկած , երկիւղ և նախանձ : Կասկածն  
մեծագոյն հաւատքն իսկ կը ցնցէ , և սիրեցեալ բեր-  
նէն ելած ճշմարտութեան ձայնն է որ կը վերա-  
հաստատէ զայն : Մարդկային սիրտն ոչինչ բանէ  
կը քայքայի եւ նոյնպէս կը վերանորոգուի . ինչ որ  
սառ էր երեկ՝ հուր կ'ըլլայ այսօր . ինչ որ մահ  
կ'սպառնար՝ կեանք կուտայ : Անմիջապէս որ ազատ  
ըլլաս , դնա՛ , Մայտա՛ , ուր կ'առաջնորդէ սիրտղ-  
քեզ :



### Մայտա առ. Տիկին Սիրա

Օրերը կը սահին , կ'երթան , յուսահատութիւնը  
միայն անշարժ կեցած է հանդէս ինձ : Քանիցս  
գրեցի Տիգրանին , և ոչ մէկ պատասխան մ'ընդու-  
նեցայ . մուցուած եմ , դիւրիմացութիւն կայ , որու  
յայտնեմ ցաւերս : Լեւոն կրնար զիս վարանմունքէ  
ազատել՝ և նոյն իսկ Լեւոնէն կ'ուզեմ վիճակս քո-  
ղարկել : Կը յուսայի արդէն անկախ ըլլալ այս  
վայրկենիս , սակայն աղջկանս ամուսնութիւնն եր-  
կարեցաւ զանազան պատճառներով , բայց յուսամ  
թէ խիստ մօտերս կը կատարուի՝ եթէ նոր արդելք  
մի չի ծնանի :


Ա՛հ , չորս ամիս է արդէն որ Տիգրան լուսթիւն

կը սրահէ , եւ զիտեմ սակայն թէ ողջ առաղջ է :  
Գիշերուան մէջ թանձր ամպերով սեւցած երկինքն ,  
ոչ առաւել խաւարած է քան հոգիս :



### Տիկին Սիրա առ. Մայտա

Կ'ըմբոնեմ դառնագին վիճակդ , բայց երբ չես  
կարող դարման դտնալ անմիջապէս , կը մնայ քեզ  
համբերել եւ քաջութեանդ մասունքը չի վատնել  
յուսահատութեանդ մէջ : Ժամանակը մօտեցաւ ,  
կ'ըսես , ուր սիտի կարողանաս Փարիզ երթալ . ու-  
րեմն հանդարտէ : Մի՛ դատապարտեր զՃիգրան  
յառաջ քան իւր պատճառներն իմանալու , զի զուցէ  
զ ու , նոյն իսկ , արդարացնես զինքը : Դու կը դա-  
տապարտես զինքն , ո՞ զիտէ թէ ինքն ալ նոյնը  
չընէր քեզ նկատմամբ : Հանդարտէ , սիրելիդ իմ  
Մայտա , դի մօտեցաւ ժամանակն ուր ամենայն ինչ  
սիտի բացատրուի քեզ :



### Մայտա առ. Տիկին Սիրա

Մայրենի զոհունակութիւնս մոռցնել կուտայ  
ինձ վայրիկ մի իմ անձնական հոգերս . Յուլիանէս  
ամուսնացաւ , սկաշտօն մ'ունի արդ : Հարսնութեան

սպիտակ զգեստներով աղջիկս հրեշտակի կը նմանէր  
որ երկինքէն գլորելով մահկանացուի մի բազկաց  
մէջ կը պատսպարէր : Եւ այն անոյշ տիրութիւնն  
որով համակռւած էր նոյն օրը՝ նոր գեղեցկութիւն  
մի կ'աւելցնէր իւր կուսական չնորհաց :

Պատկը գիշերը կատարուեցաւ Լեւոնի տունը ,  
թիւր լոյսերով շքեղացած սրահի մէջ, զոր երփներանդ  
ծաղկանց շարքն ու բուրմունքն անուշաւէտ և գե-  
ղեցկատեսիլ պարտիզի կը նմանեցնէին : Պատկի  
խորհուրդն, Աւետարանին սրտագրաւ յորդորներն ,  
եկեղեցական ձայնակցութիւնն այնպիսի ազդեցու-  
թիւն մ'ըրին վրաս որ արտասուքս լոին կը հոսէր ,  
մինչ ես կը վերանայի ու այլ եւ այլ զգացումներ  
ու մտածութիւններ սիրտս ու միտքս պաշարելով ,  
մոռցնել կուտային ինձ թէ բազմութեան մէջ էի :  
Էայց երբ սթափեցայ վերստին իրը թէ երազէ մը  
արթննալով , տեսայ որ Հերիգայն կը դիտէր զիս  
այնպիսի վայրագ աչօք , որ կարծես թէ որսն էի  
զոր կը պատրաստուէր անգթութեամբ յօշոտելու :  
Եւ սակայն այս կինը մարդարիտներով եւ աղա-  
մանդներով շքեղապէս զարդարուած էր, և այնպիսի  
տարօրինակ գեղով կը փայլէր , որ շուրջը գտնուող  
բոլոր ծաղկահաս գեղանիներն անողորմաբար կը  
նսեմացնէր . կրնար ըսուիլ թէ անոնք իւր հրա-  
սլոյրներուն առաւելութիւնն երեւան հանելու պաշ-  
տօնն ունէին :

Էայց երբ նոս սկսու վալսել ի ձայն նուագա-  
րանաց պարին արագութեամբն արրշիռ , այնպէս  
սրարշաւ կ'ընթանար որ կարծես թէ վերանալով կը

թեւարկէր : սակայն երբ երաժշտական վերջին ձայնը հնչեց , և երբ գեղեցիկ կուրծքին եւ և էջն իւր զգացած հեշտութիւնը կը յայտաբարէր , թերեւս ենթադրէիր թէ կը ցաւէր այդ հեշտութեան կարճատեւութեան վրայ : Երբ Ներփայն կը պարէ , թուի երկնային երեւոյթ մի մարդկանց միտքն ու սիրաը մոլորեցնելու համար : Երբ կը քայլէ կը կարծուի թէ բռնաւոր թագուհի , կամ լաւ եւս ըսեմ , չար ոգի մ'է մարդիկ ի կորուստ մատնելու համար : Ամեն անցած տեղերէն յափշտակութեան արձագանք մի կը լսուէր . կը ճանաչէր նա իւր արժէքը , և ապահով էր գործած մեծ աղդեցութեան վրայ : Զկայ բան որ այնչափ ասլահովութիւն ազգէ կնոջ մի որչափ գեղեցիկ ըլլալու գիտակցութիւնը . զի գեղեցկութիւնն անդիմադրելի գօրութիւն մ'է որուն առջեւ մեծն , իմաստունը , բռնաւորն , ամեն մարդ վերջապէս փառաւորուելով կը խոնարհի :

Ներփային հիացում աղդելու սովորութիւնն այնչափ մեծ է , որ Տիգրանայ անտարքերութիւնն անմարսելի է իրեն : Որչափ կնոջ մի պաշտուելու վարժութիւնը մեծ ըլլայ , նոյնչափ դժուարութեամբ կը ներէ զինքը պարտութեան մատնողին . հետեւապէս ոչ Տիգրանին կը ներէ և ոչ ալ ինձ , անոր կողմանէ ինձ յայտնուած համակրանացն համար :

Հարսանեաց գիշերն ինձ ուղղած հայեցուածքն այնչափ անհուն շարութեամբ լի էր , որ չղիտեմ ինչո՞ւ ա՞ կ'աղդէ ինձ , թէև ամեն ջանք կընեմ արհամարհելու զայն : Խնչ յարաբերութիւն ունի այս կինն իմ բաղդիս հետ : Տիգրան կ'արհամարհէ

զինքը , բնաւ կարեւորութիւն շտար անոր խօսքերուն . և վերջապէս ինչով կրնայ դիտ ամբաստանել եթէ նոյն իսկ բաղձար վնասել ինձ : Աշխարհիս վրայ այնպիսի բաներ կան որոց ազգեցութիւնը մարդս կը կրէ առանց կարենալ մեկնելու , և ես սոյն վիճակին մէջ կը գտնուիմ :

Եթէ Յուլիանէս Լեւոնի կինն ըլլալուն համար ուրախութեամբ կը համակուփիմ , միւս կողմանէ կը ցաւիմ որ Հերիգային հետ նոյն յարկին ներքեւ պիտի բնակի , և անմեղութիւնը շարութեան ընկեր պիտի ըլլայ :

Ուր էր թէ տիկին Թորդ սմատունին պարտաւորած չըլլար ի տար երկիր ապրելու , ու հոս ըլլար անփորձ աղջկանս վրայ հսկելու . մինչ ես պիտի մեկնիմ տսկէ բաղդին քմահաճութեանց ենթարկուելու համար :



Պետրոս Թ . . . առ. Հերիզայ

Հասայ Փարիզ , վրէժդ լուծեցի : Գտայ Տիգրանը , պատմեցի անոր Մայտայի բարեկամութիւնը Հրանոյի նկատմամբ , իւր հոգատարութիւնը , մինչեւ անգամ իմ յարկիս ներքեւ մէկ քանի դիշեր անցնելը , եւ աւելցուցի թէ կրնայ ինքն իւր ազգականացը դիմել պատմածիս ստուգութիւնն ունենալու համար : Հաւտացուցի իրեն թէ այդ

կինն այնպիսի տրիփ մ'ազդած էր ինձ որ ուզեցի  
հետն ամուսնանալ . թէ նա առաջարկութիւնս  
մերժած էր նախ ուրիշի մ'ըրած խոստումն առար-  
կելով , եւ թէ վերջապէս ընդունած էր գուցէ վի-  
ճակիս մէջ առաւելութիւններ նշմարելով : Ըսի թէ  
մինչ կը պատրաստուէի զինքը կինս ընելու՝ տեսայ  
որ նենգաւոր մ'էր , թէ անպատիւ կին մ'էր , եւ  
թէ կը մատնէր զիս ինչպէս կը զոհէր զքեզ : Եթէ  
փաստ կ'ուզես , աւելցուցի , ահա մատանիդ զոր  
տուած էիր իրեն զիշեր մի լուսնի լուսով , եւ զոր  
մատէն հանելով ինձ յանձնեց այն օրը որ կը խոս-  
տանար զիս միշտ սիրելու :

Առաւ զայն դողալով , նայեցաւ մէջի տառե-  
րուն , գետինը նետեց սոսկալի աղաղակով , կրխ-  
կըռտեց « Թո՛ղ անցեալ յիշատակէն ոչինչ մնայ »  
դոչելով որոտալից ձայնիւ : « Մայտան մատնեց զիս ,  
կ'ըսէր իւրովի . զինքը հրեշտակ կարծեցի եւ սա-  
տանայ մ'էր . ճշմարտութիւն կարծեցի եւ ստու-  
թիւն էր . որտին մէջ օձերը բոյն ունէին ուրեմն :  
Եթէ զիտնար այն կինը թէ որպիսի անհուն սիրով  
կը սիրէի զինքը , սիտի ափառար իւր կորստեան  
վրայ : Արդ բոլոր սէրս արհամարհանաց վերածուե-  
ցաւ , ինձ համար չկայ Մայտա : « Մեռար դո՛ւ ,  
նենգաւորդ Մայտա , Տիգրանին համար » զոշեց  
վայրենի յուսահատութեամբ : Բայց անոր յուսահա-  
տութիւնն իմ երջանկութիւնս կը կազմէր , զի հը-  
րամաններդ կը գործադրուէին :

Մայտան քեզ մատնելովս , ըսի Տիգրանին , վը-  
րէժ մի կը լուծեմ . այն կինը պէտք է որ դժբազդ

ըլլայ ինչպէս ուրիշները տարաբաղդ ըրաւ : Ասկայն եթէ փորձէ զիմել քեզ վերստին , համողել զքեզ իւր դիւթիչ լեզւով՝ զգուշացի՛ր , զի նա լըքմանը մէջ սէտք է իւր սպատիժը գտնայ : Տիգրան ինձ մտիկ կ'ընէր կարծես թէ առանց լսելու , այնչափ ցաւն անզգայութեան տարած էր զինքը : Յայտնի է թէ մեծ սէր մ'ազգած էր Մայտա :

Խոկ եթէ այդ կինն այնչափ մեծ ազդեցութիւն կրցած է ընել , երեւակայէ , Հերիզայ , թէ դու աննման գեղեցկութեամբդ ի՞նչ խորունկ եւ անբոյժ վէրք բացած ես սրտիս մէջ , վէրք որ փափուկ մատունքդ կրնան սփոփել միայն :

Պաշտօնս լրացաւ , կը վերադառնամ կոստանդնուպոլիս : Փարիզու զուարձութիւններն ու արքեցուցիչ շարժումը բնաւ ազդեցութիւն չունին վրաս : Ինձ համար տիեզերք մէկ կէտի վրայ կ'եզրականայ այսինքն քու գանուած կէտիդ , Աշխարհ կին մ'ունի միայն , այն ալ դու ես . մէկ երջանկութիւն կայ , այն է սիրոյդ վայելքը :



Մայտա առ. Տիկին Սիրա

Մինչ ճամբորդելու սպատրաստութիւններ կ'ընէի այնպիսի ջերմէ գրաւուեցայ , որ զիս սպատաւորեց երեք շաբաթ անկողնոյ ծառայել : Ի՞նչ զարմանք

եթէ տկար մարմինս ցնցուեցաւ այնչափ զանազան յուղմունքներէ , վշտերէ , տիբրախառն ուրախութիւններէ : Յուլիանէս իւր անդուլ խնամօքն , որդիական սիրոյն սփոփանքը նուիրեց ինձ : Իսկ Հերիդան մէկ քանի անդամ այցելութեան եկաւ ինձ՝ գուցէ Տիգրանայ գործերուն ձախորդ վիճակն իմացնելու համար : Հետաքրքրութեամբ դէմքս կը դիտէր դառնութեան հետքը նշմարելու մտօք անցուշտ . բայց որչափ ի դերեւ կ'ելնէին իւր յոյսերն : Աիրաւորել ուղող ձեռքը կը դարմանէր , թշնամին յանդէտս բարեկամի դեր կը խաղար . եւ Հերիդան որ երբէք սիրելի չէր եղած ինձ , պաշտելի արարած մի թուեցաւ աչացս : Անհնարին մտատանջութեանցս մէջ միսիթարութիւն մի զգացի ենթադրելով թէ՝ Տիգրան իւր ըրած կերուստները չիմացնելու եւ զիս չվշտացնելու բաղձանքով լուռթիւն պահած էր : Տիգրանայ ըրած կորուստը Լեւոն եւս հաստատեց , թէեւ կորուստն մեծ չէ ըստ ինքեան , ըստ : Բայց Տիգրան չդիտէր գուցէ թէ ինձ համար միակ ազէտքը իւր սրտին կորուստն է : Կը փափաքէի ընդհակառակն , որ մեծ ըլլար իւր ձախորդութիւնն որպէս զի ապացուցանէի իրեն զգացմանցս անշահասիրութիւնը՝ զինքն ազքատ սիրելով ինչուկէս սիրեցի հարուստ , եւ անձս իրեն նուիրելով օգնէի , միսիթարէի , եւ փոխանակ սին բառերու՝ գործքով սէրս իրեն յայտնէի : Սիրոյ մէջ երբէք անձնուիրութեան ապացուցներն աւելըրդ չեն համարուիր , զի ամեն անդամ թուի թէ առաջինն է որ կը տրուի . եւ երբ սիրուը նոր ապա-

ցոյց տալէ կը դադրի , սիրելէ ալ դադրած կը համարուի :

Առաջին շոգենաւով կը մեկնիմ Փարիզ երթալու , եւ ուղղակի Տիգրանին դիմելու համար : Ո՞րչափ ժամանակը յամրաքայլ կ'ընթանայ . ժամանակը երջանիկ սրտերուն վրայէն սանձարձակ կը սուրայ կ'անցնի . իսկ անհամբեր եւ վշտալիցներու առջեւէն՝ դանդաղ դանդաղ կը սողայ , եւ մէն մի շարժումը համրել կուտայ : Երջանկութիւնը շունչ մ'է որ անմիջապէս կը շոգիանայ : Անհամբերութիւնն հող մ'է որ ոտից ներքեւ միշտ փլչելով քայլից արագութիւնը կ'արդիլէ . մինչ վիշտը ճահիճ մ'է որ ժանառահոտութեամբն հողին կը թունաւորէ : Ասոնց երեքն ալ շատ իսկ ճանչցայ :



### Լեռն առ. Տիգրան

Ամիսէ մաւելի է որ Մայտան մեկնեցաւ Փարիզ երթալու համար եւ տակաւին ոչ մի լուր ունինք իրմէ : Յուլիանէն յուսահատած է , անմիխիթար է , աշխարհիս ծայրն երթալու պատրաստ է մայրը գտնալու համար . եւ միթէ իրաւացի չէ այդ գորովն՝ քանի որ Մայտան կատարելութեան տիպարն է եւ մայրերուն լաւագոյնը : Ո՞վ չի զարմանար այնչափ արիաբար բարձրութեանց գաղաթէն

իջնալուն վրայ առանց իսկ իւր համեստ վիճակը քօղարկել փորձելու , եւ անշուք կենաց դատապարառելով իւր անձը զոհել աղջկանը դաստիարակութեան , ինչպէս եւ ազգին տարաբաղդ դստերց ամենայն անձնութրութեամբ :

Եւ ինձ ներելի է արդեօք ապերախտ ըլլալ անոր նկատմամբ երբ ինձ համար պատրաստեց Յուլիանէն , երբ փոխան տղու՝ գտայ հասուն կինն որ գիտէ խորհիլ եւ գործել , եւ փոխան կնոջ՝ հրեշտակը որ գիտէ սիրել ու զոհուիլ : Յուլիանէն Մայտային մանրանկարն է , այսինքն պարտուց զգացմամբ , արիութեամբ եւ աշխատասիրութեամբ համակուած է : Դատէ ուրեմն եթէ Մայտայի անստոյգ վիճակը կրնայ զիս մտատանշութեան չենթարկել :

Հաճէ ուրեմն հարկ եղած տեղեկութիւններն ստանալ եւ հաղորդել ինձ անմիջապէս : Յուսամ թէ սոյն պաշտօնը սիրով կը կատարես քանի որ դու ալ զՄայտան կը յարդես իրեւ զիս : Կը վախնամ թէ դժբաղդ պատահար մ'ունեցած ըլլայ օտար երկրի մէջ . եթէ գտնաս զինքն՝ եղբայր մ'եղիր իրեն համար պատշաճ դատուած օդնութիւնն հայթայթելով :



Տիգրան առ. Լեռն

Բացակայ էի Փարփղէն . գնացած էի Անդղիա  
գործերուս պատճառաւ . հոն առաքինի եւ բարե-  
կիրթ ազգակցի մը ծանօթանալով հետն ամուսնա-  
ցայ : Խոկ արդ վերադարձայ եւ կը փութամ աւե-  
տելքեղ այս լուրը , վստահ ըլլալով որ Եղբայրա-  
կան սիրոդ անտարբեր շի կրնար մնալ վիճակիս  
վոփոխութեան վրայ , թէ եւ այս միջոցիս յուզմուն-  
քով պաշարուած ըլլայ միտքդ :

Մայտայէն լուր մ'առնելու բոլոր ճիգերս ապար-  
դիւն մնացին մինչեւ ցարդ : Կը կարեկցիմ Յուլիա-  
նէիդ՝ որ անմեղ հոգւոց թանկազին արտասուքներն  
կը թափէ . երանի թէ իւր ցաւն սփոփանք գտնէր  
ընդ հուալ , զի առաքինի եւ հաւատարիմ անձինք  
երջանկութիւնն ունենալու են միշտ իրբեւ բաժին .  
թող չարերն եւ հաւատադրուժներն միայն տանջա-  
նաց դատապարտուին : Երանի թէ ես ալ ամուս-  
նութեամբ վայելէի այն անոյշ միսիթարութիւնները  
զոր կուտայ քեզ Յուլիանէդ , եւ ջնջէի իսպառ  
այն ցաւոց հետքերն որք կիսամեռ թողուցին սիրաս .  
չգիտեմ թէ սիտի վերածնի՞ այս :

Խրաւ է որ կինս թուի ունենալ այն ամեն հան-  
գամանքն որ ամուսնութեան յարկը դրախտավայրի  
կը վերածեն : Բայց ինչ դժբաղդութիւն եթէ սիրտս  
ստամբակի եւ արհամարհէ ամեն չնորհք , ամեն  
ձիրք , եւ փոխանակ երջանկութեան՝ դժբաղդու-  
թեան ծովուն մէջ ալէտանջ ծփալու յամառի : Ինչ

տարասպայման վիճակ եթէ վշտաց դատապարտեմ  
այն անմեղ էակն որ բաղդակից եղաւ ինձ :

Ահ , կեւոն , եթէ սրտիս վրայ տարածուած  
ու քօղը կարենայի վերցնել , որշափ արդեօք  
պիտի անիծէիր այն ջնջուած աղէտալի անունը որ  
սարսուռ կը պատճառէ ինձ մինչեւ ցարդ : Յանուն  
մեր բարեկամութեան եւ ոչ մէկ ակնարկութիւն  
մ'ընես իմ սիրային տխուր վէպիս նկատմամբ՝ որուն  
յիշատակը կատազութիւն կ'ազդէ ինձ , եւ առաւել  
եւս կը գրգռէ սրտիս մէջ բացուած վէրքերս , զորս  
կարծեցի թէ հրեշտակ ամուսնոյ մի խնամքը կրնա-  
յին բուժել : Կը սոսկամ մտածելու թէ գուցէ  
սմալքայլ մ'առի , զոր յուսահատութիւնս թելա-  
դրեց ինձ :



### Մայտա առ. Տիկին Սիրա

Կը մակարերեմ անհանգստութիւնդ յետ երկա-  
րատեւ լուռութեանս : Անձնական տկարութիւնս և  
Փարիզու բժշկաց դիմելու հարկն պատճառ բռնե-  
լով , մեկնեցայ Պօլիսէն կոկիծ մի թողլով հռն՝  
այսինքն աղջիկս , յոյս մի տաննելով հետո՝ այսինքն  
✓ Տիգրանը տեսնելու երազը : Հասայ Փարիզ՝ քաղա-  
քակրթեալ այսարհի մայրաքաղաքն , ուր մարդկա-  
յին հանճարին որ աստիճանի հսկայանալն ակներեւ

կը տեսնուի . ուր ամենայն ինչ շարժում է և կեանք ,  
եւ ուր կարծես ամեն մարդ կ'ուզէ օգտիլ ժամա-  
նակէն , պարագաներէն եւ դէսպերէն : Քանի մը  
տեսածներէս հետեւցուցի թէ հոն ամենայն ինչ  
անընդհատ շարժման ենթակայ է , միտքը , սիրտն  
ու մարմինը : Մարդիկ կ'ապրին գործելու , յառա-  
ջանալու եւ վայելելու համար : Բայց դատելու հա-  
մար՝ քննելու , բաղդատելու , ուսումնասիրելու է ,  
եւ մանաւանդ ազատ միաք ու սիրտ ունենալու է .  
իսկ ես ոչ մին եւ ոչ միւսն ունէի , զի մի միայն  
մէկ գաղափարէ պաշարուած էի , այսինքն Տիգրա-  
նայ բերնէն կեանք ընդունիլ եւ կամ մահուան  
վճիռը լսել :

Փարիզ հասնելուս պէս փութացի Տիգրանայ  
բնակարանն երթալ եւ զինքը փնտուել : Բացակայ  
է նա , պատասխանեց դռնապանն , այնպիսի ցուրտ  
եղանակաւ որ կարծես թէ խօսելու կը դանդաղէր:  
Աչքին փայլեցուցի ինչ որ ամենէն ծոյլ լեզուներն  
խօսելու յօժարամիտ կ'ընէ , եւ ձեռքին մէջ հրա-  
շալի մետաղը դնելով խնդրեցի իրմէ իմացնելու  
ինձ Տիգրանայ վերադարձին ժամանակն , առար-  
կելով թէ ստիւլողական գործ մի իւր ներկայու-  
թիւնն անհրաժեշտ կ'ընէ , եւ ամեն յապաղում՝  
վխասակար : Տիկին , պատասխանեց , մեղմ ձայնիւ ,  
Պ . Տիգրան Անդզիա գնաց և հոն ամուսնանալով ,  
յուսամ թէ շաբաթէ մ'ետքը կը վերադառնայ իւր  
հարսին հետ : Կարծես թէ երկինք բոլոր իւր հրե-  
ղէն գունդերով գլխուս վրայ ինկաւ և զիս անկեն-

դան թողուց , այնչափ լսած խօսքերս էութեան  
զգացումէն զրկեցին զիս :

Ի՞նչ եղար , տիկին , հարցուց դռնապանն այլ-  
այլութեամբ : Յաջողեցայ ուշաբերելու եւ երկար  
ճամբորդութեանս վերադրելու անհանգստութիւնս :  
Վերջապէս հարցուցի իրեն եթէ կրնա՞ր ապահովել  
զիս տուած լուրերուն ստուգութեան վրայ : Ի՞նչ-  
պէս , տիկին , սլատասխանեց , Պ . Տիգրան բազում  
տարիներէ ի վեր այս տանը մէջ կը բնակի . իւր  
բարութեամբը զիս պատուած է միշտ . և այս օրերս  
նամակ մ'ընդունեցայ իրմէ որով կը պատուիրէր  
ինձ ամենայն ինչ վայելուչ կերպիւ պատրաստել  
տալու իւր նորապսակ հարսն ընդունելու համար .  
Ի հաստատութիւն զրոյցիս ահա իւր նամակը , տի-  
կին , ըսելով , զայն ինձ յանձնեց . ճանաչեցի Տիգ-  
րանայ գիրը , տարակուսելու տեղի չէր մնար ,  
աւազ :

Հեռացայ այս տունէն . սկսայ քայլել առանց  
զիտնալու թէ ուր կ'երթայի , ինչ կ'ընէի , և ինչ  
պիտի ընէի . մտածութիւն և զգացում մեռած էին  
յիս : Յանկարծ զգացի թէ կը նուազէի . բայց դուռ  
մի տեսայ , ներս մտայ , և ետքը չղիտեմ ի՞նչ սպա-  
տահեցաւ : Երբ սթափեցայ , տեսայ որ գեղեցիկ  
ուենեկի մէջ էի , թէ կին մի կը հսկէր վրաս , եւ  
թէ աղնուադէմ մարդ մի քանի մի քայլ հեռու կե-  
ցած էր : Ո՞ւր էի , որո՞նք էին այս երկու անձինք  
որք կը համակրէին ինձ : Տիկին , ըսաւ , ազնիւ  
մարդն աղու ձայնիւ , ապահով եղէք , և համարեցէք  
թէ ձեր տանը մէջն էք : Դեռ քանի մ'օր պէսք

է լուսութեամբ և հանդարտութեամբ անցնէք . այս է բժշկին պատուէրն . ուստի բնաւ ձեր մտքէն չանցընէք անկողինը թողուլ : Յայտնեցէք միայն թէ ձեր ազգականներն որոնք են , որպէս զի անոնց իմաց տրուելով ձեր քովը դան : Անկարող խօսելու՝ նշան ըրի միայն թէ չունէի , և հազիւ տկար ձայնիւ կարողացայ իմացնել թէ օտարական մ'եմ :

Կ'երեւայ թէ քսան օրուան չափ մահուան եւ կենաց մէջ ասլրեցայ այս պատուական անձին պաշտպանութեան ներքեւ , ու վարձկան կնոջ մի խնամատարութեամբը : Հետզհետէ կազդուրուելով աչքերս սիրով բարերարիս կը նայէին . կարծես թէ նա մօր մի գուրգուրանօք կը գորովէր վրաս : Օր մի զուարթ դիմօք մօտեցաւ ինձ , ձեռքս բռնեց եւ անունս հարցուց : Մայտա , պատասխաննեցի : Ենչ գեղեցիկ անուն , ըսաւ ժպտելով . բայց տակաւին պէտք չէ որ խօսիք , շարայարեց քաղցրութեամբ :

Ճարտար բժշկի առաջնորդութեամբ եւ պաշտպանիս հոգատարութեամբն ի կեանս կը վերադառնայի , ոյժ կ'առնէի վերստին : Ո՛հ , երանի թէ մահուան թմբիրէն չ'սթափէի քանի որ ցաւերուս յիշատակը վերստին պիտի արթննար . . . . Վերջապէս երբ կարողացայ խօսիլ , օրհնեցի բերնովս իմ բարերարս , ինչպէս արդէն օրհնած էի նայուածքովս : Իմացուցէք ինձ ով ըլլալիդ , ըսի , որպէս զի լեզուս օրհնէ ձեր անունն եւ ծնողքդ անդադար : Բաւական ըլլայ ձեզ զիտնալն առ այժմ թէ կոմս Բ . . . . ն եմ . երբ որ կատարելապէս

առողջանաք , կը խոստանամ ձեզ առաւելն զրուցել ,  
պատասխանեց :

Գիշ ատենէն կարողացայ սենեկիս մէջ քայլելու :  
Բարերարիս բնակած տանը մէջն էր սենեակն ուր  
փոխադրուեցայ՝ դռնապանէն աղէտալի լուրը լսելէս  
ի վեր . փառք ազնուամիրտ Կոմսին որ երիտասար-  
դութիւնս և լքեալ վիճակս նկատելով պաշտպան  
կանգնած էր ինձ՝ իւր յարկին ներքեւ պատսպարե-  
լով դիս , և վարձելով ինձ համար անբնակ սենեակ  
մի՝ մեծատարած ապարանին մէջ :

Գաղղիական վեհանձն և օտարասէր զգացում-  
ներն այնքան հանրածանօթ են որ այդ ճշմարտու-  
թիւնը կրկնելու հարկ չկայ . օտարականը կը կարծէ  
երկրորդ հայրենիք մի դտնալ ի Փարիզ՝ մարդկու-  
թեան հայրենիքը :

Կոմսին ազնիւ ընթացքն չէր կրնար մոռցնել  
տալ ինձ Տիգրանայ նենդաւորութիւնը , զի անկա-  
րելի է ջնջել իսկոյն յիշատակ մի զոր պաշտած ենք  
եւ որ արմատ թողած է սրտին մէջ ; Յանկարծ-  
արմատախիլ ընելու կամեցողութիւնը վտանգաւոր  
է՛ըլլայ , զի սիրտն ալ միատեղ կրնայ խիլ , եւ  
հետեւապէս խիստ մահուամբ մեռնիլ : Դրուժանը ,  
զիս ուրիշի կը զոհէր . ահա այս էր ուրեմն իւր  
ըուութեան պատճառն : Արո՞ւ հաւատալ եթէ Տիգ-  
րան ուխտադրուժ եղաւ : Ընդհանրապէս այրն իւր  
սիրոյն վերեւն կինը կը ճանչնայ գարձեալ . իսկ  
կնոջ մի սիրոյն վերեւն Աստուած կայ միայն : Արք  
կնոջ գեղեցկութիւնը կը սիրեն , իսկ կինն հոգի մի  
կ'ուզէ պաշտել :

Երջանկութիւնը մեռած էր յիս , և անոր աւերակաց վրայ կը վերածնէին օրերն և զիշերներն . առաջիններն տխուր էին իրբեւ թանձրամած ձմեռնային աւուրք . իսկ երկրորդներն յուղուած էին սոսկալի երազներով . լոյսն ու խաւարը նոյնչափ անտեսանելի էին ինձ : Եթէ այնպիսի ազնիւ վարմունք՝ որոնց համար բացատրութիւն չկայ , կարող ըլլային սրտիս վէրքերը բուժել , անշուշտ իմիններս գոցուած կ'ըլլային արդէն : Բայց արդեօք կայ դարման խորունկ խոցերուն համար որք հետզետէ տարածուելով սիրտը կը փատեցնեն վերջապէս : Կը ջանայի ջնջել յիշատակ մ'որ անընդհատ կը վերանորոգուէր , և երբ զայն հեռու կը կարծէի , յանկարծքով կը դանէի : Աէրը բռնութիւն մ'է , ահագին , անդիմադրելի զօրութիւն մ'է . ո՞ր միջոցներով կը բնայ ասկիկար սիրտն անոր յաղթել : Երբ սրտին շղթաներն դիւրաբեկ են՝ զանոնք ջախջախելը դիւրին է . բայց երբ ծանր են իմիններուս նման , ահ , ոչ այլ ինչ կը մնայ եթէ ոչ գլխիկոր համակերպիլ :

Տակաւ առ տակաւ կը զօրանայի , և կոմսն անձնուիրութեան նոր ասլացոյց մի կուտար ինձ ամեն օր . մերթ կը ջանար սենեակս գեղեցիկ և ընտիր ծաղիկներով զուարթացնել . մերթ գիրքերով կը սլաշարէր զիս , և մերթ այլ և այլ ուրիշ փոքրիկ ընծայներով : Յրուան մէկ մասն ինձ հետ կ'անցնէր , երբեմն զուարթ և երբեմն ծանր խօսակցութեամբ՝ ջանալով ձանձրոյթո փալատել : Բոլը ճիգս կը թափէի անկէ ցաւերս քօղարկելու որպէս զի իւր

գթած սիրտը չի վիրաւորեմ . զի տխրութեան գոյնով երեսը կը ծածկուէր երբ անզուսպ հառաջանք մի բերնէս կ'ելնէր , և կամ արտօսր մ'աշքիս մէջ կ'երերար :

Առանձին սենեկիս մէջ կը ճաշէի միշտ . բայց օր մի կոմսն հրաման խնդրեց սեղանակիցս ըլլալու : Ի՞նչպէս , Կոմս , ըսի , այդ հրամանին կ'սպասէք : Շնորհակալ եմ , տիկին , պատասխանեց երախտադիտութեամբ : Զիս Մայտա անուանեցէք , ըսի , իրաւունքնիդ է այդ : Տարիքս կուտայ ինձ այդ իրաւունքը գուցէ , շարայարեց կոմսը ժպտելով : Տարիքնիդ , Կոմս , պատասխանեցի , մեծ չթուիր այդպիսի իրաւանց տէր ընելու համար զձեզ , այլ իմ նկատմամբ ունեցած ձեր անձնուիրութիւնն և անհուն բարիքդ կուտան ձեզ սոյն իրաւունքը :

Կոմսն համակրապից դէմք մ'ունէր և հազիւ քառասուն կամ քառասուն կինդ տարու կը թուէր ըլլալ . իւր ազնիւ դէմքին վրայ կարծես թէ տխրութիւնը դրոշմուած էր : Աչքերն սրամտութիւնը կը յայտնէին , լայն էր ճակատը , մազերն ու մօրուքը սկսած էին ճերմմկիլ , հասակը բաւական բարձր էր , ձայնն անոյշ , ժպիտը մելամալձոտ , ազնիւ եւ անարուեստ էր քաղաքավարութիւնը , առատ եւ իմաստալից էր խօսակցութիւնը . վերջապէս բնական ազնուականութիւն մի կը տիրէր բոլոր անձին վրայ :

Օր մի երբ կը խօսակցէինք , իւր գոհունակութիւնը յայտնեց առողջութեանս յառաջադիմութեանը վրաց , թէ եւ մահուան գոյներն դէմքէս բոլորովին անցայտ չէին եղած : Փափաքեցաք ո՞վ

ըլլալս գիտնալու , ըսաւ կոմսը . քաջութիւնն ունիք կենացս պատմութիւնը լսելու : Կը տարակուսիք , կոմս , պատասխանեցի , երբ այնքան ուրավութեամբ ականջ կը դնեմ ձեր որ և է պատմութեանց : Սասափի կը բաղձայի ձեր կենաց ընտելանալ , բայց չի համարձակէր վերստին փափաքս յայտնել , յարեցի : Երբ գիտնաք ով ըլլալս , դուք ալ գուցէ կը պատմէք ձեր կենաց վէպն եթէ վստահութեան արժանի դատէք զիս , թէւ ապահով եմ որ հրեշտակ մ'էք դուք , ըսաւ : Ամենայն իրաւամբ վստահութեանս արժանի էք , պատասխանեցի , և ուզեցի առաջինն ըլլալ տխուր դէպքերս պատմելու : Արդիլեց զիս գեղեցիկ քաղաքավարութեամբ , և այսպէս խօսեցաւ :

« Մեծ հայրս՝ կոմս տը Բ . . . ն էր , պատուաւոր բայց համեստ ծնողաց որդի : Մեծն նարօլէօն ազնուականութեան և կոմսի տիտղոսը շնորհեց իրեն : Իրբեւ պարզ զինուոր սկսած էր ծառայել նարօլէօնի բանակաց մէջ , և քաջարար պատերազմած մինչ Օսթէրլիցի և Ինայի նշանաւոր ճակատամարտք տեղի կ'ունենային : Հանդիսական եղած էր այն օրերուն երբ թագաւորներն կը փախչէին նարօլէօնի առջեւէն իրենց գահերն անպաշտպան թողլով , և սարսափահար ժողովուրդք կը դողային աշխարհակալի մ'առջեւ որ յաղթութեան թեւերուն վրայ նստած կ'արշաւէր : Մեծ հայրս սալշած այդշափ փառքէն իրբեւ աստուածութիւն մի կը նկատէր զկայորը . նոյնպէս կը նկատէր զինքն

և Գաղղիան : Իսկ յաչս օտարականաց աստուածային պատուհաս մ'էր : Իւր անունը սոսկում կ'ազդէր ամեն ուրեք . ձեռքերը գահերուն հետ կը խաղախն , թագաւորները գահնկէց կ'ընէր , թագեր կու տար , թագեր կ'առնէր , արիւնը իրբեւ գետ կը հոսէր . և այդ արիւնը կարծես նոր յաղթութիւններ կը բուսցնէր :

Զկայ բան որ երկարատեւ յաջողութեան չափ մարդը հսկարտացնէ եւ արբեցնէ . ինքզինքը կը մոռնայ , ամեն բան կը ցանկայ , ամեն բան հնարաւոր կը կարծէ . կ'ուզէ ամեն տեղ տիրել . խոշընդուռք ոչինչ կը համարուին , ժողովուրդք ոչինչ , անոնց զայրոյթն ոչինչ . ոչինչ կը տեսնէ , ոչինչ երկիւղ կ'ազդէ իրեն , միայն թէ կը կամի և յառաջ կը քայլէ . մինչդեռ ժողովուրդք ի սկզբան կը մուընչեն ցած ձայնիւ , և յետոյ կ'որոտան , կ'սպառնան , և այն սրտմտութիւնը որ ի ներքուստ կ'եռայր , կը յուզուէր , յանկարծ կը ձայթի՝ իրբեւ հրաբուզիւ , հուր և մահ շուրջ տեղացնելով :

Նպատակս վերջին հարիւր տարուան պատմութիւնն ընել չէ ձեղ , որուն գուցէ ինձ չափ տեղեակ էք , զի Գաղղիոյ պատմութիւնը բոլոր ազդաց պատմութիւնն է նաև . այլ պիտի յիշատակեմ միայն այն գէպքերն որք մեծ հօրս հետ յարաբերութիւն մ'ունին :

Պայօնի պատերազմին մէջ այնչափ արիութեան տպացոյցներ տուաւ նա , որ մահն առ ոչինչ համարելով կը զիմապրաւէր , և մինչդեռ վիրաւորեալ էր , կ'ուզէր դարձեալ յոտս կանգուն մնալ :

Վերջապէս իւր սոսկալի վէրքերէն արիւնն այնչափ յորդառատ հոսեց , որ նուաղեցաւ պատերազմի դաշտին վրայ , և զինքը մեռած կարծեցին , բայց չի մեռաւ , այլ ապրեցաւ իւր սիրելի կայսեր ծառայելու համար վերստին :

Պայօնի ճակատամարտն ակներեւաբար յայտնեց Նարօլէօնի թէ ժողովրդոց ընդգիտութիւնն և զայրոյթն ի հաշիւ առնելու է : Մօսգուայի մէջ ասոր ապացոյցն շատ խակ ունեցաւ , երբ Ռուսերն իրենց քաղաքը չի խնայելով կրակի տուին : Յայնժամ Գաղղիոյ մեծ բանակը նահատակուեցաւ կը բակներուն մէջ այրելով , և կամ Պէրէզինայի արիւնախառն ջուրերուն մէջ խեղդուելով : Գաղղիացւոց ուրիշ միջոց չի մնաց բայց նահանջը . հուրն ու բոցը փախուստի խառնաշփոթութիւնը կը սաստկացնէին , պարտեալներն ամենայն կողմանէ շրջապատելով՝ իրեւ անողոք հակառակորդ . նոյնպէս և մատնիչ ջուրերն որք անոնց կիսասպառ դիակները կը թաւալէին յաղթանակաւ . ինչպէս և նախատեալ ժողովուրդք՝ որք իրենց ատելութիւնն ու վըրէժինդրութիւնը միացնելով կը ջանային փլել այն բռնակալը որ զիրենք անդթաքար կոխկռտածէր իրեւ բացարձակ տէր , իրենց թագաւորաց դահերը յափշտակելով՝ և պարգեւելով եղբարցը , ազգականացը և զօրապետացը , իւր անձնական շահերն ի նկատի առնելով միայն :

Մեծ հայրս Մօսգուայի աղէտալի մարտին մէջ իրը առիւծ պատերազմելով , կայսեր նկատմամբ այնպիսի անձնուիրութեան և արիութեան տարու-

րինակ ապացոյցներ տուաւ , որ կայսրն իւր ձեռօք կախեց շքանշանն անոր կուրծքին վրայ , գորապետի աստիճանը շնորհելով միանդամայն : Մեծ հայրս այնպիսի աւիւն մունէր Նաբօլիօնի նկատմամբ որ կը փափաքէր քանի մի կեանքեր ունենալ նուիրելու համար անոր , և ունեցածը զոհեց սիրելի կայսեր՝ Վաթէռլոյի դաշտին վրայ , որ վերջին օրն եղաւ կայսրութեան մեծ տրամին :

Հայրս՝ որ միակ զաւակն էր մեծ հօրս , Նաբօլիօնի նկատմամբ հայրենի խանդն՝ և մեծ հարըստութիւն մի ժառանգեց , և հաւատարիմ մնալով այն մեծ երեւոցթին զոր պաշտեց մինչեւ ցվերջ կենացն . Երբէք յանձնառու չեղաւ ծառայել Պուրպօնեանց 1815ին վերահաստատած իշխանութեան , ինչպէս և ես բնաւ չհաճեցայ ծառայել Նաբօլիօն Գի , որ իւր գալուստն հանդիսադրեց Դեկտեմբեր 2ի դէպքերով : Աէտանի տիսրայիշատակ օրն կատրելապէս իրաւունք տուաւ ինձ :

Երբ Գաղղիան երկրորդ անգամ կայսրութիւն ըլլարէ գաղրեցաւ , և ի կորուստ մատնուեցաւ անշէջ ատելութեամբ թշնամւոյ մի , որ կ'ուզէր զայն բոլորովին ոչնչացնել՝ ոչ ևս անոր վրէժիսնդրութեան ենթարկուելու համար , յայնժամ Գաղղիացիք մոռցան իրենց կուսակցութեանց զանազանութիւնները , մոռցան իրենց հակառակութիւններ , մէկ հոգի մը ունեցան միայն վտանգի մատնուած հայրենեաց պաշտպանութեան համար :

Գաղղիոյ զաւակ էի , ընծայեցի իրեն հոգիս , բազուկս և քսակս . արիւնս իրեն համար հոսե-

ձեռքերէ ձնշուած՝ օրհասական ձիչն արձակեց . նոյնպէս և Նաբօլէօն օտար ձնշման ներքեւ հոդ- ւոյն վերջին հրաժէշտը տուաւ :

Նաբօլէօն թէև սխալմունքներ ըրաւ , այսու հանդերձ մեծ պիտի մնայ , եւ դարն՝ որ ծնունդ- տուաւ անոր , իրաւամբ պիտի փառաւորուի : Նաբօ- լէօն իւր յաջողութիւնն և բարձրաւթիւնը կը պարտի յեղափոխութեան , իւր հանձարոյն , անխոնջ աշ- խատութեանն , կորովամտութեանն և դէպքերուն : Իսկ իւր սխալմունքն ծնունդ են մարդկային բնու- թեան , փառամոլութեանը՝ զոր յաջողութիւնն իրբն . հրէշ մ'աճեցուց , և այն ամենայն եղելութեանց որք իրեն դէմ դաւաճանեցան : Կը զարմանամ Նա- բօլէօնի վրայ , կը սիրեմ հասարակապետութիւնը . երկու անդամ արեան և անիշխանութեան մէջէն ելաւ այն , եւ երկու անդամ երկու Նաբօլէօններէ փառացաւ՝ Մեծէն և Փոքրէն , որք իրենց երկաթեայ ձեռամբ խեղդեցին մտաց եւ գործոց ազատու- թիւնը :

Ութ տարիներ անցան Աէտանի նսեմ օրէն ի վեր : Ես բնաւ չմասնակցեցայ քաղաքական կենաց : Այսօր պանծալով կը տեսնեմ թէ հասարակապե- տութիւնն կը հաստատուի Գաղղիոյ մէջ . կը տես- նեմ Գաղղիոյ վերականգումը նոր կենսական ուժով զօրացած . կը տեսնեմ անոր զարդանալն , եւ կը հրձուիմ երբ կը նկատեմ զինքն՝ որ ի տես աշխարհի կը հանդիսանայ վերստին մեծ եւ փառաւոր , իւր գաղեմի հայրենաժառանգ ձիրքերովմ , թաւալզլոր մոլորելէն եւ այնչափ վար իյնալէն վերջը թուլա-

մորթ և նուաստացուցիչ կառավարութեան մի պատճառաւ :

Գաղղիոյ անկումն ահագին փոս մի բացաւ քաղաքակրթեալ աշխարհին մէջ . իսկ Գաղղիան վեր կանգնած՝ փոխան թագի , հասարակապետութիւնն ունենալով գլխուն վերեւ , կը ձեւացնէ այն զօրութիւնն որ ձեռք կուտայ լուսաւորութեան :

Նաբօլէօններուն վերջին յուսոյ նշոյլը նուաղեցաւ գերեզմանին մէջ . հետեւապէս հասարակապետութիւնը մէկ թշնամի նուազ ունի , և յաղթանակ մ'աւելի . սակայն յաղթանակ մի զոր և ոչ արեան կաթիլը կ'աղարտէ : Այն օրն որ հասարակապետութիւնը խեղդամահ ըլլայ վերստին , յանձնառու չի սիտի ըլլամ երբէք անոր թաղման հանդիսին ներկայ գտնուելու . մայրասապան չեմ ըլլար հայրենակցաց գործակից ըլլալով . այլ կը թողում հայրենիքս , կը փախչիմ ձեռքերս չի ներկելու համար անոր արեամբն :

Սիրտս որ մեռած էր ամեն վայելից նկատմամբ , Գաղղիոյ համար կ'ապրէր միայն երբ զձեղ ճանչցայ , տիկին :

Հայրս պատուաւոր և ազնուասիրտ մարդ մ'էր : Աշխարհիս մէջ երկու մեծ սէր ունէր այն . միոյն առարկան էր Նաբօլէօն , միւսն էր իւր զաւակը : Մօրս երակաց մէջ տոհմիկ արիւնը չէր չըէր . բայց ինչ փոյթ էր այդ հօրս որ սիրեց զինքն և հետն ամուսնացաւ : Նա ունէր գեղեցկութիւն և առաքինութիւն , և ասոնք բաւեցին իւր սրտին . երջանիկ ասպրեցան երկուքն ալ , և ես իրենց սիրոցն պտուղն

եղայ : Իմ վրաս ամփոփեցին ամենայն խնամքը զիս  
արժանաւոր մարդ մ'ընելու համար : Ուստունքս  
փառաւոր յաջողութեամբ աւարտեցի , երիտասարդ  
էի , ծնողքս կը պաշտէի եւ նոյնչափ աշխարհիս  
ուրախութիւնները : Տակաւին շատ երիտասարդ էի  
երբ հայրս կորուսի՝ և քիչ ժամանակէն վերջն ան-  
միսիթար մայրս : Իմ այս երկու սիրականներուն  
մահն յիմարեցուց զիս , բայց ժամանակն վիշտու  
սփոփեց , և զուարճութեանց յործանքին տուի ինք-  
զինքս :

Հարուստը շատ բարեկամներ կ'ունենայ , զի  
ամեն մարդ բարեկամութեանը կը փափաքի , անոր  
հաճելի կը ջանայ ըլլալ բաղձանացը կատարման ծա-  
ռայելով , զինքը շողբորդելով , և փայլուն ալագայ  
մարդարէանալով իրեն : Հացկաստակներն անոր կը  
փակչին , կը յարձակին ամեն կողմէ , քսակին տէր  
կ'ըլլան , առատապէս ոսկիները կը քաղէն , ամեն  
օր նոր հաճոյք կ'ստեղծեն , նոր շոայլութեան դռու  
կը բանան մինչեւ որ վերջին փողն սպառի , յետոյ  
կրնակ կը դարձնեն նոր որս փնտուելով : Յրերն և  
գիշերներն կը յաջորդէին և նոյնպէս վայելք կե-  
նաց . անդիմադրելի գտանզի ենթարկուած էր  
հարստութիւնս , զի ոչինչ կրնայ դիմանալ անսահ-  
ման շոայլութեան : Բայց երջանիկ կամ աղէտալի  
դէպք մի կայնեցուց զիս խորխորատին եզերաց վը-  
րայ , քսակս ազատեց , բայց սիրաս կորսնցուց :

Յր մի մինչ կը շրջագայէի , սքանչելի գեղեցկու-  
թեամբ աղջկան մի հանդիպեցայ . կարծես թէ Ռա-  
փայէլի խարտեաշ երեւոյթներէն մին էր որ մարմ-

նաւորած էր հրային սիրոյ ազգեցութեամբ . ձեւերն  
ազնուական էին եւ միանգամայն պարկեշտ : Իւր  
ետեւէն գացի և տեղեկացայ որ հայրն համեստ և  
պատուաւոր վաճառական մ'էր : Այդ հրաշալի տե-  
սիլն սրտիս մէջ դրոշմուեցաւ , զայն կը փնտոէի  
անընդհատ և ամեն տեղ ետեւէն կ'երթայի : Նշմա-  
րեց զիս , և ցնծութեամբ համակուեցայ երբ դի-  
տեցի թէ չէր խոյս տար ինձմէ ամենեւին :

Գիշեր մի թատրոնը դիմացս էր նստած , կը  
նայէի անոր հիացմամբ , երաժշտութիւնը սիրազրաւ  
սիրտս կը յիմարեցնէր : Երբ դերասանն երգեց հե-  
տեւեալ խօսքերը « Բերանս ոչ եւս կարող է լոել  
սրտիս գաղտնիքը . կը սիրեմ զքեզ » ցնորածի նման  
տեղէս ցատկեցի անոր նայելով . տեսայ որ աչքերը  
խոնարհեցուց այլայլութեամբ և տիրութիւնը պա-  
տեց զինքը : Վերջապէս օրուան մէկը միջոց գտայ  
անոր խօսելու և յայտնելու այն հուրը որ զիս կը  
լափէր , և իրեն սիրոյն փոխադարձ յայտնութիւնը  
լսելու : Ուզեցի անմիջապէս հօրը դիմել մեր ամուս-  
նութեան արտօնութիւնն ստանալու համար . բայց  
սոսկալով խմացուց թէ ինքը սահմանուած էր հարսն  
ըլլալու մարդու մ'որ զինքը կը պաշտէր , իրը փո-  
խարինութիւն հակակրութիւն ընդունելով : Գուին  
իւր հօրը կը զրհէր իւր տասն և ինն գարունները ,  
սիրտն եւ շնորհքները , զի որ և է մերժում ի  
կորուատ պիտի մատնէր իւր հայրն : Այս դառն  
խոստովանութիւնը կարծես թէ երակներէս բոլոր  
արիւնս քամեց , հանդերձ այսու կը յուսացի դարձ-  
եալ թէ օր մի գեղանին իմս պիտի ըլլայ դարձեալ :

Զիրար կը տեսնէինք միշտ զիրար սլաշտելով, և  
կ'սպասէինք . . . ինչ բանի . մենք եւս չգիտէինք :  
Վերջապէս Քօռինին նշանածն ուզեց փութացնել  
հարսանեաց հանդէսը զոր տարաբաղդ աղջիկն հե-  
ռացնելու միջոց գտած էր միշտ : Մարդը կ'սպառնար  
կատարելապէս աւրելու Քօռինին հօրը վաճառա-  
կանական գործողութիւններն, և հայրը կ'սպառնար  
իւր զաւակն ուրանալու : Կատղած, յուսահատած,  
սիրուհւոյս հօրը կը ներկայանամ, մեր փոխադարձ  
սէրը կը յայտնեմ անոր, կ'իմացնեմ ամեն զոհ կա-  
տարելու պատրաստ ըլլալս և աղջիկը կը խնդրեմ  
ինձ հարսնացնելու :

Նախ սրտմտեցաւ նա և ուզեց զիս ճամբել. բայց  
յետոյ ի գութ շարժեցաւ տեսնելով արտասուքս,  
երիտասարդութիւնս, լսելով թախանձանքս : Ինքն  
ալ յուզուեցաւ և կարեկցութեամբ ըսաւ « Քօռինս  
կը զոհեմ՝ սլատիւս և միւս վեց զաւակացս ապա-  
գան փրկելու համար : Բաղդս աղջկանս նշանածին  
ձեռաց մէջն է . այդ մարդը կը պաշտէ զնա, և չկաց  
նկատմունք որ զինքը հրաժարեցնէ զաւկէս : Ըսէ,  
ինչ կրնամ ընել . կարծես թէ հոգիս չ'արիւնիր աղ-  
ջկանս մարտիրոսութիւնը պատրաստելով » : Ի՞նչ  
կրնայի սկատասխանել, ի՞նչ կրնայի ընել : Ուզեցի  
Քօռինին հետ փախչիլ, բայց նա չհաճեցաւ հօրը  
չվնասելու համար, և սակայն իւր սէրն անոր զո-  
հելու քաջութիւնը չունէր :

Հարսանեաց սահմանուած օրն մօտեցաւ, և կար-  
ծես թէ դժոխք բոլոր հուրերովն և տանջանքներովն  
յիս կը բնակէր : Տիսուր էր Քօռին, սակայն կ'ե-

թէ բազդին կ'ուզէր հպատակիլ : Այս պատճառաւ կը մեղագրէի զինքը սաստիկ կշտամբանօք , ծայրայեղ դառնութեամբ , և նոյն իսկ կը կասկածէի իւր զգացումէն : « Հանգիստ եղիք , կ'ըսէր , դու ինքդ սիտի դատես եթէ կը սիրեմ զքեզ » :

Հասաւ օրն որ զԲուխն սիտի կրոզէր ինձմէ վերջնական կերպիւ : Խենդեցած էի , ուզեցի անձս չարչարանաց մատնել՝ գանձիս յափշտակութեան ականատես ըլլալ , հարսանեաց հանդէսին ներկայ գտնուելով : Պսակին համար որոշեալ ժամէն քիչ յառաջ եկեղեցին գացի , յարմար տեղ մ'ընտրեցի ուսկից կարենամ զինքը տեսնել և իրմէ տեսնուիլ , իւր հոգին տանջել , մահացնել , վայրագ յուսահատութիւնս աչացն առջեւ պարզելով : Արդէն անթիւ լցոներ իրենց շողովն եկեղեցին կը լուսաւորէին , հրաւիրեալներն հետզհետէ կուգային կը տեղաւորուէին , հանդիսին սահմանեալ ժամն կ'անցնէր , և հարսն ու վեսայն տակաւին չէին երեւնար : Ամեն կողմէ անհամբերութեան նշաններ սկսան տեսնըուիլ , ամեն մարդ շորա կողմ իւր նայուածքը կը շրջէր : Տենդը գրաւած էր զիս , քրտինքը ճակտէս կը հոսէր . այս յապաղումն ուրախութիւն կը պատճառէր ինձ , արփի մ'էր որ հոգւոյս մոսցը կը լուսաւորէր , երբ յանկարծ ահաւոր ձայն մի եկեղեցւոյն մէջ որոտաց « Հարսը մեռաւ » : Նախ անհնարին կերպով շուարեցայ , ոչ յառաջ , ոչ ետք կ'երթացի , անշարժ կը մնացի . յետոյ եկեղեցին դուրս նետուեցայ , Քուինի տունը վագեցի : Հոն կը տիրէր զարմանալի շփոթութիւն մի . հարսանեաց

ուրախալի պատրաստութիւններն կը կորսուէին ար-  
տասուաց և կոծերու տիսուր ձայնակցութեանց մէջ :  
Իբրեւ մոլեզին կենդանի վազեցի Քուինին սենեակը  
և տեսայ զինքն , ոհ , հարսանեաց ձերմակ զգեստ-  
ներով զարդարուած , անկողնոյն վրայ տարածուած  
կը նիրհէր մահուան քունով՝ զոր պատրաստած էր  
ինքն անձամբ : Իւր խաշածեւ ձեռաց մէջ բռնած  
էր այն թառամեալ վարդը՝ զոր տուած էի իբեն  
առաջին տեսութեանս միջոցին , և այս մեր սիրոյն  
մահուան խորհրդանշանն էր : Նետուեցայ պաշտելի  
մարմնոյն վրայ՝ իբեն հետ մեռնելու բաղձանքով :  
Երբ խելքս գլուխս եկաւ անկողինս էի , սենեկիս  
մէջ բարեկամներ կը հսկէին վրաս : Մահուան դըռ-  
ներն հասայ , թժիշկներն ամեն յոյս կտրեցին : Ոհ ,  
ինչու անոնց այդ գուշակութիւնը չիրականացաւ ,  
որով ազատ կը մնայի այնչափ տքնութիւններէ եւ  
յուսահատութիւններէ , և մինչ հազիր երեսուն տա-  
րեկան էի իբր ծեր չէի հանդիսանար երիտասար-  
դութեանս մէջ՝ անտարբերութիւն եւ զզուանք  
զգալով կենաց համար :

Այն աղետալի օրէն ի վեր ուրիշ մարդ մ'եղայ .  
սիրտս մեռած էր ամեն վայելից համար , և միայն  
Քուինիս յիշատակաւն կ'ապրէի : Նուիրեցի կեանքս  
և հարստութիւնս մարդկութեան թշուառներն սփո-  
փելու , և մանաւանդ դժբաղդ սիրահարաց օգնե-  
լու : Կը սահէին օրերն , և իբրեւ օտարական կը  
նայէի կենաց : Բաղդն ուզեց որ քեզ հանդիսիմ  
երբ դու նուազեցար վաճառատան մէջ . ոչ ոք կը  
ճանաչէր զքեզ , ես իբրեւ պաշտպանդ կանգնե-

ցայ : Երբ տժգոյն եւ մահատիպ դէմքդ աչքիս զարկաւ , կարծեցի թէ Քօռինն էիր , այնչափ անոր զարմանալի կերպիւ կը նմանէիր . որշափ քեղի նայէի այնչափ կը թուէր ինձ ճանչնալ անոր դէմքին դժերը : Ի քեզ կը գտնայի Քօռինս , և յուսահատարար կը ջանայի քեզ վերակենդանութիւն տալու , զի կը կարծէի թէ զքեզ կորսնցնելն կրկին անդամ զինքը կորսնցնելէր : Վերջապէս բաղդն ինձ կեանքդ պլարգեւեց . աչացդ անոյշ նայուածքին մէջ , ներդաշնակ ձայնիդ , տխուր ձեւիդ , մելամազօտ ժպտիդ մէջ կը գտնամ վերստին գանձը զոր կորուսի :

Զեմ հարցներ քեզ , Մայտա՛ , ով ըլլալդ , վասն զի Քօռինին նմանողն անոր պէս հրեշտակ մ'է անշուշտ : Միայն կը հարցնեմ եթէ անձդ եւ սիրտդ ազատ են , և եթէ են , անձս և սիրտս կը նուիրեմ ձեզ :

Աւազդ , կոմս , պատասխանեցի , անձս ազատ է բայց սիրտս՝ ոչ : Կարգը քեզ եկաւ արդ ինձ ունկընդիր ըլլալու . օրինաւոր իրաւունքդ է որ խոստովանութիւնս ընեմ քեզ , զի ինձ համար եղբայր մի , հայր մ'եղար դու : Պատմեցի իրեն բոլոր տըխուր արկածներս մի ըստ միոջէ , եւ երբ աւարտեցի , անհուն բարկութեամբ համակուած ոտք ելաւ և ըսաւ « կուզէս որ քեզ վրէժինդիր ըլլամ այդ նենդաւորը պատժելով » : Ոչ , ոչ , պատասխանեցի , շեմ ուզեր եղեռնազործ ըլլալ և շարիք տեղացնել այն արարածին վրայ դոր երբեմն սիրեցի . թող ասլրի և եթէ խիղճ մ'ունի , ինձ հա-

սուցած վիշտերովն սիրտի չարչարութի . իսկ եթէ չունի , թնչ հարկ հրէշի մի պիղծ արեամբն ներկել անրիծ ձեռքերդ :

« Մեծ ես դու , ըսաւ ձեռքերս սեղմելով , եւ իրաւունք ունէի կարծելութէ հրեշտակ միայն կըր-նայիր ըլլալ » : Կոմսն սկսաւ շրջադայել սենեկին մէջ խոր մտածութեամբ , յետոյ քովս նստելով ըսաւ « Վէրքդ տակաւին խիստ նոր է . երբ բուժուելու ըլլայ , երբ օր մի սիրտդ նեցուկ փնտոէ զիտցիր որ խմա պատրաստ է քեզ համար : Եւ եթէ ուրիշ անձ մի վերադասես ինձ , սիրէ զինքն առանց բնաւ խիղճ ընելու՝ բարեկամութիւնդ միայն ինձ չնոր-հելով . երջանիկ եղիք , ու քեզմով և ես երջանիկ կ'ըլլամ : Եթէ մեկնիս՝ կուգամ այցելել քեզ Վոս-փորի ափանց վրայ . մինչ ներկայ ես , ներկայութեամբդ կ'ապրիմ , և մինչ բացակայ՝ յիշատակաւդ : Հակառակ կամացդ գուցէ եղբայրդ պիտի ըլլամ և քեզի համար ապրելով՝ Քուինիս համար ապրած պիտի ըլլամ » :

Կան այնպիսի պարագաներ որ բառ չենք գտներ հողին լիուկի գրաւող զգացումներն արտայացտելու համար . երախտագէտ սրտիւ ձեռքս միայն երկընցուցի կոմսին . առաւ զայն լոին , և՝ արտասուք մի ինկաւ վրան : Միշտ եւ հանապազ անձնուէր բարեկամուհի մի պիտի ունենաս յիս , ըսի , երբ յուզմունքս հանդարտելով ներեց ինձ որ խօսիմ :

« Կ'ընդունիմ , հողիդ դու ազնիւ և վսեմ » յարեց նա , և սենեկէն դուրս ելաւ գրգռուած :

Մեկնելու ժամանակս հասնելով՝ հարկ եղաւ

ինձ դուրս ելնել, ոյժս փորձել, եւ մանաւանդ նորէն ոյժ վաստկիլ ընելիք ճամբորդութեանս համար : Տկար էի դեռ, եւ կը պատրաստուէի ետ դառնալ երբ դիտեցի մեծ բազմութիւն մ'որ եկեղեցիէ մի ներս կը մտնէր . ես ալ հոն մտայ, նա մանաւանդ հոգիս պէտք ունէր տաճարի մի խորախորհուրդ ազդեցութեան : Դիտեցի որ այդ սրբքավայրն զարդարուած էր մասնաւոր շքեղութեամբ հանդիսաւոր արարողութեան մի համար : Մեծ էր բազմութիւնն, և երգեսնը եկեղեցին կը գրաւէր փառայեղ ձայնիւ, իբրեւ նուազածութեան բոյր : Անուրանալի է սրբազան երաժշտութեան ազդեցութիւնը տիսուր հոգւոյն վրայ, զի այդ նուազածութիւնը կուլայ, կը հեծկլտայ, կը հառաջէ : Այնչափ անկէ գրաւուեցայ որ շուրջս ոչինչ կը լսէի և ոչ իսկ կը տեսնէի . կարծեցի թէ երկրէս վերացած էի, թէ ինչ որ մարդկացին է անյայտ եղած էր ինձմէ, թէ Աստուծոյ հետ միացած էի, երբ յանկարծ անսովոր շուկ մի յափշտակութիւնս փարատելրվ դրդեց զիս գլուխս վեր առնելու : Տեսայ խորանին առջեւ զեղեցիկ երիտասարդուհի մ'որ հարսի սպիտակ զգեստներով եկած էր իւր երկնային ամուսնոյն միանալու, խումբ մի մայրապետներէ շրջապատուած՝ որոնց սեւ հագուստները հակապատկեր մի . այնչափ երիտասարդ՝ եւ արդէն որտի պատրանքը ճանչցաւ : Իւր զեղեցկութիւնը սեւ պա-

« Խեղճ հրեշտակ, մնչեց քովիս ազնուադէմ կին մի . այնչափ երիտասարդ՝ եւ արդէն որտի պատրանքը ճանչցաւ :

տանքի ներքեւ պիտի թաղէ , և կրօնասիրութեամբը  
պիտի ջանայ մոռնալ զինքը խաբող նենդաւորը » :

Այդ ներքին վիճակն իմինիս կը համապատաս-  
խանէր . արդեօք երկնայի՞ն ազդ մ'էր այս՝ որ կը  
յայտնէր ինձ հետեւելու ընթացքս : Կը նայէի ան-  
ծանօթ պատանուհւոյն որ քոյր էր ինձ թշուառու-  
թեամբն , և կը համակրէի իրեն , կը սիրէի , կ'ուզէի  
միսիթարել զինքն ըսելով « Ես եւս սիրեցի , մատ-  
նուեցայ , զոհուեցայ , դու չես առանձին » :

Զուարթ երաժշտութիւն մի կը լսուէր , գեղեցիկ  
ձայներ կ'երգէին , սալիտակափայլ եւ ծաղկազարդ  
հարսն հոչակելով : Յանկարծ մահագուշակ նուա-  
դածութիւն մի յաջորդեց առաջնոյն , մէն մի հնչիւն  
սեւ հառաջ մ'էր որ կը բղխէր տեղի ունեցող այդ  
անհուն զոհողութենէն . անհուն կ'ըսեմ , վասն զի  
բնութիւնը , սիրտն ու երիտասարդութիւնն էին  
հահատակւողները :

Այդ զոհին գեղեցիկ մազերն ինկան անգութ-  
միրատի ներքեւ : Ուրախառիթ սպիտակ զգեստուց  
յաջորդեցին տիսրագոյնք , եւ սեւ ծածկոցի մի  
ներքեւ կոյսն տարածեց իւր մարմինն , և մեռելոց  
ազօթքն գուժեցին թէ ծաղկահաս հոգի մի մեռած  
էր աշխարհին հաճոյից համար , թէ ազօթից և անձ-  
նուիրութեան կեանք մի կ'սկսուէր , և թէ գթու-  
թեան քոյրերն քոյր մի աւելի ունէին , ինչպէս և  
թշուառներն՝ մայր մի : Աեւ ծածկոցն աշխարհային  
կինն ոչնչացուցած էր , եւ անկէ բղխած էր կոյսն  
մենաստանի :

Այս տեսարանը զիս սաստիկ շարժեց , կարծես

թէ սիոփանք մի կը գտնէի այս լրացած զոհողութեան առջեւ : Նրաժամկեր ամեն երկրային վայելքներէ , անջրպետ մի դնել ընդ մէջ անցեալ յիշատակաց և ներկային՝ ամփոփուելու համար Աստուծոյ անհուն գաղափարին մէջ , ահա խորհուրդն որ յղացայ՝ ընդ հուպ գործադրելու դիտաւորութեամբ : Կարծես թէ թեթեւութիւն մի զգացի ցաւոցս բեռին նկատմամբ եւ վայրագ ուրախութիւն մի համակեց դիս :

Եկեղեցական երգերը դադրած էին , և գրեթէ բոլոր հանդիտականներն մեկնած . լոռութիւնը տիրած էր ի սրբավայրին : Միտքս գրաւուած էր տեսածէս , և սիրտս գոհ էր գործադրելու խորհրդոց պատճառաւ : Եկեղեցիէն յետին մեկնողներէն էի , ոտք ելաց երթալու համար , և ահա . . . ով Տէր իմ . . . տեսալ Տիգրանն որ թեւ կուտար երիտասարդ կնոջ մի դէսլ ի եկեղեցւոյ դուռն ուղղուելով : Հայիւ հազ կարողացայ խեղդել այն աղազակին որ սիրտս կ'ուզէր արձակել : Ամազ մ'անցաւ աչերուս առջեւէն , եւ ինկայ վերատին բազմոցին վրայ : Զգիտեմ որչափ ժամանակ նուազած մնացի , միայն թէ երբ սթափելու վրայ էի , թուեցաւ ինձ լսել Տիգրանայ ձայնն որ անոց կերպիւ կը խօսէր ինձ : Աչքս բացի , բայց ինքն քովս չէր , անծանօթմարդ մի միայն կը հսկէր վրաս : Երբ կարողացայ խօսիլ՝ հարցուցի մարդուն թէ ուրիշ անձ մի չէր գտնուած քովս պահ մ'առաջ : Ոչ , ոլատասխանեց : Բայց խօսելու եղանակէն դիւրին էր մակարերել թէ ձշմարտութիւնը կը ծածկէր : Կրկնեցի հար-

ցումս այնչափ թախանձանօք , որ բարի մարդն ի գութ շարժելով խռատովանեցաւ , թէ երիտասարդ մի արտասուալից աչերով և գորովանօք զիս խնամած՝ և մեկնած էր սթափելու ժամանակս , պատուիրելով իրեն որ ներկայ գտնուած ըլլալը չի յայտնէ ինձ , մինչ քովի յուզուած երիտասարդուհին կ'աշխատէր անոր ցաւն սփոփելու : Այդ մարդն եկեղեցւոյ ըւսարարն էր , և յայտնեց ինձ թէ առատ պարզեւ ընդունած էր Տիգրանէն ինձ պէտք եղած խնամքը տանելու համար : Կառք մի բերել տալով մէջը մտայ եւ տեղս վերադարձայ , չգիտեմ ինչպէս :

Կոմսը մեծ մտատանջութեամբ կը մաշէր երկարատեւ բացակայութեանս պատճառաւ , ու բացարձակ ուրախութեամբ դիմաւորեց զիս : Բայց դիտելով որ անկերպարան էի , անմիջապէս հասկցաւ թէ տարօրինակ դէպքը մ'ունեցած էի : Պատմեցի իրեն եկեղեցական հանդէսն , և սոսկալի արկածս : « Թո՛ղ որ վրէժդ լուծեմ վերջապէս » , ըսաւ , բարկութեամբ վառուած : « Կարծես թէ արեան կաթիներն վէրքերը կը բռնժե՞ն , պատախանեցի , թո՛ղ ապրի և իւր խիզճն ըլլայ իւր դատաւորը » :

Կը պատրաստուէի կոմսէն բաժնուիլ : Արդէն կը սփրէի զինքն իբրեւ եղբայր , և բաց ի սրտէս՝ ուստրաստ էի կեանքս անզամ նուիրել իրեն : Ինքն անմիխթար կը թուէր մեկնելուս պատճառաւ . Կեանքը , կ'ըսէր , ինձ համար բեռ մ'էր , իսկ արդ այնպէս չէ քանի որ նպատակ մ'ունիմ , այսինքն ապագադ ապահովել , երջանկութիւնդ հաստատել :

Լեր երջանիկ . Ես կամ թէ ուրիշ մի բարերաստութեանդ նպաստէ փոյթ չէ . բաւական է որ բարերաստ ըլլաս » :

Կոմս , մնջեցի լալահառաջ , եթէ սիրոս կարող ըլլար յաւերակացն ներքեւ վերականգնիլ , զքեզ պիտի պաշտէր , ովլ մարդկանց ազնուագոյնը . բայց կը վախնամ թէ վճռողական կերպիւ մեռած է այն : Միայն թէ լաւ գիտցիր թէ ունիս յիս քոյր մի երախտագէտ՝ պատրաստ ամեն ժամանակ քեզ զոհուելու , եւ ըրած բոլոր անձնուէր ծառայութիւններդ նոյնչափ անձնուէր ծառայութեամբք փոխարինելու :

Մեկնեցայ Փարիզէն , տիւրութեանցս բոյնը վերադարձայ յուսաքեկ և տկար մարմնով : Գտայ վերստին զաւակա , անոր տեսքովը միսիթարուեցայ , և վայրիկ մի ցաւերս մոռցայ : Իսկ Յուլիանէս կարծես թէ զիս վերստին կ'ստանար մահուան ճիրաններէն : Լեւոն զաւակ մ'է ինձ համար : Մօտերս պիտի հաղորդեմ իրեն՝ աշխարհիս հրաժեշտ տալու որոշումս : Գեղեցիկ օրերուս ժամանակ լսած էի թէ Տիգիս խիստ վայելուչ կուսարան մի կայ՝ ապաստանարան ազնուատոհմ հոգիներու : Հոն կը փափաքիմ երթալ . Լեւոնին կը մնայ հարկ եղած միջոցներուն դիմել , զիս սոյն վանքին մէջ ընդունել տալու համար : Բայց արդ՝ աղջիկս կուզեմ վայելել , զդալ թէ ամբողջապէս մայր եմ մինչեւ որ կեանք Աստուծոյ նուիրեմ :

Տիկին Սիրա առ. Մայտա

Ի՞նչ, Մայտա, սէրն ուրեմն մինչեւ այդ աստիճան կը կուրցնէ զքեզ որ կը հաւանիս վանքի մի չորս պատերուն մէջ բանտարկուելով՝ զոհելու ծաղիկ հասակդ, ազատութիւնդ, վերջապէս ամրողջ կեանքդ : Եթէ կուզես ասլրիլ վշտարեկ՝ առանձնութեան մէջ, Ասառուծոյդ համար միայն . եթէ կուզես թշուառ մարդկութեան ծառայել, հարկ է ուրեմն որ ուրիշ դժբաղդներու ընկերանաս, եւ այնպիսի ուխտերով կապուիս որ անհնարին ըլլայ քեզ զանոնք դրժել, եթէ օր մի զղջաս ըրածիդ վրայ : Արդի յուսահատ վիճակիդ մէջ թուփ քեզ թէ ժամանակն անկարող պիտի ըլլայ ցաւդ դարմանելու, և թէ պիտի մնաս միշտ այս տխուր տրամադրութեամբդ : Համարելով թէ այդպէս է, միթէ պատճառ մ'է որ մայր ըլլալէ դադրիս, և զաւակդ որբութեան դատապարտելով պարտաւորես անոր աչքերն կենդանի մահուանդ վրայ լալու : Բայց նախ ըսէ ինձ, ունիս դու այդ իրաւունքը : Կին մ'որ ծնունդ կուտայ զաւկին, կ'ուխտէ անբարբառ հաստատել անոր երջանկութիւնն . և գու մայր, կուզես Յուլիանէիդ գեղեցիկ աշերն արտասուաց երկու աղբիւրներու փոխել : Այս ընթացքիդ մէջ կը տեսնեմ սոսկալի անձնասիրութիւն . կը տեսնեմ որ զքեզ սիրողը կը զոհես չսիրողին . արդարեւ աններելի է վարժունքդ :

Բնէ ինձ նախ եթէ կայ բան մի այնչափ ան-  
դութ և բարբարոս որչափ վանք մ'որ բոյն մ'է  
թշուառութեանց և հարստահարութեան , ուր կամ-  
քը , զգացումն ու միտքը շղթաներ կը կրէ , ուր  
կը գործադրուփ վերջապէս մարդկային բարոյական  
սրբազնութիւնն , եթէ ներելի է այս բացատրու-  
թիւնը : Մարդն որ ազատութեան համար ծնած է ,  
կրնայ արդեօք շղթաներու մէջ հաճոյք զգալ : Աիրտն  
որ պաշտօն ունի սիրելու , կրնայ չսիրել : Միտքն որ  
սահման չունի , կրնայ ամփոփուիլ կրօնից գաղա-  
փարին մէջ լոկ . արդեօք սահմանելոյն չհանդիպիր  
անեզրին ծառայել կարծելով : Բնութեան մէջ  
ամենայն ինչ տիեզերքիս ընդհանուր օրինաց հը-  
պատակելով կը ծնի , ազատօրէն կ'ածի , ազատօ-  
րէն կ'ապրի :

Պատախանէ ինձ , Մայտա , ինչ պիտի ընես  
եթէ գործող միտքդ ուզէ ջախջախել օր մի իւր  
կապերն , անկարելի պիտի ըլլայ այդ , զի ցոյց  
պիտի տան քեզ վանքին չորս որմերը : Եթէ վշտա-  
հար սիրտդ վերածնի յօժարութեամբ բարխսել ,  
ցոյց պիտի տան քեզ վանքին չորս որմերը : Եթէ  
տագնապէն պրկուած լեզուդ օր մի փորձէ խօսիլ ,  
ցոյց պիտի տան քեզ վանքին չորս որմերը , այսինքն  
մտաց , սրտին և լեզուին կախաղանն , և կամ լաւ  
եւս ըսեմ՝ կենաց մահը : Օ՛ն ուրեմն , հրաժարէ  
խորհուրդէդ , մրցէ , տանջուէ , մեռիր ի հարկին ,  
բայց ազատ մեռիր , մայր մնացիր :

Կուզես զոհուիլ ապերախսի մի համար որ թո-  
ղուց զքեզ : Կը ցանկաս ուրեմն յուսահատութեամբդ

Հրճուեցնել անոր աչքերն՝ արժանապատռութիւնդ կատարելապէս մռունալով։ Մեռիր լոռութեամբ՝ եթէ կարելի չէ ապրիլդ, բայց մի՛ չնորհեր այդ նենդաւորին նուաստութեանդ տեսարանը։ Գիտեմ որ սէրը զօրութիւն մ'է որ կը բռնանայ մեր վրայ, և թէ անկարելի է իւր լուծը թօթափել եթէ նաեւ կամինք։ Գիտեմ որ սանձ ընդունող և արամաբանող սէրը՝ սէր չէ։ գիտեմ թէ անհնար է շիջուցանել հուրն այն՝ որ կապրէ զմեզ։ Սակայն այս յուսահատ մրցման մէջ պատուաւոր միջոց մի կը մնայ մեզ, այն է մեռնիլ վեհանձնութեամբ, զի լաւագոյն է մահն մեծ քան նուաստ կեանքն։ Ուստի կուզեմ իմացնել քեզ թէ լաւագոյն կը համարիմ մեծ յիշատակիդ վրայ ողբալ, քան թէ փոքր եւ ողորմելի կեանքովդ հրճուիլ։ Եւ սակայն, Մայտա, գիտես որ եթէ աշխարհ կընծայէ ինձ հաճոյք մի, եթէ կայ յօդ մ'որ կենաց հետ կը կապէ զիս՝ քու բարեկամութիւնդ է։ քու յիշատակաւդ կսփոփեմ իմ աւանձնութիւնս որ անձնական անդարմանելի ցաւերս առաւել եւս կը դառնացնէ։ Քու մահուամբդ կը կտրես այն վերջին օղակն որով կը յարիմ կենաց, կը մարես վերջին նշոյլն որ մթազգած օրերս կը լուսաւորէ, կը յափշտակես սրտիս վերջին սնունդն։ Հանդերձ այսու քաջութիւնն ունիմ աղաղակելու քեզ։ «Մեռիր, բայց մի նուաստանար»։

Եթեւ մեծ չնորհ կը խնդրեմ քեզմէ, Մայտա, որ աղատութիւնդ պահես, և վիշտդ արիութեամբ տանիս։ Տես, կոմսն քեզ իւր ձեռքը կը նուփրէ, ընդունէ պայն, արժանի է քեզ։ Դուք իրարու սահ-

մանուած երկու հոգիներ էք : Անոր հաւատարմութեամբ միւսին անհաւատարմութիւնը պիտի կրնաս մոռնալ . հրեշ մի կը կորսնցնես , հրեշտակ մի կը դտնես . ոչ միայն չես ունենար կորուստ մի , այլ և կը շահիս :

Չեմ յորդորեր զքեղ այժմէն կոմսին բաղդակից ըլլալ , ոչ : Երբ մեր սիրտը կը նուիրենք , պէտք է ամբողջապէս տանք և կամ բնաւ չտանք , անկատար նուէրն՝ նուէր չէ այլ չարիք : Խակ դու հիմայ չես կրնար ամբողջ սէրդ նուիրել . սպասէ ուրեմն . ժամանակն պիտի բուժէ ախտդ , և կոմսին սիրտը պիտի փութացնէ այդ բոյժը :

Ես ալ իրեւ զքեղ երրեմն սիրեցի անյրյս սիրով . կարծեցի մեռնիլ , ապրեցայ ոակայն , և վերըստին սիրեցի նուիրելով կեանքս ամուսնոյ մի՝ զոր մահը շատ շուտ կորզեց ինձմէ դժբաղդաբար : Շատ անդամ մարդս մահն յօգնութիւն կը կոչէ , բայց ցաւոց յիշատակները ջնջուելով՝ կեանքը նոր վայելք կը պարզեւէ , եւ յայնժամ կը վախնանք կորսնցնել այն կեանքը զոր կարհամարհէինք : Եթէ մոռացում չըլլար ի՞նչ կըլլար մարդկութեան վիճակը . պիտի ոչնչանար . զի թշուառութեան վարժարանին մէջ ուսումնասիրած չըլլալուն յաւակնութիւնն ովզ կրնայ ունենալ : Ապրէ ուրեմն , Մայտա , զաւկիդ համար , ինձ համար , և ազգիդ համար :



Հերիգայ առ Պետրոս թ . . .

Քու ճարտարահիւս հնարքդ , Տիգրանին երկու  
նամակներն , որով Մայտային անհաւատարմութիւնն  
երեսին կը զարնէ նախատանօք , և զոր ձերբակա-  
լեցի , անդարմանելի կերպիւ բաժնեցին երկու սի-  
րահարներն : Մայտա Փարիզ դնաց անշուշտ Տիգ-  
րանին բացատրութիւն մ'ունենալու մտօք , բայց  
նա ամուսնացած ըլլալով ոչ այլ ինչ բերաւ հոնկէ  
եթէ ոչ իր պարտութեան ամօթը : Արդարեւ տըժ-  
դոյն է , նա և տկար . դժբաղդ է կը տեսնեմ ,  
զի դէմքին վրայ սրտին սուզը նկարուած է . բայց  
այդ չի գոհացներ զիս , ցորչափ իւր նուազուն աշաց  
մէջ կը նշմարեմ ուրախութեան նշոյլ մի , եւ իւր  
տմոյն շրթանց վրայ գոհունակութեան ժայիտ մի ,  
ականատես ըլլալով աղջկանը բարեբաստութեանը :  
Զեմ ներեր այդ գոհունակութեան ստուերն ան-  
դամ , եւ կ'ուզեմ որ իրր մայր եւս տարաբաղդ  
ըլլայ , որքան եղաւ իրր սիրահար : Կ'ուզեմ որ  
կասկածը Լևոնին սրտին մէջ սսլրդի , որպէս զի սա  
իւր կնոջմէն զգուի . կ'ուզեմ արտասուք , կ'ուզեմ  
յուսահատութեան պատկերներ , որպէս զի Մայ-  
տային սրտին վերջին հարուածը տամ անվրէպ ձե-  
ռամբ : Մէն մի վրիժառութեանս մէջ նոր ոյժ  
կ'ստանամ սալրելու և զքեզ սիրելու : Վրէժխընդ-  
րութիւն . . . ով հրաշալի բառ , ով կեանք հոգ-  
ւոյ . եթէ վրէժխնդրութիւնը չըլլար , ատելի նա-  
խան նձորդի մ'երջանկութեանն ականատես ըլլալու

համար միայն արեւն աչացս պիտի փայլէր ուրեմն : Ավ սոսկումն , երկու ոխերիմ թշնամիներս սիրով միացած պիտի տեսնէի : Ո՞չ , ո՞չ , հազար անգամ մահը կը վերսպասէի :

Դու ծառայեցիր ինձ , և ես սիրովս փոխարինեցի ծառայութիւններդ . կը սիրէիր զիս և այնպէս գործեցիր : Իսկ արդ նուաղած է զգացումդ որպէս զի յանձնառու շրջաս դարձեալ վրիժառութեանս նպաստելու : Հանապազօրեայ փաստերդ հակառակը կը հաստատեն , և դեռ վերջին անգամ բերանդ կ'երդնոցր զիս միշտ սիրելու և միշտ զերիս մնալու :

Քքեզ տեսնելու համար տակաւին երկու օր սկզբ է : Բայց կարելի չէ ինձ այդքան համբերել . ուստի կը հարկադրուիմ քեզ գրելու , որպէս զի որոշումս յայտնեմ : Իսկ գործադրութեան մասին ապահով եմ թէ յաջողութեամբ ի կատար կը հասցնես :

Յուլիանէն սովորութիւն ունի շրջադայելու պարտիզին անտառակին մէջ , զոր շատ իսկ կը ճանաչես դու , և ուր Լեռն կ'երթայ ընդհանրապէս զինքը դիմաւորելու երբ գործէն կանուխ վերադառնայ : Պիտի լրտեսես Լեռնի վերադարձը , և անմիջապէս անանուն նամակ մի զրկես Յուլիանէին հասցէով , որով ցաւդ յայտնես նոյն օրուան բացակայութեանդ վրայօք՝ խոստանալով իրեն փոխարինութիւն մի երկրորդ օրուան համար : Լեռն՝ կնոջը բացակայութեան ժամանակ անշուշտ նամակը պիտի բանայ , կարդայ և պիտի զգուշանայ օր և է դիտողութիւն

ընելէ , որպէս զի հետեւեալ օրն իւր կնոջ նենդաւ-  
ւորութիւնը բռնէ : Խակ դու ջանա՛ դէմքդ այլա-  
վովսելու , և անտառակին մէջ պահուելով՝ խոյս  
տուր միայն երբ Լևոնին գալուստը նշմարես . այն-  
պէս վարուէ որ փախուստդ տեսնէ միայն , որով  
անձիդ վրայ կասկած յարուցանելու վախէն ազատ  
մնաս :

Նամակը , ներկայութիւնդ , փախուստդ , բա-  
ւական կ'ըլլան Լևոնին կասկածներն արթնցնելու ,  
երբ արդէն կասկածոտ է բնութեամբ , և պատւոյն  
ղարմանալի կերպիւ նախանձախնդիր : Կարող է  
ամեն միջոցի դիմել իւր նախատուած պատւոյն  
վրէժը լուծելու համար : Յուլիանէ կը պաշտէ իւր  
ամուսինն , եւ կրնայ մեռնիլ եթէ անոր սէրէն  
զրկուի : Այն ժամանակ Մայտան զաւկին դժբաղ-  
դութիւնը տեսնելով՝ իւր հոգին նոր թոյնով կը  
համակուի , նոր բեռով մի կը ճնշուի , որով կեանքն՝  
երկարատեւ և դառն հոգեվար մի կ'ըլլայ : Անոր  
աղէտքն իժ վայելքս է , և արտասուքքը՝ ջուրն է ,  
որ քեզի համար ունեցած սէրս կը բեղմնաւորէ :



### Մայտա առ Տիկին Սիրա

Ծոլոր խոստովանութիւնս ըրի Լևոնին . սաստիկ  
բարկացաւ Տիգրանին բռնած ընթացքին դէմ ,  
նամանաւանդ երբ կը նկատէր զինքը միշտ իբրեւ

սպատուաւոր անձ մի , գուցէ , ըսաւ , նոյն մատնութեամբ ինքն ևս պատժուեցաւ , և ոչ առաւել երջանիկ է քան զքեզ , իւր նամակին մէջ դրած մի քանի անորոշ տողերէն եթէ դատելու ըլլամ : Աւոն կ'ուզէր կշտամբել զԾիգրան իւր անարդ վարժունքին համար . բայց ևս արդիլեցի , և ինքը խոստացաւ լռել :

Յայտնեցի իրեն , վանք քոշուելու դիտաւորութիւնս . սաստիկ հակառակեցաւ՝ այլ և այլ պատճառներ յառաջ բերելով , և մանաւանդ Յուլիանէիս կրելու ցաւն ինք զգացնելով : Հաստատեցի իրեն թէ աղջիկս իւր ամուսնական սիրովս կրնար թեթեւցնել մայրական բացակայութեան դառնութիւնըն , երբ մանաւանդ իմ անդորրութեանս պիտի ծառայէր : Հեռանալովս կրնամ արդեօք մայր ըլլալէ դադրիլ , ըսի , և ով կը յաջողի դադրելու երբ մայր եղած է անգամ մի :

Քու եւ Լեւոնին յորդորանաց հակառակ պիտի զործադրեմ խորհուրդս , զի կենաց տկար արձագանքն որ մինչեւ ինձ կը հասնի , վայելմանց աղօտ պատկերը , շուրջս եղած թեթեւ շարժմունքն , վերջապէս ամենայն ինչ կը զայրացնէ , կը սաստկացնէ վիճակս : Անշուշտ դժբաղդներու ընկերակցութիւնը տիտուր միտթարութիւն մ'է վշտահար հոգւոյն համար . բայց պիտի գտնեմ ուրիշներ եւս որ ինձ նման կենաց դառնութիւնը ճանչցան , եւ այդ տեսարանը դուցէ արիութիւն տայ ինձ ցաւերուս հանդուրժելու : Պիտի գտնամ լուութիւնը , մահուան պատկերն այդ չորս որմերուն մէջ , ինչ-

պէս կ'ըսես . և կեանքն որչափ սահմանափակ ըլլայ ,  
այնչափ ոյժս կամփոփուի , որով առաւել դիւրու-  
թեամբ կընամ վերջացնել մնացած օրերս : Այս  
աշխարհէս՝ ուրկէ կը հրաժարիմ՝ սիրելեացս յիշա-  
տակը միայն հետս պիտի տանիմ մինչեւ յետին  
շունջս պահելու պայմանաւ : Կը հարցնես ինձ թէ  
ինչ պիտի ընեմ եթէ յանկարծ գերեզմանէն վե-  
րածնէի և բաղձայի սիրել , մտածել վերստին . երբ  
սիրտը սաստիկ կը զարնուի , փրկութիւն չգտներ :  
Կան վէրքեր որ կը բուժին , զի մահածին չեն . իսկ  
որոնք որ մահածին են , ինչպէս իմիններս , կը մա-  
շեցնեն կեանքը սակաւ առ սակաւ , եւ վերջապէս  
կ'ոչնչացնեն :

Ամուսնութեան խօսք կընես երբ հրաժեշտի ող-  
ջոյնը տուի աշխարհիս : Կը յարգեմ , կը սիրեմ կոմսն  
իբրեւ եղբայրս : Սիրտո՝ միայն մէկ անգամ սիրեց ,  
եւ այնչափ սիրեց որ մաշեցաւ : Կոմսն կը գտնայ  
յիս հաւատարիմ քուինը , կուզես որ յինքն գտնամ  
սիրադրուժ Տիգրանի : Կը փափաքէի նորէն յա-  
րութիւն առնուլ , ուրիշ սիրտ մ'ունենալ կոմսին  
նուիրելու համար . բայց ուզելը կարենալ է արդ-  
եօք միշտ :

Արդէն մահուան պատանքին մէջ դրուած եմ :  
Եթէ փորձէի զայն թօթափել , զուցէ մնացորդ  
կեանքս ալ միասին կ'առնուէր : Թողուցէք զիս բաղ-  
դիս , թողուցէք որ իրացնեմ երազս . զուցէ քիչ մի  
ժամանակ խաղաղութիւն կը գտնամ : Եւ սակայն  
կը ներեն ինձ արդեօք քեզ խոստովանութիւն մի  
ընել , որ զիս ամօթահար կ'ընէ իմ աշացս առջեւ

իսկ . լուր ինձ ուրեմն : Կան վայրկեաններ ուր Տիգրանին անկեղծ դէմքն առջեւս կը ներկայանայ . խօսքերն , խոստումներն ականջիս կը հնչեն , եւ այն ատեն կզգամ որ սիրտս ներողամիտ է իւր նկատմամբ , եւ կը պաշտպանէ մինչեւ անգամ զինքը : Կը թուի ինձ թէ չկրնար դադրիլ զիս սիրելէ , եւ ոչ ալ ես զինքը պաշտելէ : Կը բանդագուշեմ , այնպէս չէ արդեօք : Խենդ կը սեսլուէի եթէ զինքը պաշտպանէի և սիրէի իւր սեւ մատնութենէն ետք : Ես նահատակ մ'եմ . սակայն համակրելի է ինձ ձեռքն որ անգութ հարուածը տուաւ սրտիս . կը կարծեմ ատել Տիգրանն , եւ կը պաշտեմ տակաւին . թուի ինձ թէ մոռցած եմ զինքն , այլ միշտ կը լիշեմ . խոյս կուտամ իրմէ՝ եւ միշտ զինքը կորոնեմ . այս է անհնարին վիճակն ուր կը ծփամ անընդհատ : Առսկալի կոփւ մը կոյ նախատուած սիրոյ եւ հրակէզ սրտի , արժանապատութեանս և նուաստ զգացմանս մէջ :



կոմսն առ. Մայտա

Մեկնեցար դու , Մայտա , և չեռթիւնը գրաւեց զիս : Ապրեցայ քեզմով քիչ մի ժամանակ , եւ յետոյ զիս մատնեցիր տիսուր բաղդիս . խաւարն

սլաշարեց զիս . մէկ աստղ կը փայլի անդ՝ իրրեւ  
փրկարար փարոս , և այս լցոն է քու յիշատակդ :  
Մելամաղձութեամբ համակուեցայ , եւ կ'զգամ  
դարձեալ թէ կեանքն անտանելի բեռ մի է : Դա-  
տապարտեալ եմ ուրեմն միշտ Քուիններս կորսնցը-  
նելու . դատապարտեալ եմ անոնց վրայ ողբալու՝  
յանչափս սիրելին ետք : Ըսէ , Մայտա , թէ ինձ  
համար մեռած չես , թէ վերստին սիտի ծնանիս՝  
ինձ նուիրելու համար նոր սիրտ մի . բայց իրր  
փոխարէն իմս կը բաւէ քեզ : Այնքան բարձր ես  
որ կարեւորութիւն չես տար հարստութեանս եւ  
ընկերական վիճակիս . զիտեմ այդ մեծասրտու-  
թիւնդ . բայց անձնուիրութիւնս արդեօք քեզ կը  
բաւէ ի փոխարէն այն սրտին զոր կորուսիր : Ըսէ ,  
Մայտա , սիտի սիրես զիս օր մի . կրնամ տածել  
այդ յոյսը . բայց չեմ ուզեր որ զիս սիրես ողբր-  
մութեան համար՝ ինձ զոհելով վեհ սիրտդ . ոչ ,  
ոչ , չեմ հաւանիր բնաւ այդպիսի ողջակէզ մ'ըն-  
դունելու :

Սակայն եթէ անողոքելի սիրտդ չհաճիր երկրորդ  
անդամ բաղխելու , վատա՞ եմ թէ գոնէ չես մեր-  
ժեր ինձ շնչած օդդ ծծելու , բնակած երկիրդ  
բնակելու , ձայնդ լսելու , քեզ ծառայելու և անձս  
քեզ նուիրելու երջանկութիւնը :

Հոգս չէ հայրենիքէս օտարանալ , զի սէրն աշ-  
խարհիս քաղաքացին է . հայրենիքն է ուր որ կը  
բնակի մեր սիրականը : Բնիկ երկրիս վրայ նըժ-  
գեհ եմ , և իմ երկնից արեւն աչքս կը խայթէ :  
Առտնին պատճառ մի զիս կարգելու հիմա ճանրաց


ելնելու . բայց սկարագաները ներելէն անմիջապէս ետք պիտի մեկնիմ առկէ : Ի տեսութիւն ուրեմն , Մայտա :



### Մայտա առ. Կոմսն

Քեզի համար ասլրիլ , հատուցանել ինչ որ ընդունեցայ քեզմէ , ախուր կենացդ քիչ մ'երջանկութիւն պատճառել , այս պիտի ըլլար ահա բաղձանացս մեծագոյնը : Բայց սեւ գիշերը կրնայ արդեօք լոյս տալ . անկենդան սիրտ մի կրնայ կեանք պարգեւել , և ինչ որ մեռած է կրնայ վերստին ապրիլ : Քեզ սակաւ ինչ միսիթ արութիւն տալու համար քանի մի կեանք կը զոհէի , եւ սակայն սիրտ մի չունիմ քեզ ձօնելու , աւազ : Բաղդին անագորոյն ձեռքը խեղճ սրտիս զարկաւ , եւ այս հարուածէն ետք անկենդան մնաց այն : Դու բարութեամբդ ողողեցիր զիս , եւ ես քեզի համար ոչինչ կրնամը ընել : Արտադին կը կամիմ քեզ ծառայել , և անկարող եմ յաջողելու : Քեզի հետ նոյն երկնից ներքեւ ասլրիլ , զքեզ իբր եղբայր ճանչնալ , զքեզ միսիթարել , փափաքներուս մեծագոյնը պիտի ըլլար : Բայց իմ երկինքս քուկդ չկրնար ըլլալ , զի ես խաւարին մէջ պիտի ասլրիմ , մինչդեռ դու լուսոյ կը կարօտիս : Դու կեանքը կ'սկսիս , բայց ինձ համար կը վերջանայ այն : Հրաժեշտ պիտի

տամ ամեն բանի , մահը պիտի զգենում , և սիրել-  
եացս յիշատակը միայն հետս պիտի տանիմ : Եր-  
բէք , Կոմս , երբէք չեմ կրնար մոռնալ զքեզ : Երբ  
վանքին դռներն գոցուին ներս մտնելէս ետք , երբ  
անցեալ օրերս յիշեմ , քու ազնիւ պատկերդ պիտի  
ըլլայ այն պատկերներուն մին որք ինձ հաճոյք կը  
պարգեւէն : Միտքո յիշատակիդ վրայ պիտի հանդչի ,  
կիզուտ վայրի մէջ դրուած կանաչ ոստի պէս , և  
հոգիս ի հեռուստ պիտի արձակէ քեզ երախտա-  
գիտութեան և բարեկամութեան նուազը : Վստահ  
եղիր թէ երբ հասնի նոյն իսկ ահաւոր վայրկեանը ,  
բերանս անունդ պիտի տայ միւս սիրելեացս անուն-  
ներուն հետ : Մնաս բարեալ , Կոմս : Ինչո՞ւ բաղդը  
չուզեց որ զքեզ յառաջադոյն ճանաչէի . փոխանակ  
երկու թշուառներու՝ երկու երջանիկ կը կազմէինք :  
Բազդ՝ որ հալածեց զիս՝ յուսամ թէ չպիտի ժխտէ  
իսկ ապաստանարան մի որուն մէջ կենդանի պիտի  
թաղուիմ : Վերստին կըսեմ քեզ , մնաս բարեալ :  
Գուցէ մօտերս կը մեկնիմ օտար երկրի մէջ անհե-  
տանալու համար :



### Մայտա առ. Տիկին Սիրա

Ամեն անգամ որ զրիշը ձեռքս կառնում , արդ-  
եօք դատապարտեալ եմ նոր աղէտք մ'եւս գուժե-  
լու . և ով կսպասէր այսպիսի անակնկալ պատահարի

մի : Մտածէ թէ Յուլիանէ դժոխային ամբաստանութեան մի ներքեւ է . աչքերն արտասուաց աղբիւր եղան , եւ բերանն ոչ եւս կրնայ ժալտիլ : Սաստիկ հիւանդացաւ այն , եւ կը վախնայի թէ զինքը սլիտի կորսնցնեմ :

Անանուն նամակ մի , մարդ մի որ խոյս կուտար անտառակին մէջէն՝ մինչդեռ աղջիկս կը չըջէր անդ , Լեւոնին կասկածները գրգռեցին : Այն որ այնքան աղնիւ եւ գորովալի էր ամուսնոյն նկատմամբ , կարծես թէ վայրագ հրէշի փոխուեցաւ , դառնապէս գանգատեցաւ անխղճաբար մատնուած համարելով ինքզինքն , և սպառնացաւ թողուլ բնակարան մի ուր անպատութիւնը մուտ գտած էր , թողուլ Պօլիսն իսկ մերջնական կերպիւ , և երթալի տար աշխարհ իւր դժբաղդութեան վրայ ողբալու համար : Երեւակայէ խեղճ Յուլիանէիս յուսահատութիւնն և իմս : Ի զուր հէքն այն կը բողոքէր , իւր անմեղութիւնը կը հաստատէր , ու արտասուելով և հառաչելով կը թախանձէր ամուսինն որ իւր անմեղութեան հաւտայ , բայց ի զուր : Երբ Լեւոն կը սպատրաստուէր մեկնիլ ամուսնական յարկէն , աղջիկս ոչ եւս հանդուրժելով այդ աղէտից՝ գրաւուեցաւ այնալիսի տենդով մ' որ զինքը մահուան դուռը տարաւ : Մոռցայ ամեն վիշտ , ամեն հոգ , և միայն զաւակս ազատելու համար ասլքեցայ : Իւր հիւանդութեան զառահցման ժամանակ կը գոչէր շարունակ . « Լեւոնդ իմ սիրեցեալ , մի հեւանար ինձմէ , կ'երդնում քեզ թէ անպարտ եմ » : Լեւոն ամուսնոյն յուսահատ վիճակը տեսնե-


լով, և ցնորսման մէջ արտայայտած աղերսալի խօսքերը լսելով՝ զղջմամբ եւ յուսահատութեամբ համակուեցաւ, և անհուն սիրով վերադարձաւ առ իւր սիրելին : Դառնասպէս կ'ողբար անմեղութեան դահճճն ըլլալ ուզելուն համար : Այս պարագաներուն մէջ կը տեսնեմ, կը ըսէր, չար ոգի մ'որ ուզեց ընտանեկան երջանկութիւնս վրդովել : Ոիտի գտնեմ զայն, և Յուլիանէին վրէժը պիտի լուծեմ :

Անտանելի երկիւղներէ վերջ աղջիկս վտանգէն ազատեցաւ, և երկրորդ անգամ մայր ըլլալս զգացի : Ուխտ ըրի ժամանակ մի չրաժնուիլ իրմէ որ և է դիտաւորութեամբ : Խեղճ զաւակս ի՞նչ պիտի ընէր առանց մօրը : Յուսահատութեան ժամանակ ծոցս կը թափէր իւր արտսուքը, և բերանս կը միախթարէր վինքը՝ հաւաստելով թէ ասոնք կենաց փոթորիկներն են, և թէ պայծառ օրեր պիտի փայլին վերստին : Անմեղ արարածն ինձ կը վստահէր, յուսալով թէ կեւոնը պիտի վերադարձնեմ իրեն :

Երբ տենդն անցաւ, և երբ Յուլիանէն իւր քովը տեսաւ ամուսինը, կարծես թէ չէր կրնար հաւտալ տեսածին, և շարունակ կը հարցնէր . «Հաւատացի՞ր ուրեմն անմեղութեանս, կը սիրե՞ս զիս դարձեալ . ով արդեօք ուզեց հեռացնել սիրոտդ ինձմէ . չգիտէի՞ր ուրեմն թէ առանց քեզի անկարելի է ինձ ապրիլ » : Աեւոն կատարելապէս յուզուած՝ կը խոստանար զինքը պաշտել միշտ և վրէժը լուծել :

Կարծես թէ այս նոր և սոսկալի դէպքը վերապահուած էր ինձ որպէս զի մոռնայի այն վիշտն որ կը կրծէ զիս : Ի՞նչ շփոթութիւն, ի՞նչ երկիւղ

կրեցի : Կը տեսնէի Յուլիանէս վատաքար ամբաստանուած , եւ անկարող էի անմեղութիւնը ապացուցանելու : Մայր ըլլալ եւ զաւակդ ամուսնոյ մի նախատանաց ենթարկեալ տեսնել , մայրենի սիրոյ նուիրական ձեռագործը նուատացած , ազարտած տեսնել , այնչափ գորովանօք խնամուած մարդարիտ ցեխին մէջ սեւցած եւ գլորուած տեսնել , ո՛չ , այդ կրկին հարուածը շատ ծանր է մայրենի սրտին և կնային արժանապատութեան : Կը կարծէի թէ սիրտս ցաւոց բարձրագոյն կէտը հասած ըլլալով՝ նոր վիշտ չէր կրնար արտադրել : Բայց սիրտը խոնաւ սպունզի կը նմանի , որ կարծես թէ յետին կաթիլը դուրս տուած է , եւ որ սակայն նորեր կը մատուակէ եթէ վերստին քամուի : Վըշտով ապրիլն արդ բնական կացութիւնս եղաւ :



### Տիկին Սիրա առ. Մայտա

Տես թէ ի՞նչ է ընկերութիւնն իւր նախապաշարմամբ , անիրաւութեամբ և անգթութեամբ : Անանուն նամակ մի , փախստական մարդու մը ստուերն իրաւունք կուտան ամուսնոյ մի դատապարտելու , սպառնալու : Ինքզինքը նախատուած կարծելու , և իւր պատւոյն պահպանութեան համար սիրտ մի յօս

շօտելու , կեանք մի մարելու : Այս ընթացքը պատուաւոր մարդու ընթացք կ'անուանի :

Մարդիկ նախանձախնդիր են իրենց անուան արժանապատութեան , լաւ . և ամեն պատուակիր մարդ նախանձախնդիր ըլլալու է արդարեւ : Բայց այդ անունն , որոյ այնչափ կարեւորութիւն կուտայ այրն , որոյ համար այնչափ աղմուկ կը յարուցանէ , այդ անունը՝ զոր կնոջ մի կուտայ՝ պատուիրելով անդուլ հսկել անոր անարատութեան վրայ , կը հարցնեմ թէ այրն ինչ վիճակի մէջ կուտայ այդ անունն , անարած թէ տղմաթամաւ . և եթէ անարատ չէ ինչպէս կարելի է մաքուր պահել արդէն աղտոտած բան մի : Գուցէ կինն ամեն կեղտ սըրբելու յատկութիւնն ունենայ . բայց այն ատեն ինչու արդեօք անմաքրութիւնը մաքրութեան դատաւոր կանգնի : Կ'ենթաղբեմ թէ կինը տկար արարած մ'է , քանի որ հարկ է գործածել սովորական անուն մի՝ որ նուաստութիւն մ'է որքան տուողին նոյնքան ալ ընդունողին . ենթաղբելով , կ'ըսեմ , թէ տկար է նա , ինչու ուրեմն այն ատեն այդչափ խստութեան ենթարկուի ինչ որ ըստ ինքեան անկարող է դիմաղբելու , մրցելու եւ յաղթելու : Ճանաչել տկարութիւն մի , յայտարարել զայն և ապա և ոչ իսկ ամենափոքր ներողամտութիւն մի ցոյց տալ անոր նկատմամբ , անդթութեան չափն անցնել է : Համոզուիլ այդ տկարութեան մասին եւ սակայն անուան պատիւն անոր վրայ հիմնել հակասութեան բարձրագոյն կէտն է : Թանկագին դանձի պահպանութիւնը տկար ձեռաց ինչպէս կը յանձնուի . եւ

եթէ գիտութեամբ կը յանձնուի , որունն է յանցանքը : Այսպիսի պարագայի մէջ ուրեմն տկարութեան իրաւունքը նկատողութեան առնելու է՝ եթէ կայ տկարութիւն , վերջ տալով այն սասափիկ բռնաբարութեանց որք կանանց վրայ կը ծանրանան իրբեռազմական ժողովի մահագոյժ վճիռներ :

Կինը տկար է կ'ըսուի , լաւ . բայց ո՞վ կ'ապացուցանէ թէ այրը տկար չէ : Ի՞նչ եղանակաւ պէտք է որ զինքը դատեմ , և ո՞ր պարագայի մէջ : Այրն անբարոյականութեան մէջ կը շրջի , կ'ազարտի , բայց փոյթ չէ , զի այր է : Ուրեմն այրն ուժեղ է չէ թէ առ աքինի հանդիսանալովն , այլ իւր առնութիւնը զեղծելով : Ամուսնական հաւատարմութեան ուխտին դրժումը այնչափ անբարոյական ընթացք մ'է կանանանց որչափ արանց նկատմամբ : Կենաց ամենափոքր սրարականերու մէջ խոստմնազանցութիւնն անպատուութիւն կը համարուի : Ուստի երկու վիճակակից անձանց հաւատարմութեան նըկատմամբ երկուստէք ընդունուած պայմանագրութեան պատասխանատուութիւնը կը պատկանի նոյնչափ կնոջ՝ որչափ իւր ամուսնոյն : Արդեօք կանայք ամուսնութեան միջոցին արտօնութիւն տրուած են զիրենք խարելու . անոնց և ոչ մին չնորհած է այս արտօնութիւնը , եւ սակայն արք եւ ոչ իսկ փոյթ ըրած են ուխտագրուժ հանդիսանալու : Եթէ արք բարոյական ոյժ ունին այն էակին վրայ վոր տկար կանուանեն , այդ ոյժին նշանը միթէ իրենց խոստմնազանցութեան մէջ պիտի տեսնենք :

Կառարկուի միշտ թէ կնոջ անբարոյական ընթացքն աղետալի հետեւանք կ'ունենայ ընտանեաց համար . ես կը հարցնեմ թէ կնոջ յանցաւորութիւնն իւր հետեւանքովն է որ կը կազմուի , թէ ոչ իրր ուխտադրուժ հասարակաց բարուց վկասելովը : Բայց հասարակաց բարուց ասլահովութեան համար արք ես սլատախանատու են կանանց չափ : Եթէ ի բաց առնունք դաս մի կանայք , որք իրենց սեռին միայն անունը կը կրեն , կինը մինքն ունի մինչեւ գերագոյն աստիճանի արժանապատուութեան զգացումը՝ որով ինքը կը զօրանայ : Ինքն ունի գեղեցկին եւ վսեմին ճաշակն՝ որով կը բարձրանայ : Կինն իրը պարտուցը գերի կը կատարէ պարտքն , իւր արժանապատուութիւնը հասցնելով մինչեւ այն բարձր կէտն ուր արք շատ անգամ լոկ իրենց անունները կը բարձրացնեն :

Կինն անկատար կերպիւ ճանշցուած է միշտ , ոչ երբէք դառած են իւր բնութիւնը ըստ ճըշմարտութեան , այլ ժամանակին , ոգւոյն , ընկերական վիճակին , ընդունած կրթութեան և անկէարտադրուած հետեւանաց , կրից կամ մոլորութեանց համեմատ : Սպարտացի կինը չնմանիր արեւելեան կնոջ , ինչպէս Հայաստանցի կինն Եւրոպացի չէ , ինչպէս վայրենի կինն ոչ արեւելեան է և ոչ եւրոպացի :

Հայաստանցի արի և կրօնասէր կանայք կ'օրհնէին այն Աստուածն՝ որ կենաց փափկութենէն զիրենք զրկելով ամէն տեսակ աղէտից կ'եթարկէր , և՝ իրը ուխտադրուժ փոխանակ անոյշ կեանք վա-

յելելու։ կը մեռնէին ի սէր իրենց Աստուծոյն։ Սպարտացի հայրենասէր մայրն որ կըսէր որդւոյն։ « Յաղթէ կամ մեռիր, » անշուշտ այդ լեզուն չէր գործածեր չքեղակարդ կանանցին մէջ ուր վայելք կը տեղան և բուրմունք կը տարածուին։ Գերի Երուսաղէմը Յուղիդ մի տուաւ։ Լուքրեցիաներու և Քրուտոսներու Հռովմը՝ Կուռնելիա մի։ Գաղղիոյ յեղափոխութիւնն ալ տիկին Թօլանը եւ Նարլօթ Քօրտէն։

Վայրենւոյն զաւակը մօր մի ծնունդ չէ արդեօք, և սակայն կը վաճառէ զնա չորաբեկ աչօք, կ'ազատի անկէ իրրեւ տաղտուկ բեռէ մը։

Այս մի քանի օրինակներէն դիւրին է հետեւցընեւթէ կինը զանազան երեւոյթներու ներքեւ հակառակ պատկերներ կը ներկայացնէ։ Ինչպէս արդի ժամանակներուն գալրվ կը նշմարենք թեթեսոլիկ կինը միայն զուարձութիւններով զբաղած։ Ինչպէս անբարոյական կինը՝ իւր շահով, աշխատասէր կինը՝ իր պանասիրութեամբ։ Վաճառական կինը իւր ասլրանքով։ Քաղաքացի առաքինի կինը՝ իւր ընտանեօք։ ուսումնական կինը՝ իւր գիրքերով։ բարձրաստիճան ազնուական կինն ալ իւր տիտղոսներով։ Երբ այսպիսի խտիր մը կայ կանանց բարյական և ընկերական վիճակներուն մէջ, որ կարդին կը պատկանին կանանց վերաբերեալ ընդհանուր խորհրդածութիւններն։ Արդեօք որոշուած է թէ ո՛ր ձեւով, որ գոյնով վափագելի է որ կինը հանդիսանայ։ Ինչպէս կուզեն զինքը տեսնել, տանտիկին՝ թէ ուսումնական, գերի՞՝ թէ ազատ, ըն-

կերութեան կին՝ թէ քաղաքացի կամ մայր : Յայտնուած է թէ ինչպէս բաղձալի է որ նա ըլլայ . ո՞չ : Կնոջ ընդունած դաստիարակութիւնն ո՞ր նպատակին կը համապատասխանէ , առ ինչ կը ճգտի : Անոր միտքը կը խանդարեն , սիրտը կը մոլորեն , առանց որ և է հաստատ և ուղիղ սկզբունք և գաղափարներ տալու անձնական կառավարութեան համար , որով նախապաշարմունքէ կ'առաջնորդուի , և կըլլայ նահատակ մի : Մարդը չըմբռնելով թէ ինչ մեծ ոյժ , կարողութիւն և գործունէութիւն կրնան արտադրել կնոջ բանականութիւնը մշակելով և ըզդացումները գրգռելով , կը դատապարտեն զինքը : Բնութիւնը գեղեցիկ և ընտիր հանդամանքով օժտած է կինը , բայց բռնութիւնն և օրէնքն այս հանդամանքը խանդարեցին : Ֆիզիգական ոյժն՝ այսինքն անասնական առաւելութիւնը գերի ըրաւ կինը , և օրէնքը հաստատեց ասոր շղթաները :


Իրօք ինչ կ'ընէ օրէնքը : Օրէնքը կնոջ վիզը չըռան մի կ'անցունէ , զրո կը սեղմէ և կը թուլցնէ ըստ հարկին : Եւրոպայի ամէնէն քաղաքակրթեալ ազգին օրինաց առջեւ ինչ է կինն , եթէ ոչ ամուսնոյն ստացուածքը : Ոչ նախաձեռնութեան իրաւունք ունի , ոչ կամք , ոչ իշխանութիւն , ոչ ալ բողոքելու թոյլտութիւն՝ երբ սիրտը կ'արիւնի , երբ միտքը կ'ապստամբի : Ամենայն բողոք յափրշտակուած իրաւանցը նկատմամբ՝ ոճիր մ'է . իւր բաժինն է լսութիւնը : Վայելից մասին այրն իւր վրայ բացարձակ առաւելութիւն , իսկ պատժոյ մասին հաւասարութիւն ունի , մանաւանդ կնոջ հա-

մար առաւելութիւն իսկ կայ պատժուելու մասին : Օրէնքը ներումն կը չնորհէ արանց մոլութեանց , մինչդեռ կնոջ ամենափոքրիկ յանցանքը կը պատժէ խստիւ : Օրէնք կը փոխուին զանազան ճիւղերու մէջ՝ կը չնորհեն կամ կը սանձահարեն ըստ հարկին , բայց կնոջ վերաբերեալ բարոյական սկզբունքը նոյնը մնաց միշտ , այսինքն այրն անձնիշխան , կինն ստրուկ :

Այն մեծ սկզբունքն , որ եւրոպական աշխարհին մէջ կը հոչակուին՝ այսինքն ազատութեան և հաւասարութեան սկզբունքները պարզապէս ահագին բառեր են : Ի՞նչ տեսակ հաւասարութիւն է այդ որ առ ոսս արանց կը դնէ մարդկութեան կէս մասը . Ի՞նչ է այդ ազատութիւնն որ կը զրկէ կինը բողոքելու , գործելու , ձեռնարկելու կարողութենէն : Ի՞նչ է այդ ոյժն որ կ'ըսէ արանց , « Գործաներդ փայտայէ անմոռունչ » : Զէ այդ բլոնութեան ոյժն որ անձին կը յատկացնէ ինչ որ իւր ստացուածքը չէ և կը վայելէ զայն : Ի՞նչ փոյթ իրեն եթէ յափշտակութիւն մ'է ըրածն , Ի՞նչ փոյթ այլոց արտասուքն և տառապանքը , և այն ցասումն որ կը մոնչէ առանց սակայն ձայնը բարձրացնել կարենալու , զի լուելու պիտի հարկադրեն այդ յանդուզն բերանն՝ ըսելով . « Մեզմէ ձայնդ , զի կին ես դու , եւ չէ տրուած քեզ վայելել ինչ որ մեր առանձին սեպհականութիւնն է . խնամէ զաւակներդ , ծառայէ մեր հաճոյից » : Այս պայմաններու մէջ , այս բարոյական նուաստ ձնշման ներքեւ է , ճըն-

շում որ զկին կ'այլակերպէ , որ մարդիկ կը դատեն կանանց բանականութեան , սրափն , կարողութեան , հանգամանաց և կրիցն աստիճանը , և կ'արձակեն անոր դէմ աղետալի վճիռը . խեղճ մարդկութիւն :

Եթք հաւասարութիւնը տիրէ երկու սեռին մէջ . այսինքն վայելից և պատժոյ , աշխատութեան և վարձատրութեան հաւասարութիւնը , այն ժամանակ շղթաները կը ջախջախուին , սուտը կը դադրի եւ ընկերութիւնը կը շահի հաւասարակշռութեան մէջ ինչ որ կը կորսնցնէ անասնական ոյժերու անհաւասարութեան մէջ և այդ հաւասարակշռութենէ կ'արտադրի ներդաշնակութիւնը , ներդաշնակութենէն յառաջադիմութիւնն , և յառաջադիմութենէն ճշմարիտ լուսաւորութիւնն , որ մտական եւ բարոյական ոյժերուն ամբողջութիւնն է :




### Կոմսն առ. Մայտա

Դու կուղես , Մայտա , աշխարհէո և սիրելիներէդ հրաժարիլ վանքի մի մէջ թաղուելով . կուղես զոհուիլ : Լաւ , բայց զքեզ պաշտող եղբայրդ աղհետդ զոհելու քաջութիւնն ունեցիր : Չեզմով տիեզերք իմն է . առանց քեզ ոչնչութիւնը կը մնայ ինձ : Դուն ես ականջն որով կը լսեմ , դուն ես բերանն որով . կը խօսիմ . սիրտ մոռնիմ որ քեզմով միայն

կը բարախէ։ Մայտա, վերադարձուր աչացս շողը, վերադարձուր բերնիս խօսքը։ Քեզ պահէ միայն սիրտս, զի քուկդ է այն։

Բայց եթէ անպատճառ կուզես զո՞նդ կատարել, իմաց տուր ինձ որսէս զի իմս ալ ես կատարեմ նոյն միջոցին։ Մի վախնար երբէք թէ գանդասս վանական անդորրութիւնդ կը վրդովէ։ Ես քու երջանկութիւնդ երազեցի միշտ։ զքեզ բարեբաստ տեսնելու համար տանջանքն եւս սիրելի է ինձ։ Սակայն չեմ կրնար անվրդով տեսնել այն ցուրտ պատանքը զոր ձեռքերդ կը պատրաստեն ջերմ սիրտդ ծածկելու համար։ ոչ, չեմ կրնար հանդուրժել այդ բանին։ Էսէ ինձ միայն, հա՞րկ է ապրիլ թէ մեռնիլ աշխարհիս համար։ Ի մահ՝ ինչպէս եւ ի կեանս միշտ սիրելի պիտի մնաս ինձ համար։



### Մայտա առ. Տիկին Սիրա

Ճշմարտութիւնն երեւան ելաւ։ Տիգրան յանցաւոր չէ, վատօրէն խարած են զինքը։ Տիգրան կեղծած չէր, այլ ճշմարտապէս սիրած էր զիս։ բայց աւազ, ինձ համար ոչ եւս է նա։ Սարսափն և ուրախութիւնը, խաւարն և լրյաը, կեանքն ու մահը կը զրաւեն բոլոր էութիւնս։ Ի՞նչ վայրկեան

էր այն երբ ճշմարտութիւնն իմացայ . ցնծացի , բայց  
կորուստս առաւել եւս զգալու համար :

Այն սոսկալի դէպքերէն վերջն որ այնչափ սուղի  
նստան Յուլիանէիս , նա օր աւուր կը զօրանար ,  
և վերստին երջանկութիւն կը վայելէր : Իրաւ է որ  
Լեւոն կը դուրդուրար վրան իրեւե յանցելումն ,  
սակայն կը դիտէի որ մերթ ընդ մերթ կասկածա-  
նաց ստուեր մի կ'անցնէր դէմքին վրայէն , եւ կը  
տագնապէր լոին :

Օր մի դարձեալ երբ Յուլիանէիս մօտ նստած  
սիրալիր աչօք կը նայէր անոր , յանկարծ այլայլած  
դիմօք հեռացաւ իրմէ : Աղջիկս բան չհասկցաւ ,  
բայց ես անցածը շուտ իմացայ և ետեւէն դնացի :  
Պարտիզի մէջ ժուռ կուդար , մօտեցայ իրեն խօ-  
սելու , երբ ատրճանակի ձայնն , եւ գրեթէ նոյն  
միջոցին աղիողորմ ճիչ մի հասաւ մեր ականջին ան-  
տառակին կողմէն : Լեւոն վազեց դէպ այն կողմ , և  
ես ետեւէն դացի , երբ սոսկալով տեսանք արիւն-  
շաղախ մարդ մ'որ դետինը փոռուած էր , եւ ուրիշ  
անձ մ'որ կը հեռանար փութով : Հերիգան ծունք  
դրած էր վիրաւորելոյն քով՝ որ էր Պետրոս Փ . . .  
հէք Հրանոցչին հայրը :

Երբ մօտեցանք՝ Հերիգան ուրք ելաւ ատելու-  
թեան նայուտածք մ'ուղղելով ինձ : Խոկ վիրաւոր-  
եալը կարծես թէ վայրադ ուրախութիւն մի զգաց  
վմել տեսնելով և վրէժխնդիր աչօք և վրվրալից  
րերնով , «Բոնեցէք սա կինը , դոչեց , Հերիգան ցոյց  
տալով , զի նա ինքն սատանն է : Դու , Տիկին ,  
ըստու ինձ , Տիզրանդ կորուսիր ասոր նենդութեամբ .

և դ՞ւ , սլաքոն , Յուլիանէդ պիտի կորսնցնէիր : Պաշտեցի այս կինը , ցնորած էի , եւ իւր սիրաը շահելու համար չկար ոճիր որ չգործէի , և իրեն հաճելի ըլլալու համար ամեն բան գործեցի » :

Լուեց , զի ահագին վէրքէն վազած արիւնը կը տկարացնէր զինքը : Վէրքը խնամեցինք , քիշ մը սփոփեցաւ , յետոյ այսպէս շարունակեց . « Խոստովանութիւնս լրացնեմ զի գուցէ անկարող ըլլամքիշ մը վէրջը : Այս կինը կը սիրէր զջիդրան , եւ չէր ներէր քեզ , Տիկին , որ զինքը գրաւած ըլլաս : Նա խոստացաւ իւր սիրտն իրրեւ վարձատրութիւն վրէժխնդրութեանը՝ որով զջիգրան պիտի բաժնէի քեզմէ : Դու սիրտ մի կորուսիր , ես կին մի շահեցայ :

« Գացի անձամբ գտայ Տիգրանը , պատիւդաղարտեցի , և ի հաստատութիւն ըսած սուտերուս մատանիդ ցոյց տուի , զոր գողցած էր սա ապիրատ կինն՝ աղջկանս մահուամբ սառած մատէն : Տիգրան զքեզ կը սիրէր , Տիկին , զի կարծես թէ յուսահասութիւնը յիմարեցուց զինքը : Սակայն իրրեւ սիրուհի տառապիլդ չէր բաւեր այս անօրէնին , ուզեց նաեւ մայրենի սիրտդ հարուածել , եւ ես անոր շարութեան ծառայեցի , զի անհնարին էր ինձ չգործադրել անոր որ և է կամքը : Անանուն նամակը ես զրեցի աղջկանդ , ես էի փախչողն անտառակին մէջէն , և եթէ առաւել փաստ կ'ուզէք ահա Հերիգային նամակն , ըսաւ , զայն Լեւոնին երկնցնելով :

« Այս վայրն էր մեր սիրոյ բոյնն : Այսօր որոշ-

եալ ժամկն յառաջ եկայ հոս , զի այս կինը զիս  
այնպէս դիւթած էր որ կուզէի գոնէ շնչել օդն որ  
կը շնչէ , և դիտել իրեն բնակած տունը : Բայց  
երևակայէ թէ որպիսի սրտմտութեամբ գրաւուեցայ  
երբ հոս գալով գտայ զինքը ձեր զրացնոյն Ամա-  
տունի հայ զօրավարին թեւերուն մէջ , որ առա-  
ւել ծանօթէ է իւր յաղթանակաւն սիրոյ աշխարհին  
մէջ՝ քան թէ պատերազմի դաշտին վրայ : Կը նայէի  
անտես , չուզելով նախ աչերուս հաւատալ՝ այնչափ  
զարմանքն ու ցաւը կը կուրացնէին զիս : Բայց յե-  
տոյ սա կնոջ վրայ յարձակեցայ ուզելով մեռցնել  
զինքն և իւր սիրելին , երբ սա վրաս ատրճանակ  
մի պարագելով զիս գետինը նետեց , և հեռացաւ  
քովս թողլով այս կինն որ պիտծ շրթամբ կ'երկրոր-  
դէր ինձ այն նենգալի խօսքերն որ երբեմն զիս  
կախարդեցին : Խակ արդ ատելութիւնս այնչափ մեծ  
է որչափ մեծ էր տրիփս » :

Շունչն սպառեցաւ , լոեց , և շարունակեց դարձ-  
եալ ըսելով . « Գուցէ կը մեռնիմ քանի մի վայր-  
կեանէ : Իրաւունք ունիք զիս ատելու երկոքնիդ  
ալ . հետա կը տանիմ ձեր անէծքը բայց կը թողում  
ի փոխարէն վրէժս որ նաեւ ձերինն է : Կեանքն  
ինձ համար անտանելի է այսուհետեւ . սակայն կը  
փափաքէի ապրիլ այս հրէշ կնոջ պատուհասովն վայ-  
րենօրէն հրճուելու համար » :

Կարող չէր առաւելն ըսելու զի ողեսպառ եղած  
էր : Լեւոնի հրամանաւ առին զինքն իւր տունը  
տարին : Թուի թէ վերքը մահարեր է : Թէեւ այս  
մարդն աղէտալի եղած էր ինձ , սակայն այնչափ

թշուառ էր նոյն միջոցին որ անհնարին էր չկթալ  
իւր վրայ : Միթէ կարելի՞ է ատել դժբաղլութեան  
գուբին մէջ գլորողը :

Խակ ի՞նչ ըսէի Հերիդային որ դեռ քանի մի  
ժամ յառաջ սիզապանծ կ'անցնէր առջեւէս , եւ  
նոյն միջոցին իրրեւ յանցաւոր կայնած էր հանդէս  
ինձ , եւ թէպէտ նկուն՝ դռոզողութիւնը կը սպահէր  
վերստին : Շնորհք չի խնդրեց ամենեւին , ոչ խակ  
բառ մ'արտասանեց ինքզինքն արդարացնելու հա-  
մար , բնաւ խոնարհ ձեւ մի շառաւ , այլ անվրդով  
դէմքով լսեց իւր դատապարտութիւնն , իրր թէ  
իրեն վերաբերութիւն չ'ունենային անցած դէպ-  
քերն , անշարժ ու անխօս կենալով : Լեւոն հրաման  
ըրաւ անոր իւր ետեւէն գալու . հնապանդեցաւ  
առանց նուաստութեան ձեւ մ'առնելու . կարծես  
թէ տիրուհի մ'էր տակաւին : Խակ Ամատունի հայ  
զօրավարն արդարութեան մատնուեցաւ ոճրագոր-  
ծութեան պատիժն ընդունելու համար :

Նրբ ազջիկս խմացաւ այս տրամային մանրա-  
մասնութիւնները , թեւերուս մէջ իյնալով « ինզձ  
մայրիկ , ըսաւ , եթէ սիրեցիր ինչուէս ես սիրեցի  
Լեւոնս , որչափ ազնիւ սիրտդ մահացած պէտք է  
ըլլայ » : Ինդրեց Լեւոնէն որ եղելութիւնը հո-  
զորդէ անմիջապէս Տիգրանին , որպէս զի անսա-  
տուութեան բիծ մ'ագամ չ'ըլլայ , կ'ըսէր , անարատ  
մօրս վրայ :

Յուլիանէդ խմ , ըսաւ Լեւոն , նոյն լցոն որ կը  
ցրուէ վերջին կասկածս՝ երեւան կը հանէ միան-  
գամայն մեր տանն եղած նախատինքը : Հերիդան

ոչ եւս եղբօրս կինը կրնայ ըլլալ այսուհետեւ , և ոչ  
խակ այս յարկին ներքեւ բնակիլ :

Երբ նախատուած ամուսինն իմացաւ կնոջը պար-  
ստելի ընթացքը կարծես թէ շանթահար եղաւ ,  
և նմանեցաւ մարդու մ'որուն-կեանքը յանկարծ կը  
յափշտակեն : Կը պաշտէր Հերիգան , և հանդերձ  
այսու ըսաւ թէ ինքն անպատռութեան հետ քնաւ  
վերաբերութիւն չէր ուզեր ունենալ այսուհետեւ :  
Հետեապէս որոշուեցաւ հիւանդանոցի մի մէջ զինքը  
բանտարկել : Մեկնեցաւ տունէն միշտ անխռով  
դէմք մի պահելով , թէև տժդոյն էր իբրեւ զմահ :  
Անկարելի էր չի կարեկցի՝ տեսնելով կին մ'որ բնու-  
թեան շնորհքներով օժտուած , շնկերութենէ ամե-  
նայն առաւելութեամբ շրջապատռուած և կատարեալ  
տէր իւր անձին , դատապարտուած ըլլայ ամենայն  
ինչ կորսնցնելու , և գլխիկոր՝ արհամարհանաց մէջ  
հիւծելու մենիկ և անխօս . ինչ անկում :

Նոյն օրէն ի վեր որ Հերիգան մեկնեցաւ տու-  
նէն , իւր ամուսինն անզգ այութեան կարծես մատ-  
նուեցաւ . չի խօսիր , եւ ոչ խակ ակնարկութիւն  
կ'ընէ իւր դժբաղդութեան : Բայց այդ հանդարտ  
կերպարանքին ներքեւ յայտնի է թէ ցաւը կը կրծէ  
զինքը , զի կերպարանափոխ եղած է արդէն :

Կը նկատեմ անոր վիշտն եւ կը միսիթարուիմ  
մտածելով որ գոնէ ես Տիգրանէս շմատնուեցայ  
այլ բաղդէն , և այս տխուր միսիթարութեամբ կ'ըս-  
փոփիմ : Կ'երեւակայեմ անոր յուսահատութիւնն երբ  
անմեղութիւնտ իմանայ : Իրաւունք չունէլո՞ արդեօք  
կարծելու թէ Տիգրան դրուժան չէր կրնար ըլլալ .


բայց ի՞նչ օղուտ , նա կ'առլրի եւ մեռած է ինձ  
համար : Գուցէ սրախն հառաջանքը կը պատասխանէ  
խմինիս , եւ սակայն անոնց արձագանքն իրարու-  
չեն հանդիսվիր երբէք , զի անկարելին իրր անջըր-  
պետ կեցած է անոնց մէջ տեղ : Ո՛չ , երջանկու-  
թեան համար նախասահմանուած չեմ . դալարագեղ  
յոյսն իւր չորտքեկ տերեւները կը թողուն միայն  
ձեռացս մէջ , մինչդեռ այլոց կը ժպտի իւր չնորհք-  
ները բաշխելով տուատօրէն :



### Մայտա առ կոմա

Անձնուէր բարեկամութիւնդ , կեանքը զոր քեզ  
կը պարտիմ , պարտք կը զնեն վրաս երախասազի-  
տութիւնս յայտներու : Կը զրհեմ քեզ ուրեմն ան-  
դորրս , ու կենդանի աշխարհին մէջ կը մնամ ,  
միայն քու անձդ վանական կենաց չի դատապար-  
տելու մտօք : Փոխանակ մխիթարիչ լոռութեան մէջ  
մեռնելու , ամենուն ի տես մեռնիմ ուրեմն , աշ-  
խարհիս անտանելի աղմուկները լոելով : Դու եւս  
իրրեւ զիս , Անմս , ճանաչեցիր հոգւոյն վէրքերը .  
մի զայրանար ինձ դէմ եթէ անկարող եմ բուժել  
զանոնք : Ով կ'ուզէ հառաջն ու արտասուքն ունե-  
նալ ի բաժին՝ հրաժեշտ տալով աշխարհիս բարեաց :  
Միրաս այնպիսի սիրով գրաւուեցաւ որ զզացմանը

մէջ սպառեց իւր բոլոր սիրային հիւթն , այնպէս  
որ ոչինչ մնաց արդ , և մինչ երիտասարդ եմ տա-  
կաւին գլուխս կը խոնարհեցնեմ գերեզմանին վրայ  
իրրեւ վարսաւոր ուռենի : Արչափ հեշտին կ'ըլլար  
ինձ եթէ իմ երկրիս մէջ ապրէիր , եւ իմ ցաւո  
քուկինովդ սփոփէի : Թեթեւագոյն կը թուի կենաց  
բեռն երբ երկու անցանց վրայ կոթնած է : Կոմս ,  
զոհեցի քեզ վերջնական մխիթարութիւնս . երանի  
թէ խաղաղութենէն հրաժարելովս վեհ հոգւոյդ  
անդորր մատակարարէի : Կատարած զոհիս վրայ  
շեմ ցաւիր բնաւ քանի որ քեզ նման զոհ մի կը  
փրկեմ :



### Տիկին Սիրա առ. Մայտա

Նենդաւոր կնոջ մի դժբաղդ խաղալիքն եղար  
ուրեմն : Դժոխային ստուեր մի երկու հաւատարիմ  
սրտերու մէջ վիճ մի բացաւ զոր մոռացումը միայն  
կրնայ դոցել , և սակայն կրնայ լնուլ զայն այնչափ  
շուտ : Ժամանակն՝ այն հրաշագործ բժիշկն որ ա-  
մեն ախտ կը բուժէ՝ սփտի դարմանէ քուկինդ ևս ,  
բայց դժբաղդութեան սեւ դրոշմն ովլ երրէք կրնայ  
ջնջել բոլորովին :

Հերիգան վւնտուեցաւ ամուսնական յարկէն ի  
պատիժ իւր չարագործութեանց : Արդարացի կը

գտնայի այդ վարմունքն եթէ սատանայական մեռքենայութեանց և անոնցմէ բղխած աղետալի հետեւանացը փոխարինութիւն չըլլար : Բայց երբ կին մի հիւանդանոցի մէջ կը փակեն ի պատիժ իւր անհաւատարմութեան ամուսնոյն նկատմամբ , դըժուարին է ինձ արդարացնել այդ վարմունքը , վասն զի այդ անհաւատարմութիւնն արանց հանալազօրեայ յանցանքն եղած է , և այնպիսի բնական բանի դարձած՝ որ յիշատակութիւնն անգամ չըլլար :

Սրդ կը հարցնեմ , ի՞նչ իրաւամբ Հերիգան կը զրկեն իւր անձնական աղատութենէն . ի՞նչ իրաւամբ կը դատապարտեն զինքն օրերն անցնել բանտի մէջ որ իւր գերեզմանն ըլլայ գուցէ ի վերջոյ . ի՞նչ իրաւամբ արք իրեւ դահիճ կանանց կը հանդիսանան այնպիսի յանցանքի համար , զոր իրենք համարձակապէս գրեթէ անսլատիժ կը գործեն շարունակ : Ո՞վ տուաւ անոնց աղատ գործելու արտօնութիւնն , և նոյն աղատութեան համար կինը հարստահարելու այդ բացարձակ կարողութիւնը , ո՞վ տուաւ անոնց այդ իրաւունքը : Ի՞նութիւնն , ոչ քանի որ երկու սեռից չնորհած է նոյն հանգամանքը , նոյն կիրքերը , նոյն առաքինութիւնները , նոյն մոլութիւններն : Ինչու ուրեմն ի՞նչ որ արդար կը կարծէ այրն անձին համար՝ ստգտանելի կը համարի երբ հակառակ սեռին կը վերաբերի , եւ ի՞նչ որ եսլերելի ու անարդ կը թուի կանանց մասին՝ նոյն չափ դատապարտելի չէ իւր նկատմամբ : Ի՞նչ որ ընտանեկան սրբութիւնը կը պղծէ՝ ոճիր մ'է : Ի՞նչ որ հասարակաց բարքերը կը խանգարէ՝ մարդկու-

թեան նախատինքն է : Ինչ որ մոլութիւն է կանանց համար՝ մոլութիւն է նաեւ արանց համար , եւ հետեւանքը թէև տարբեր՝ այլ նոյնչափ ողորմելի է , ի վեաս թէ ընտանեկան խաղաղութեան և թէ ընկերական բարոյականութեան : Ուրեմն արք իրենց մոլութիւնները կուզեն իրրեւ սեպհական ոյժ գործածել հակառակ սեռը հարստահարելու համար : Այս բացարձակ իշխանութիւնն երկու իրողութիւն կը հաստատէ : Մին յայտ յանդիման կ'ապացուցանէ կանանց նուաստութեան աստիճանն , որով անտարբեր կը մնան իրենց ոտնակոխ եղած արժանապատութեան նկատմամբ . իսկ միւսն երեւան կը հանէ արանց աններելի անձնասիրութիւնն զոր կը դատապարտեն ողջամիտ միաքն և արդարութիւնը :



### Տիգրան առ. Մայտա

Ավ Մայտա , ճանչցայ զքեզ նախ պաշտելու , իմս կարծելու , և յետոյ կորսնցնելու , հառաջանաց մէջ հիւծելու , բարձրածայն անիծելու և գաղտազողի պաշտելու համար զքեզ : Ազետալի դաւաճանութեան մի զոհ եղայ ես : Մաքրութեան հրեշտակն՝ անմաքրութիւն կարծեցի . առաքինութիւնը՝ մոլութիւն . զեղեցկութիւնը՝ տղեղութիւն . հաւատարմութիւնը՝ մատնութիւն : Վիրաս անհնարին

կատաղութեամբ կը մռնջէր , կ'արիւնէր , կ'ապրս-  
տամբեր քեզի դէմ , պատկերիդ դէմ , եւ ուրիշ  
սիրտ մի կ'որոնէր իրր նեցուկ , ձեռք մի կը խնդր-  
րէր խնամելու այն վէրքն որ կը բացուէր անընդ-  
հատ : Իմ սիրտս յօշոտեցին , և ես քուկինդ կեղե-  
քեցի . ջանացի սէրս ուրիշի նուիրելու , բայց ընդ-  
դիմացաւ , քեզ մնաց , եւ միշտ քեզ համար միայն  
սիրտի բարախէ : Բայէ ինձ , Մայտա , այն յուսա-  
հատ վիճակիս մէջ ի՞նչ կը մնայ ինձ ընել : Գեղե-  
ցիկն ու մաքուր Մայտան կենդանի է դեռ և ազատ ,  
մինչդեռ ես անկախ չեմ : Ոչ երրէք այնչափ ծանր  
երեւցան զգթաներս որչափ արդ : Զքեզ ունենալու  
համար երկիրն ամբողջ կը դպրուէի և սակայն ան-  
կարող եմ խորտակելու շղթաները զոր ես անձամբ  
դարրնեցի և զորս կ'ատեմ հոգւով չափ : Միայն  
իմ դառն վիճակիս վրայ կը խօսիմ առանց յիշելու  
այն վիշտն որ պատճառեցի քեզ , այն արտասուքն  
որ թափեցիր : Դու Փարիզ եկար զիս դտնելու հա-  
մար : Բայց ես զքեզ սիրադրուժ կարծելով՝ շատ  
իսկ փութացի քու պատկերդ հալածելու համար  
ուրիշնն անոր տեղը դնել : Եերանս անիծեց զքեզ ,  
բայց սիրտս պաշտեց միշտ : Մեր աղետից պատ-  
ճառն՝ Հերիգան , իւր յանցանքը կը տուժէ այս  
միջոցիս , բայց ի՞նչ օդուտ . անոր պատիժը կը  
վերադարձնէ ինձ իմ Մայտաս : Գիտեմ որ շատ  
տառապեցար , հէք հրեշտակդ իմ , զիս հաւատա-  
դրուժ համարելով : Դու բերանդ անիծեց զիս  
արդեօք ինչպէս իմս զքեզ : Աիրել զքեզ և լացը-  
նել , պաշտել և հեռացնել , մեր երկուքին մէջ սոս-

կալի անջրապետ մի դնել, ահա կատարած գործս :

Գթութիւն, ողբարձէ թշուառին որ չդիտեր թէ ցաւի կամ ուրախանայ անմեզութեանդ վրայ, և որ կը գտնայ գանձ մի՛ զայն վերսաբին կորսնցնելու համար : Ողբարձէ անբազդին որ ձեռամբն իսկ քու և իւր կորուստը պատրաստեց : Գթութիւն . Մայտա ներէ ինձ, սիրէ զիս վերսաբին եթէ դագրեցար զիս սիրելէ, զի սէրդ մութ գիշերոյս փարոսը պիտի ըլլայ : Գթութիւն . վատաբար խաբեցին զիս, դու ինքդ դատէ :

Ամբաստաննցին զքեզ իբրեւ ուխտադրուժ, գրեցի քեզ տեղեկութիւն ուղելու համար, ու նամակս անպատասխանի մնաց. յետոյ ճամբորդեցի, և երբ վերադարձայ 'ի Փարիզ վերջապէս քու կողմէդ լուր ստանալու մտօք, որչափ ցաւս մեծ եղաւ երբ ակնկալութիւններս ի դերեւ ելան : Երկրորդ նամակ մի եւս յղեցի քեզ և նոյն լուռութեան հանդիպեցայ, որով մոռցուած ըլլալս հետեւցուցի վճռողական կերսլիւ : Ո՞վ արդեօք իմ վիճակիս մէջ այսպիսի գժոխային խաբէութեան նահատակը չէր ըլլար : Վեց ամիսէ աւելի կորսուած մարդ մ'էի, յուսահատութեան ովկիանոսին մէջ ինկաձ՝ խաղալիկ եղած էի ահեղամուռնջ կոհակացն, նաւամատոյց մի որոնեցի ի փրկութիւն, գթած ձեռք մի խնդրեցի զիս աղատելու համար, և երբ գտայ այն ձեռքը՝ փրկութեան փոխարէն շլթաներ կ'ընդունիմ, և կենաց փոխարէն՝ մահ : Մայտա, որքան թշուառ եմ, գթութիւն :

Երբ հանդիպեցայ քեզ եկեղեցւպն մէջ ու աեւ-

սայ նուաղիլդ՝ այնչափ ուժգնապէս յուզուեցայ, որ  
ընկերակիցս զարհուրանօք դիտեց այլայլութիւնս և  
կասկածեցաւ : Մոռցայ թէ դժբաղդ ականատես  
մ'ունէի քովս, մոռցայ թէ դրուժան մ'էիր ինձ  
համար, արշաւեցի դէպի քեզ, լացի քու քովդ  
ծնրադրած, պաշտեցի զքեզ անիծելով, խնամեցի  
կարեկցելով : Եւ երբ սթափելու վրայ էիր հեռա-  
ցայ քեզմէ, սիրտս ակամայ քեզ թողլով : Ո՛հ,  
սիրեցի զքեզ յիմարաբար նենդաւոր կարծելովս  
հանդերձ : Գթութիւն, Մայտա, դթութիւն :



### Մայտա առ. Տիգրան


Դթութիւն կը խնդրես ինձմէ երբ սոսկալի  
կերալով սիրտս վիրաւորեցիր և արիւնովն ոռողե-  
ցիր . երբ վէրքէս հոսող արեան կենսաւետ կայ-  
լակները սրսկելով՝ անոնցմով խաղացիր առանց  
սոսկալու : Գթութիւն կը խնդրես երբ վշտացս սար-  
սափելի տեսարանովն աչքդ հրճուեցնելչն ետքը  
կառափնար մի պատրաստեցիր, եւ հոն սիրտս  
զետեղեցիր պարզեւելով անոր աղէտալի հարուած  
մի առանց սակայն ոչնչացնելու, որպէս զի սալրիմ  
և չարշարուիմ : Գթութիւն կը խնդրես . բայց զը-  
թացիր ինձ երբ ծովերէն անցնելով եկայ զքեզ  
որոնելու ի տար երկիր եւ լոռութեանդ պատճառն  
իմանալու, երբ զետինը զքեթէ անկենդան տա-

բածուած էի լսելով թէ անհամբեր սիրտդ ուրիշ  
սէր մի պատրաստած էր իմինիս տեղը գրաւելու  
զիտաւորութեամբ : Դու ողորմեցար ինձ երբ զրե-  
թէ երեք շաբաթ մահուան և կենաց մէջ էի օտար  
ձեռաց մատնուած : Ողորմեցար ինձ երբ քեզ նման  
սիրաղրուժ մի պաշտելով՝ որոշած էի վանրին մէջ  
թաղուիլ և լալ քու վրադ որ մեռած էիր ինձ հա-  
մար : Ողորմեցար ինձ երբ անունդ տալով անդա-  
դար արտասուքս կը յանձնէի զիշերուան՝ որ միակ  
խորհրդակից բարեկամս էր : Ըսէ , ունեցար ինձ  
համար այն գթութիւնը զոր կը խնդրես : Ուրա-  
ցար մեր սէրը , հալածեցիր յիշատակս , եւ առանց  
քստմնելու ուրիշի մի երկրորդեցիր ինձ ըրած սի-  
րանուէր խոստումներդ : Տերանդ չզարհուրեցաւ  
արդեօք ուխտաղրուժ ըլլալ : Խարեցիր երկինքը ,  
խարեցիր երկիրը , խարեցիր սիրտդ և սիրտս , ու  
գթութիւն կը կոչէս : Դու ներկայացուցիր ահարեկ  
աշացս ոսոխ մի , մինչ ես մեկուսի թողուած , մատ-  
նուած , հաւատարիմ մնացի քեզ դարձեալ , զի  
մերժեցի բաղդակից ըլլալ այն անձին որ հիւրընկա-  
լած էր զիս տառապանացս մէջ , խնամած էր հի-  
ւանդութեանս միջոցին , եւ որ կը նուիրէր ինձ  
սիրտ , տիտղոսներ և հարատութիւն : Ամենայն ինչ  
մերժեցի զի անկարող էի ետ առնուլ ինչ որ քեզ  
նուիրած էի արդէն . քու իրաւունքդ էր այն , եւ  
հակառակ կամացդ՝ քեզ համար պահեցի : Բաղ-  
դատէ ընթացքդ իմինիս հետ , և ըսէ՝ թէ դուն  
ալ ինձ շափ թշուառ եղար արդեօք , թէ սիրեցիր  
զիս ինչպէս ես սիրեցի զքեզ , եւ թէ իրաւունք

ունիս զթութեանս դիմելու : Բերանս ոչ երբէք անիծեց զքեզ այլ միշտ օրհնեց : Քեզ պահէ ուրեմն երջանկութիւնը , թող ինձ արտասուքը :

Դու սլարտք մունիս կատարելու երկրիս վրայ՝ այն է երջանիկ ընել այն անձն որ բաղդակից եղաւ քեզ : Անմեղ է նա , իրաւունք ունի գորովդ պահանջելու , սիրէ զինքը : Զեմ համիր երբէք որ յիշատակու անոր անդորրը փրդովէ . փոխանակ մէկ թշուտաի՝ երկու մի հանդիսացներ , և մի վարժեցներ անոր բերանն անունս անիծելու , ինչպէս վարժեցուցած էիր քուկինդ :

Երբ օր մի այս վշտահար սիրաս մահուան ծոցը դոյզն ինչ հանգիստ գտնայ վերջապէս , կը փափիմ որ նա եւս իւր արտասուքը խառնէ քուկինդ . եթէ յափշտակեց ինձմէ այն էակը՝ զոր այնչափ սիրեցի միթէ ինքն էր յանցաւոր , և իրաւունք ունիմ արդեօք իրեն դէմ սրտմտելու այնպիսի իրողութեան մի համար որոյ մէջ ինքը բնաւ յանցանք չունի : Մնաս բարեաւ , Տիգրան , միայն զքեզ սիրեցի , և երբէք ուրիշ մի չի սիրափի սիրեմ : Պատկերդ հետո միատեղ սիրտի իջնայ ի գերեզման : Համարէ թէ իջած եմ արդէն , և առանց խղճմըտութեան յիշէ մեր անցեալ գեղեցիկ օրերն որ կարի շուտ սահեցան : Յայց ոչ , չեմ ուզեր մեռնիլ առանց ներումն ընորհելու քեզ : Թուի ինձ թէ անհանգիստ սիրտի ըլլայ քունս մահուան անկողնոյն մէջ . ի սրտէ ուրեմն կը ներեմ քեզ : Վերստին մնաս բարեաւ , Տիգրան :



Մայտա առ. Տիկին Սիրա

Կոմսն եկաւ : Երջանկութիւն մ'է մարդուս հաւատարիմ բարեկամի մօտ ըլլալ . իսկ Կոմսը կարծես թէ կը վերածնի մէն մի վայրկեան , և ամբողջապէս կը վայելէ Վոսփորին գեղեցկութիւնները : Աքանչելի է Վոսփորը , կ'ըսէ , զանազան տեսարաններովն որով կը հանդիսանայ , աստ ծոցի կերպարանքի գեղազուարձ ափունքով , քիչ մ'անդին լիճ մի ներկայացնելու համար : Զինքը կը զարմացընեն մանաւանդ բարձրաւանդակներն այլ և այլ գոյներով ներկուած տուներով ու մզկիթներովն , ինչպէս և թեթեւ մինարէներովը , զոր կարծես թէ , կ'ըսէ , աներեւոյթ ձեռք մ'օղին մէջ բռնածէ : Հրաշալի կը դանայ Եւրոպայի եղերքն , և մանաւանդ Ասիոր կանաչազարդ բլրակներն որք կարծես թէ ի պայքար կը մտնեն գեղեցկութեամբ , դոյնով և լուսով ընդդիմակաց եզերաց հրաշալեաց հետ , վերջապէս յաղթանակը տանելով : Նոյնպէս լերանց վրայ ցիր ու ցան ճերմակ տաղաւարներն որք իրրեւ հօկայ ծաղկանց վունջ կը հանդիսանան : Արեւելեան ճաշակաւ հոյակապ պալատներն , աւերեալ բերդերն՝ որք թուին ալեւոր պահապան հողիները Վոսփորայ : Փոքրիկ եւ մեծ նաւերուն անրնդհատ շարժումն՝ որք իրր թէ ծովուն մէջէն բռնած երերուն կզգիներու ազդեցութիւնը կ'ընեն իւր վրան . զայս ամենայն՝ հիասքանջ աչերով կը դիտէ Կոմսը : Բայց ինչ որ մանաւանդ հոգին

զմայլմամբ գրաւեց՝ Միւէզիններն են, որք կարծես  
թէ օդին մէջէն Աստուծոյ մեծութիւնը կը հռչա-  
կեն : Երբէք, կ'ըսէ, աղօթք մի այսալիսի բարձ-  
րութեան հասած չէ ինչպէս Մահմետական փառա-  
րանութեան ձայնն, որ ի բարձանց կ'արճակուի  
իրեւ ներդաշնակութեան բոյր՝ անեզրութեան մէջ  
նուաղելով : Քրիստոնէութիւնը շունի բան մ'այն-  
քան վեհ եւ սրբագրաւ որքան այս հոգիաբուզիս  
կոչումը՝ որ զանգակին ցամաք հնչման տեղը կը գը-  
րաւէ, կ'ըսէ :

Գիշեր մի լուսինն յերկինս կը փայլէր . բիւրաւոր  
ասալունք կը շրջապատէին զայն, մինչ կարծես թէ  
ծովն ոսկեզօծ մասունքներ կը թաւալէր, այնչափ  
պայծառ էր և լուսափիւռ . ոչինչ կը քստմնեցներ  
ջուրերուն երեսը, այլ ամենայն ինչ խաղաղութիւն  
և խորախորհուրդ լուռթիւն էր : Յանկարծ Միւէ-  
զինին ձայնը իրեւ սարսուռ սահեցաւ տարածու-  
թեան մէջ : Անխօս՝ ականջ կը գնէինք անհուն  
սքանչացմամբ, երբ Կոմսն սրտայոյգ՝ ընդհատեց  
լուռթիւնն լաելով . « Մայտա, կը փափաքէի այս  
աղօթքն ունենալ իրեւ մահուան ձայնակցութիւն,  
և ովկիանն իրեւ գերեզման : Մեռնինք, գոշեց,  
քանի որ երջանկութիւն չենք կրնար գտնել երկրիս  
վրայ » : Կարծես թէ աներեւոյթ զօրութիւն մի  
առ այդ կը մղէր զինքը :

Ես չփոթած և անձայն կը կենայի առանց կա-  
րենալ սրախ յուզմունքն հանդարտեցնելու : « Կ'նչ  
յիմարութիւն, ըստ, անմիջապէս զգաստանալով .  
միթէ անդթութիւն չէ այսափ երկնային չնորհք

երերուն պատահքի ներքեւ թաղելու փափաքն ու-  
նենալ : Նոյն միջոցին աղջիկս կը մօտենար զուարժ-  
աղաղակներով , կարծես չար խորհրդոյ մի վերջ տա-  
լու համար :

Օրերնիս հանդարտորէն կը սահէին մտերիմ  
խօսակցութեամբ , եւ կամ սքանջացմամբ հանդէպ  
բնութեան հրաշալեաց : Տկար ըլլալովս անկարելի է  
ինձ երկար շրջագալութիւններ ընել , եւ քանի որ  
կոմոք գո՞յ ըռլար առանձին ժուռ գալէն , պարտա-  
ւորեցայ ուղեկից ըլլալ իրեն՝ այցելել տալու մտօք  
Այս-Յօդիայի եկեղեցին՝ քրիստոնէութեան հրա-  
շալի տաճարը :

Գոթմական ոճով կառուցուած կոստանդիանոսի  
տաճարին վեհութիւնը , գործադրութեան մեծու-  
թիւնը , յասպիսէ և սրբիւրէ որմունքն , հարիւր  
սիւներն Եփեսոսի տաճարէն փոխադրած . ութը  
գմբեթներն որոց բարձրագունին վրայ հսկայածեւ  
խաչ մի կայ նշմարելի մինչեւ ցարդ , . . . .  
. . . . . թեւարձակ չորս հրեշտա-  
կաց աղարտեալ գէմքերը , վերջապէս հոյակապ  
տաճարին ամբողջութեան կատարելութիւնըն գար-  
մացմամբ գրաւեցին Կոմոքին երեւակայութիւնը :  
Կատիներէն տառերով գրուած արձանադրութիւն  
մի մանաւանդ մեր հետաքրքրութիւնը շարժեց ,  
երբ կանանց մեծատարած վերնատան աջակողմեաց  
մէկ անկիւնը , գետինը մարմարինի վրայ , վէնէ-  
տիկի Հէնրիկոս Տանտոլոյ Տոմին անունը կարդա-  
ցինք : Այս Տոմը կոստանդնուպոլիս եկած էր 1517  
դարուն , ըստ խնդրանաց Ալէքսի Անժի , որոյ

հայրը՝ Խստհակ Անժ, գահընկէց եղած էր իւր եղ-  
րօրմէն, և բանուելով բանտարկուած էր : Խաչա-  
կիրներն և Հէնրիկոս Տանտոլոն՝ բանակալը վանելէն  
վերջը ի Կոստանդնուպոլիս հաստատուեցան, որով  
սկիզբն եղաւ Խատին թագաւորութեան : Զէինք  
կրնար մեկնել թէ ինչպէս Տանտոլոյի անունն այդ  
քարին վրայ կը գտնուէր :

Երբ անցանք Աթ-Մէյտանէն, հոռ, կոմս, ըսի,  
ուր այսօր հանդարտաբար կը չըջի հեղաբարոյ եւ  
գործունեայ ժողովուրդ մի, երբեմն այս վայրն  
սահմանուած էր ձիարշաներուն, և հոռ կը խռո-  
նէին բիւրաւոր հանդիսականք՝ իրենց համակրու-  
թիւնն յայտնելու համար այս ինչ, կամ այն ինչ  
մրցող կուսակցութեան, բուռն ծափահարութեամբ  
վարձատրելով յազթահարողը :

Այս կուսակցութեանց կարեւորագոյններն էին  
կանաչներն ու կապոյտներն որք զլիսաւոր առար-  
կաներն եղած էին հասարակաց համակրութեան,  
և լիազօր իշխանութեամբ թագաւորներ կը կար-  
գէին և կամ գահընկէց կ'ընէին : Կանանչներն ու  
կապոյտներն իրենց կուռյն առթիւ, նիրա կոչելով՝  
այսինքն «Լեր յազթող», զՅուսափանոս գահէն վար  
գլորեցին, յաջորդ տալով իրեն զՆիրաթիս, որ իւր  
կարձատեւ թագաւորութիւնը տուժեց Վոստրոփ

ջուրերուն մէջ մեռնելով : Այս խառնաշփոթ ժամանակին Աթ-Մէյտան ի հուր մատնուեցաւ , ինչպէս և Այրա-Աօֆիան՝ որուն զմբէթը յետոյ վերաշինուեցաւ հայէ մի՝ Տրդատէս անուանեալ , երբ վերստին Յուստիանոս ի նոյն գահ ամբարձաւ զինքը զահընկէց ընող Կապոյտներու ձեռամբ : Նոյնպէս հրոյ ճարակ եղան այն հրաշալի բաղանիքները Մեծն Կոստանդիանոսի խնամօքն զարդարուած , ինչպէս և չորս հազար հոգակապ տուներ : Հոս տեղ կանգուն կրայ այն նշանաւոր սիւնը որ կը ձեւանայ իրարու սլլուած երեք օձերէ կատարելապէս դլխատուած : Կըսուի թէ Սալտամինայի ծովային սլատերազմէն վերջը , Թէմիստոկլէս նուիրած է այդ սիւնը Ա-պոլոնին , եւ զետեղած անոր հոչակաւոր տաճարին մէջ որ ի Դեղրիս : Կը հաստատեն նաեւ թէ սոյն հրաշակերտը Կոստանդիանոս վոխադրած է ի Պօլիս :

Անհրաժեշտ համարեցի Կոմսին այցելել տալ  
Վէնիչէրիները , թէ իրենց խազցած պատմական դերին կարեւորութեան , և թէ իրենց զգեստներու հետաքրքրական երեւութին սլատճառաւ : Տես , Կոմս , ըսի , այս անխօս ժողովուրդն որ ահն ու սարսափին էր Սուլթաններուն , կարծես թէ իրենց ըութեան մէջ կ'ապառնան տակաւին Խալիֆէներուն : Եէնիչէրիներուն մէկ նշանը կը բաւէր , որպէս զի գահերը գլորին , գլուխները ջախջախուին , արիւնը հոսէ , եւ անսանձ յեղափոխութիւնները հանդարտին : Երբ Սուլթաններն դինուորական խումբը կազմեցին իրենց ապահովութեանն համար ,

շկարծեցին անշուշտ թէ օր մի սլիտի դաղապին անոնց զօրաւոր ձեռաց ներքեւ : Բայց Սուլթան Մահ-  
մուտ փոխանակ դողալու՝ շարունակ զլիսոյն վերեւ  
ծածանող սուրերուն ներքեւ , յանդուգն հարուա-  
ծով մի կործանեց հզօր Եէնիչէրիներն՝ որոց ա-  
րիւնիթաթաւ գլուխներն Վոսփորի վրայ կը ծփային,  
անոր ջուրերն ի կարմիր ներկելով . և նոյն վայր-  
կեանէն ազատ էր Խալիֆէներուն արքունական ա-  
թուն : Այս համաւոտ մանրամասնութիւններն ան-  
սկատում ուրախութեամբ կը համակէին Կոմսը , զի  
հաճելի էր իրեն Տաճկաց պատմութեան վերաբե-  
րով դէսկրերը լսել վերստին իմ բերնէս :

Հայեցուածք մ'ուզզեցինք այն գեղեցիկ սլար-  
տէզներուն որը աստիճանաբար կ'իջնան մինչև Վոս-  
փորի և Մարմարայի խառն ջուրերուն եզերը :  
Այս պարտէզներուն մէջ , ըսի Կոմսին , կը բարձ-  
րանայր Կոտանդիանոսի գեղապաճոյն սլալատն որ-  
մէ և ոչ հետք մի կը մնայ այսօր : Այդ արքունա-  
կան յարկը վկայ եղած է ժամանակաւ թագաւոր-  
ացն քաջագործութեանց , զեղխութեանց , մեղ-  
կութեանց , կրօնական վիճաբանութեանց . և այս  
վերջինները կը դրդուէին ի նպաստ իրենց անձնական  
շահուց՝ ժաղովուրդներն երկարաւակութեամբ բոր-  
բոքելով : Այդ պալատը վկայ եղած էր Շիզանդ-  
եան կայսրութեան աստիճանաբար վատթարանա-  
լուն , ոչնչանալուն : \* \* \* \* \*

\* \* \* \* \*

Վկայ եղած էր վերջին Կոտ-  
անդիանոսի զինուելու վայրկենին հայրենի երկ-

րին պաշտպանութեան ընթանալու՝ և իւր յետին չունչն Բիւզանդեան կայսրութեան յետին չնչոյն խառնելու համար :

Կոստանդիանոսի ձոփս ապարանէն՝ ոչինչ կը մը-նայ արդ , ըստ , բայց յիշատակ մի : Իսկ Յալէօլոկ-ներուն ամարանոցէն՝ միայն այս չորս որմունքն , անխօս վկացք անցեալ փառաւոր օրերու : Թէե յոգնած էի , սակայն ուզեցի կոմսին ցոյց տալ մեր ազգային մէկ հաստատութիւնը՝ այսինքն Պէղճեան Յարութիւնի անցեալ զօրութեան և ազգասիրական կանգուն յիշատակը , կ'ակնարկէի մեր Հիւանդա-նոցին ուր հարիւրաւոր հիւանդներ և դժբաղդներ դարման և ազաստանարան կը դանեն հոն , ինչպէս և լքեալ մանուկն պաշտպանութիւն և ուսում : Ճոխութեամբն և զարդիւքը չէ որ հաստատութեան մի օգտակարութիւնը կը դատուի , այլ մատուցած ծառայութեամբը . այս կարգէն է մեր ազգային Հիւանդանոցը որով կը փառաւորուէի որչափ օտար-ազգիք իրենց հրաշակերաններով : Կոմսն ոչ միայն կ'ըմբռնէր այս ազգային զգացմանց օրինաւորու-թիւնը , այլ և կը ծափահարէր մանաւանդ :

Սակայն ծածկեցի կոմսէն մեր Ազգին մեղադ-րելի անտարբերութիւնն այնպիսի որբավայրի մի նկատմամբ ուր ալեւորը՝ հովանի , հիւանդը՝ բոյժ , որրը՝ դթութիւն կը գտնայ : Զըսի իրեն թէ մաս-նաւոր առաքինի և ազգանէր անհատներու միայն կը պարափնք մերթ ընդ մերթ դովելի կարգազրու-թիւններն ինչպէս և մարդասիրական խնամք : Զըսի թէ այս վայրն որուն ամեն Հայ սիրտ իւր լուման

ջերմեռանդութեամբ նուիրելու էր , շըսի , կ'ըսեմ ,  
թէ այս վայրն կողոպուտներու և անիրաւութեանց  
կեդրոն եղած էր շատ անդամ , թէ աղքատին նը-  
ուփրեալ հացը , զգեստն ու լուման , մասնաւորաց  
հաճոյից նպաստած էր : Զըսի թէ կարօտելոյն լե-  
զի ժամկատը , դժբաղզին հառաջանքը , որբին ար-  
տասուքը փոխանակ եզրօր սիրտ մի գտնալու ,  
շահառէր անձանց անդթութեան հանդիպած էր :  
Եռեցի զայս ամենայն զի ազգային մրուրը կերպով  
մի մեր վրայ ալ կը ժայթքէ , մենք ևս կը սենամք,  
քւնի որ ամբողջութեան մասն եմք :

Վերջաւոչէս անհնարին ծամածուռ ձամբաներէ  
անցնելով , և կառքին անընդհատ ցնցմանց ենթար-  
կուելով հասանք ծովեզրը . ուր նաւակ մի մանելով  
ջուրերուն վրայ կը սուրացինք , մեր կրած զանա-  
զան ազդեցութեանց ներգործութիւնը կրելով տա-  
կաւին :

Երբ հասանք Տոլմա-Պահճէի արքունական պա-  
լատին առջեւ , տես , կոմս ըսի , ահաւասիկ վայր  
մի որ մարդկային սրտին ամբողջ պատմութիւնը կը  
սկարունակէ : Որչափ մարդիկ արքունական տիրոջ  
մի համակրելի երեւնալու համար սքնեցան , զոր-  
ծեցին , թշնամիներ յարուցին , թշնամիներ խոր-  
տակեցին , թշնամիներէ տապալուեցան երբ նոյն  
խոկ իրենց երազներուն բարձրութեան գագաթը կը  
թուեին հասնիլ : Որչափ կանայք իրենց թոգազարդ  
տիրոջն հաճելի ըլլալու համար ճիգեր թափեցին ,  
սիրուեցան , լքեալ մեկուսացան , լացին , առու ո-  
պեցան նախանձորդի առաւելութեան վրայ , երբ

անձերնին հզօր տիրուհի կը կարծէին արքունական  
սրտի : Քանինքը տանջուեցան խօսքէ մի , նայ-  
ուածքէ մի որ ուրիշ գեղանուոյ մ'էր ուղղեալ , որ  
ընդ հուալ պիտի յաջորդէր իրեն տիրոջը սրտին մէջ :  
Այս, քանինքը լացած են . բայց ովկ արդեօք համ-  
րեց սրտին այդ արտասուքները . ովկ բանի տեղուց-  
րաւ զանոնք : Չուրի կաթիլներ համարուին գուցէ .  
սակայն սրտի դառնութեամբ լի կաթիլներ էին ա-  
նոնք : Այդ տարաբաղդ գեղանիները մինչ կորովա-  
լից էին տակաւին՝ իրենց սրտին հիւծիլը կ'զգային  
ցամաքիլը , տկարանալը : Օրին մէկն ալ բարախում-  
ները դադարեցան . մահն սպաննած էր ինչ որ շը-  
նորհք , ինչ որ թարմութիւն , ինչ որ կեանք էր :  
Ո՞վ դիտեց այդ սպանութիւնը : Էակ մի միայն կը  
պակսէր որուն ուրիշ գեղանի մի յաջորդած էր :  
Այս, էակ մի միայն կը պակսէր , բայց սիրտ մ'էր  
այդ որ լացած , հառաչած և արիւնած էր : Ո՞վ  
քաղեց այդ վերջին շունչը ուր կը բովանդակուէր  
տիսուր վէսի ամրողջ սպասմութիւնը : Փոս մի կը  
բացուի ընդունելու համար երիտասարդուհի մի զօր  
յոյոր գեղեցկացուցած էր , և յուսահատութիւնը  
մեռուցած : Ոնցորդը կ'անցնի և իմանալով թէ  
ծաղկահասակ կին մի կը հանդշի հոն , « Մեղք ,  
կ'ըսէ , տակաւին շատ շուտ էր մեռնելու համար , »  
ու ճամբան կը շարունակէ : Միթէ շատ շուտ մե-  
ռած կը սեպուի մարդս երբ թշուասութիւնը ճա-  
ռացած նկատուելով ոչ տարաքեն մեռնիլն ալ մը-  
խիթարութիւն մ'է իրեն համար : Պատասխանէ ,

Կոմս ըսի , դու ևս ինձ նման ծերութիւն չես զգար արդեօք :

Մայտա , ըստւ , կեանքը մեծ արտօսր մ'է , զոր չող մի կը ջերմացնէ առաւել չուտ չողիացնելու համար : Մէն մի մարդ դառնութեան բաժակ մի ունի զոր ներկան կը սլարպէ և ապագան կը լեցընէ : Ոմանց բաժակը կը յորդէ , ահա միակ տարբերութիւնը : Դու շատ տառապեցար , և անձդ ամենէն տարաբազրքը կը համարիս : Կը սխալիս , վասն զի ամեն մարդ իւր արտասուքը կը հաշուէ միայն : Իմ գժբաղդութիւնս ոչ սարաքէն քուկինիդ չափ ծանր է . դու կը կորսնցնես դանձ մի , և նոյնը կը հանդիպի ինձ . քեզ համար ինչպէս և ինձ՝ աւելորդ անձ մի կայ մէջ տեղ : Տառապիլ՝ զգալ կը նշանակէ . զգալն՝ ապրիլ : Տառապանքը կենաց մէն մի վայրկեանը ուժդին կը նշանակէ , զի ապրելու համար ծնած ենք :

Կեանքը , շարունակեց Կոմսը , ընդարձակ վիճ մ'է որուն մէջ սարապիահար աչքը զգիշեր կը տեսնէ : Մարդս անոր յատակը իջնալու սլարտական է , զի անողորմ ձեռք մի զինքն անդ կը մզէ բռնութեամբ : Սէրը կը լուսաւորէ այդ վիճն իւր շողովն , յետոյ մութն առաւել ևս թանձրացնելու համար , երբ սառնահար շունչովն իւր բռնած ջահը կը մարէ :

Լուց Կոմսը , և ես ունինդիր Եի մինչ զադրած Եր խօսելէ : Յանկարծ ձեռքը ծովուն մէջ թափախելով և զայն վեր քաշելով քանի մի կաթիլներ կախուեցան մասուըներէն , և յետոյ ծովուն մէջ ինկան և կորսուեցան : « Ահա մարդուս սլատկերն ,

ըսաւ . վայրիկ մի կը կասուի կենաց , ետքը կը զը-  
լորի ու կը կորսուի ընդհանուր ամրողջութեան մէջ  
ուսկից բզմած էր :

Մեր նաւակը կը սահէր ջուրերուն վրայէն , և  
մենք հիացմամբ կը դիտէինք մերթ շարժուն ան-  
հունութիւնն՝ որ զմեզ մեղմարար կ'օրօրէր իւր ծո-  
ցին մէջ , և մերթ կապոյտ անհունութիւնն որ մեր  
գլխուն վերեւ կը տարածուէր , եւ մենք իրրեւ  
հիւլէ այս երկու տարածութեանց մէջ՝ մտօք կը  
բարձրանայինք մինչեւ մին , եւ կը խոնարհէինք  
մինչեւ միւսը : Հասանք մեր բնակարանն երբ  
լուսինն հորիզոնին վրայ կ'երերար բնութիւնը դիւ-  
թելու համար , ու Մուէզինին ձայնը կ'ողջունէր զայն  
խանդով :



### Տիգրան առ. Մայտա

Կը ներես ինձ ուրեմն , Մայտաղ իմ պաշտելի :  
Սիրաս կ'ափսիփի , բայց չէ կարող գտնալ խը կորաբ-  
ուած երջանկութիւնը : Ամենայն ինչ անտանելի է  
ինձ , մանաւանդ ոյն անմեղ էակն որոց յանցան-  
քը զիտ շատ սիրելն է զի որ և է ոէր՝ բաց ի քու-  
կինէդ , դժոխք է ինձ համար : Կը կարեկցիմ իրօք  
այդ հէքին վրայ որ ինձ բաղդակից եղաւ , բայց

կը խորշիմ այն բերնէն որ զիս իւր Տիգրանը կ'անուանէ : Եւ սակայն ամենայն ինչ իրաւոնք կուտայ իրեն զիս այնպէս անուանելու . հոգիս միայն կը բողոքէ և պիտի բողոքէ միշտ : Եկեղեցւոյն մէջ յուզմունքս շատ իսկ մատնեց զիս , և ի դուր կը ջանամ քօղարիկել իրմէ զիս գրաւող անտարբերութիւնը իւր անձին նկատմամբ : Երբ անոր արտասուքը կը տեսնեմ , կը գթամ ստուգիւ . բայց մատունքս այդ արտասուքը կը սրբեն , մինչ հոգիս կ'անիծէ զանոնք , Զքեզ ստանալու համար կարող էի ամեն բան դզրդել ու տասլալել , եւ սակայն ահա անդուժ բաղզը , կամ կին մի , սատան մի , յաղթահարեց , ոչնչացուց զիս :

Մայտա , իրրեւ վերջին չնորհք լսէ աղերանացս , և թող Տիգրանին որ ձայնդ հետին անգամ վայելէ , յետին անգամ չնորհքներդ տեսնէ , վայրիկ մի զքեզ իրենը կարծէ , և եթէ հարկ է սափրոդ առջեւ մեռնի : Դու բերնովդ ներումս չնորհէ . թոյլ տուր ինձ ցաւերս պատմել քեզ , և այն տաեն դու անձամբ կը դատես եթէ կարեկցութեանըդ արժանի չեմ , ինչպէս խնդրած զթութեանս զոր չնորհեցիր , զի հրեշտակ ես զոր , և հրեշտակը ներել զիտէ միշտ :

Մայտա , չնորհք կը հայցեմ զժբաղդի մի համար : Ո՞յլ տուր ինձ իրրեւ մեղաւոր ներկայանալ աշացդ առջեւ : Տիգրանը զօր պաշտեցիր , այնչափ տաելի եղաւ քեզ մինչեւ ի սպառ արտաքսել վայն առջեւէդ : Բոէ թէ կը զիջանիս որ տեսնեմ զքեզ , և անմիջապէս կուզամ , կը թոչիմ , վայրկեան մի

կեանք կը վայելեմ, յետոյ ամեն օր մահ կը ելու համար :



### Տիկին Սիրա առ. Մայտա

Ուրախ եմ որ կոմսին դաշտւստը գոնէ առժամանակեայ կերպիւ վերջ տուաւ մենակեցութեանդ, Ազգաց մեծութեան և փառաց, ինչպէս նաեւ անոնց անկումը պատրաստող պատճառներուն նըլկատմամբ ըրած խորհրդածութիւններդ ըստ բաւականի կը հաստատեն համոզումս թէ ազգին զարդացումն աշխատութեամբ ամեն յատկութիւններով կը կատարուի, մինչդեռ անոնց կործանումը մեղկութենէ և մոլութենէ կը հետեւի : Իսկ ինչ որ ազգաց կը պատկանի, նոյնպէս և ամեն անհատի քանի որ անհատական ոյժերու ամրողջութեամբ կը կազմուի ընկերային զօրութիւնը : Արդ կը հարցընեմ քեզ, Մայտա՛, ինչ օգուտ կը քաղես անգործունէութենէդ, և ո՞վ կը շահի կեանքէդ . ո՞րն է մտառցած ծառայութիւնդ առ ազգդ, առ մարդկութիւն որ կը ջնջէ ամենայն խոփր ընդ մէջ ժողովողոց : Ո՞րն է սփռիսած վիշտդ . ո՞ւր կը կեզրոնացնես մտացդ ձառապայթները . մէն մի մտաւոր կայծդ, որտիդ մէն մի բարախումը սահման-


ուած է միանալու մարդկային ձառապայթից եւ զգացման ամբողջութեան հետ :

Ժամանակ տուի քեզ որ ցաւերդ մեզմես . բայց եթէ ուզես երկար ժամանակ նոյն վիճակի մէջ ապրիլ , անկարող կըլլաս վերջը վերականգնելու , վասն զի չարն կարմատանայ , և ինչ որ հաստատ է արմատախիլ ընելը դժուար է : Աշտին բռնութեան տոջեւն որչափ խոնարհիս , այնքան կը բռնանայ վրադ : Խիզափսէ անոնց դէմ , և յաղթեզ կը հանդիսանաս : Բայց ըսէ ինձ , ով արդեօք երջանկութիւն խռոտացաւ քեզ երկրիս վրայ . ով կատարելապէս երջանիկ եղած է երրէք որպէս զի դուն ևս ըլլաս : Ամենէն վոքրէն մինչեւ առենէն մեծը ձանչեցին տառապանքը : Հանճարներն՝ որք մարդկութեան բարերարներն են՝ ապերախտութեան , բանտի , աքսորի և մահուան մասնուեցան : Գիտութեան և աշխատութեան այս անմահ մարտիրոսներն մեզ կուտալին լցու և կեանք , և իրենք իրր վոխարէն՝ մահ կընդունէին : Մենք կենաց ըմբիշներն ենք . ապան կամ անապան կը վիրաւորուինք՝ վերստին յուս կանգնելու և մրցելու ցորչափ մեզ ոյժ կը մնայ : Խրաւունք չունինք ըսելու . « Հօս կը վերջանայ իմ աշխատութիւնս . հօս՝ ասպարէզիս մէջ կանգ կաւենում , ոչ ևս կուզեմ յառաջ քայլել : » Աչ , իրաւունք չունիս , զի այդպէս վարուիլն՝ բարոյական անձնասպանութիւն մ'է , և սակայն անձնասպանութենէ կը խորշիս , որովհետեւ կը մտածես թէ իշխանութիւն չունիս քեզ ըընորհուած կեանքդ բնաջինչ ընելու ինքնին . բայց

բնաւ չես խիղճմտիր բարոյական , կենսական հիւթը տակաւ առ տակաւ տկարացնելով անդործութեամբ՝ անզգալի ինքնասպանութեան մատնըուելու . որ և է անձնասպանութեան քաջութիւնը , Փիղիդական թէ բարոյական , դատապարտելի քաջութիւն մ'է , վասն զի շատ տւելի յարգի է ապրիլ և մրցիլը քան թէ յուսահատական վայրկեանի մի մէջ մրրկալի կեանք մի վերջացնել , և կամ աստիճանաբար կենսական հիւթը փացնել : Կեանքը ճակատավայր մ'է . մարդիկ պատերազմողներն են . վիրաւոր զինւորն իրաւունք ունի՞ արդեօք խոյս տալու կոխւէն երբ վէրքը կերպիւ իւիք բժըշկուած է , և երբ կարող է այն վերսափն զէնք շարժել : Եթէ խոյս տայ , եպերելի դասալիք մ'է . կենաց դասալիքներն արդեօք նուազ եպերելի են : Զես զգար թէ մարդուս համար փառասիրութիւն մի կայ զինքը ճշմող դէպքերուն վերեւը բարձրանալ եւ ըսել . « Արհամարհեցի զանոնք , կանգուն կեցած եմ , եւ փոխանակ յաղթուելու յաղթող եմ . զի օդտակար եմ , զի կը դործեմ , զի մարդ եմ » :

Ս.յո խորհրդածութիւններս անշուշտ դուն ալ կ'ընէիր քեզ նման տառապող անձի մի . բայց դուն այն ասաիճան կենդանի մեռեալ եղերես որ կրտողութիւն չունիս զգալու քեզ նուաստութիւն բերող վիճակդ : Մտական և բարոյական հանդամանացդ անդործութեամբն օր աւուր կայլափոխուիս , կը խոնարհիս , բարոյական աստիճաններէ հետզհետէ վար կ'իջնես , և պիտի դայ օր մի , ուր անաս-

նոյ վիճակին մօտենալով՝ անսասուն – մարդու անձնաւութիւնը պիտի հանդիսանաս : Խոհ բանի կը ծառայէ քեզ բարձրութիւնդ , Ամայտա , երբ ընկճիս իրբ ամենատկար արարած :



### Մայտա առ. Տիկին Սիրա

Մի և նոյն անիրաւութեամբ կը մեղաղրես զիս թէ ակամայ լուսւթեանս և թէ բռնի անգործութեանս համար . ուշ գիր խօսքերուս , և ըսէ ապա եթէ յանձաւոր երեւամ քեզ :

Կոմսը մեկնեցաւ երեք ամիս հիւրս ըլլալէն վերջը : Հարկաւոր կարգադրութիւնները պիտի ընէ որպէս զի գայ Պօլիս հաստատուի և իմ վրայ հակէ իրրեւ եզրայր անձնուէր : Գեղեցիկ խորհուրդներ են ասմաք ստուդիւ և արժանի անոր վեհ սրտին : Բայց կը մնայ գիտնալ թէ այդ դիտաւորութիւններն արդեօք պիտի կրնան զործաղրուիլ . զի կեսնքս մաշող ախտին դիմաղրելու համար թէեւ մեծ են ջանքս և արիութիւնս , սակայն օր աւուր անողոք հիւանդութեամբ մի ակարանալս կ'զգամ : Կոմսն արդէն նշմարեց վիճակս , եւ յօրդորեց զիս բարեխառն կիմայի մը ներքեւ անցունել ձմեռուան եղանակը , խոստանալով ինձ ընկերանալ ամենուրեք : Եակեւ առաջարկեց ինձ իւր հարստութեան

մասնակցել զիս , սինդելով թէ եղբայր մ'իրաւունք ունի այսպիսի նուէր մ'ընելու քրոջ մի որ կրցաւ զոհել մանաւանդ իւր վանական խաղաղութիւնը : Մերժեցի բացարձակապէս այդպիսի առաջարկ մի , և իւր թախանձանքն ամենեւին չփոխեց որոշում : Այս մերժումէս կը նեղանար այն , ինչպէս ես ալ իւր բազմիցս կրկնուած աղաշանքէն : Իրաւ է որ այդ նոր ապացոյց մի էր իւր անսպառ վեհութեան :

Երբ Կոմսը բաժնուեցաւ , չարաշար յուզուեցայ , որով տկարութիւնս ալ սաստկացաւ : Կ'ըմբռնես անշուշտ թէ անկարելի էր անտարբեր աչօք նայիլ այն դատարկութեան զոր անզոյգ բարեկամ մի լեցուցած էր երեք ամիսէ ի վեր : Առանձին կը մըտախոհէի երբ Լեւոնին մօտենալը տեսայ , միանգամայն իւր դէմքին անզսպելի յուզմունքը :

— Ի՞նչ ունիս Լեւոն , սաստիկ բորբոքած կերեւաս , ըսի :

— Վախնամ , սպատասխանեց , որ նորանոր աղետից պիտի ենթարկուինք , զի Հերիգան բանտէն փախոչելու միջոց զտեր է : Իւր պահապանը կը սկնդէ միայն այդ փախատեան գործակից չըլլալը եւ ոչ այլ ինչ , և այդ կինը գտնելու ջանքերն ապարդիւն մնացին մինչեւ հիմայ : Այդ ժանտ կինն որ բնաւ շխզմտեցաւ այնչափ անօրէնութիւններ ընելու , արդ ի՞նչ բանի կարող չէ երբ մեծ վրէժ մ'ունի լուծելու : Գիտես արդէն որ Պետրոս Յ. . . մահուամբը առուժեց իւր սէրն . իսկ մենք ինչով արդեօք պիտի տուժենք այդ կնոջ ատելութիւնը :

Այս խօսքերն ահով սպաշարեցին դիս : Եթէ

ապահով ըլլայի թէ ես պիտի ըլլամ Հերիգայի վրէժ-  
խնդրութեան նահատակը , բոլորովին անհոգ կը  
կենացի : Բայց մինչեւ ցարդ մահուանս չփափաքե-  
ցաւ , այլ իւր սլաքները սիրելեացս ուղղելով ուզեց  
վիրաւորել զիս : Կրնամմ աներկիւղ ապրիլ Յուլիանէիս  
նկատմամբ . կրնամմ Տիգրանս յապահովի համարիլ :  
Թունս սարսափելի երազներով յուղուած է , օրերս  
ալ մտատանջութեամբ : Թուի ինձ տեսնել նորանոր  
աղէտս զոր Հերիգայի սրտմտութիւնը մեզ կը պատ-  
րաստէ մթութեան մէջ : Կը կարծեմ անոր սպառ-  
նալից և հրաբորքոք աչքին հանդիսակիլ . կը կարծեմ  
թէ մէն մի վայրկեան մահաբեր տիպաց ծնունդ  
պիտի տայ , և ամեն սահած վայրկեան չկրնար զիս  
ապահովել իւր յաջորդին նկատմամբ : Դժբաղդ  
դէսք մի՝ մարդը կ'սպաննէ մէկ հարուածով . բայց  
մտատանջութիւնը յամրաբար կը մեռցնէ՝ մէն մի  
հարուածին դառնութիւնը զգացնելով :

Արդ , սիրելիս , ըսէ , միթէ արիութիւնն եւ  
յօժարամտութիւնը կը բաւեն յաղթելու իրաւացի  
վախերուս եւ վշառութեանս : Ի՞նչպէս կուզես որ  
խորհիմ , գործեմ երբ միտքս անընդհատ Յուլիա-  
նէս Տիգրանին կը վազէ , երբ ամեն ձայն , ամեն  
շարժում զիս կ'ահաբեկէ , և աչքս ամենուն երեսն  
անհանդիստ կերպով կը նայի գոյժ մ'իմանալու եր-  
կիւղով : Ազ Աստուած իմ , քանի մ'օրուան կեանքի  
համար որչափի տառապալանք :


Մայտա առ. Տիգրան

Զիս տեսնելով անկարելի է, Տիգրան . ուրիշին  
պահէ պարզեղ զոր կ'ուզես ինձ չնորհել . օրինաւոր  
իրաւունքներ ունի նա քու վրադ . անոր ինչ փոյթ  
քու սխալմունքդ : Կը հաստատես խեղճ ամուսնոյդ  
նկատմամբ անտարբերութիւնդ, բայց դիս տեսնելով  
արդեօք կը յուսաս թեթեւցնել զայդ : Մեր կոր-  
սուած երանութեան գաղափարը վերանորոգելով  
ներկայն առաւել կը ծանրացնենք : Իրաւունք ունիմ  
շահելու սիրտ մ'որ ոչ եւս իմս է . և միթէ իրաւացի  
իշտամբանաց չեմ ենթարկուիր այդ սիրտը շահիլ  
ուզելովս , նաեւ աւելցնելովս ամուսնոյդ դժբաղ-  
դութիւնն որ ըստ ինքեան շատ մեծ է արդէն :  
Ո՞վ կրնաց ճանաչել զքեզ առանց սիրելոյ , և ինչ  
սոսկալի վիճակ է սիրելն առանց սիրուելու :

Ո՛չ, Տիգրան, պէտք չէ որ տեսնուինք վերստին .  
Ճեր վոխադարձ վիճակն իսկ այս զոհողութիւնը կը  
պահանջէ : Զիրար տեսնելէ ետք բաժանումն առա-  
ւել եւս անհանդ ուրժելի կ'ըլլայ : Լսել ձայնդ ,  
տեսնել կերպարանքդ , վայրիկ մի յիս ամփոփել  
աշխարհս եւ ապա ամենայն ինչ կորսնցնել . ո՛չ ,  
ո՛չ , անկարող եմ այդսկիսի փորձի մի տոկալու : Ո՞վ  
տարաբաղդ Մայտա , ինչ իրաւամբ քուկդ պիտի  
համարիս ուրիշին սուրբ ստացուածքը . նոյն իսկ  
վայրկենի մի համար շունիմ այդ իրաւունքը , թէն  
այդ միակ վայրկենին համար կեանքս կը զոհէի :

Ո՞չ, Տիգրան, ոչ եւս պիտի տեսնես զիս : Հեռի  
փախչինք իրարմէ , թէեւ մեր սիրտերն իրարու  
մօտենալու ձկտին անդադար : Չեմ ուզեր մատնել  
խիղճս և պարտքս , այլ մահուան ժամանակ կուզեմ  
գոնէ հանդարտ խղճով միոնիլ , զի այս պիտի  
ըլլայ այն միակ միսիթարութիւնը զոր հետո գե-  
րեզման պիտի տանիմ : Դուն անկարող ես այս  
միսիթարութիւնն ինձմէ յափշտակելու . եւ եթէ  
կարող ըլլացիր անգամ , ես քեզմէ խոյս կը տայի :  
Սրտիս դէմ մրցելու համար այսպիսի վայրագ կա-  
րողութիւն մի կ'ունենայի :

Մնաս բարեաւ , Տիգրան . . . . :



### Տիկին Սիրա առ. Մայսա

Արշափ յուզմունք , որչափ փոթորիկ շուրջդ կ'ո-  
րոտան՝ զքեզ ուժաթափ ընելով : Հանդուրժէ հրա-  
րորրոք երեւակայութեանդ և տխուր պատկերներով  
մի տանջեր միտքդ : Լեւոնին ընկերական վիճակին  
բարձր ազդեցութեամբն կը յաջողիք անշուշտ շուտով  
ձերբակալելու այդ անզգամ կին՝ տուանց ժամանակ  
տալու որ ձեզ կարենայ վնասել :

Արշափ փափաքելի էր որ կարենայիր Պօլսէն քիչ  
մի ժամանակ հեռանալ , հոս գայիր ի Քորքու ,

ձմեռն անցունէիր յօդուտ առողջութեանդ և յանդորրութիւն մտացդ : Բայց դիւրաւ կ'ըմբունեմ թէ մայրենի սիրադ չկրնար հեռանալ զաւկին քովին երբ զայն վտանգի ենթարկուած կը համարի : Անչ միսիթարութիւն սիրա ըլլար տուանձնութեանո մէջ գքեզ վայելել , սփոփել և քեզմով սփոփուիլ : Երանգ :

Այս միջոցիս նոր ծանօթներ ունեցայ : Տաճիկ մէկ ճանշորս , որոյ չնորհիւ ժամանակաւ կարգադրեցաւ մի կնճոռտ գործո , անձնական թեթեւ տկարութեան մի պատճառաւ՝ առ ժամանակեաց կերպիւ հոս հաստատուեցաւ և ինձ դրացի եղաւ : Երկու գեղեցիկ կիներ ունի , որոց մին բնութեան հրաշալիք մ'է : Երբէք հասակի այսքան կատարելութիւն , դէմքի այսքան գեղեցիկ գոյն , և նայուածքի այսքան կենդանութիւն չի տեսած : Խըր շարժմանց մէջ գոռողութեամբ խսուն վսեմութիւն մի կայ , որ առաւել թագուհի մի կը յիշեցնէ քանթէ փափուկ կին մի . բաւական յզկուն միտք մ'ալ ունի , որով իւր ընկերութիւնն ախորժեիր եղածէ ինձ :

Այս գեղանի կինն ամուսին մ'ունի եղեր որոյ նախանձուն ոլորմելի նահատակն եղած է ինքը : Անկարող ըլլալով դիմանալու հանապաղօրեայ մարտիրոսութեան , բարեկամի մ'օզնութեամբ խոյտուեր է ամուսնական յարկին , նոյն խակ այն օրն երբ ամուսինը սփաշտօնով հեռաւոր երկիր մի կ'երթար և դիմքը կը դատապարտէր իւր հետն երթալու : Բարեկամին ձեռամբ օթեւան մի դտած

էր այս տաճիկ ծանօթիս տունը , ուր իբրեւ ափ-  
րուհի կը գահակալէր իւր եղական գեղեցկութեան  
շնորհիւ :

Այս է ահա իւր կենաց պատմութիւնը :

Խակայն հաստատեցի թէ այս երկու նախարձոր-  
դաց հասակաւորը նախանձարեկ կը հիւծի՝ նկատե-  
լով թէ նորեկ կինը կատարելապէս կ'իշխէ ամուսոյն  
վրայ . և բնաւ չպիտի զարմանամ՝ եթէ յանկարծ  
իմանամ որ մի՝ թէ տունէն դուրս հանած են այդ  
խեղճ զոհը , որոյ գեղն ու շնորհքը նսեմացած  
կ'երեւան մտատանջութեան ազդմամբ , մինչդեռ  
տոփն աււաւել եւս չքեզացած է յաղթանակաւը :

Չկայ բան մ'որ այնքան հակառակ ըլլայ ըն-  
կերական օրինաց որքան բազմակնութիւնն՝ որ  
ոչ այլ ինչ կը նշանակէ բայց եթէ սիրտ մի որ  
բազմաթիւ կանանց մէջ մրցման տուարկայ կ'ըլլայ :  
Ընտանեկան յարկին երջանկութիւնն երկու հոգի-  
ներու մէջ եղած ոերտ յարաբերութեամբը կը կազ-  
մուի , այսինքն այն լոին դաշնադրութեան մէջ  
իրարու վշտաց եւ ուրախութեանց մասնակցելով՝  
մի և նոյն կեանքով , շոհերով , ձիռումներով առ-  
բելով , եւ իրենց զաւակներով վերածնելով : Ի՞նչ  
վստահութիւն կրնայ ունենալ կին մի որ հակառա-  
կորդի իշխանութենէն կը վախնայ անընդհատ , և  
որ յամուսինն իւր կը գտնէ ոչ թէ ընկեր՝ այլ աէր  
մի որոյ քմահաճութեանց պարտական է համա-  
կերոյիլ : Մայր է , բայց որիշ մի նոյնչափ մոյր է  
նոյն յարկին ներքեւ : Սիրտն , անձնասիրտութիւնը ,  
շահերն , ամենայն ինչ վտանգի ենթարկուած է ,

և իւր կեանքը յարատեւ փոթորիկ մ'է : Այդ խեղճ  
կնոջմէ սէր , հալատակութիւն և անձնութիւն կը խնդրուին , բայց ինչ փոխարինութեամբ . առ-  
օրեայ շնորհներն են ամենայն փոխարինութիւն :

Խոկ ինչ կրնայ ըլլալ անձնութիւնն այն սրր-  
տին որ սիրոյ վարձատրութեան չապասեր : Միթէ  
սիրտն իւր օրէնքը չունի : Ով կը լսէ անոր մեղ-  
մածայն մոնչումներն և թագուն ապստամբութիւն-  
ներն . ով կը տեսնէ անոր յուսահատութիւններն  
և զրէժխնդրութիւնները : Լութեան մէջ խաղա-  
ղութիւն կ'ենթադրուի . բայց լեռն՝ որ յինքն հրա-  
բղխային գործունէութիւն ունի՝ ինչ գուրս կուտայ  
երբ ի ներքուստ հրային ալիքները կ'արծարծէ :  
Ինչ կրնան ըլլալ այն զգացումներն որք հակառա-  
կորդի անընդհատ ներկայութենէն ջնջուած , կամ  
բորբոքուած , կամ դառնացած են : Եթէ կինը կը  
սիրէ այս պայմաններով՝ իւր կեանքը մշտատեւ  
մարտիրոսութիւն մ'է : Խոկ եթէ չսիրեր , շարունակ  
զգուանք , հանապազօրեայ արուեստ , մեքենայու-  
թիւն մ'է հարստութիւն դիզելու՝ իւր տէրը կողոպ-  
տելով և այսպէս ապագան ապահովելով , ըսել է  
նուաստ առուտուր մ'է այն : Բազմակնութիւնը կա-  
նանց նուաստութեան բարձրագոյն կէտն է , մար-  
տիրոսական վիճակ մ'է : Միրոյ չէութիւնն է ,  
ընտանեկան անիշխանութիւնն է : Մէն մի նախան-  
ձորդ մայր իւր զաւակին վրայ կ'ուզէ ամփոփել  
հայրական շնորհներն , հետեւաբար ատելութիւնը  
կը սպլոդի զանազան մայրերէ ծնած եղբարց մէջ .  
ասոնք իւսարու թշնամի կը դառնան , հայրենի հար-


կը հակառակութեան և շարութեան բոյն մի կը հանդիսանայ , զոր տարրեր նպատակներ ևս քան վես կը թունաւորեն :

Ճանչւորիս նոր հարսն այնքան ապահով է իւր իշխանութեանց վրայ որ կարծես թէ կ'արհամարհէ որ և է նախանձորդ : Բայց որքան ալ մեծ ըլլայ ազգեցութիւնը , կրնայ անվրդով նայիլ ապագային , կրնայ հաւաստի ըլլալ թէ ուրիշ չնորհալի արարած մի իւր պատճառած վիշտերն իրեն չողիտի վերադարձնէ այնպէս :

Անցեալները դրացւոյս հետ կը խօսէի բազմակնութենէ արտադրուած ապօրինաւոր վիճակին վրայ : Թէ և բաւական լուրջ մարդ մ'է , բայց դըժուարութիւն կը կրէր ըսածս հասկնալու : Այնպէս կը կարծեր թէ իւր առաջին կինը շատ երջանիկ է քանի որ կենաց ամեն հաճոցքը կը վայելէ , և թէ բնաւ իւր անդորրութիւնը չփրդովիր այն առաւելութենէն որով միւսը կը պատուէր : « Ի՞նչ կը պակսի անոր , կըսէր շարունակ » : Կան շատ մարդիկ որք կը կարծեն թէ կնոջ բարեբաստութիւնը անթերի է երբ կենաց նիւթական չնորհներն կը վայելէ . չեն ըմբռներ անոնք , կամ չեն ուզեր ըմբռունել , թէ կինը սիրտ մ'ունի և թէ անով երջանիկ է կամ ապերջանիկ : Որքան սակաւաթիւ ևն այս ձշմարտութիւնը հասկցողները :

Գեղաշնորհ տիկնոջ հետ ամեն անգամ խօսքդ լընենք , և շատ մեծ հաճութիւն կը յայտնէ երբ քեզմով կ'զբաղինք : Երեւակայէ թէ որպիսի ուրախութիւն է ինձ զբաղիլ սիրելի նիւթով մի : Ոչինչ

այնքան միսիթարական է բացակայութեան ժամանակ որքան խօսիլն այն անձանց վրայ որք սրբազան են մեղի համար . կարծես թէ տարակայութեան դառնութիւնը մասսամբ իւիք կը մեղի , և մասնաւոր համակրութիւն կընծայենք այն անձանց որոնց հետ նոյն ախորժելի առարկայով կրնանք մեր ժամերն անցնել : Այս շքնարկ կինը գուցէ ոչ այնչափ հաճելի ըլլար ինձ եթէ այնքան համակիր ուշադրութեամբ ունկնդիր ըլլար քեզ վերաբերող պատմութեանց : Թերեւս չափազանցութիւն կայ այն հետաքրքրութեան մէջ զոր ցոյց կուտայ քու նկատմամբ , և թէ այդ ընթացքին չարժառիթն է ինձ սիրելի ըլլալու բաղձանքը , զի հասկցայ որ խիստ խորագէտ է նա : Զգիտեմ թէ ընկերութիւնը վայելելու , թէ ատելի նախանձորդէն հեռի մնալու փափաքն է որ այնչափ տունս յաճախելու կը դրդէ զինքը :



### Մայտա առ. Տիկին Սիրա

Այս տարակուսելի պարագայներու մէջ ոչ երբէք յանձնառու կըլլամ Յուլիանէէս բաժնուելու . երեւակայութեան հրեշներն աւելի սոսկավիթիսար կը հանդիսանան հեռաւորութեան ազդմամբ , որով չարունակ ինձ պիտի թուի թէ՝ ազդիկս դաւաճա-

նութեան նահատակուած է : Գիտեմ թէ ձանրորդութիւնը , նա մանաւանդ անձկալի ընկերութիւնդ ինձ խիստ նպասաւոր կըլլար քանի որ առողջութիւնս սաստիկ խանգարեալ է : Արշափ փոխուած եմ . Եթէ զիտնայիր , կը ցաւէիր անշուշտ , և քու գեղանիդ . բնաւ վախ չէր զգար ինձմէ յաղթուելու իւր հրապոյրներու մասին՝ եթէ հոդ ուղեւորէի . հետեւապէս զիս ալ կը մասնակցէր զուցէ այն համակրութեան զոր աներկրայ եմ թէ նըուիրած է քեզ արդէն : Բայց անկեղծօրէն կը խոստովանիմ թէ բազզէն հալածուած միւս էակին նըկատմամբ մասնաւոր զգացում մի ունիմ , զի կ'զգամ թէ ամեն տարաբախաներն իմ անծանօթ քոյրերս են , որոնց հետ կը միանամ տառապանաց կապով : Անոնց արտասուաց մէջ իմս կը նշմարեմ , հառաշանաց մէջն ալ իմս կը լսեմ :

Հերիգան գտնելու ջանադրութիւններն ապարդիւն մնացին մինչեւ հիմա . անոր յիշատակը կարծես թէ քսամնելի ուրուականի մի զարհուրելի պատկերն է որ գիշեր ու ցորեկ զիս կը սլահպանէ անընդհատ : Երբ մութէն կը սլաշարուիմ , թուի ինձ թէ ոսոխիս բերնէն բոցեր կը ժայթքեն , զիս տանտէական գեհենի մի լոյսերով կը լուսաւորեն ու սուսերակիր ձեւամբ ահռելի ժայիտով սիրելեացա կսպառնաց ան : Առոկումով կը համակուիմ , և մաղերս գլխուս վերեւ կը ցցուին :

Քանիցս քունիս մէջ կարծեցի տեսնել աղջկանա Հերիգայի ճնշման ներքեւ մաքասիլը և յուսահատօրէն աղաղակելը : Դիշեր մի մանաւանդ թուե-

յաւ ինձ թէ՝ Տիգրանին մօտ նստած էի և հիաց-  
մամբ երեսը կը նայէի անմռունչ, երբ յանկարծ  
Ներիգա վրաս յարձակեցաւ և կուրծքս սուր մի  
մխեց : Արթնցայ ահարեկ, և գթութիւն խնդրեցի  
Տիգրանէն, բայց նա ոչ ևս էր :

Այս անգութ տեսարանէն չգիտեմ ինչու օր  
աւուր կը սաստկանայ սրախս մէջ փոխանակ ջնջը-  
ռելու, և անցեալ ցաւերուս վրայ նոր վիշտեր կա-  
ւելցնէ : Երկու սիրտեր ենք, որք կենաց ովկիանո-  
սին վրայ կը թափառին և զոր հակառակ հողմեր  
իրարմէ հեռի կը մղեն : Ի զուր օրերն և գիշեր-  
ներն իրարու կը յաջորդեն . ոշինչ կը մօտեցնէ ըզ-  
մեզ . վիհը մեր երկուքին միջւն է . մահը միայն  
կրնայ լեցնել զայն : Մահն ուրեմն հետաջինջ պիտի  
ընէ անջնջելի պատկեր մի, մահը միայն սիրոյ նը-  
ռուաճողը սիրտի ըլլայ երբ ոչ ժամանակն և ոչ հե-  
ռաւորութիւնը կրցան յաղթահարել զայն : Տիգ-  
րան . . . հառանչանքս անեզրութեան մէջ կը փա-  
րատի առանց սիրոյ արձագանք մի տալու : Ի զուր  
շուրջու կը նայիմ, ի զուր ուշ կը գնեմ, ոշինչ, ո-  
շինչ . . . Յուսահատութիւնը առջեւս կը կանգնի  
երբ անգթութեան կմախքը, և անագորոյն խնդու-  
թեամբ կը ներկայէ պատկեր մի զոր կը յափշտակէ  
երբ հոգեւին կը բաղձամ անոր մօտենալ :

Կեանք, կեանք, ինչ խորհրդաւոր բառ . ինչ  
աշխարհ թշուառութեան, արտասուաց, դառն հեշ-  
տութեանց, խաւարի, աղօտ լուսոյ : Խնչ հիւս  
նախանձու, նենդութեան և կեղծաւորութեան,  
ասոնք իրբ հրալեռնային լաւաներ ամենուրեք կը

ծաւալին անդիմադրելի հոսանքով, եւ ամեն ինչ կայրեն, կը տապալեն, կը քանդեն, բացի ձշմարտութենէն և առաքինութենէն, երկու ահաւոր, ահազին և լուսեղէն սիւներ որք կը կանգնին և կը դիմադրեն իրը նեցուկ Յաւիտենականին . . . :

Արարչագործութիւնն ընդհանուր սիրոյ ներդաշնակութեան վրայ հիմնուած կ'երեւայ. ահա արեւը բոլորովին լոյս է, ծաղիկը բոյր, առուակը մրմունջ : Արեւը կը բեղմնաւորէ տունկը, տունկը կը պատսպարէ թռչունը, և այս թեւաւոր երաժիշտն ալ իւր թայլայլիկներով անտառներուն նուիրական լուութիւնը կ'ոգեւորէ, եւ ապա առուակին մէջ թռչտելով եւ անոր վճիռ ջրոյ կաթիլները խմելով իւր ծարաւը կ'ամոքէ : Մարդս միայն բացառութիւն մ'է ուրեմն ընդհանուր օրինաց . նա միայն սուրը կը հնարէ, սիրաերը կը յօշտէ, երկաթը կը սրէ, արիւնը կը թափէ եւ արտասուաց հետք կը թողու միայն՝ ուր որ կ'երեւայ և կ'անցնի ան : Մարդը միայն չարութեան ոգին է ուրեմն, և սակայն սիրտ մ'ունի սիրելու և հոգի մի զքեղ պաշտելու, ովք Աստուած իմ :

Սէր երկնային, աղբիւր աստուածային որով ամենայն ինչ կը մաքրուի, և ուսկէ առաքինութիւնը գուրս կելնէ յաղթական : Սէր, աղբիւր արտասուացս : Սէր, շնորհ երկնապարզեւ, լուսաւորէ միշտ մթահար հոգիս . կարձատեւ օրերուս փարոսն եղիք : Ո՞վ Սէր, դուն ի կորուստ մատնեցիր սիրտս, այլ սակայն նուիրական ես միշտ ինձ համար . . . ,

Սիրելիուդ իմ, ներէ հոգւոյս զեղման . զացէ

վերջին աղաղակն է առ սէրն , առ քեզ , առ Աստ-  
ուած : Վզգացի թէ հոգիս իւր բեսին ներքեւ կը  
ձնշուի . ա՞յ , ուզեցի սփափել զայն յուսահատական  
ձիչ մ'արձակելով :



### Տիգրան առ. Մայտա

X Մի և նոյն օրն առաւ ինձմէ կինս և զաւակու :  
մայրը մեռաւ՝ զաւկին կեանք տալէն վերջ : Դրսու-  
րիկս Մայտա պիտի անուանէի . բայց երկու ժամի  
չափ միայն հայր եղայ : Մանկան մահուան յաջորդեց  
մօրը մահը :

Երբ տարաբաղդ կինն յետին վայրկեաններուն  
հասաւ , ձեռքս իւր ձեռաց մէջ բոնելով ներումն կը  
խնդրէր՝ ակամայ իմ դժբաղդութեան պատճառ ըլ-  
լալուն : Եկեղեցւոյն դէպքէն ի վեր դազան մի ըլ-  
լալ զգացի , որովհետեւ անկարող եղայ ծածկել  
այն կրակը որ կը լափէր զիս :

Վըմբռնէի ամբողջ գառնութիւնն որով համակ-  
ուած պիտի ըլլար այդ անձնուէր հոգին , որով ան-  
կեղծ զոշում մի կ'զգացի . զորովագութ խնամօք կը  
ջանապի մուցնել աղետալի անցեալն : Ա՛հ , Մայտա ,  
այլոց դժբաղդութեան համար ծնած եմ արդեօք :  
Այդ խեղծ արարածը խնդրեց որ նոյն զագալն և  
նոյն գերեզմանն ունենաց իւր զաւկին հետ միա-


տեղ : « Եթէ երկու ժամ մայր եղայ երկրիս վրայ ,  
ըստ , դոնէ միշտ մայր մնամ յաւիտենականութեան  
մէջ » : Ա երջին սիրալիր ողջոյնը տալով ինձ՝ թեւե-  
րուս մէջ աւանդեց յետին շունջը :

Խղճէս չարաչար տանջուելով անշարժ կը կենացի  
այդ թշուառ արարածին անկենդան մարմնոյն քով ,  
և ցաւելով կը նկատէի այնչափ գեղեցկութեանց և  
երիտասարդութեան աւերակները : Գուցէ անտար-  
բերութիւնս եղաւ անոր մահուան ոլատնառ . դուցէ  
իւր մօրը սրտին մէջ անբուժելի վէրք մի բացի :  
Դժբաղդ մայրն զիտէր արդեօք թէ աղջիկը հարս  
ըրած ժամանակ մահուան զիրկը կը յանձնէր զայն :  
Ահ , Մայտա , Մայտա , որքան արտասուք թափել  
տուած եմ կենացս մէջ :

Ուսենաց հովանուոյն ներքեւ կը ննջէ մայրն իւր  
մանկիլիին հետ , ու տիրաղգեցիկ տերեւոց մըր-  
մունջն անոնց յաւիտենական քունը կ'օրօրէ :

Սյատիսի հարուած մի , այսչափ խիզճ կը բաւէր  
կեանքս թունաւորելու՝ եթէ պաշտելի յիշատակդ  
զիս չսփոփէր : Ազատ եմ ուրեմն , եւ երկու զե-  
րեղմաններու վրայ կոխելով առ քեզ կը համիմ :  
Իմս ես ուրեմն , ոչ եւս անողոք բերանդ կ'արտաքսէ  
զիս . ոչ՝ երազ չէ , իմս ես , Մայտա : Կը վերա-  
դարձնեմ քեզ սիրտ մի որ քուկդ եղած է միշտ , և  
որուն վրայ ճակատագրին հարուածները բնաւ ազ-  
դեցութիւն չունեցան : Սիրովս հետաջինջ սիրտի  
ընկմ այն վիշտերը զօր քեզ պատճառեցի : Զդիտեմ  
թէ արթուրն եմ թէ երազի խաղալիկ : Քիչ ժա-  
մանակուան մէջ սիրտի տեսնեմ զքեզ վերտիսն .

բայց ժամերն որքան յամրապէս կը սահին . կարծես թէ ժամանակն անշարժ կեցած է անեզրութեան մէջ : Մէն մի վայրկեան , զոր քեզմէ հեռի կ'անցունեմ , երջանկութենէս կողոպառած թանկագին վայրկեան մ'է : Ով որ ինձ չափ հարստահարեցաւ բազդէն , իրաւունք ունի վերջապէս անորժափախն արժանի ըլլալու :



### Տիկին Սիրա առ. Մայտա

Այնպիսի չքնաղ մարմին մի բնչալէս կրնար այնքան սեւ հոգի մի պարունակել : Գեղանի դրացիս յաղթահար հակառակորդի ներկայութեան անգամ չուզելով հանդուրժել՝ ամուսնական յարկէն դուրս հանել տուաւ : Նախանձու այս խեղճ նահատակը լուսութեան և առանձնութեան մէջ կողբայ անձնուէր ամուսնոյ մի կորուստը : Իրաւ է որ սա իւր կնոջ պիտոյքը կը հոգայ , սակայն բնաւ այցելութեան չերթար իրեն , և իւր տիրուհւոյն շղթայից մէջ կը գտնայ երջանկութիւնը , ինչպէս անոր կամաց հըպատակելով կը գտնէ նաեւ իւր փառքը :

Այս բռնաւոր կինը հարկադրեց ամուսինը վերջնական որոշում ընելու իւր և հակառակորդին նըկատմամբ , զի իւր իշխանութեան բարձրութիւնը կը ձանչէր , և կը բաղձար կատարելապէս տի-

բապետել՝ միւսին արտասուքով իւր յաղթանակը ամրապնդելով :

Զանացի խղճակի կնոջ վիճակը նկարագրել իւր ամուսնոյն, և զայն ի գութ շարժել, բայց ի զուր : Զարմանալի անտարբերութեամբ նա պատասխանեց թէ կինն որ և է կարօտութիւն չունէր, և թէ երջանիկ պիտի ըլլար ինչպէս յանցելումն : Ի՞նչ կրնացի ըսել երբ կնոջ գոհունակութիւնը նիւթական կարգ մի պիտոցից կատարման վրայ կը կայացնէ : Անշուշտ պիտի զղջայ օր մի սրտին տկարութեան վրայ, բայց ժամանակն անցած պիտի ըլլայ :

Այն չնորհալի արարածն, որ գեղեցկութեամբն ու նրբութեամբն այնքան զարմանքս գրաւած էր, կերպիւ իւիք հակակրութիւն կը ներշնչէ ինձ արդ, զի լաւ դատեցի զինքը խօսքէն եւ գործքէն, եւ համոզուած եմ որ ամենայն անգթութեամբ որ և է միջոցի կրնայ զիմել նախատակին հասնելու համար :



### Մայտա առ. Տիկին Սիրա

X Տիգրանս եկաւ, իմս է վերջապէս : Օր մի քարափանց վրայ նստած էի, կը նայէի ծովուն . կարծէս թէ յուսոց ալիքներ կը թաւալէր, և բոլոր բնութիւնն իմ բարեբաստութիւնս կը տօնէր, այնչափ ամենայն ինչ գեղեցիկ էր եւ հոգեզուարձ :

Յանկարծ թռչուն մի սկսաւ դայլացլել, և ես մը-  
տիկ կ'ընէի զմայլմամբ, մերթ ճիշ մի կ'արձակէր  
և անմիջապէս կը լուէր . և մերթ ներդաշնակու-  
թեան մարգարիտներ կը տեղացնէր : Յանկարծ ու-  
րիշ ճայն մի պատասխանեց անոր . և երկուքին մէջ  
այնպիսի սրտագին ճայնակցութիւն մ'սկսաւ որ  
անկարելի էր չհետեւցնել թէ երկու սիրելի էակաց  
զիջումն էր այն : Թռչոյն՝ ինչպէս մարդուն համար  
նոցն է ուրախութեան և սիրոց վանկը : Թշուառու-  
թեան՝ ինչպէս գոհունակութեան մէջ որ և է ընկեր  
մթիթարութիւն մ'է . առաջին պարագային մէջ  
կարծես թէ ցաւը կ'ափոփի , իսկ երկրորդին՝ կը  
կրկնապատկուի : Կը նայէի ուրեմն շորս կողմ այդ  
սիրոց բոյնը գտնելու համար , երբ յանկարծ տե-  
սաց զջիգրան որ թեւարձակ դէպ ինձ կը սուրար ,  
ճիշ մ'արձակեցի , աչերս աղօտացան , կարծեցի  
թէ ուրախութիւնը զիս պիտի սպաննէր :

« Մայտա , Մայտա , ըստաւ , դու ես ստուգա-  
պէս , աչերս չեն խարեր զիս , խօսէ որ ճայնդ  
լուեմ » : Տիգրան , պատասխանեցի , երջանկութիւնս  
կը ձնչէ զիս :

« Տարաբաղդ արարած , միջեց , յայտնի է որ  
ստատիկ տագնապած ես . բայց վիշտերդ առաւել  
մելամաղձային գեղեցկութիւն մի տուած են քեզ » :

Իւր դէմքին վրայ ալ ցաւոց հետքը զրոշմուած  
կ'երեւար : Նա ուզեց անմիջապէս փութացնել մեր  
ամուսնութիւնը . բայց ես ընդդիմացայ ի սկսախ  
իւր վախճանեալ ամուսնոյն : « Միշտ մեծ և յամե-  
նայնի մեծ » , ըստաւ :

Գուցէ դատապարտես զիս , սիրելիս , նկատելով  
թէ մտատանջութեան պատճառներ կ'որոնեմ : բայց  
ստոյգ է որ կը մտածեմ թէ գուցէ ուրիշն մահ-  
ուան պատճառ եղայ , և թէ անոր երիատասարդու-  
թեան աշնահար ծաղիկներովն իմ երջանկութիւնս  
կը հիւսեմ : Արդեօք այն հէք արարտն անիծեց  
զիս եթէ ոչ բերնով գէթ սրտիս . եւ միթէ իրա-  
ւունք չունէր անիծք կարդալու որոյ վրայ որ Տիգ-  
րանի մի սիրտը կը յափշտակէր իրմէ : Բայց այս  
մտածութիւնը սրտիս գոհունակութիւնը շխուզիք .  
միայն թէ իրրեւ թեթեւ ամալ պայծառ երկնիցս  
արեւը սակաւ ինչ կազօտացնէ : Թուի ինձ թէ եր-  
բէք տագնապ չկրեցի , այնչափ ջնջուած է յիս ցաւի  
ամեն յիշատակ : Կարծես թէ հողիս յարատեւ  
նուագ մ'է , որոյ վերջին հնչիւնը յաւիտենակա-  
նութեան գոզին մէջ պիտի դադրի : Մ'հ , որչափ  
սիրելի է կեանքն երբ սիրտը գոհունակութեամբ լի  
է : Տիգրան Լեւոնին հիւր եղած է , բայց գրեթէ  
բոլոր վայրկեանները հետո կ'անցունէ : Բնու մեր  
տիսուր անցելոյն յիշատակութիւնը չենք ըներ . մի-  
այն յուսալից ապագային կը ժպտինք : Կարծես թէ  
կը վերածնիմ , և կը փափաքէի յաւիտենականու-  
թիւն մ'ունենալ Տիգրանս պաշտելու համար : Թե-  
թեւ հազ մը կը տանջէ զիս , և ամեն անդամ որ  
հազամ , ահաբեկ ինձ կը նայի նա , և « Խեղճ զա-  
ւակս » կը մնջէ տիսրագին : Երբեմն կը կարծէի  
թէ կեանքը խոյս կուտար ինձմէ , մինչդես արդ  
բոլորովին զօրութիւն և առողջութիւն եմ . առրիւ

կ'ուզեմ , ոչ , ոչ եւս կուզեմ այն մահը որուն օդ-  
նութիւնը կը հայցէի աղերսագին :

Սակայն խնդութեանս մէջ չարագուշակ ստուեր  
մի առջեւէս կ'անցնի սպառնալից աչօք , սարսափը  
կը դրաւէ զիս , եւ որտիս բարախմունքը կարծես  
թէ վացրիկ մի կը դադրի : Օր մի երբ այսպէս բա-  
րեբաստութեան մէջ կը լողացի , կ'երեւայ թէ տրիս-  
րութեան քօղն երեսս վարագուրեց , զի Տիգրան  
ինչ ունենալս հարցուց ինձ այլայլելով : Ո՞հ , սպա-  
ռասխանեցի , այն կինը՝ այն չարագուշակ ոգին  
որ մեր կորուստը կը տենչայ , սիստի հանդուրժէ՝  
արգեօք մեր երանութեան : Ո՞ւր է արդ , ի՞նչ կը  
սպարաստէ մեզ , զուցէ մթութեան մէջ մեր եր-  
ջանկութեան տասլալման կ'աշխատի . կրնամ հան-  
դիստ ըլլալ ցորչափ ինքն ազատ է :

Վերայ ըլլայ երկինք , զոչեց Տիգրան , որ եթէ  
երբէք այդ իժարարոյ կինը ձերբակալեմ , ես ան-  
ձամբ իւր բազդը սիստի վճռեմ , նոյն խակ վրէժո  
կեանքովս փոխարինելով : Արեան շիթերով պէտք  
է որ քաւէ մէն մի թափած արտասուքդ :


— Ի՞նչպէս , Տիգրան , ըսի , արեամբ կուզես  
ձեռներդ արատել :

— Բայց ի՞նչ կ'ըսես , սպառասխանեց , երկիրը  
սիստի ազատեմ հրէշէ մի , որ ամեն օր նորանոր  
նահատակներ կրնայ սպարաստել , եւ այս սպարա-  
գայի մէջ մարդասպանութիւնն առաքինութիւն է ,  
զի կեանք մի կը փճացնեմ շատերունն ազատերւ  
համար ,

Մարտա առ. Կոմս

Տիգրանին կինը մեռաւ . այս տարաբաղդ արարածին աղէ աքն զՏիգրան ինձ կը վերադարձնի . գոհունակութիւնս մեծ կ'ըլլար եթէ չմիշէի քու թախիծդդ . ի՞նչու այնչափ վսեմ հանդամանքներդ ցաւն ունենան միայն իրքեւ բաժին . և ի՞նչու անզօր ըլլամ զքեզ մարդկանց երջանկագոյնն ընելու :

Վուր ինձ , Կոմս , քոյր մ՛ունէիր , արդ եղբայր մ'ալ ունիս : Մի կարծեր անձդ երկրիս վրայ որբ մնացած , զի երկու սրտեր քեզ օթեւան են . երկու սրտեր քեզ միշտ պիտի հետամտին ամեն ուրեք , և միշտ սլատրաստ են քեզ ծառայելու : Կոմս , կը սիրէի զքեզ տխուր բարեկամութեամբ , իսկ արդ կը սիրեմ ցնծութեամբ . կարծես թէ գոհունակութիւնն առաւել եւս կը սաստկացնէ մեր զգացումները , թէ և քեզ համար ունեցած երախտագիտութիւնս անսահման էր ըստ ինքեան : Ուստի , Կոմս , Վաստորայ ավանց վրայ քեզ անհամբեր կ'ըստասեն բնակութիւն մի , եղբայր մի և քոյր մի :



## Տիկին Միքա առ. Մայտա

Բարեկամութեանս ընդարձակութիւնն այնչափ ծանօթէ է քեզ որ զիւրաւ կ'ըմբռնես տնշուշտ թէ վիճակիդ փոփոխութիւնն որպիսի գոհունակութիւն կ'ազդէ ինձ : Ամուսնացէք ժամ յառաջ, սնոտի պատշաճողութեանց մի զոհէք խնդութեան վայրկեանները : Կաստարուելիք գործոց մէջ երկարաձրդութիւնն ախորժելի չէ ինձ, եւ մանաւանդ չեմ սիրեր զիստածոց հարուածոյն մատնել՝ նոցն իսկ մէկ օրուան համար՝ ինչ որ սրբազն է : Ապագային մէջ ոչինչ հաստատուն է . անհշան համարուած պատճառ մ' այնպիսի իրողութեանց կրնայ ծնունդ տալ որ արգելքէ արգելք անցնելով միշտ նախակէդ հեռու կը մնաս : Գործադրութիւնն ապահովագոյն միջոցն է մեր ստացուածքն համարելու համար ինչ որ փափաքելի է մեզ : Ես կը նկատեմ ներկայն իրրեւ անկեղծ բարեկամ որ եղածն աշքիս առջեւ յակտ յանդիման ցոյց կուտայ . իսկ ապագան միշտ կասկածելի է ինձ համար, եւ միշտ անախորժ պարագայի կ'ապասեմ : Ապահովն ստոյգին երբէք մի զոհեր . օրէ, ժամէ, բռովէն իսկ զգուշացիր, զի երբեմն մէկ բռովէն դէպքերու աշխարհ մի կը յղանայ, ամենայն ինչ կ'այլափոխէ, կը տապալէ, եւ լաւագոյն հաշիւներն ի դերեւ կը համէ :

Զքնաղ բռնաւորը հեռացաւ տոկէ քանի մի

օրուան համար : Զգիտեմ ի՞նչպէս իւր ամուսինը յանձնառու եղաւ այս բաժանման , թէև կարձատեւ ըլլայ . զի այս մարդն այնպէս զիւթուած է այն կնոջմէ որ արեւուն լոյսն անդամ առանց անոր՝ կարծես իւր փայլը կը կրունցնէ : Անոր զմայլածին վրայ զմայլիլ , անոր հետ հրճուիլ , անոր հետ տիրել , անոր քմածին կամքերը կատարել . ահա այս մարդուն կեանքը :

Կան այնպիսի կանայք , որք մարդ կութեան համար պատուհաս են . զի իրենք չար զօրութիւն մի են որուն առջեւ ամենայն ինչ կը խոնարհի . եւ այս զօրութիւնը կազմողը միայն գեղեցկութիւնը չէ այլ անոր յարակից գտնուող մտաւոր կարողութիւնը : Գեղեցկութիւնն անդիմադրելի ոյժ մ'է իրօք , բայց տեւողութիւնն երկար չըլլար եթէ նրբամտութիւնը , խելացութիւնը , ճարտարամտութիւնն իրեն օգնական չառնէ : Եւ որոնք որ մեծ ու երկարատև յաջողութիւն ունեցած են աշխարհիս մէջ , իրենց չնորհաց յարակից այլ և այլ բարոյական և կամ մտաւոր թագուն կամ յայտնի միջոցաց կը սլարտին զայդ : Գեղեցկութիւնը հուր մ'է որ կը շիֆանի երբ խելքը չ'արծարծեր զայն : Դրացնոյս դալով՝ դէմքի ու մաքի առաւելութիւնները յինքն ամփոփած է , և եթէ գործողութեան ընդարձակագոյն սահման մ'ունենար , ո զիտէ թէ իւր կարողութեանց ինչ ազետալի նպատակ պիտի ընտրեր :

Իւր բացակայութիւնը գոհունակութիւն ազգեցինձ , և մանաւանդ իրեն հետ ունեցած յարաբերութիւններս աստիճանաբար պիտի թեթեւցնեմ ,

զի չեմ ներեր իւր տմարդի վարժունքին խեղճ նա-  
խանձորդին նկատմամբ : Երբ իրեն մօտալուտ ա-  
մուսնութիւնդ իմացուցի , այս լուրը մեծ զարմանք  
տուաւ իրեն , մանաւանդ կարծես տհաճեցաւ երբ  
սիրային վէպիդ վրայ առաջին անգամ համառօտ  
տեղեկութիւններ տուի : Չար սիրտ մի՛ կը տող-  
նապի ուրիշին յաջողութեան վրայ . արդէն շատ  
զիտցուած իրաղութիւն մ'է այս :



### Կոմսն առ Մայտա

Բաղդը ժպտեցաւ քեզ վերստին . երջանիկ եղիր,  
Մայտա : Մի նսեմացներ անարատ խնդութիւնդ  
որ և է տիրութեան բիծով զիս յիշելովդ : Երջանիկ  
եղիր սրտիդ ընտրելցն հետ . ահա իմ գոհունա-  
կութիւնս : Մէկ նալատակ մ'ունէի զքեզ ճանչելէս  
ի վեր , այսինքն ծառայել քեզ , կենացդ գառնու-  
թիւնը մեղմել , նեցուկ մ'ըլլալ յուսահատ վայր-  
կեաններուդ մէջ , բայց սլաշտօնս լրացաւ սկսե-  
լէն յառաջ : Դու ոչ ևս ինձմէ սկէտք ունիս , զի  
արժանաւոր ձեռքեր պատրաստ են քեզ օգնելու .  
ազնիւ և անձնուէր սիրտ մը քեզ սլաշտապան կը  
կանգնի : Կը փափագիմ որ կեանքս դոնէ բոլորսպին  
անօպուտ չմնայ . ուստի կ'երթամ ի տար երկիր՝ մո-  
լորեալ մարդկութեան ծառայելու : Ոիտի մասնակ -

ցիմ ջանիւքս և կարողութեամբս մարդկութեան  
սպասառորաց՝ որք սլաշտօն ստանձնած են վայրենի  
և բարբարոս ժողովրդոց բարքերն ամօքելու , Աս-  
տուծոյ հաշտաբար զաղափարը տալու , ընկերային  
կենաց ընտելացնելու , և վերջապէս մարդ ընելու  
ինչ որ անսանաբար կ'ասլրի : Մարդկային բարու-  
քումը միակ հաճոյքս պիտի ըլլայ երկրիս վրայ՝ քու  
երջանկութենէդ արաւազրուած հաճոյքէն ետքը :  
Եթէ ձեռնարկութեանս զոհ ըլլամ , մի լար վրաս ,  
վասն զի մարդկութեան մարտիրոսը պիտի ըլլամ .  
և այս նահատակութիւնը շատ փառաւոր բազդ կը  
համարիմ ինձ համար : Յայնժամ կը յանձնարարեմ  
քեզ յիշատակս իբրեւ եղբօր մի յիշատակ : Երջա-  
նիկ եղիր , Մայտա , միայն մաղթանք ինձ կը մնայ  
ընել քեզի համար : Ըսէ Տիգրանիդ թէ բարեկամ  
մունի յիս , և թէ իբրեն կը յանձնեմ թանկագին  
կենացդ հոգատարութիւնը : Եթէ այս նամակս  
ձեռքդ անցնի , արդէն կեանքս ծովուն խաղալիքն  
եղած պիտի ըլլայ . և երբ առիթ ունենամ , քեզ լուր  
պիտի զըկեմ , իբրեւ տկար արձագանք գրեթէ  
մեռեալի մի : Եթէ ինձ օր մի՝ հասներ մէկ տողդ  
մինչեւ ամայութեանս մէջ , ո՛հ , զաշխարհ կը գըտ-  
նէի վերստին :

Բարեւ մնաս , Մայտա , քոյլոր իստ սիրեցեալ :

Մայտա առ. Տիկին Սիրա

Մեր ամուսնութեան հանդէսը կատարեցաւ ամենայն լրութեամբ ի ներկայութեան սակաւաթիւ հանդիսականաց : Կեանքս վճիտ շող մէէ . երջանկութիւնը երակացս մէջ կը շրջի , յափշտակութեան մէջ կ'ապրիմ : Նոր էակ ծնունդ առաւ յիս , եթէ անգործութեան մէջ թողտւած էի քանի մը ժամանակէ ի վեր , եթէ անօգուտ էի ամենուն նկատմամբ , եթէ աննողատակ էր կացութիւնս , այսօր նպատակ մ'ունիմ . այսինքն օրերս Տիգրանին նուիրել , և մնացորդ ժամանակս ազգին : Երբ մարդս երջանիկ է , կը փափազի ամենուն ծառայել և զամենքը դոհ ընել . և ով արդեօք առաւել համակրանացս իրաւունք ունի որչափ ազգս որուն կրողեմ ձօնել երջանիկ սրտիս տուրքը , ինչպէս քեզ համար պիտի պահեմ միշտ բարեկամութիւն մի՛ որ ընդ մէջ փոթորկաց և ալեկոծութեանց կրցաւ անվտանդ սաւառնիլ :

Զգիտեմ թէ որչափ ժամանակ Պօլսոց մէջ սիփտի բնակինք տակաւին . բայց ստոյգ է որ քեզ յացելութիւն պիտի գամք . քանի որ իրաւունքդէ գնահատուիլ և սիրուիլ այն անձէն որ բաղդակից եղաւ ինձ : Իրաւունք ունիս մեր մշտատեւ երախտագիտութեան վրայ , զի դու առաջնորդ եղար ինձ կենացս մէջ , և միսիթարիչս՝ տագնապացը ժամանակ : Խակ գեղանւոյդ բացակայութիւնը

բնաւ շվշտացներ զիս , գիտես արդէն որ երբէք շի համակրեցայ իրեն , նա կը յիշեցնէ ինձ Հերիդան նրբանկարի ձեւով , որ սահմանափակ ասպարիզի մէջ կը գործէ :

Սակայն մեկնելէս յառաջ՝ կուզեմ կարգադրել խորհուրդ մի զոր յղացած էինք Տիգրանին հետ մեր յարաբերութեանց առաջին ժամանակները , այսինքն աղքատ կանանց համար գործատուն մի (ουν্বօր) հիմնել ~~Պօլսոց~~ բազմամարդ մէկ կողմը՝ Տիկնանց նորակազմ ընկերութեան օժանդակութեամբ , ուր թաղեցի չքաւոր կանաքը ապրուստի ապահով միջոց մի կարենան դանել հոն :

Աշխատութեամբ աղքատութիւնը կը թեթեւնայ , յարաբերական դիւրակեցութիւն մի կը գոյանայ , ամեն մարդ կ'սկսի ոյժն յինքն փնտուել , անձը յարգել , բարձրանալ , անկախութեան գաղափարն ունենալ , ազատ մտածել , ազատ գործել , վերջապէս տնասուն ըլլալէ դաղրելով մարդ ըլլալ : Ուստի այս գործատունը երկու նպատակի կրնայ ծառայել . մին՝ աղքատութիւնը սփոփել գործելու ոչըն աղդելով , և միւսը ծուլութեան պատճառները վերջացնել : Հայ կինը մասնաւոր հակակրութիւն մի ունի աշխատութեան դէմ զոր իրրեւ անարգական իր կը համարի , իրրեւ նախատինք իւր արժանապատութեան : Մինչդեռ ուրիշի նորհիւ ապրիլը , ուրիշի բեռ ըլլալը , գաղտնի ողբրմութեամբ սնանիլը , այսինքն ուրիշի քմաց հպատակիլը , սրաբականութեան ներքեւ առղրիլը խիստ բնական ինչ ու արժանավայել կը նկատէ . ուսկից կը հե-

տեւի թէ՝ որ աստիճանի անհատական ազատութեան գաղափարն ոչնչացած է ի մեզ :

Ասկէ մեկնելէս յառաջ այս աշխատութեան յարկը յառաջադրած եմ հանդիսադրելու համեստ սկզբնաւորութեամբ, ժամանակին և ժիր աշխատաւորաց թողլով գործոյն ապագայ ընդարձակութիւնը :

Աւելորդ կը համարիմ աշխատութիւն հայթայթելու խորհրդոյս մանրամասնութիւններն հազորդելքեզ : Գործը ներկայացուցի իւր պարզութեան մէջ . և վստահ եմ որ կը ծափահարես այնպիսի սկզբան մ'որուն արդիւնքը պիտի ըլլայ թշուառ մարդկութեան սփոփումը , և աշխատութեան սկզբան գործադրութիւնն՝ որով բարոյական էակն իրեն սահմանուած ասպարիզին մէջ կը մտնայ :



### Տիկին Սիրա առ. Մարտա

Գեղեցիկ երազներուդ իրականութիւնը բազմանացս լրումն է : Վերջապէս բազդդ արժանաւոր ձեռաց յանձնուած է , և ես հանդիստ սրտիւ կը նամ մեռնիլ : Կը պահանջեմ տեսնել զքեզ ամուսնոյդ հետ , և ծանօթանալ այն անձին որուն յանձնուած է քեզի պէս ընտիր էակի հոգատարութիւնը :

Կը չնորհաւորեմ զքեզ գործատուն մի հիմնադրելու գաղափարիդ համար։ Մեր մէջ աշխատութեան կեդրոնը պակսելով՝ մէն մի չքաւոր կին առանց խզմի և առանց նուաստութիւն զգալու մուրացկանութեան կը դիմէ գործի պակասութիւնն առարկելով։ Աղքատութիւնը թեթեւցնել և նոյնողէս ծուլութիւնը, աշխատութիւնը քաջալերել աշխատութեամբ, ընկերութեան մահաբոցը վէրքերը գարմանել է մասամբ, և այսպիսի ձեռնարկ մի՛ սիրտու միտք ունեցող անձանց արժանի է ստուգապէս։ Գեղեցկազոյն ծառայութիւնն առ ընկերութիւն՝ մարդիկը սնուցանել է ոչ թէ ողորմութեամբ, այլ նոյն իսկ իրենց գործունէութեան պատուղներով։ զի ծուլութիւնը մարդկային հանգամանաց սպանութիւնն է, և պարզեւողին առջեւ սողալու սկզբնաւորութիւնը, որովհետեւ մէն մի սղարգեւ ըստրուկ մի կը կազմէ։ ընծայող ձեռքը կապող ձեռքն ալ է միանգամայն։ որչափ պարզեւող նոյն չափ բռնաւոր։ որչափ ընդունող նոյն չափ գերիներ։

Աշխատութիւնն որով մարդս կ'ազնուանաց, յարդ չունի հայ կանանց առջեւ, այնու պատճառաւ որ անհատական անկախութեան գաղափարը չունին։ Իւր գոհունակութիւնը նիւթական առաւելութեանց մէջ կը փնտոէ, զի կանգիտանաց թէ բարյական և մտաւորական կենաց նախասահմանուածէ, այսինքն ազատօքէն մատածելու, եւ ազատօքէն գործելու։ Աշխատութիւնը դիւրակեցութեան կ'առաջնորդէ, զիւրակեցութիւնը՝ անկախութեան, անկախութիւնը՝ յառաջադիմութեան։ Մենք յառաջա-

դիմութեան կը կարօտինք առաւել քան ուրիշ ազգերը , քանի որ մենք լուսաւորութեան մեծատարած ընտանեաց յետնագոյններն ենք :

Ընկերութեանց կազմակերպութիւնն՝ այսինքն անհատական ոյժերուն ի մի կէտ կեդրոնանալն , ապահովագոյն միջոցն է գործողութեանց : Ընկերութեանց թիւը բազմացնելով յառաջադիմութիւնը զգալի կ'ըլլայ : Բայց չի բաւեր հիմնելը , հարկ է նաև հաստատել . զի ստեղծելը ներկան է , հաստատելն՝ ապագան :

Սակաւաթիւ տարիներէ ի վեր՝ միայն ընկերութիւններ կը բազմանան ի մեզ . գժուարին պաշտօն մ'է անոնց կազմակերպութիւնը , զի գրեթէ նորածեւութիւններ են . և ինչ որ նոր է , կասկածելի կը թուի : Գործով մարմիններուն տեւողութեան , և անոնցմէ յառաջ եկած արդիւնքն է որ հաւատք և փառահութիւն կ'ազդեն , և որով մարդիկ հակամէտ կ'ըլլան ոչ այնշատի գժկամակութեամբ իրենց լուման նուիրելու : Հայերը տակաւին վարժութիւն չունին սիրով օժանդակելու յառաջադիմական կամ մարդասիրական ձեռնարկութեանց . իրենց նպաստը շատ անգամ զո՞ւ մ'է արժանապատռութեան զգացման , և կամ խզմին արդիւնքն է : Ամեն պարագաներու մէջ սկզբնաւորութիւնները գժուարին են , ու ազգին առաջին գործաւորաց վրայ կը ծանրանայ այդ պաշտօնը : Ազգային զգացումը զրեթէ բառ մէ արդ : Երբ այդ բառը զգացման վերածուի , և զգացումը լուսոց , ահաւասիկ յառաջադիմութիւնը , ահաւասիկ մանուկ ազգն որ բանականու-

թեան ժամանակին կը հասնի , ու ապրելու կը նախասահմանուի :

Աղքատութիւնն ու տղիտութիւնը մահացու ախտեր են որ մարդկութիւնը կը մաշեցնէն . իսկ աշխատութիւնն և լոյսը յառաջ կը մզեն զայն՝ մեծ հանդիսացնելով : Անհատական գործողութեանց լուրջ և յարատե ամբողջութիւնն ազգաց կեանքը կը կազմէ . հետեւապէս որ և է աշխատութեան տուրք մերժել՝ նոյն իսկ ամենափոքրիկ մաս մի , հիւլէ մի , գողութիւն մ'է ի վեաս այդ ընդհանուր համբաքայլ գործողութեան , ազգաց կացութեան նը-կատմամբ ոճիր մ'է :

Կեանք՝ կը նշանակէ մտաւորական և բարոյական կարտութեանց կիրառութիւն : Ո՞վ արդեօք իրաւունք ունի անշարժութեան , կորստեան , մահուան դատապարտել ինչ որ նախասահմանուած է գործելու , բեզմնաւորելու և տեւելու : Յարոյական մարդասպանութիւնն մ'է այդ , զի մէն մի մարդ պատասխանատու է իւր անձին , խզձին և ընկերութեան : Ոչ ուրէք այնչափ գործելիք կայ որչափ այն ազգին մէջ որ իւր խաւարապատ անցեալը կուզէ թօֆտափել՝ մեծ ազգաց լուսաւոր կեանքով ապրելու փափաքելով . զի ամենայն ինչ քանդելու է վիրաշինելու համար , եւ առաջին գործաւորներն իրենց աշխատութեան նահատակները կ'ըլլան , ու իրենք եւս փլատակ կը մնան զիգուած փլատակացն ներքեւ : Քանդելու գործողութիւնը գժուարին է , իսկ վերաշինութեանն եւս առաւել . զի ամփորձութիւնը , հուկասակութեան ողին , խուարը , մրցումն , ի

հանգէս կ'ելլան . և այդ հակառակ կրից ընդհարումէն , գիշերուան և լուսոց կոփէն կը ծնանի խառնակութեան հրէշը , որով ինչ որ կ'սկսէր ծագիլ , բղիսիլ , բարձրանալ , ապրիլ , կորատեան կը դատապարտէր , և հարկ կ'ըլլայ վերստին պարապիլ զործոյ մի շինութեան որ մասամբ յառաջած էր , նոյն դժուարութեանց ենթարկուելով , նոյն վտանգաց , նոյն կոփւներու . այն ձեռնարկին շարունակութիւնը ուրիշ ձեռաց յանձնելու հարկ կ'ըլլայ , ինչպէս և յարառեւութեամբ ու յուսահատ մրցմամբ յաղթանակելու պաշտօնը :

Մէն մի սերնդեան պարտք է յաջորդ սերնդեան յառաջադրէմ աշխատութիւն մի թողուլ . այս , նըռիրական պարտքն է յառաջադիմութեան քայլ մ'առնել տալ : Վայ այն սերնդեան որ թեւերը կործքին վրայ կապած կը նայի անդործ և ռոշինչ կը պատասխանէ ապագային՝ երբ սա իւր ժամանակին զործածութեան համարը կը պահանջէ : Այդ մեղկ սերնդեան ծոյլ կացութիւնը ժամանակին վրայ զողութիւն մ'է , յառաջադիմութեան վրայ յափշտակութիւն մ'է : Շատ խակ կայ զործելիք : Անցելցն աւերները աւելելու է , զործադրուածը՝ հաստատելու , և կատարելիքը ի զլուխ հանելու . ժամանակը սուղ է , մենք վերջին հրաւիրեալներն ենք ի խնջոյս լուսաւորութեան , հարկ է որ մեր տեղերը պատրաստենք և արժանավայել կերպիւ զրաւենք զանտնք : Որչափ պաշտօնը մեծ ըլլայ՝ նոյն համեմատութեամբ եւս ըլլալու է անձնուիրութեանց և զոհողութեանց մեծութիւնը . հետեւապէս նոյնչափ

դատապարտելի են անհոգութիւնն ու անիշխանութիւնը :

Ազգային յսուաջագիմութեան խնդիրը վտանգի ենթարկուած է . ապագայ սերունդը կը մօտենայ . նզովք սիրտի կարդաց եթէ դատարկ ձեռամբ ներկայանանք իրեն : Պէտք չէ խրոչիլ դժուարութեանց առջեւ , այլ գործել և միշտ գործել , ու մարդկային սանդուղին մինչեւ վերջին բազրոտները , մինչեւ ռամկին (plèbe) իջնալու է :

Ռամփիկը նեխոտ ցնցոտիքն է որ զիշերը զիմըտեակ ունի իրրեւ անկողին , և ցերեկը՝ զանօթութիւնն իրրեւ ընկեր : Ռամփին այն գարշահոտ բազմութիւնն է որ հացի կը կարօտի , և որ իրարու վրայ կութնած՝ զլուխը կը ցցուէ ուրախ մարդկութեան հանդէպ , իրրեւ մսահատ անհեթեթ ուրուական : Եւ ոչ բնական կայծ մի կ'ոգեւորէ զայն , զի մարդ կութեան նուաստագոյն արտայացտնութիւնն է : Իսց եթէ կոխւ , յեղափոխութիւն ծագի , այն ժամանակ կենդանի մրուրը գաղանաբար դուրս կը ցայտէ , և ընկերութեան վրայ կը տարածէ բոլոր յուսահատութիւնը , լրբութիւնն , անասնութիւնը , սրամտութիւնը , զորս անօթութիւնն և աղքատութիւնը զիզած եւ բարդած էին ժամանակներէ ի վեր :

Այդ ցնցոտեաց մէջ աշխատութիւնը մտցնելու է՝ անօթութեան վերջ տալով . այդ խաւարի բոյնին մէջ լրյու ծաւալելու է . այդ մարդկային հօտին մէջ հոգի մ'արթնցնելու է , իւր էութեան և կարողութեան գաղափարը տալով իրեն , բարոյական ան-

շարժութեան գարշահոտութեամբն ապականեալ  
բազմութեան մղում տալու է , յուզելու է , հռն  
կեանք տարածելու է : Ոչ ոք կ'զբազի կենաց այս  
թշուառ և անծանօթ մարափրոսներով՝ որք կու-  
գան , կը հիւծին , կ'անցնին առանց և ոչ մէկու  
մ'ուշադրութիւնը գրաւելու . տիզմն է այն որ կը  
ստհի , կ'երթայ , դիւրաջինջ սեւ հետք մի թողլով :

Գրեթէ ամեն բանով կ'զբազինք , ամեն բանի  
վրայ նայուածք մի կ'արձակենք . բայց ով արիու-  
թիւնն ունի՝ առանց զգուանաց , մինչեւ գարշարոյր  
ուամիին մօտենալու , ու ժանտահոտ քուրջերու  
ներքեւ տեսնելու վտիտ , հալւեմաշ մարմիններ , և  
անասնոյ ներքեւ եղբացր մի ճանչնալու :

Մայստա , խոնարհեցուր աչքերդ մինչեւ խու-  
ժանին , անոր համար զործէ , անոր աշխատութիւն  
տուր , յուսոյ ճառագայթ մ'եղիր , ճայնդ բարձ-  
րացուր , հասարակաց ուշադրութիւնը գրաւէ այն  
ժահարոյր վայրերուն վրայ՝ ուր մարդկութիւնն ան-  
օգնական կը լիկի , առանց հացի և առանց հրոյ կը  
մեռնի : Անոնց համար ընկերութիւն մի հաստատէ ,  
հաւաքէ անոնց ապիկար վաւակներն՝ այն սեւ ծաղ-  
կունքն թշուառութեան որք՝ դարձեալ կ'ըսեմ ,  
կեանքէն կը ճանաչեն ցերեկը՝ միայն անօթութիւնը ,  
դիշերը՝ հողն իրեւ անկողին , և ձմեռը՝ ցուրար :  
Ապաստան մի հաստատեցէք անոնց համար : Գոնէ  
դժբաղդութեան ժառանդորդները բնակարան մի  
ունենան որ ցերեկին պատառ մի հաց գտնեն ,  
հրոյ կայծ մ'իրենց սառնաբեկ մարմինները ջերմա-  
ցրնելու , եւ մտաւորական շող մ'իրենց մոքերը

լուսաւորելու , որ վերջապէս գթութեան ողին զտնեն մարդկացին ձեւին ներքեւ : Այդ փոքրիկ էակները փոխանակ ցամքելու , հիւծելու և մեռնելու տառապանաց մէջ , փոխանակ իբրեւ ընկերացին վերք օր աւուր աճելու , և ատականնելու մարդկացին մթնոլորտը , զարգանան ընդհակառակն , աշխատին , մտածեն . փոխանակ խաւարին՝ լցո ըլլան . թուզ մահը կեանք արտադրէ : Յայնժամ բոլոր այդ կենդանի զանգուածն որ ընկերութեան համար կորսուած կը համարուէր , զօրութեան նոր աղբիւր մի կը գոյացնէ , աշխատութիւնը կ'աւելցնէ , բանականութիւնը կ'աճեցնէ մտածելու , եւ հոգիներու թիւր կը բազմապատկէ զգալու , սիրելու , գթալու և ծառայելու համար :

Զարն արմատախիլ ընելու է . ուամիկը չարն է որ կը բուսնի անընդհատ ապականակիր ջուրերու մէջ՝ թունաւոր շունչը ամենուրեք տարածելով : Իջիր ուրեմն մինչեւ հոն , և սփոփելով կը բժշկես , հիմնաւոր ախար կը ջնջես : Ոչ մէկ ախտ ինքնին կը բուժի նոյն պայմաններու մէջ մնալով . չնջոյ մի , հոգւոյ մի պէտք կայ դարմանը գտնելու համար : Այդ շունչն , այդ հոգին եղիր , Մայտա . ուրիշ շունչերու , ուրիշ հոգիներու միացիր , մաքրէ դարշահոտութիւնը , և կմախք մարդը՝ կենդանի մարդոյ վերածէ :



### Տիկին Ալիքա առ. Մայտա

Ի՞նչ է այդ երկարատեւ լոռութիւնդ : Սրտիդ գոհունակութիւնն այնչափ մոռցնել կուտայ քեզ զբարեկամներդ որ և ոչ իսկ վայրկեան մի կը հաճիս զոհել անօր :

Տաճիկ դրացիս յուստհատութեան մէջ ընկղմած է, վասն զի կը հաստատեն թէ իւր պաշտելի գեղանին խիստ աղետալի վերջ մ'ունեցած է, թէև մանրամասնութեանց վրայ բնաւ տեղեկութիւն չունեցանք :

Յաւալի է ականատես ըլլալ արանց արտասուաց, թէև անոնց տեւողութեան վրայ մեծ վստահութիւն չունենամ : Անոնց ցաւն ուժդին է բայց կարձատե . իսկ կանանցը շատ աւելի երկարատեւ է, եւ երբեմն մինչեւ ցմահ կը շարունակէ, թէև անոնցմէ բազմաթիւ օրինակներ չունենանք : Արանց վշտին չափականցութիւնը մարդասպանութեան կը տանի վիրենք՝ եթէ տեւողական ըլլաց . իսկ եթէ այդ զգացումը մեզմանայ՝ խիստ շուտ կ'անհետանայ : Երաւ է որ կանայք իրենց կենաց վերջ չեն տար, առկայն ցուը սեւ ակօս մի կը բանայ անոնց սրտին մէջ զոր ժամանակը միայն կարող է սփոփել :

Անձնասպանութիւնը վայրկենական ողորմելի քաջութիւն մ'է, որ վերջ կուտայ անհանդուրժելի չարչարանաց : Բայց ապրիլ տառ ապելու համար՝ կենաց դիւցազնութիւնն է՝ մըցելու, կոռուելու զօրու-

թիւնն է : նոյն իսկ տառապանքէն վեր բարձրանալու յատկութիւնն է : Անձնասպանութեամբ մարդու թշուառութեան յաղթահարն է . իսկ ասլրելով՝ թշուառութեան յաղթահարողը : Տագնապալից կեանք մի կրելը , իբր հանդիսական կանգնիլ է ժամանակին առջեւ՝ որ մէն մի վայրկեան դառնութեան շիթեր կը թափէ մեր կենաց բաժակին մէջ . և այս բաժակը շարունակ կը քամենք մինչեւ ցմրուր ցորչափ լցուի : Մեր այս ընթացքն ամեն բոլէի մարտիրոսութիւն մ'է , համակերպիլ է այնպիսի վիճակի՝ որ մարդն ի վեր քան զմարդ կը բարձրացնէ :



### Մայսա առ. Տիկին Սիրա

կարծեցիր ուրեմն թէ կրնայի մոռնալ զքեզ . քիչ մնաց որ մահուանս լուրը հասներ քեզ : Կեանքս Տիգրանին կը պարտիմ . տխուր պարզեւ մ'ընծայեց ինձ :

Մեր ամուսնութեան յաջորդող սակաւաթիւ օրերը կ'անցնէինք մերթ ծովուն վրայ նաւակով շրջելով , եւ մերթ Ասիական կանաչագեղ ափանց տերեւազարդ հովանոյն ներքեւ պատսպարուելով : Բազմիցս կը հանգչէինք հոն՝ լուսութեամբ զիրար պաշտելով , մինչդեռ մեր սրտերը բարձրաձայն կը խօսէին , և հիացմամբ կը նայէինք այն հոգեզուարթ

բնութեան որոյ լեզուին՝ երջանիկ հոգիները միայն վերահասու կ'ըլլան : Հայեցուածքս Տիգրանին աշերուն մէջ կը խորասուզէր , և կ'օրհնէի զԱստուած որ կեանք սլարդեւած էր ինձ՝ այսինքն իւր գեղեցկագոյն պարդեւը : Սքանջացմամբ կը վայելէինք զամենայն ինչ , զԱստուած՝ որ էութեամբն անծիրը կը լեցնէր . զշողն՝ որ զտունկ կը փայփայէր . զծառն՝ որ երջանիկ թռչոյն սիրոյ բոյնը կը սպառսսպարէր . զծաղիկն՝ քաղցրաբոյր ժպիար բնութեան . զմոնչող կոհակն՝ որ փրփրելով կատաղութիւն կը յայտնէր . վերջապէս ամեն բանի մէջ անսպառ հաճոյք կը դտնայինք , զի բնութեան զիրքն այնչափ ընդարձակ է որ մէն մի երեսին վրայ սէր և երջանկութիւն կը կարդայինք : Մեր այս վայելքն այնչափ մեծ էր որ չէր կրնար տեւել անշուշտ . դարնանային պայծառ այդն էր զոր թանձրամած ամպեր քօղարկեցին յանկարծ : Արդեօք վիճակուած է ինձ բարեբաստութիւնը ձանչնալ անոր կորստեան համար ողբալու միշտ . և մինչ հաղիւ հազ ժպիար կ'ուրուազրի լրթանցս վրայ՝ սուղին մատը պէտք է անմիջապէս ջնջէ անդթաքար : Աչացս լեզի շիթն անհրաժեշտ է արդեօք մարդկութեան արտասուաց ովլիանին : Զուարթութեան ծաղիկն չէ կարող յիս արմատ թողուլ , ոչ . զի արեգակի կը կարօտի , մինչ ես անաստղ զիշերն եմ , աւազ :

Օր մի դարձեալ ծովեզերեայ դաշտ մի գացինք թառւտ ծառի մի ներքեւ քիչ մի զովութիւն փընտուելու համար , զի աշնանային եղանակին մէջ ամառուան սաստկագոյն տաքերով կը տոջորէինք . կարծես

թէ շնչասպառ էիր, և կուրծքիս դժուարին ելև էջը  
ներքին վիճակիս նեղութիւնը կը յայտարարէր :  
Տիգրանին բոլոր ձիգերն սակաւ ինչ սփոփում հայ-  
թայթելու ապարդիւն մնացին . կարծես թէ եր-  
կաթեայ ձեռք մի սիրտս կը ձնչէր անընդհատ՝  
մտացս խաղաղութիւնը վրդովելով :

*Յանկարծ արեւելեան զգեստով* կին մի նշմա-  
րեցին աչերս, որ հանդարտօրէն դէպի մեր կողմը  
յառաջանալով վրաս յարձակեցաւ մէկէն ի մէկ՝ ու-  
ղելով սրովն զիս սպաննել : Տիգրան արդիւեց  
ինձ սահմանեալ հարուածն, և այն սուրը կորպելով՝  
այդ կնոջ սիրտը միսեց ուժգին : Ճիչ մ'արձակեց  
նա որ արիւնս սառեցուց, և գետինն ինկաւ մինչ  
արիւնը վերքէն կը յորդէր : Տիգրան անոր ձերմակ  
քօղը քաշեց երեսէն եւ առջեւս տեսայ, ով եր-  
կինք . . . *Հերիդան* : Տիգրան զինքը ձանաչելով՝  
գոշեց «Արդարութիւնը կատարուեցաւ, Մայտադ  
իմ սիրեցեալ, վրէժդ լուծեցի » :

Այց նա ինձ նայելով, գաղանային ժապտիւ  
ըստ . « Լուրերէդ բնաւ չի զրկուեցայ, շնորհիւ  
քու բարեկամուհւոյդ՝ Տիկին Սիրայի : Քօրդուի մէջ  
ապահով և աներկիւղ կրնայի ապրիլ իրբեւ իշխա-  
նուհի՝ մեծատուն ամուսնոյ մի հետ . բայց չնաձե-  
ցայ, զի անտանելի էր ինձ բարեբաստութեանդ  
գաղափարն՝ որ մէն մի օր կարծես դժոխք մը կը  
գլորեն աչացս առջև : Մեկնեցայ Քօրդուէն ամուս-  
նութիւնդ արդիւելու համար . բայց ուշ հասայ  
դժբաղդաբար, և կրկին մահուամբ սիրտի մեռնիմ  
զՏիգրան քեզ թողլով » :

իւր արիւնը յորդառատ կը հոսէր . ուզեցի մօտենալ եւ օգնել իրեն , զի դժբաղդութեան մէջ թշնամութիւնը կը դադրի : Բայց նա խոժոռ դիմօք նշան ըրաւ ինձ հեռու կենալու , եւ ըսաւ . « Քու ձեռքէդ կեանք ընդունիլ մահ է » : Ապա նուաղուն աչերը Տիգրանին դարձնելով՝ իւր դիմաց խստութիւնն ամոքեցաւ : Նայեցաւ անոր վշտագին եւ միանգամայն սիրալիր աչօք , ու յոգնաբեկ ձայնիւ մրմնջեց . « Թող այս արիւնս յաւիտենական տանջանքդ ըլլայ , և ստուերս՝ կենացդ անբաժան ընկերը : Այս վերջին վայրկենիս չեմ վախնար խոստովանելու թէ միշտ զքեզ սիրեցի և միայն զքեզ . եւ մինչեւ այս բոպէիս կը սիրեմ զքեզ վերստին երբ անդութ ձեռքդ չի խնայեց ինձ մահացու հարուածդ » :

« Ուխտաղրուժ կին , գոշեց Տիգրան , կը յուանս այդ խօսքերովդ զիս ի գութ շարժել , և մոռցընել տալ ինձ այն արտասուքն որ Մայտային թափել տուիր » :

« Լուր ինձ վերջին անգամ մի , ըսաւ Հերիկայ , եթէ ինձ տուած հարուածդ բաւական չես համարիր՝ քանի որ շգիտէիր ով ըլլալս . ահա կուրծքս դարկ վերստին , մի խիղճ ըներ բնաւ . բայց ապահով եղիր որ ոչ նուազ պիտի սիրեմ դարձեալ զքեզ : Դժբաղդութեանս համար ճանշայ զքեզ , ուզեցի մոռնալ պատկերդ , ջանացի տեեն տեսակ վայելից մէջ սէրս թաղել , բայց ի զուր : Քու պատճառաւդ կին ըլլալս մոռցայ , աղարտեցայ , և նըտաստացայ բանտիս մէջ մինչեւ անգամ որտհա-

պանս արտասառւքովս հրապօւրելու և անոր ձեռամբ  
տաճկի մի տուն պատսպարուելու :

եւ ահա կը մեռնիմ առանց աչերս մինչ երկինք  
կարենալ բարձրացնելու . կը մեռնիմ .  
լքեալ , նախատեալ .

Զայնը նուազեցաւ , և մինչդեռ Տիգրանին ա-  
նունը կը հնչէր , վերջին շատնչը վշեց : Զարհուրելի  
էր այսպիսի տեսիլ մ'ինձ համար : Աչքերս մթնցան  
չգիտեմ ինչ եղայ : Երբ ինքզինքիս եկայ , զգացի  
թէ անկողնոցս վրայ տարածուած էի : Սարսափա-  
հար աչքերս զջիգրան վիտուեցին . իմ քովս էր նա ,  
ու ահաբեկ և յուսահատ կ'սպասէր որ կենաց նշան  
տամ : Ո՞հ , ինչու յաւիտենականութեան նինջովլ  
շիքնացայ . առ ի՞նչ ծառայեց զարթնութիւնս :

Այս աղետակի դէսքին երկրարդ օրը Տիգրանս  
ձերբակալեցին , կամ լաւ ևս ըսեմ կեանքս յափոշ-  
տակեցին : Տիգրան իւր աղատութեան զոհովը կը  
տուժէ ինձ շնորհած օրերը . ոզորմելի շնորհք :

Դնացի այցելութիւն ընելու Տիգրանին խր  
բանտին մէջ : Աւզեցի մասնակցիլ իւր բանտարկու-  
թեան , բայց նոյն իսկ այդ մխիթարութիւնը զլա-  
ցան ինձմէ : Փօխանակ ես իրեն սվարանք տալու ,  
ինքը մխիթարեց զիս տարտավցնելով թէ՝ քիչ օրէն  
վերստին իմ քովս սիտի վերադառնայ առանց չո-  
րագործ ոգւոյ մեքենայութիւններէ վախ կրելու  
այսուհետեւ : Ինքն այնպիսի վեհութիւն մ'ունի  
վրան որ մեծ է նոյն իսկ բանտին մ.ջ . ոչինչ կը  
նուաստացնէ զինքը և ոչ իսկ կը վշատեցնէ . ընդ-

հակառակն այնպիսի պատկառանք մի կ'ազդէ ոլո-  
հապաններուն որ կարծես թէ երբ՝ իրեն կը մօտե-  
նան իրմէ հրաման ընդունելու համար է : Շատ ա-  
ւելի դատաւորի կը նմանի քան թէ դատավարու-  
եալի : Ճշմարիտ մեծութիւնն ամեն պարագայի մէջ  
կը յայտնուի , և ոչ ինչ կարող է ճնշել զայն :

Բանտը՝ Տիգրանին ներկայութեամբ՝ անեզրու-  
թիւն կը թուէր ինձ . իսկ անեզրութիւնն առանց  
Տիգրանին՝ բանտ մի : Որչափ ժամանակ դեռ արդ-  
եօք վայրկեանները սիտի համրեմ , և մէն մի վայր-  
կեան մինչեւ ցերք ցաւ մի սիտի նետէ երեսիս :  
Քանի մ'օր յառաջ ժամանակը կը սուրար երջան-  
կութեան թեւերուն վրայ . արդ սկսաւ յամրագայլ  
սողալ իրեւ յանցելումն :

Ներիդային սլատկերը ներկայ է մտացս անընդ-  
հատ : Կարծես թէ զարհուրելով կը տեսնեմ տակա-  
ւին այն հրէշ հայեցուածքն որ այնչափ քաղցրացաւ  
Տիգրանին ուղղուելով : Ներիդան , որ ամեն ուրէք  
կ'իշխէր , սիրոյ գերին եղած էր : Ո գիտէ եթէ  
թշուառ սիրով ըմբռնուած չ'ըլլար , գուցէ այն եւս  
սիտի ապրէր սիրելու և ներելու համար : Թէեւ  
աղետալի եղաւ նա ինձ համար , սակայն կը խոս-  
տավանիմ որ վերջին վայրկեանները գթութիւն աղ-  
դեցին ինձ : Այսօր դարձեալ զիս Տիգրանէս կը  
բաժնէ , բայց անկարող եմ զինքն անիծելու զի շատ  
ճանչցաւ սիրոյ բոլոր թունաւոր խոցերը :



Տիկին Սիրա առ. Մայտա

Խարեց զիս ուրեմն . օճն էր որ ձեռամբս կը  
խնամէի , եւ առ քեզ կ'առաջնորդէի : Վայ ինձ ,  
ես ուրեմն քու մահուանդ նպաստած պիտի ըլլայի .  
և ինչպէս կարելի էր ինձ այդպիսի աղէտից հան-  
դուրժել : Բայց այս պարագայիս մէջ մէկ բանով կը  
միմիթարուիմ , այսինքն մահարեր ձեռք մի գլխուդ  
վրայէն վերուցած ըլլալուս : Կը հասկնամ արդ այն  
հետաքրքրութիւնը քեզմէ լուր ունենալու , և իւր  
յուզումն՝ ամուսնութեանդ պատրաստութիւնները  
լսելով , ինչպէս և իւր աճապարանօք մեկնիլը :  
Բայց Հերիդան արեամբը մաքրեց չարութեանցն  
հետքը : Չեմ զարմանար այդ կնոջ՝ ոչ սիրոյն վայ-  
րագութեան , ոչ տաելութեան , եւ ոչ մահուան  
նկատմամբ անվրդովութեան վրայ : Ծայրահեղ բը-  
նութիւնները՝ չարին , ինչպէս և բարւոյն մէջ չափ  
չեն ճանչնար . Հերիդան իրրեւ ոճրագործ մեռաւ ,  
ուրիշ պայմաններու մէջ գուցէ իրրեւ նշանաւոր կին  
մեռնէր : Իուռն բնութիւններն իրենց կիրքերէն ,  
սլարագաններէն և դէաքերէն յառաջ կը վարուին  
շատ անգամ . առանց կարենալ կարողութիւնները  
սահմանարկերու միշտ , նա մանաւանդ իրենց կրից  
սաստկութեան խալալիք կ'ըլլան երբեմն : Կարծես  
յորձանք մ'է որ զիրենք արագարար կը տանի . ուր  
իրենք ալ չեն զիտեր , դրեթէ դէաքերէն կախում  
ունի իրենց ընթացքը :

Ես համոզուած եմ թէ մարդս հրէշ չի ծնանիր .  
բայց պարագաները , պէտքերը , այլ և այլ տրա-  
մադրութեանց տրուած ուղղութիւնը , դանական  
ազդեցութեանց ներքեւ այն տրամադրութեանց  
զարգացումը , կրից առաւել կամ նուազ անդի-  
մադրելի ճնշումը՝ մարդուս մզում կուտան իւր  
բազդը վճռելով : Զոր օրինակ՝ սէրը վայրենի զգաց-  
ման կը վերածի , և ոս առելութեան կ'առաջնորդէ ,  
քաջութիւնը՝ յանդգնութեան , և անձնասիրութիւ-  
նը՝ անիրաւ վրէժխնդրութեան : Բոլոր այն բարձր  
հանգամանքն որ բարւոյն կրնային ծառայել , չա-  
րիք հասցնելու գործիք կը դառնան : Արշավի սիրո  
մի քիչ բանի կը կարօտի մոլորելու , միտքը խան-  
գարուելու , եւ մարդս խոտորնակ ճամբաներու  
մէջ գեղերելով վշին մէջ խորասուզուելու համար :  
Անշան իր մ'ամիբողջ ասլագայ մի կը պատրաստէ  
երբեմն :

Տե՛ս , ինչպէս դէպէքերն իրարու կը յաջորդեն ,  
եւ որպիսի կապակցութիւն կայ անոնց մէջ : Եթէ  
Տիգրան անչէջ սէր մի չի վառեր , Ներփան մար-  
դասպան չէր ըլլար . դու Կոմսին յուսահատ զգա-  
ցում մի չիր աղղեր , Տիգրան կնոջն անմեղ սիրոք  
չէր թունաւորեր , Պետրոս իւր յանցանքն ար-  
եամբը չէր քաւեր , և վերջապէս Տիգրան իւր ան-  
րիծ ձեռքերն արեամբ չէր ներկեր : Դիտէ ուրեմն  
քանի յանցանք , քանի ոճիր , քանի աղէաք կը ծաւ-  
զին մէկ աղբիւրէ՝ այսինքն կնոջ մի սրտէ : Այլ և  
այլ եղելութեանց սկզբնապատճառը գտնալը դըժ-  
ուարին ինչ է . բայց եթէ կարելի ըլլար յաջողիլը՝

սլիտի տեսնէինք թէ անձնական կիրքերը մեծաւ մասամբ սոյն սկզբնապատճառն արտադրած է , և զվարապես սիրոյ տենդն , կամ փառամոլութիւնը :

Զոր օրինակ Հեղինէ սպատճառ է Տրովայի կործանման . Լուքրէցիա թագաւորութեան անկման , ինչպէս Վիրքինեայ տասնապետաց վարչութեան բարձման : Ինչպէս և Թանձերի կոմսին՝ Ցուլիանոսի աղջկան , Հոռոգերիկոսէն առևանգուիլը Վիտիգոթաց թագաւորութեան վերջանալուն առիթ տուաւ :

Նոյնպէս եւ մէկ մարդու փառամոլութիւնն աշխարհիս կերպարանքը կ'այլափոխէ , գահեր կը տապալէ , նորանորս կը կանգնէ , և զերկիր մարդկային կոյսերու աւերակներով կը ծածկէ : Ալարիքներ , Ժանսէրիքներ , Ատտիղաներ , Լէնկթիմուրներ , Աղեքսանդրեր և Նարօլէօններ կը հաստատեն զայդամեն ուրեք արեան հետքեր թողուցին իբրեւ վկայիրենց արշաւանաց :

Միշտ բազմաթիւ անձինք մէկ անձի համար կը սուժեն , և մէկ արեան կաթիլէն հազարաւորներ կը ծնանին , զի ոչինչ միայնակ և անքերրի կը մնայ . այլ ամենայն ինչ զգթայսկառ է , կը բեղմաւորէ , կը յառաջանայ , կը հաստատուի , և կարծես արեամբ կը ծեփի , արեամբ կը բարգաւաճի , արեամբ կը յաղթահարէ եւ բարձրացօն կը կանգնի : Քաղաքներն արեամբ կ'ստացուին , արեամբ կը սրահպանուին և երբեմն արեամբ կ'առնուին : Կրօնքներն արեամբ սլաշտանուեցան , հալածուեցան ,

և Հռովմ մին թշնամւոյն և միւսն  
եղբօր մ'արիւնէն դուրս ցայտեցին :

Մովսիսի ժողովրդեան փրկութեան առթիւ Ե-  
գիպտացւոց դիակները Կարմիր ծովու մէջ ծփացին :  
Բարիլոնի արքունական խնջոյքին ցնծալից աղա-  
զակներուն վերջին վանկն՝ արեան լճին մէջ կոր-  
տուեցաւ, ինչպէս Կարթագինեանց ատելութեան  
նզովքն արեան մէջ չիջաւ, և Յունաստանի յետին  
օրհասական հառաշանքն արեան մէջ նուազեցաւ :  
Վսեմ եղբայրսիրութիւն և հաշտարարութիւն քա-  
րոզող Քրիստոսի արիւնէն՝ ի վեր կանգնեցաւ սպա-  
ռազէն և արիւնարբու Քրիստոնէութիւնը . Կարողու  
Ե՞՛՛ արեան տառերով գրեց Լուտերի անունն իւր  
դրօչակին վրայ . Ուօշինկթընի ստացած անկախու-  
թիւնն արեան գետերէն ծնաւ, և 89 թուա-  
կանը յետին Գարէթին դլիսուն զոհովն տուժել  
տուաւ աւատականութեան և բռնութեան բազ-  
մադարեան անիրաւութիւնները : Եւ մինչ ազատու-  
թիւնը կը ծնանէր, թագաւորութեան բեկորներն  
արեան գետերու մէջ շառաչմամբ թաւալելով կ'ան-  
հետանալին : Միշտ եւ ամեն ուրեք արիւն . անոր  
յարգը շատ կը ճանաչեն և անխիլճ կը թափեն :  
Կաթիլ մ'արեան համար կը բողոքեն, և բիւրաւոր-  
ներ կը վատնեն : Մարդասալանութիւնը կ'արգիլուի  
մինչդեռ ընդհանուր կոտորածը կը ներուի : Առա-  
ջին կէտին մէջ կառավինառ կայ ի բաժին, իսկ  
երկրորդին մէջ՝ ովսաննայ : Ինչ որ մարդասալանու-  
թիւն է գատաստանին առջեւ, աշխարհակալութիւն  
է սբատմութեան մէջ : Մին դատապարտելի է քիչ

արիւն թափած ըլլալուն , և միւսը հռչակելի՝ արեան գետեր բացած ըլլալուն համար :

Դիտէ՛ , և պիտի տեսնես թէ մարդկային պատմութիւնը հակասութեանց շարք մ'է . հոս կը ներուի ինչ որ կը դատապարտուի հոն : Հոս կը վարձատրուի ինչ որ կը պատժուի հոն : Դարերուն սկզբնաւորութենէն ի վեր մարդիկ հակասական ընթացք մ'ունին միշտ՝ իրենց գործերուն և խօսքերուն մէջ : Երբ մարդիկ խօսքերը գործին հետ համաճայնեցընեն , երբ յանուն արդարութեան անիրաւութիւնը չի գործուի . . . . .

\* \* \* . . . , և ոչ մոլութիւնը՝ առարինութեան ներքեւ , և ոչ տգիտութիւնը՝ գիտութեան , յայնժամ նոր թուական մի պիտի հանդիսաւորի՝ այսինքն յառաջադիմութեան թուականը , որ ծնունդ ոլիտի տայ նոր մարդկութեան , պայծառացեալ շողջողուն լուսով , խաղաղութեամբ , արդարութեամբ և հաւասարութեամբ : Իսյց մինչեւ որ այդ վայրիկեանը հասնի , քանի անյագ փառամոլութիւններ արիւնթաթաւ ճամբաններ պիտի բանան աշխարհիս վրայ . քանի անմեղններ մեղաւորաց յանցանքը պիտի տուժեն . քանի սրաեր պիտի հառաչեն , քանի կիրքեր սիտի մոնշեն : Մարդկութիւնը տակաւին շատ արիւններու մէջէն պիտի քայլէ , իւր ճակտէն վերջնական կերպիւ ջնջելէ յառաջ այն աղետալի կարմիր դրոշմն որ հետպհետէ կը վերանորոգուի :

Վայրենի մարդն արեամբ կ'ասլրի . բայց քաղաքակրթեալն ինչ բանով կը սնանի արդեօք : Առաջինը

կրնայ արդարանալ իւր անասնական ճաշակներովը ,  
իւր պէտքերովը , սնունդի մատակարարութեան  
նուազութեամբ , գտնուած բարբարոս միջավայրիւն  
վերջապէս : Բայց երկրորդն ինչով կրնայ արդարա-  
նալ : Մին յանդէտո չարիքը կը գործէ , իսկ միւսը  
զիտութեամբ : Ուրեմն առաջինը տգիտութեամբը  
կ'արդարանայ , եւ երկրորդը զիտութեամբը կը  
դատապարտուի : Ո՞վ ուրեմն առաւել բարբարոս  
է , վայրենի՞ն՝ որ կ'սալաննէ իւր անձնական սիտոյից  
եւ պահպանութեան համար , թէ քաղաքակրթեալ  
մարդն որ մահաբեր գործիներ կատարելագործելով  
մարդկութեան կուրծքը կը միւէ , մի միայն փառա-  
սիրութիւնն , ատելութիւնն եւ կամ վրէժինդրու-  
թիւնը յագեցնելու մտօք :

Մէկ կողմէն կը կատարելագործուի ինչ որ կը  
հարուածէ և կը մեռցնէ , և միւս կողմէն՝ ինչ որ  
կ'սփոփէ . փրկարար ձեռքը կ'օրհնեն , բայց մեռ-  
ցնող ձեռքը կ'անիժե՞ն արդեօք : Առաջնոյն վրայ  
կը զարմանան , և նոյն չափ կը զարմանան երկ-  
րորդին վրայ . բուժող ձեռքն՝ ինչակէս և քանդող  
ձեռքը նոյն կշռով կը կշռուին : Մարդիկ մահը կը  
պատրաստեն , և նոյն ժամանակ անոր զոհերն ազա-  
տելու միջոցներն եւս կը պատրաստեն : Մահը կամ  
բարիք մ'է կամ չարիք . եթէ բարիք մ'է ինչո՞ւ կը  
վարձատրուին իրեն դէմ զինւողներն . եթէ չա-  
րիք՝ ինչո՞ւ զայն այնչափ առատաձեռնութեամբ  
կը բաշխեն : Ասդա ուրեմն ինչ է մահը . գուցէ  
մին եւ միւսը : Բայց նոյն պատճառը բարւոյն  
եւ չարին սկզբունքը կրնայ ըլլալ արդեօք . ո՞ր

տրամադրութեամբ կրնայ ընդունելի ըլլալ այդ :

Մարդկային միտքն որ ամենայն ինչ կ'ուզէ քըն-նել, զննել, յստակել, ամեն բանի իւր սահման-ներն որոշել, ինչպէս կ'ըլլայ որ մահուան և կենաց ծանր խնդիրը չի վճռեր . ինչո՞ւ այսողէս կաղ եւ տարտամ վիճակի մէջ կը թողու . ինչո՞ւ, վասն զի իւր շահերն եւ փառասիրութիւնը կը յորդորեն զինքը պահել այդ անորոշ վիճակն որ այնչափ նշա-նաւոր է իւր անձնական տեսութեանց : Անարդա-րութիւնն այնպիսի ասպարէզի մէջ կ'ապրի որոյ սահմաններն արդարութիւնը չէ գծած տակաւին, որպէս զի զայն ընդլացնէ կամ ամփոփէ ի պահան-ջել հարկին : Մարդկային անիրաւութեանց պատ-մութիւնը թանձր ստուերներ են որ մարդկութեան երեսը կը նուեմացնեն :



### Մայտա առ. Տիկին Սիրա

Տիգրան տակաւին բանտարկեալ է, թէև կը հտատատեն թէ՝ յետ սակաւ աւուրց ազատութիւնը պիտի ստանայ . ստկայն կը վախնամ որ ես այդ օրը չպիտի տեսնեմ : Բազմիցս սցցելութիւն ըրի անոր թէև ողորմելի է վիճակս . ներկայութիւնս նախ ուրախութեամբ կը համակէ զինքը, բայց ան-միջապէս ետք տիսրութեամբ կը գրաւուի անողը

հիւանդութեան աւերակներն անձիս վրայ նշմարելով : Սպառած ոյժս կ'ոգեւորի միայն երբ քայլերս առ Տիգրան կ'առաջնորդեն զիս :

Աշնային սաստիկ ցուրտն արդէն սկսու վրաս դգալի կերպիւ ներդործել . սիրտս միայն ազատ է անոր հարուածներէն : Ա՛հ , թնչ չէի զոհեր արդեօք խոյս տալու համար անողորմ հիւանդութենէս , բայց անկարելի է այդ : Ի՞նչ սոսկալի է անկարելի բառը , սիրեցեալդ իմ :

Կը վափաքէի ապրիլ յաւիտենականութիւն մի Տիգրանին հետ : Ոչինչ կը սարսափեցնէ զիս այնքան որքսն մահն որ պիտի բաժնէ զիս պաշտելի էակէս : Ցուրտ պատանք մի հրավառ սիրտս պիտի ամփոփէ ուրեմն . ցուրտ պատանք մի սրտին՝ այսինքն սիրոյ ովկիանոսին համար , որուն յատակը Աստուծոյ աչքը միայն կրնայ չափել : Այրտ եւ պատանք , այսինքն սիրոյ կեանքն ու մահը : Ինչ որ կեանք էր , ինչպէս ոչնչութեան պիտի վերածուի : Տիգրանին ձայնն իսկ անկարող պիտի ըլլայ ուրեմն զիս յարուցանելու գերեզմանէս : Սիրտն որ սիրեց և սիրտն որ չսիրեց , այսինքն էութիւնն և չութիւնը նոյն բաղդը պիտի ունենան , երկուքն ալ պատանք մի :

Ավ Աստուած իմ , առ թնչ կը ծառայէ սէրը : Երկնային անհուն բոցոյդ այդ կայծն եթէ մեր կենաց վրայ իրեւ ակնախակիզ փարոս փայլելէն վերջը գերեզմանին մթութեան մէջ պիտի մարի : Ի՞նչ բանի կը ծառայէ սիրելն եթէ բոլորովին պիտի վերջանաց :

Ավատուած իմ, առանց Տիգրանի սիրոյն երկինքն իսկ զիս չգոհացներ, ամբողջ լուսեղէն աշխարհներու, ամբողջ անեզրութիւնդ կը զոհեմ Տիգրանին մէկ նայուածքին համար: Բայց այս տարակրյաս հայհոյանք մը չէ քեզ համար, ով Տէր, զի եթէ սէրն երկրիս վրայ կը վերջանայ, յերկինս կը շարունակուի վերստին: Հոգի մի միայն կուզեմ գքեզ պաշտելու, և սիրտ մի՛ Տիգրանս յաւիտենականութեան մէջ սիրելու համար:

Սիրելիդ իմ, կ'զգամ նուազիլս . կ'զգամ որ մօտերս պիտի բաժնուիմ համայն սիրելիներէս: Յուլիանէէս՝ էութեանս մէկ մասէն, քեզմէ որ իբրեւ մայր վրաս գուրգուրացիր, Կոմսէն՝ որուն կը պարտիմ զՏիգրան, զի առանց անոր անմիտիթար եւ մենիկ՝ յետին շունչս պիտի աւանդէի վանքին տրրտմաքեկ որմերուն:

Վերջին օրերս լուր զրկած էր . վայրենի ժողովրդոց մէջ Փրկչի պաշտօն կը վարէ: Մարդս շատ բարձր հոգի ունենալու է երր ուրիշին ծառայելու կ'աշխատի մինչդեռ իւր սիրտը կուլայ, կ'արիւնի, եւ ինքն իսկ միսիթարութեան կը կարօտի: Աստուած կամ Սադան ըլլալու է վշտին վրայ կոխելու եւ անոր արիւնալի բեկորներուն անվեհեր նայելու համար:



Տիկին Միքա առ Մայտա

Ի՞նչ է այդ վարմունքդ , Մայտա . սկսար արդ գերեզմանին անդունդէն խօսիլ . ինչու այդպէս կը վհատիս . սէրդ միթէ վախերդ ցրուելու շափ զօրաւոր չէ : Ինչու անկարելին իբրեւ վճիռ կ'արձակես . անկարելին վերջին հայհոյանքն է զոր յուստահատութիւնը կարելոյն երեսը կը նետէ . դժոխոց կոկորդէն բղխած կատաղի ծիծաղն է անկարելին . մինչդեռ կարելին յուսոյ շրմունքէն ինկած երկնային ժայխտն է , գարնային պայծառ օրուան գեղափողիող արշալոյսն է : Վայելէ ներկայդ առանց որամութեան , սիրոյ շողովն լուսաւորէ զայն : Ինչ փոյթ քեզ ապագան և իւր մութ գիշերը . հաճոյից լուսէ մի անսահութեան արժէքն ունի : Եթէ սիրոյ յաւիտենականութիւնը չես կրնար ունենալ , դոնէ մէկ վայրկենի մէջ սիրոյ յաւիտենականութիւնն ամփոփէ և վայելէ :

Անիրաւ արդարութիւն մի զքեզ Տիգրանէդ կը բաժնէ . բայց քանի որ իւր ազատութիւնը կը խոստանան քեզ , իմացիր թէ արդարութեան վերջին արարուածը կը ներկայացուի :

Մարդ մի իւր սիրականին սպանութեան ականատես կ'ըլլայ , և սիրոյ վրիժառութեան պարտքը կը կատարէ սպաննողը մեռցնելով . կը գործածէ զայդ ըստ թելաղբանաց իւր սրտին . և ահա արդարութիւն՝ օրինաց անիրաւ ձեւերուն գերի՝ կը

բանստարկէ մարդասպանը պատժողը , առաթուր կովսելով բնական արդարասիրութեան այն բնադրումն որոյ համեմատ մարդս իւր կեանքն իսկ կը վտանգէ , իւր արիւնն իսկ կը թափէ երբ իրեն կամ իրեններուն դէմ ոճիր մի գործուի :

Մահուան պատժոյ կուսակից չեմ . ընդ հակառակն : Մահապարտութեան վճիռ մի մարդկութեան ճակտին վրայ դրոշմուած ամօթոյ կնիքն է : Մարդն իւր եղբօրը դահիճը կը հանդիսանայ , անխոռով աչօք անոր արեան կաթիլներուն նայելով , եւ անտարբեր ականջով անոր դառնագին հառաջանքը լսելով : Ի՞նչ է մահուան պատժէն արտադրուած արդիւնքն ընկերութեան համար : Մեզապարտներուն թիւը պակսեցնելով՝ արդեօք անոնց ազրիւրը կը ցամքի՞ , և կամ կ'արգելու ուրիշները մեզապարտ ըլլալէ : Ո՞չ , անշուշտ . բազմաթիւ հանապազօրեաց ոճիրները կը հաստատեն զայդ : Մեզապարտի մը կեանքը պէտք է ծառայէ ընկերութեան բարօրութեանն , այսինքն իւր աշխատութիւնն անոր նուիրելու է՝ իւր անձնական ազատութենէն զրկուելով : Այս եղանակաւ թէ մարդս դահիճ մ'ըլլալէ կը դադրի , և թէ ընկերութիւնը կը շահի , և գուցէ մեզապարտին իւր յանցանքը քաւելու միջոց մի կը հայթայթէ ինչպէս և վերականգնելու : Ամեն կեանք իւր օգտակարութիւնն ունի , և ամեն պարագաներէ ընկերութիւնը պէտք է օգտիլ :

Մինչեւ ցայսօր արիւնահեղութիւնն ընկերացին արդարութեան զինուց մին սեպուած էր և է : Մուտքիւնն և ստութիւնը , կրօնից , արդարութեան

և . . . . զարդուց ներքեւ կ'սքողութին ստէսլ ,  
և այս սոսկալի զէնքը կը գործածուի : Եւ արդարեւ  
հաւատաքննութեան խարոյկները բոցեր կ'արձա-  
կեն : Յանուն արդարութեան մահ կուտան , յանուն  
աղատութեան շղթաներ կուտան : Մարդկութիւնը  
գլուխը խոնարհեցնելով կ'անցնի հաւատաքննու-  
թեան հրատներու ներքեւ , մահուան ներքեւ ,  
գերութեան ներքեւ : Բայց օր մի իւր ընթացքն  
ընդհատելով կը կանգնի յանկարծ , և իւր շունչով  
կը մարէ կրօնական հնոցները , ձեռամբը կը փշրէ  
տգիտութեան շղթաները , եւ կախաղանը միայն  
կանգուն կը մնայ , զի տակաւին մարդկային նա-  
հատակներ կը պահանջէ . և նկուն մարդկութիւնը  
կառափնառին առջեւէն կը քայլէ կրորաքամակ :


Դարերէ ի վեր ժողովուրդները տգիտութեան  
զոհերն են . կը լրեն , կը հնազանդին . բայց օր մի  
կը մոնչեն անոր դէմ , և իրենց մարտիրոսութեամբը  
կը սրբեն անիրաւութեանց եւ նախապաշարմանց  
հետքը , թէև անկարող ըլլան միահաղոյն արմատա-  
խիլ ընելու այս անիրաւութիւններն և նախապա-  
շարմունքը , որք շարունակ կը ծլին , և թէպէտ ոչ  
նոյն զօրութեամբ , սակայն բաւական ոյժ ունին  
վերստին թունաւորելու և ապականելու ընկերու-  
թիւնը :

Մայուս առ. կոմս

Զգիտեմ թէ արդեօք այս տողերս երբէք պիտի  
հասնին քեզ . բայց չեմ ուզեր աշխարհէս հրաժա-  
րիլ առանց քեզ տալու վերջին հրաժեշտի ողջոյնս ,  
քանի որ դուն այնչափ բարիք ըրիր ինձ , և անոր  
փոխարէն միայն չարիք կրեցիր ինձմէ : Այդ չա-  
րիքը թէև ակամայ գործեցի , սակայն բնաւ չկրցայ  
արտասուել խղճիս առջև : Հաւտա որ միտքս բազ-  
միցս սրարշաւ եկաւ զքեզ որոնել օտարատեաց եր-  
կիրներու մէջ ուր կեանք կը պարզեւէս և փոխարէն  
մահուան սպառնալիք կը տեսնես անընդհատ : Ճա-  
կատագիրդ է ուրեմն ապերախտներ պատրաստել ,  
կամ՝ լաւ եւս է ըսել՝ վսեմ հոգիներու ճակատա-  
գիրն է զոհել իրենց անդորրութիւնը , հարատու-  
թիւնն ու սիրտը՝ նահատակութիւնը միայն իրենց  
վերապահելով : Եղբայրդ իմ ազնիւ , որպիսի քաղցր  
միսիթարութիւն սիտի ըլլար ինձ եթէ յետին շունչս  
աւանդելու ժամանակ վստահ ըլլայի թէ ոչ ոք իմ  
պատճառաւ թշուառ պիտի ըլլայ : Բայց ներելի է  
ինձ այդպիսի սփոփում մի :

Կեանքս կարի աւերեցաւ վշտէն , և ոչինչ կա-  
րողացաւ զայն վերականգնել . վերջին անդամ մի  
եւս սիրտս խորունկ երախտագիտութեան մի տկար  
արձագանքը կուղզէ քեզ արդ : Ոչ , որքան տագ-  
նապելի է սիրելիներէ բաժնուիլը : Բարեաւ մնամ

ուրեմն , աղնիւ եղբայր , մնաս բարեաւ : Իցիւ թէ  
յիշատակս բարեկամ ոգւոյ պաշտօն կատարէր տա-  
ռապանացդ մէջ :



### Տիգրան առ. Տիկին Սիրա

X Տիսուր պաշտօն մ'ունիմ կատարելու ձեր քով ,  
Տիկին . այն է իմացնել թէ մեր Մայտան ոչ ևս է :  
ինք պատուիրեց ինձ վերջին անգամ մ'ես յայտնել  
ձեզ իւր երախտագիտութեան հաւաստիքը ձեր ան-  
խախտ բարեկամութեան համար , որ իւր վշտարեկ  
կենաց նեցուկն եղած էր : Չեր վրայ ունեցած բա-  
րեկամութիւնը մեծ էր , և լաւ զիտէք արդէն թէ  
քիչերը կրցան սիրել այնչափ անձնուիրութեամբ և  
հոգւոյ բարձրութեամբ որչափ ինքը : Խնդրեց մի-  
անգամայն որ մի ըստ միոջէ ձեզ հազորդեմ իւր  
կենաց վերջին սրտաճմիկ պարագաներն և ես կը  
հնազանդիմ այդ սրբաշունչ հրամանին :

Բանտիս մէջ Մայտայիս ինձ ըրած այցելութե-  
նէն ութ օր վերջն աղատ էի , և առ ինքը կը վե-  
րադառնացի : Անկարող եմ նկարագրել անոր ու-  
րախութիւնը : Կը մոռնար զինքը մաշող անողորմ  
ախտը , և ձեռքը իմինիս մէջ զրած , աշքը աչքիս  
վրայ յառած « Երջանիկ եմ » կը մնչէր նուազուն  
ժայնիւ : Յուսահատութեամբ կը նայէի իրեն , կը

տեսնէի թէ անկարող եմ մահուան ճիրաններէն զինքը փրկելու , և անզուսպ արտասուացս ջերմութեամբ իւր սառնահար ձեռքը կը տաքցնէի : « Տիգրան , կ'ըսէր աղերսագին , վիշադ հոգիս կը ճմէ . արիացիր , զի մեր բաժանումը կարճատեւ պիտի ըլլայ . պիտի միանանք վերը , կը շարայարէր , երկինքը ցոյց տալով , և ոչինչ զմեզ պիտի բաժնէ : Հաւտա Աստուծոյ , զի Աստուած օգնեց ինձ տառապանացս մէջ , նա վերադարձուց զքեզ իմ սիրոյս , և նա կուտայ ինձ արդ քեզմէ զատուելու քաջութիւնը : Ըսէ , թնչ պիտի ընէի եթէ զքեզ ինձ չվերադարձնէր . ինչպէս կրնայի մեռնիլ առանց զքեզ տեսնելու . աչքս սուզով պիտի գոցուէր իւր վերջին տրտմալի նայուածքը արձակելով : »

Կուզես ուրեմն զիս որբ թողուլ երկրիս վրայ , Մայտան , գոչեցի յուսաբեկ ձայնիւ : Ո՛չ , չեմ ուզեր ապրիլ , հետդ պիտի գամ , մի և նոյն զերեզմանը պիտի ունենանք :

« Զդուշացիր , ըստաւ , կ'արդիլեմ զայդ , զի մահուան հանգիստս պիտի վրդովես : և գերեզմանիս մէջ զարհուրելով վերստին պիտի տեսնեմ արեան կայլակն որ զիս երբեմն սարսափեցուց : Ո՛չ , Տիգրան , այդպէս չպիտի գործես . կը թախանձեմ զքեզ որ ապրիս՝ միշտակս սիրելու համար : Երդում ըրէ՛ ինձ , յարեց , եթէ կ'ուզես գո՞ն մեռնիլս : »

Աւազ , կրնայի մերժել , . . . :

Օր մի երբ զգաց թէ տկարութիւնը կը սաստ-

կանար , ուզեց որ իւր սենեակը ծաղիկներով զարդարուի և զուարթ կերպարանք մի առնու : Ինք սպիտակ պատմուձան մի հագաւ , և անկողնին մէջ տարածուեր էր մահատիալ : Նայեցաւ ծովուն որ լցով կը շողշողար . նայեցաւ աշնան վերջին չորսարեկ տերեւներուն որք իրեն վիճակակից պիտի ըլլային . ուշ դրաւ թոշնոյն որ վերջին անգամ կ'երդէր իրեն համար . նայեցաւ վերջապէս բոլոր բնութեան որ կարծես թէ անսովոր գեղեցկութեամբ մի կը փայլէր յատկապէս , և հառաչելով ըսաւ . «Ո՞րչափ սքանչելի է բնութիւնն և ի՞նչպէս ամենապն ինչ կը ժպտի նազելաբար : »

Յուլիանէն և ես քովը կեցած էինք . Մայտային մէկ ձեռքն անորձեռքին մէջն էր , միւսն ալ իմինիս մեջ . նայեցաւ մեզ սիրալիր նայուածքով և ասպա ըսաւ իւր աղջկան :

« Յուլիանէդ իմ սիրեցեալ , տօւր ինձ վերջին համբոյրդ , և խոստացիր անձնուէր քոյր մի ըլլալ որբացեալ Տիգրանիս : » Յուլիանէն համբուրեց զինքը , խօսք տուաւ , և սենեկէն դուրս նետուեցաւ զինքը խեղդող հեծկլտանքը շյայտնելու համար : Մինակ մնացի Մայտային քով , և բոլոր արիութիւնս յիս ամփոփեցի յուսահատութիւնս զըսպելու համար :

« Պաշտելիթ իմ Տիգրան , ըսաւ , յիշէ զիս ցորշափ ծովը կոհակ մ'ունի , արփին շող մի , թըռշունը վանկ մի , և սիրտդ բաբախում մի . յիշէ զիս : Քեզ համար ունեցած զգացումս կրօնքի դարձած է և այս կրօնքը հետո կ'տանիմ : Եթէ զիշեր-


ուան լոռիթեան մէջ կ'լսես ձայն մի որ կը մրմնցէ-  
ականջիղ , • Կը սիրեմ զքեզ , » գիտցի՛ր թէ իմ  
ձայնս է այն , որ թէ և ամենուն համար մեռած ,  
այլ քեզի համար կենդանի սլիտի մնայ : »

Խելքս կորուսի . Մացացին ուաքն ընկայ , և  
սառնահար ձեռք մը արտասուբովս ուռզեցի : Զիս  
գէս իւր սիրաը քաշեց , և թեւերուս մէջ հոգին  
աւանդեց . . . :

Անզգայութեան վիճակէս իրականութեան դար-  
ձայ՝ մի միայն թշուասութեանս անյատակ խորու-  
թիւնը հաստատելու համար : Իսկ արդ չգիտեմ  
թէ կենդանի՞ եմ կենաց մէջ : Տիկին , դուք եղա-  
կան բարեկամուհի մի կորուսիք , իսկ ես հստայե  
զաշխարհո :

Վ Բ Ի Պ Ա Կ Ք

Երես	Սխալ	Ուղիղ
9	թէ մեռեալ	թէ մեռեալ՝
18	ասլաքային	ասլաքային
22	կը ցուլուի	կը ձուլուի
36	անհատ չեմ՝	անհատ՝ չեմ՝
42	չեն	չե՞ն
47	աշխարհէն որ	աշխարհէն ուր
49	դրացնոյս	դրացւոյս
51	անցուկ	անձուկ
82	կառանձնացնեն	կառանձնացնէ
97	Մայտայէն սիրութիւն	Մայտայէն սիրութիւն
»	նուազիլը	նուազիլը
99	չնչմարեր	չնչմարեր
108	կերուսաները	կորուսաները
110	մտատանչութիւն	մտատանջութիւն
112	լուռութեանս	լուռութնանս
125	չեր չրչեր	չեր չրչեր
152	որ	ուր
155	կը հառաջէ	հառաջչ
158	յաւերակացն	աւերակացն
159	կանանանց	կանանց
»	պարականեր	պարագաներ
156	կեթարկէր	կենթարկէր
158	Մարդը	Մարդիկ
160	որք	և որով







معارف نظارت حايله سنك

نومر ۸۲۳ کانون اول ۱۲ سنه ۹۸ رخصت نامه مبيله طبع اوئىشدر

ساقىچى ى. فەرىزىچى ىقانى ى. ئەرىپەرىلىك ى. ىز.

